

# Բազմ

5 - 6 / 92

ՍԵՐՈՒՆԵՐ

... Ես հենց...  
 ... Գրողի պոետի գրան մեջ կայանք՝ Միհրանի ծայրը լեցուց  
 ... Գրողներով, փոստիկ ու թիւրդէ առարկաներով խնդուկ  
 ... Գրողը Ազատի երկնայրկիան մը, հսկասկ որ գիտէր, թէ որով  
 ... Գրողն, հայրը ընկերը Կ'Ուլարյու թոյնը՝ համալսարան : Այսը՝

... Գրողն գիտէ որ է... իտրիպա ու ներս մտա :

Մանք, խորո  
 ... Գրողն գիտէ  
 ... Գրողն գիտէ

Մանք, խորո  
 ... Գրողն գիտէ  
 ... Գրողն գիտէ

Մանք, խորո  
 ... Գրողն գիտէ  
 ... Գրողն գիտէ



... Գրողն գիտէ  
 ... Գրողն գիտէ

... Գրողն գիտէ  
 ... Գրողն գիտէ

... Գրողն գիտէ  
 ... Գրողն գիտէ

... Գրողն գիտէ  
 ... Գրողն գիտէ

Այս տարի կը լրանայ 70ամեակը բանաստեղծ, ար-  
 ձակագիր ու երապարակագիր Վահե Օշականի, որ ա-  
 հաասիկ յիսուն տարիներ է վեր բանաստեղծութիւն-  
 ներով պատմութեամբն իր գրական ու հանրային ե-  
 րևույթներ ընդգրկող հարիրաւոր յօդուածներով տիրա-  
 կան ներկայութիւն մը եղաւ իմացական մեր կալուած-  
 ներէն մերս ու կը շարունակէ Առյժ կորովով ծառայել  
 մեր գիր ու գրականութեան :  
 «Բազմ»-ի ներկայ համարը կը բանակն յոյժ ար-  
 դիական ճիւղ մը ընդգրկած իր ծառայուն մէկ պատ-  
 մըրածով, Առյժ ատեն մատուցանելով մեր անվերա-  
 պահ յարգանքը հաստիքին, հաստարմութեան, տազ-  
 նապներուն, տառապանքին ու արի մատարականի իր  
 անվկանդ կեցութեամբն...

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- 1.-Վ. ՕՇԱԿԱՆ ..... Սերունդներ
- 47.-Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ ..... Հեփաբներու ծիածանը
- 62.-Գ. ԱԲԷԼԵԱՆ ..... Աննա հարսը
- 75.-★ ★ ★ ..... Յամենայնի յանկուցիչ
- 76.-ՀԲ. ՄԱԹԵԻՈՍԵԱՆ ..... Սարգարապատ
- 93.-ՄԱՐՈՒՇ ..... Անգլիական արդի  
գրականութիւնը
- 107.-★ ★ ★ ..... Բազմալեզուեան սխալերէն
- 118.-★ ★ ★ ..... Մշակութային լուրեր

➤ JUN 2010

digitised by A.R.A.R.@

2013

# Բագրու

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՎ ԱՐՈՒԵՍՏԻ

ԼԱ. ՏԱՐԻ 5-6 ՄԱՅԻՍ-ՅՈՒՆԻՍ 1992 ԳԵՅՐՈՒԹ

Վ. ՕՇԱԿԱՆ

## ՍԵՐՈՒՆԴՆԵՐ

2000

—Ես եկա՛յ:

Հսկայ տան մուտքի պզտիկ դրան մէջ կայնամ՝ Միհրանի ձայնը լեցուց փայլուն կարասիներով, փղոսկրէ ու բիրեղէ առարկաներով խնդուն սեմեակները: Սպասեց երկվայրկեան մը, հակառակ որ գիտէր, թէ օրուան այս պահուն, հայրը բլիմիքը կ'ըլլար, ու բոյրերը՝ համալսարան: Մայրը՝

—Աստուած գիտէ ուր է, — խորհեցաւ ու ներս մտաւ:

Ծանօթ, խեղդուկ օդը կարօտով շնչեց — իր ընտանիքին շունչը, հոտը, մտերմութեան կապը, որուն մէջ մեծցել էր ամբողջ կեանքը: Արագ ակնարկ մը շուրջը — ոչինչ փոխուած էր:

վեց ամսուան մէջ. «Ամէն ինչ սառած է հազար տարիէ ի վեր», գրեր էր Մարին:

Ուսէն իջեցուց ճամբորդական պայուսակը, խոհանոց գնաց, սառնարանէն քոֆ մը առաւ, աստիճաններէն երկու-երկու՝ իր յարկը վագեց, պատշգամ ելաւ:

Սան Ֆրանսիսկոյի աշունը միշտ անտանելի գտեր էր, խոնաւ ու տաք, ապուշ բուրբոսներով, միասեռականներով, անապար-ւած մայրապետներով վիտացող, «գիրուկ, քրտնած աղջկան մը պէս», խորհեր էր: Այսօր էր բարձրէն, վարը, հեռուն՝ մարդիկ ճաններու չափ անիմաստ, աւելորդ կը թուէին, մինչեւ որ անոնց մէջ մտնէր, բարեկամանար, մրցէր ու կոուէր անոնց հետ: Կու-տըն Կէյթ կամուրջը կը սրսփար, կը պսպոյրար արեւում մէջ: «Մինչեւ որ սիրեմ», եզրակացուց: Հիմա վարը փողոցէն մտքըր-սայքըր մը անցաւ դորդացեալով անշարժ օդը: Ետ դարձաւ, ներս՝ սենեակ մտաւ: Վայրկեան մըն ալ տնտնաց իր սենեակին ծանօթ ներկայութեան մէջ, ձեռքը քսեց իր աշխատամփի սեղա-նին եզերքին, գիրքերու շարքին վրայէն անցուց ակնարկը, սկը-սաւ հանուիլ: Պրինիտը հոս բերեր էր անցեալ տարի արձակուր-դին, ամբողջ կէսօրէ ետք մը սիրաբաներ էին, կոուէր էին, յե-տոյ՝ «Ինչքան մազ կայ սրունքիդ վրայ» ու աղջիկը փայտէր էր, անգամ մըն ալ չէր տեսեր, հակառակ իր հեռաձայններուն: Ատկէ ետք եկեր էին առանձնութեան, լուրջեան գիշերները. «Կը սիրէի կոր այդ աղջիկը», խորհեցաւ:

Անցաւ բաղնիք: Երկար մնաց տուշին տակ: Ջուրին ձայնը եւ զգայնութիւնը մորթին վրայ միշտ արտակարգ հանոյք տուած էին իրեն, մանկութենէն: Ելաւ բաղնիքէն, ի վերջոյ, չորցուց մարմինը: Հայելիէն արագ մը նայեցաւ պիրկ, ցցուն դնդերնե-րուն, լայն լանջին — մարգուած մարմինը ինքնավստահութեան, ուժի եւ անկախութեան զգացում մը կու տար իրեն: «Վերջերով լի» երգը սուլելով՝ ետ իր սենեակը անցաւ: Նոր հագուստներ վրան անցուցած ատեն պատին կախուած Եռագոյնը, Հայաստա-նի Բարսէլը, Դաշնակցութեան գինանշանը աչքին զարկին ու վայրկեան մը անշարժացաւ: «Անկախ Հայաստան»... Միտքով համար երկու ամիսէ ի վեր այդ բառերը դադրած էին բառ ըլ-լալէ, ոչ ալ մտածում կամ երեւակայութեան խաղ, այլ՝ յուզումի խից մը, խրած-մնացած զգացական ու բանական կեանքին մէջ եւ գոր ոչ կրնար անտեսել, ոչ ալ որեւէ ձեռով լուծել: Շունչը բռնած՝ կեցաւ: Անըմբռնելի, աներեւակայելի բառեր՝ որոնց խորհրդաւոր մշուշին մէջ անցած էին անոր պատանութեան խարխուլ տարիները, ամբողջ կեանք մը հիստուած մօրը, Ազնի-թանքիին, Մուշեղ հօբարին, Պատանեկան միութեան պարոն Յովհաննէսին շուրջ, ու ինք՝ ատոր կեդրոնը, ծամերով հակած



20552-218 digitised by A.R.A.R. @ 1/1 - 2001

վայրագ, անիրական ֆետայիներու պատկերներուն վրայ, այտերը կրակ, հիւանդ վիճակով, երեւակայելով այդ հերոսները լեռներու գագաթներուն կայնած ու զինքը կանչելով, ու ինք երազին մէջ ամէն գիշեր կը վագէր, կը թռչէր, բայց չէր հասներ...: Յետոյ եկեր էին երիտասարդ, անողորմ ահաբեկիչները Եւրոպայի պողոտաներուն վրայ՝ Սագոն, Ատն, Լետոնը...

Վարէն ձայն մը եկաւ: Յետոյ՝ լուսին: Ու յանկարծ իր անունը.

—Միհրան...

Մարին էր:

—Մօ Միհրան:

Խենթի պէս դուրս նետուեցաւ, վար վագեց, աստիճաններուն վրայ իրարու բախեցան, փաթթուեցան, համբուրուեցան, խնդացին, պոռացին, ցատկեցին: Յետոյ՝ խոհանոց գացին:

—Եկուր Քեզի հայկական սուրճ մը շինեմ... Ինչպէ՞ս էք Եւրոպան, ինչո՞ւ շուտ եկար... սիրեցի՞ր ՄԻԻն, քննութիւններդ ինտո՞ր անցան, մեծցեր ես, ծօ Միհրան, փոխուեր ես հա... վեց ամիսէ ի վեր, Ապրիլէն ի վեր Քեզի չեմ տեսեր... շնորհով մարդ ես եղեր, ա՛լ հին օրերդ գացի՞ն՝ ինչ է... սուրճդ ինչպէ՞ս կ'ուզես:

—Շաբարը շատ:

—Է, արտիկա գունէ չէ փոխուեր...

—Այո:

Լոեցին, իրարու նայեցան, անօթի ու կարօտով: Մարի սեւ, խոշոր, խելացի աչքեր ունէր, նուրբ քիթ մը, մետաքսեայ երկայն մագեր: Հիմա գրկեց եղբօր լայն ուսերը, տարօրինակ փայլ մը դէմքին:

—Միհրան, ամէն վայրկեան բու մասիդ կը մտածէի այս վերջին ամիսներուն:

—Ինչո՞ւ:

—Մօ Հայաստանը... Հայաստանը անկախ եղաւ, կրնա՞ս երեւակայել... անկախ Հայաստան... խելիս պիտի գայ... չեմ կըրնար կոր հաւատալ...

Ուրախութիւնը կը ճառագայթէր դէմքին: Երբեք այսպէս ինքզինքնէն չէր ելած բոլոր: Զուարճացած՝ դիտեց գայն, քիչ մը մըտաւ, բայց անկարող բերանը բանալու, չուզելով խանգարել անոր խանդավառութիւնը...: Անգիտակցաբար նորէն փաթթուեր էին իրարու, կը խնդային տա՛մ ու անգուսպ: Յետոյ նորէն իրարու աչք բռնեցին, փնտռելով տխրութիւն մը, որ միշտ հոն պահւրտած ըլլալու է:

—Զեմ կրնար կոր հաւատալ, տղայ... տարիներու երազը... խեղճ Մուշեղ հօբարը, կը յիշե՞ս, Պապոն, Պապոն, ան էր իրա-

կան ներշնչեալը. «Ես Հայաստան երթամ տի աչերս բացուիմ», ան ողջ ըլլալու էր հիմա... ազատ եմք, ծօ Միհրան, ազա՛տ... կը հասկնա՛ս ինչ կը նշանակէ... խելքիս պիտի գայ...

Այ չկրցան խօսիլ, կոկորդները խցուած, մեղմ դող մը շըրքումքներուն: Ու յանկարծ Մարի նետուեցաւ եղբօր թեւերուն մէջ, գրկեց անոր լայն լանջը ու բերնէն երկար, ուժգին համբուրեց գայն:

Երբ քակուեցան մարմինները, Միհրան կը խնդար, քիչ մը շփոթ:

—Ա՛տ ինչ էր, աղջիկ:

Մարի, ինքն ալ շուարած, անդին կը նայէր:

—Զե՛մ գիտեր, մի հարցներ... Եկաւ մէջէս շատ բնական ձեւով, պէտք էր բան մը ընէի... չէ՛ նէ՛ պիտի պայթիմ... դո՛ւն ինչ կը զգաս կոր:

—Ա՛ս մասին:

—Զէ, ճանըմ, Հայաստանի, Հայաստանի անկախութեան մասին... մէկ անգամէն ամէն ինչ փոխուեցաւ մեր կեանքին մէջ, կարծես բէ ուրիշ մէկն եմ, աւելի ուժով, աւելի տոկուն, կարծես թէ հայր մը գտած եմ, մինչեւ հիմա որք էի, բայց հիմա...

Հիրասենեակ գացեր էին: Բազմոցներուն վրայ փլան, շիդերը խախտած, բայց Մարի շարունակեց թեւերը շարժելով բացատրել ինչու այլեւս կեանքը ուրիշ բան ըլլալու է, նոր իմաստ մը ունէր իրեն համար, ինչպէս գիշերները յաճախ կը տարուէր երազանքէն ու բունը կը փախչէր, մտածելով ինչե՛ր կրնար ընել Հայաստանի մէջ, մէյ մը որ հոն երթար, արմատ նետէր հոն: «Ես ուրիշ մէկն եմ, Միհրան», եզրակացուց:

—Երեւակայութիւն է ատիկա,— ըսաւ Միհրան մեղմօրէն ու ոտքի ելաւ:

—Դուն ալ մի սկսիր պապային պէս խօսիլ հիմա,— արագ պատասխանեց Մարի:

—Ի՞նչն ա՛, ա՛ն ինչ կ'ըսէ որ:

—Զե՛ս գիտեր, ճիւրտուն պէս է աս ամէնը... միայն ինքը եւ իր հանգիստը կայ աշխարհի երեսին... իր հին-զուլխ, պուրժուա գաղափարներով, ներմակ, փափուկ մատներով, հարուստներուն քուտիով, եպիսկոպոս շոյելով, ամէն բան գիտցող, դրամ հոտող, ինզինքին կարեւոր մարդու հովեր տուած...

—Հէյ, կեցիր նայինք, ի՛նչ կ'ըլլանք կոր, պապադ է ասիկա, մի մոռնար:

—Գիտեմ, գիտեմ, շատ լաւ գիտեմ:

Միհրան, յանկարծակիի եկած, քրոջը բովը նստաւ:

—Ի՛նչ կայ, Մարի:

Կարճ տեսեց լուսիւնը: Մարի եղբորը դարձաւ, ձեռքը բռնեց: Ուրախութիւն մը կը խաղար դէմքին վրայ:

— Զգէ հիմա ասիկա: Վաղը տարեդարձս է, — ըսաւ մեղմ ձայնով, — մեծ որոշումներ պիտի առնեմ, կ'ուզեմ որ առաջինը դուն գիտնաս:

— Քանի՞ տարեկան պիտի ըլլաս:

— Քսան մէկ:

— Ի՞նչ կ'ըսես, ե՞րբ եղար բսան մէկ, աղջիկ... պէտք է սօսենք ասիկա:

— Ճարտարագէտները ինչպէ՞ս ֆէֆ կ'ընեն, — հարցուց Մարի խնդալով:

— Զեմ գիտեր, սակայն ես դեռ ճարտարագէտ չեմ եղած, դեռ մէկ տարիս մնաց... Եկուր քեզի դուրս կը հանեմ, Բոյր-Եղբայր, չիմական ճաշարան մը... Եթէ մէկը չունիս արդէն:

Կարճ վայրկեան մը վարանեցաւ Մարի ու Միհրան չգիտցաւ, թէ լո՞ւրջ էր, թէ խաղ էր ըրածը: Յետոյ դարձաւ եղբոր.

— Լաւ, կ'ելլեմ, բայց խօսք տուր, որ մարդու պիտի չըսես, մա՛նաւանդ հօրս, չեմ ուզեր, որ ան գիտնայ:

— Ան չէ ամա, սա ի՞նչ կայ քո ես պապային միջես:

Մարի կախեց գլուխը ու վար թափած մագերտուն մէջէն չէր տեսնուեր դէմքը:

— Շատ խօսելիք բան կայ, Միհրան, վաղը քեզի կ'ըսեմ, դուրս ելլենք նէ:

— Զէ, չէ, հիմա՛:

Մարի վեր վերցուց գլուխը, երկար նայեցաւ եղբոր առատ մագերտուն, կապոյտ աչքերուն, զգայուն շրթունքներուն: «Աղուար տղայ է եղբայրս», անցաւ մտքէն ու հանդարտ ձայնով խօսեցաւ.

— Ի՞նչ ըսեմ... շատ հասարակ, սովորական, նոյնիսկ գոեհիկ մէկը կ'երեւի կոր աչքիս, ատենէ մը ի վեր: Եթէ մաման չըլլար, ես աս տունէն շատոնց փախած էի:

Լռեց, շրթունքը խածնելով: Ու Միհրանէն փախցնելով նայաճճը՝

— Յետոյ...

Կարճ լուսիւն մը:

— Յետոյ ի՞նչ:

— Կը յիշե՞ս, պապային փլինիքը թելէֆօնիսը մը կար, հըր-Եայ աղջիկ մը, խոշոր կուրծքերով, ճիւղէլի շատախօսին մէկը:

— Հա, կը յիշեմ:

— Անոր հետ էր...

Մարի չջարումակեց: Լուսն՝ գետինն նայեցան երկուքն ալ: «Ձեռքէն ատանկ բա՛ն կու գայ եղեր», խորհեցաւ Միհրան: Անցան վայրկեաններ, շփոթ, անգօր բարկութեամբ ծանրաբեռն:

—Մաման գիտէ՛:

—Ձեմ գիտեր... չեմ կարծեր... չէ, չեմ գիտեր:

—Վատա՛հ ես:

«Անշուշտ գիտէր, անոր աչքէն բան չի փախչիր», խորհեցաւ Միհրան: Նայուածքները իրարու հանդիպեցան ու տխուր, անպատմելի յիշատակներ, ցաւերու փշրանքներ պտտեցան անոնց միջեւ, զարնուող դուռներ, անբուն գիշերներ, մանկութեան օրերէն մնացած անբացատրելի պատկերներ...: Միհրան բռոջ ձեռքը առաւ խոշոր ափին մէջ, գայն իր բովը բաշեց.

—Ի՞նչ պիտի ընես:

—Ձեմ գիտեր, բոյրիկ, սակայն կարծես թէ միայն մէկ բան կայ ընելիք, սասանկ ատեններ:

—Ի՞նչ:

—Պիտի փորձեմ փրկել ինչ որ կը փրկուի: Ամէնէն առաջ, պէտք է ճշմարտութիւնը յայտնուի, բոլորիս, ամբողջ աղոտոս ճշմարտութիւնը, բացի...

Երկվայրկեան մը վարանեցաւ Միհրան, յետոյ ցած ձայնով՝

—Աստղիկէն, դեռ շատ խակ է սասանկ բաներու մէջ:

—Բայց մամա՛ն, Միհրան, մտածէ մամային մասին, լսէ նէ՛ կը մեռնի խեղճ կիւր:

—Բա՛ն մըն ալ չ'ըլլար, դուն չես ճանչնար մաման, շատ ուժով կիւն է անիկա: Ատանկ տկար-մկար կ'երեւայ ամա, ներսէն ուրիշ բան է, ես գիտեմ: Կը դիմանայ, դուն հոգո՞ մի ըներ: Ընտանիքին համար:

Տան անդորրութիւնը, տաբուկ, հանդարտ անշարժութիւնը վժժաց անոնց սկանչներուն: Յետմիջօրէի այդ պահուն հարուստներու թաղը գերեզմաննոցի նման սուտ երանութիւն մը կ'սպրի: Ու ցած ձայնով բոյր-եղբայր խօսեցան, Մարին պատմեց եղբոր ինչպէս հայրը ինկած-ելած էր Տանիէլին հետ, նըւէրներ, ժամադրութիւններ, պզտիկ նոթեր...

—Ասիկա գիտցածս է, ամբողջ օր ի՞նչ ի՞նչ եմ, ուզածնիմ կ'ընեն:

Միհրան լուռ մտիկ կ'ըներ:

—Յետոյ երկու ամիս առաջ միասին Տէնվըր գացին, բժշկական համագումարի:

Միհրան վեր վերցուց գլուխը.

—Դուն ինչէ՛ն գիտես աս ամէնը, ի՞նչ գիտես, որ բան մը անցաւ-դարձաւ հոն:



— Գիտեմ, տեսեր եմ, կը հասկցուի պասպամ: Գալէն ետք չէր գիտեր ինչպէս հանելի ըլլար մամային, ամբողջ օրը շուրջը կը դառնար, անուշ խօսքեր, կատակներ, ինչ գիտնամ... ամէն անգամ նոյնն էր:

— Մաման վստահօրէն հասկցաւ, ապուշ չէ:

— Բայց եէջ խօսք մը չըրաւ, եէջ յայտնի չըրաւ:

— Հարկաւ չ'ըներ: Ընտանիքին համար, որ չ'բայրայրուի:

Ներսէն հեռաձայնը ցնցեց զիրենք: Մարի ցատկեց ու անհետացաւ դուռնէն անդին:

Միհրանի համար աներեւակայելի օր մը եղած էր տուն գալը այս տարի՝ Եւրոպայէն դարձին, կեանքին մեծ ուրախութիւնը շակած՝ վագած-եկած էր ընտանիքին մօտ, ետ իր հին աշխարհի արմատներուն: Ու հիմա ամէն ինչ տակնուվրայ եղեր էր: Չեկած՝ որոշեր էր Մուշեղ հօբարը տեսնել, խօսիլ Հայաստանի մասին, բայց հիմա բոլորովին անկարելի կ'ըլլար ստիկա: Ռ'չ միայն հօբարը հին պատմութեան կը պատկանէր, այլեւ հայրն իսկ իր կեանքին աղբանոցին մէջը կ'իյնար. «Ուրիշ կնիկ սիրելը մեղք չէ», մտածեց, «Մեղքը՝ ստիկա ծածկելն է, սուտերը, կեղծիքը, ճշմարտութեան սպանութիւնը»: Բայց Միհրան չկրցաւ փարատել հօրը արարքին հարուածը, բութ ցաւը իր մէջ, մութ անկիւն մը...: Տեղ մը գեղեցկութիւն մը մեռեր էր ու սխրութիւնը կը տարածէր: Քոյրն իսկ կը հեռանար իրմէ, արդէն կը զգար պատ մը իրենց միջեւ, հեռուներէն կը հաղորդակցէին իրարու հետ, նոյն լեզուն չէին խօսեր, անոր խելքը-միտքը անշուշտ Հայաստան երթալ էր, յուսալով, որ հոն լուծուի մը կրնար գտնել իր տագնապներուն: Բոլորն ալ կը փախչէին. «Ես պիտի չ'փախչիմ» ըսաւ, ափը գոցելով, ճիշդ որ Մարին ետ սենեակ կը մըտնէր:

Լռութիւնը ետ հոսեցաւ անոնց միջեւ:

— Աստղիկն էր:

— Հա իրաւ, անիկա մոռցանք: Ի՞նչ շուրի վրայ է պզտիկ Բոյրիկա:

— Հիմա ճամբան է, գայ՝ իրեն հարցուր:

— Գիտե՞ս որ ձեր մէջէն միայն ան էր, որ ճամակ կը գրէր ինծի: Ամիսը անգամ մըն ալ թելէֆոնը կը բանար՝ **հալս-Քէֆս** կը հարցնէր:

Մարի խնդաց:

— Ինչո՞ւ կը խնդաս:

— Անոր հերոսն էիր դուն, չե՞ս յիշեր... վերը Աստուած, վարը Միհրան:

— Կ'երեւի մէկը դեռ չէ սիրած, սիրտը դեռ կոյս է:

Մարի նորէն խնդաց:

—Ատ անթիքա բառն ալ ուրկէ՞ գտար, Միհրան, ո՞ր դարուն մէջ կ'ապրիս, հէ՛:

Միհրան շտկուեցաւ բազկաթոռին մէջ, դարձաւ քոչ կողմը.

—Շատ առաջ գացեր ես դուն կը տեսնեմ, բոյրիկ: Հայաստանն ինչ գործ ունիս դուն, հոն շատ աւանդապահ են մարդիկ, բեզ կը խաչեն, եթէ շատ առաջ երթաս, հոն Ամերիկա չէ, զգոյշ եղիր: Իրենց պէս չընեն բեզ:

—Զէ, Միհրան:

Մարի նուրբ մատները եղբօր խոշոր, կարծր ձեռքին վրայ դրաւ կամաց մը: Փափուկ, էգ շարժում մըն էր, իբր պատասխան Միհրանին խօսքին: Մատնեմատին վրայ պարզ արծաթ մատանի մը կար:

—Ես համոզուած եմ, որ իմ տեղս հոն է, հոն է իմ ապագաս... եւ ապագան մերն է, իմս, բուկոյ, երիտասարդներունն է, հաւատա՛ խօսքիս:

—Գիտեմ, գիտեմ,— ըսաւ Միհրան արագօրէն,— ստ չէ հարցը... վստա՛հ ես, որ հոսկէ չէ որ կը փախչիս:

—Ինչէ՞ն կը փախչիս:

—Զեմ գիտեր:

Մարի ետ քաշեց ձեռքը, եղբօր նայեցաւ:

—Ի՞նչ լսեցիր որ:

—Լսեցի՛: Ոչինչ, բացարձակապէս ոչինչ: Հիմա եկայ նէ: Միայն գիտեմ, որ անցեալ տարի նշանուեր էիր Ստեփանին հետ, դուրս կ'ելլէիք, ծրագիրներ ունէիք:

—Դուն ալ դէմ էիր:

—Այո՛ որովհետեւ կանուխ էր տակաւին, բայց գիտես, որ սկզբունքով դէմ չեմ եղած... Դուն տա՛ք սիրտ ունիս, ինքնագլուխ աղջիկ ես, արագ որոշում կու տաս, մարդու մտիկ չես ընէր, անկախութիւնդ կը սիրես...

—Ստեփանը լաւ տղայ է, չեմ ուզեր ցացնել... ու կը սիրենք գիրար:

—Հակառակը չեմ ըսեր, բայց համաձա՛յն է բեզի հետ Հայաստան երթալու, տեղաւորուելու: Նկարիչ մը ի՞նչ կրնայ ընել հոն:

Մարիի ակնարկը սառեր էր անորոշ կէտի մը վրայ: Ու ցած ձայնով ըսաւ.

—Ցատակ բան մը չըսաւ տակաւին:

Ցաւ մը անցաւ Միհրանին սրտէն իր քոչ համար, այդ խելացի, կրակոտ, գրախիչ ու դժբախտութեան ճակատագրուած աղջիկը, հոս միս-միճակը... նախ հայրը, հիմա ալ բոյրը...

—Զեմ գարմանար,— ըսաւ մեղմօրէն,— բեզի պէս իտէալիստ մէկը չես գտներ աշխարհի երեսին այսօր, Մարի:

—Ի՞նչ օգուտ...

Այդ վայրկեան էր, որ փողոցին դուռը ուժգին բացուեցաւ ու Աստղիկ ներս մտաւ, երկվայրկեան մը սառեցաւ, երբ տեսաւ եղբայրը առջին...: Յետոյ՝ աչքերը փայլեցան, դէմքը փակուեցաւ զարմամբէն եւ, ուրախութեան ճիչ մը արձակելով՝ վագեցնետուեցաւ Միհրանին գիրկը, պլուեցաւ անոր վիզին ու սկսաւ համբուրել զայն:

—Ա՛խ, Միհրան, գիտնաս ինչքա՞ն կարօտցեր եմ քեզի... ո՛ր էիր այսօր ամիս, ե՛րբ եկար, հէ՛:

—Հագիւ մէկ ժամ կ'ընէ,— կրցաւ ըսել Միհրան:

—Ի՞նչ... Մարի, ինձի ինչո՞ւ չըսիր թելեֆոնով քիչ առաջ:

—Մոռցայ, Աստղիկ,— ըսաւ Մարի,— իրարանցումին մէջ միտքէս ելաւ:

—Զեմ հաւատար:

—Անկեղծ:

Աստղիկ քիչ մըն ալ տնտնաց եղբօր բով, բայց ա՛յ չխօսեցաւ բրոշը հետ: Յետոյ, առանց լուրի ու խօսքի, աստիճաններէն վեր վագեց, իր սենեակի դրան ուժգին գարնուիլը լսուեցաւ, յետոյ՝ լռութիւն:

Անցաւ վայրկեան մը: Միհրան Մարիին կողմը դարձաւ.

—Հայաստան երթալու մասին լո՞ւրջ ես:

—Ի՞նչ կը խորհիս:

—Ըսե՛ր ես միւսներուն:

—Ո՛չ:

—Ինչո՞ւ:

—Ի՞նչ պէտք կայ: Ես անկախ անձ եմ, տէրն եմ իմ կեանքիս, որո՞ւ հաշիւ պիտի տամ որ:

—Լաւ, լաւ, առ ամբողջը գիտեմք, սակայն ընտանիք ենք, Մարի, չես կրնար զուխդ առնել-երթալ: Հաշիւ տալ չէ, բայց ըսէ մեզի ծրագիրներդ, գիտնանք:

Միհրանին ձայնին մէջ խիստ, առնական շեշտ մը մտեր էր: Մարի նայեցաւ անոր ուժեղ թետերուն, դէմքի սուր գիծերուն: «Եթէ միայն եղբայրս չըլլար», խորհեցաւ ու յիշեց քիչ առաջուան համբոյրը. «Խեղճ եմ», ըսաւ միտքէն ու եղբօր համար գաղտնի սէրը կրկին ողողեց անոր երեսակայութիւնը, դող մը սահեցաւ թետերուն երկայնքին. «Եթէ միայն կարենայի նորէն համբուրել բերանը, գիս գրկէր», մտածումը անցաւ-գնաց. «Ի՞նչ կ'ըսէ կոր եղբայրս»...

—...Այդ պայմաններուն դուն չես դիմանար, սպասէ քանի մը տարի, լմնցուր համալսարանը, առ վկայականդ, մինչեւ այդ ատեն երկիրն ալ հանդարտած կ'ըլլայ... Ստեփանն ալ կ'աւարտէ դպրոցը, միասին կ'երթաք:

—Այդ ատեն շատ ուշ կ'ըլլայ, Միհրան... դուն մոռցե՛ր ես մեր պատանուքինը,— պոռթկաց Մարի անելի մօտենալով եղբոր մարմինին,— հօքարին պատմութիւնները Ֆրանսական լեզունէն, Պապույին, պարոն Յովհաննէսին պատմածները հայ բանակէն, մոռցե՛ր ես ինչ երդումներ ըրինք ես ու դուն Ֆրէզնոյի այգիներուն մէջ... ա՛յ չե՛ս ձանձրացեր օտար ըլլալէն, ուրիշին լեզուն գործածելէն, ուրիշին երկիրը ապրելէն....

—Այն ատեն երեխայ էինք, աղջիկ, երեխայ, հիմա մեծցած ենք, այդ ատեն խաղ էր, հիմա ամէն ինչ լուրջ է, փոխուած է, նոյն անձերը չենք այլես...

—Վատա՛հ ես,— հարցուց Մարին:

—Օ, Բ՛ռն, այդ խաղը մի խաղար ինծի,— ըսաւ Միհրան կարծր բռնով մը:

—Խաղ չեմ խաղար կոր, Աստուած վկայ, ճշմարտութիւնն է կ'ըսեմ քեզի:

—Հայաստանը քու տեղդ չէ, դուն Սփիւռքի պտուղ ես, հոս միայն կրնաս ծաղկիլ... սակայն գիտեմ ինչ թիփի ես, չեմ պընդեր Սփիւռքի մասին, ատիկա խառնուածքի հարց է, արթիսքներու, միսքիքներու, յեղափոխականներու պէս: Թէ՛ մնալը, թէ՛ երթալը...

—Ատ մէկը ճիշդ է... ինչ ալ ըլլայ նէ, ասկէ գէշ իսկ ըլլայ նէ՛ պիտի երթամ: Ամբողջ կեանքս ատ սորված եմ, տունէն, ակումբէն, կուսակցութենէն, դպրոցէն, քեզմէ:

Կուսիւն տիրեց:

—Ամէն պարագայի,— ըսաւ Միհրան զուկը մօտեցնելով անոր,— մաքուր պիտի երթաս հոսկէ, պիտի չփախչիս, քաջ ես անողջ:

Այդ վայրկեան էր, որ փողոցին դուռը կամաց մը բացուեցաւ ու միջահասակ, լայն հագուած, ալեխառն, ուրբուն մազերով ակնոցատուր մարդ մը ներս մտաւ, զգուշութեամբ շուրջը նայեցաւ: Հագիւ Միհրանը տեսած՝ պայծառացաւ դէմքը, բացաւ թերերը ու յառաջացաւ դէպի տղան:

—Միհրան, տղաս, աս ի՛նչ անակնկալ է, ե՛րբ եկար, ինչպէ՛ս ես...

—Քիչ ատաջ, կէսօրին:

—Եկուր նայիմ:

Հայր ու տղայ փաթթուեցան, զարկին իրարու կռնակին, անկապ քանի մը խօսքեր ըսին, յետոյ անորոջ՝ կայնեցան իրարու դէմ դիմաց, յանկարծ Մարին տեսան.

—Աչքդ լոյս, Մարի, աղբարդ եկաւ ի վերջոյ: Հիմա ուզածիդ չափ Հայաստան հոլովէ, քեզի...

—Հայրիկ, ամանկ մի խօսիր Հայաստանի մասին,— ըսաւ Մարի ջղայնութեամբ,— հեզմելէ գատ ուրիշ բան չե՞ս գիտեր... սրբութիւն ըսուածը չկա՞յ քեզի համար:

Թագուոր դարձաւ Միհրանին.

—Տես, տես, բերանս չեմ կրնար բանալ իր առջեւ, անմիջապէս կը յարձակի, կը խածնէ... հիմակ ալ սրբութիւն մը հաներ է մէջտեղ: Դո՞ւք ինչ գիտէք սրբութեան մասին, դո՞ւք մեր օրերու մոտենոն շոնոյթներ...:

—Մարին իրատունք ունի ջղայնանալու,— ըսաւ Միհրան շատ հանդարտ ձայնով:

—Դո՞ւն ալ սկսար:

—Ո՛չ մոտենոնի, ոչ ալ շոնոյթի հարց է ասիկա, ամէն տարիք իր սրբութիւնը ունի... քեզի համար սրբութիւն չկա՞յ, ի վերջոյ, բժիշկ ես:

—Անշո՛ւշտ որ կայ, սակայն՝ կեանքի մէջ...:

Ձայնը երկարեցաւ: Ձեռքի դերասանական շարժում մը, շատ կարճ, առկախ լուսիւն մը: Ու յետոյ՝

—Կեանքի մէջ՝ կարեւորը յաջողիլն է: Մնացեալը...:

Թագուորի դէմքին վրայ տարտամ խնդուք մը կար: Մարի ոտքի ելաւ ու հօրը դառնալով՝

—Այո, մնացեալը:

Թագուոր արագ մը նայեցաւ իր գաւակներուն, նորէն ձեռքի անորոշ շարժում մը օդին մէջ, ու՝ լուսիւն: Մարին յանկարծ պայթեցաւ.

—Ձե՞ս համարձակիր: Լաւ, ես ըսեմ քեզի: Մնացեալը — հայրենիք, ժողովուրդ, կեանքի սրբութիւններ, ընտանիք ու գաւակ, կին-միւս... ասոնք երկրորդական են, ասոնք կը գոհուին, չէ՞:

Հայրը սակայն պահած էր իր գուարթ տրամադրութիւնը: Քայլ մը առաւ դէպի տղաքը, թեւերը դրաւ ամուսնացուած, մօտեցուց իրեն ու ըսաւ.

—Ես հին **ռեթիմ**ի մարդ եմ, գլուխ չեմ կրնար ելլել մոտենոն երիտասարդներուն հետ: Ամանկ որ՝ չկոտիւնք առաջին վայրկեանէն, կ'ըլլա՞յ: Երթամ տուշտ ամենմ, կու գամ՝ կը շարունակենք:

Արագ, առոյց քայլերով դէպի աստիճանները գնաց ու վեր վազեց:

Երբ առանձին մնացին, Միհրան դարձաւ բռնջը.

—Ահաւոր վիճակ է ասիկա, Մարի: Դերասանութիւն կ'ընէ կոր իր տան մէջ: Մէկէն օտարացաւ ինծի, չեմ կրնար կոր նայիլ իրեն:

—Իմ սիրտս կտոր-կտոր կ'ըլլայ կոր: Ա՛յ երեսակայէ խեղճ մամային վիճակը:

Լրեցին, սուգուած իրենց մտածումներուն մէջ:

—Ան չէ ամա, ո՛ր է մաման, ե՛րբ տուն կու գայ:

—Ձի բռնուիր: Ինչո՞ւ:

—Հէջ: Օթոյին պէտք ունիմ:

—Պապայինը առ:

—Ձէ, չեմ ուզեր:

—Իմա առ:

Հեռախօսը գարկաւ ներսը, տեղ մը: Մարի վագեց դուրս ու կորսուեցաւ: Միհրան դանդաղ, պատահական բայլերով գնաց պատուհան ու աչքը դուրս՝ անշարժացաւ:

Գալէն ի վեր, անստոյգ անձկութիւն մը կը կծկէր սիրտը, որ միայն մօր անսովոր բացակայութեան հետ կապուած չէր, այլ նաեւ կը կուտակուէր Մարիին ձայնին, խօսքերուն ու նայուած-  
ֆին մէջ, անոր անգուպելի, ծայրայեղ որոշումներուն շուրջ: Իրմէ չորս տարի պզտիկ՝ Մարին սակայն միշտ իրմէ յառաջադէմ ե-  
ղած էր, իրմէ անլի յանդուգն, անլի խենթ: Բռտն, նախանձ սէր  
մը իրարու բերած էր զիրենք Պէյրութի օրերէն, երբ դեռ մա-  
նուկ՝ միասին Մուշեղ հօբարին հնակարկատի կրպակին սոջին  
նեղ փողոցին մէջ կը խաղային, կը կռուէին: Յետոյ՝ Պատանե-  
կան միութիւն մտեր էին, ուր բոլոր գունագեղ, շլացուցիչ անհա-  
տականութիւնը տիրապետած էր ամբողջ խումբին ժողովներն ու  
պտոյտները:

—Միհրան, քեզի է:

Քոյրը բովը եկեր էր ու կը դպնային մարմինները:

—Ո՞վ է:

—Աղջիկ մը, չեմ գիտեր, ամերիկացի մը:

—Մի երբար, քեզի խօսելի՞ք ունիմ:

Միհրան ներս անցաւ, գոցեց դուռը ետեւէն:

—Ես սենեակս եմ, Միհրան, վերջը հոն եկուր, — կանչեց Մա-  
րին ու վեր գնաց:

Փողոցի դուռը կամաց մը բացուեցաւ ու տիկին Աշխէն ներս  
մտաւ: Բարեձեւ, ֆառասուննոց, նուրբ դէմքով, սուր եւ արագ  
նայուածքով կին մըն էր: Ձեռքի սեւ, պզտիկ պայուսակը կախեց  
պատէն, շուրջը ֆննեց ու լսեց Միհրանին խօսակցութիւնը հեռա-  
ձայնէն: Անշարժացաւ եղած տեղը ու խոր կեդրոնացումով առաւ  
իր սղուն ձայնը, ձեռքին շարժումները, դէմքին խաղը: Ձայնին  
քունէն կարծեց հասկնալ որո՞ւ հետ կը խօսէր ու ժամադրութիւն  
կու տար: Իր պզտիկ մանչը ետ եկեր էր...: Ուրախութիւն մը  
խաղաց դէմքին վրայ ու պահ մը տունը իր մանր շշուկներով,  
մթին հոտերով ու պիրկ մտերմութեամբ գրկեց զինքը, լեցուց  
գիտակցութիւնը...

—Հէ՛յ, մամա... ո՛ր էիր...

Միհրանին զուարթ ձայնը զինք իրականութեան բերաւ յանկարծ, ցնցուեցաւ ու գրկեց անոր հուժկու մարմինը, շոյեց անոր զուլտը ու մազերը, հանգչեցուց այտը անոր մազոտ երեսին, գոցեց աչքերը...

—Միհրանս, Միհրանս, բարի եկար, տղաս:

Երկար իրարու նայեցան, առանց խօսելու, աչքերը խոնաս Յետոյ՝

—Ինչպէ՛ս ես, տղաս:

—Լաւ եմ, մամա: Դո՛ւն ինչպէս ես:

—Սանկ-ճանկ:

Անձկութեան շուք մը անցաւ Աշխէնին դէմքէն: Պահեց տղուն ձեռքը ասիւրուն մէջ:

—Եկուր նստիմք, պատմէ ինձի ինչե՛ր կ'ընես կոր Պոսթընի մէջ, ինչպէ՛ս անցան վերջին քննութիւններդ, աղջիկները քեզի հանգիստ ձգած ռոնի՛ն, ինչո՛ւ ինձի նամակ չես գրեր, հէ՛, հեռածայնը չի բաւեր, երբ կը խօսիմ այդ գործիքով, առանց իրար տեսնելու, ինզիմքս անելի հեռու կը գգամ, ձայնդ հովի պէս կ'անցնի, բայց նամակը ուրիշ է, կը մնայ, դուն ես, բու գիրդ, սիրտդ...

Լռեց, թաշկինակը քսեց աչքին, յետոյ փրփին տարաւ, մեղմ խնդաց, ետ տղուն նայեցաւ:

—Ինչքա՛ն մեծցեր ես, տղայ, սա վերջին ամիսները... երբ կը յիշեմ մանկութիւնդ, հիւանդագին, նդիւմ, ամէն տարի պրօն-շիքը...

—Է՛, ատիկա պատմութեան կը պատկանի, հիմա ամէն ինչ փոխուած է:

Սակայն Միհրանին սրտին մէջ տխրութիւն կը կուտակուէր, ամէն երկվայրկեան: Մօրը դէմքին գիծերը պիրկ, յոգնած երեւացին իրեն. «Կը ծերանայ կոր մամաս», խորհեցաւ, «բայց դեռ իր գրաւորութիւնը չէ կորսնցուցած», շարունակեց:

—Մարին լաւ գտայ, կարգին մոտեռն աղջիկ մը եղեր է, մամա:

—Տեսա՛ր, տեսա՛ր:

—Դուն ալ լաւ կ'երեւիս կոր:

Աշխէն սիկարէթ մը վառեց, փչեց ծուխը դէպի վեր, շարժեց գլուխը:

—Ձէ, տղաս, լաւ չեմ:

—Ի՞նչ ունիս որ:

Չպատասխանեց, ձեռներուն նայեցաւ, խորունկ շունչ մը առաւ:

—Ետքէն կը խօսիմք:

—Ինչպէս որ կ'ուզես:

Ծանր լուսինն եիմա ու իր շէն, վառվուռն մայրը, որ գլուխը կախ, անմխիթար հոն նստեր էր իր անասելի տառապանքին հետ — պատկերը ցնցեց Միհրանը, ինքը՝ որ այնքան լեցուն է կեանքով ու խանդավառութեամբ...: Ետ եկաւ յանկարծ Հայաստանի մտածումը եւ ամբողջ եռանդը, որ այդ բառը կը գրգռէր իր երեսակայութեան մէջ, ամբողջ սէրը պատրաստ էր տալու աշխարհին...: Ու բառերը քակուեցան անզսպելի, ջերմ.

—... Բայց Հայաստանը կայ, մամաս, ազատ, անկախ Հայաստանը, մեր հայրենիքը ի վերջոյ ազատ պետութիւն... կըրմա՛ս երեսակայել... ատո՛ր ինչ կ'ըսես, հէ՛, խենթեմալիք բան, չէ՛, մամաս, ըսէ... Մուշեղ հօրաբը, Պապուն, մօրբուրը, բոլոր բոլորը... մեր պգտիկ կեանքերը, մեր ճղնիմ տարտերը քանի՞ վարաւ կ'արժեն ատոր բով, հէ՛...:

Անզգալաբար ոտի էլեր էր: Հիմա գրկեց անոր վտիտ իրանը, սեղմեց կուրծքին ու բառերու, պգտիկ, անկապ հարցումներու, նախադասութիւններու հեղեղը ողողեց անոնց գիտակցութիւնը: Քանի՞ վայրկեան մնացին այդպէս, տրամաբանութենէ դուրս, անձնատուր իրենց զգացումներու պոռթկումին: Կեանքը ետ եկած էր Աշխենին:

—... Մարին տեսնելու էիր դուն... վերջին ամիսները խենթի պէս բան մը եղեր էր. «Միհրանը մէյ մը գայ», կ'ըսէր-կը կեմար: Ի՞նչ ծրագիրներ ունի, ի՞նչ երազներ կը հալածէ... գմայլելի աղջիկ մը եղած է... իմ երիտասարդութիւնս կը յիշեցնէ...

—Տեսայ, տեսայ, խօսեցանք, վերն է հիմա:

—«Հայաստան պիտի երթամ, ուր կեանք պիտի սկսիմ», կ'ըսէ ու կ'ըսէ: Իրապէս սքանչելի է տեսնել ձեզի պէս մաքուր, կեանքոտ եւ իտէլիստ երիտասարդներ, հայութիւնը ձեր սրտին մէջ պահած... գիտնաս որքա՛ն ուրախ եմ, որքա՛ն հպարտ:

Կախեց գլուխը, ծածկելու համար արցունքները: Միհրան շըւարած իրեն կը նայէր:

—Կեցիր նայիմք, մամա, դուն համաձա՞յն ես, որ Մարին Հայաստան երթայ միս-միմակ այս օրերուն, տունի անփորձ, միամիտ աղջիկ մը:

—Հարկաւ... սիրտը կը քաշէ, մարմինը կը քաշէ, սիրահարութեան պէս բան մըն է ասիկա, Միհրան: Քրոջդ առաջին մեծ սէրն է:

—Մամա, դեռ պատրաստ չէ, ուսումը չէ աւարտած, կեանքի դժուարութիւնները ինչ են՝ խապար չունի: Հայաստանն ալ բառս է, բառս: Ի՞նչ գիտէ կեանքի մասին:

—Թող երթայ, թող երթայ, Միհրան, կը սորվի ամէն բան հոն կը սորվի:

—Իսկ նշանածը, ա՛ն ինչ պիտի ընէ:



—Հէջ հոգս չէ... շատ լաւ փորձ մը կ'ըլլայ իրե՛ն ալ, անո՛ր ալ: Թող ընտրէ՛ մէկը կամ միւսը, նշանա՞ծ, թէ Հայաստան: Ինչ որ ընտրէ՛ ան է շիտակը:

Հրած-մնացած էր Միհրան: Ամէն անգամ երբ մայրը այդպէս բռուն ու համոզուած խօսէր՝ ինք կը հմայուէր անկէ ու չէր համարձակէր հակառակիլ: Հիմա մայրը գացեր էր պատուհանին մօտ, թեւերով գրկած իր իբանը ու դուրսը կը դիտէր ակամայ կեդրոնացումով: Միհրան հանդարտ խօսեցաւ.

—Միայն թէ փախուստ չըլլայ:

Աշխէն անմիջապէս իրեն դարձաւ, մզմեց սիկարէթը սեղանի-կին վրայ:

—Ի՛նչ փախուստ, ի՛նչ բան, տղաս, ինչէ՛ն պիտի փախչի, բաց արջիկ է:

—Հոսկէ, տունէն:

—Ի՛նչ, ես լաւ մայր չե՛մ եղած որ:

Միհրան յանկարծակիի եկաւ անոր ձայնին սուր շեշտէն, դէմքին խստութենէն, անձին մէջ տեղ մը կուտակուած ննչում-նեբէն:

—Ո՛չ թէ դուն, բեզմէ՛ չէ որ կը փախչի, այլ՝ հօրմէն:

Աշխէնին պատասխանը դանակի պէս ինկաւ իր խօսքին վրայ.

—Հօրմէ՛ն, Թագուորէ՛ն... դուն ի՛նչ գիտես:

Հարցումը բնագդակամ ուժ մը ունէր ներսը, որ տպաւորեց Միհրանը ու զգաց ինչպէս մայրը պիտի պաշտպանէր ընտանի-քին ոեւէ մէկ անդամը, յանցաւոր կամ ոչ՝ եթէ յարձակումի ենթարկուէր ան: Ու շատ հանդարտ, ըսաւ մօրը, դէմքը մօտեցնելով անոր.

—Ամէն ինչ գիտեմ, մամա:



Ժամը 7ին ամբողջ ընտանիքը ընթրիքի նստած էր:

—Կարօտցա՛ր տունի կերակուրներուն:

—Հարկաւ:

Միհրան գլուխը չվերցուց պնակէն:

—Յանախ ես մի՛նակս բաներ մը կը շինէի: Կամ ալ արաբ նպարավանատ մը կար մեր թաղը, անկէ կ'առնէի: Երբեմն ալ ընկերուհիս կը շինէր:

—Ո՛վ է ատիկա:

—Ձեռնանշար, հայ աղջիկ մըն է, քաղաքական գիտութիւններ եւ ժուրնալիզմ կ'ընէ համալսարանը:

—Էն շատ ի՞նչ կարօտցար Սան Ֆրանսիսկոյէն:

—Ոչինչ, բացարձակապէս ոչինչ: Անշուշտ գեղեցիկ քաղաքը կայ, կամորջները, մեր տունէն տեսարանը, ինչ գիտնամ, այդ գարնանային երեկոներու տխրութիւնը...

—Հայտէ, բանաստեղծ կտրեր ես...

—...Հաւանաբար Պոլիսը ստանկ տեղ մըն է: Բայց հայերը...

Վեր մայեցաւ: Մայրը մտիկ կ'ընէր իրեն ուշի-ուշով: Հայրը մօրը կը մայէր գողի պէս:

—Բայց հայերը, օ՛հ, հայերը, Աստուած մի արասցէ... իրենց չէրչի միտներով, զգացումներով... ինչպէ՞ս կարելի է հարիւր տարի ապրիլ աշխարհի է՛ն բաց, է՛ն մշակուած քաղաքներէն մէկուն մէջ ու ննջասենեակ-նաշասենեակ-գործատեղի եռանկիւնէն դուրս չելլել, հէ՛, ահաւոր չէ՛: Ձէ, չեմ կարօտցած իմ սքանչելի ազգս, հոյակապ ազգս:

—Մի հեզներ, Միհրան, ատիկա տկարներուն ձգէ, ամոռն ատկէ ուժ կ'առնեն:

—Ձէ, չէ, անկեղծ եմ, Մարի... ես կը պաշտեմ ազգս:

Ատեն մը լուռ կեցան, Աշխէն սիկարէթ մը վառեց, սարէն-ձորէն քիչ մը խօսեցան: Յետոյ՝ Միհրան նորէն ձեռք առաւ կացութիւնը:

—Ամէն պարագայի այլեւս մի խօսիմ ինձի կարօտի մասին: Կարօտը ամլացնող զգացում է, ծերերուն, հիւանդներուն ձգեցէք: Մահ է, մահ՝ այդ կորսուած անցեալը կարօտնալը: Ա՛յ կը մերժեմ որեւէ բանի կարօտնալ, ո՛չ անձ, ո՛չ հայրենիք, ո՛չ կորսուած դրախտ...: Սիրել՝ այո, ցանկալ, տոփալ՝ այո, բայց կարօտնալ՝ ոչ:

Յանկարծական, վնասական շեշտը լուրիւն պարտադրեց:

—Ի՞նչ ըսել է տոփալ,- հարցուց Աստղիկ:

Միհրան ու Աշխէն իրարու մայեցան:

—Մէկը շատ-շատ ցանկալ,- ըսաւ Միհրան,- խենթի պէս ցանկալ:

—Ըսէ՛ք բառը, մանքմ, ի՞նչ է Արչի Պանքըր կտրեր է՛ք բռնորդ: Տոփալ կը նշանակէ մէկու մը հետ պատկիլ ուզել, սիրաբանիլ,- ըսաւ Մարի՝ առանց վեր մայելու պնակէն:

—Ուրիշ բառ չկա՞յ,- հարցուց Միհրան, կէս խնդուք մը երեսին:

—Է, է, հերիք է, Միհրան,- կտրեց Աշխէնին ձայնը:

Ու շարունակեցին ընթրել, հատ ու կտոր խօսքեր պտտեցան սեղանին վրայ, բայց իրաքանչիւրը մնաց բռնուած իր ներքին տագնապի պիրկ ցանցին մէջ:

Թագուոր վար դրա դանակը ու իր տղուն դարձաւ.

—Ատ ի՞նչ էքսքրա աղջիկ է եղեր, որ ասանկ ժամանակներ  
բաղաճական գիտութիւններու կը հետեւի կոր: Պրաւօ իրեն:  
Քոյրիկիդ պէս բան մըն ալ ան է, չըսե՛ս: Ի՞նչ է անունը:

Միհրան ու Մարի իրարու նայեցան:

—Ի՞նչ կարեւորութիւն ունի որ անունը: Հայրենասէր, խելացի  
աղջիկ մըն է, իրեն պէս հարիւրներով կան Ափիուֆի մէջ.— Ը-  
սաւ Միհրան:

Ետ աթոռին կոթնեցաւ: Անցնող երկու ժամուան տետողու-  
թեան, սրտին մէջ անձեւ բարկութիւն ու գոյք կուտակուեց էին  
ու իրարու խառնուեց: «Ա՛ս է իմ ընտանիքս, իրար հեզնող, խա-  
բող, ստող... աւ ի՞նչ անբաժնութիւն է», խորհեցաւ: Հօրը նայե-  
ցաւ ու հրեայ աղջկան սեւ, երկար մազերը աչքին եկան, անոր  
մերկ մարմինը հօրը թեւերուն մէջ ու անդին մայրը միս-միմակ  
հսկայ, ամայի տան մէջ, յունական ողբերգութեան մը հերոսու-  
հիին նման: Կեանքի ահաւոր ամարդարութիւնը, ժրի տառապան-  
քը ու ցաւը թափած ամէն կողմ սա տունին մէջ՝ ու ինք անկա-  
բող որեւէ բան ընելու, ինքը, յստակ, շիտակ, պարկեշտ դատու-  
մի մարդ, վնասկան ու կորովի. «Տօնդ կարգի պիտի դնես,  
Միհրան», կրկնեց միտքէն: Հայրը սկսեց էր ռոտել:

—Եւ եթէ Բաղաճական դէպքերը ասանկ երթան, հայ ժողո-  
վորդը շատ պէտք պիտի ունենայ անոնց:

Ձէր ուզեց հօրը հետ մտերիմ, անձնական միտք մը բանալ ու վի-  
ճի, չէր կրնար նայնիսկ շիտակ նայիլ անոր: Մայրը լուռ կ'ուտէր:

—Երթամ գինի բերեմ որ ճնկեմք, ասիկա բացառիկ օր է,—  
ըսաւ յանկարծ Մարի ու տեղէն ցատկելով խոհանոցին կողմը  
վազեց:

—Ձէ, չէ, պէտք չկայ... Ետ տեղդ եկուր:

Անապարանք մը կար Թագուորի ձայնին մէջ, վախի մը,  
փախուստի մը տարտամ թելադրանքը: Յաւ մը կծկեց սիրտը.  
«Ա՛ս է եղեր հայրս», անցաւ միտքէն ու դարձաւ քրոջ.

—Գնա՛, գնա՛ բեր... մենք կը խմենք:

Միհրան ոչ մէկ յստակ ծրագիր ունէր իր ընելիքին մասին:  
Ջգաց, որ հայրը զինքը կը փնտտէր աչքերով, բայց ինք խուսա-  
փեցաւ անկէ: Ու այն ատեն իր մէջ անելի փրփրեցաւ անոր ան-  
ձին շուրջ յիշատակներու փոթորիկը...: Մանկութեան միակ ըն-  
կերը եղած էր, ժամեր, ժամեր անցուցած էին Պէյրութի լեռնե-  
րուն ու պուրակներուն մէջ՝ ամառները, գիւղի ճամբաներուն, օ-  
ղափոխութեան պարտէզներուն...: Աչքին ծայրով դիտեց Մարին,  
որ սենեակին մէջ լուռ կը շարժէր, կը շարէր գաւաթները ու կը  
լեցնէր գինին, յետոյ կ'անցնէր, բարկութիւն եւ անզուսպ հրճը-  
ւամբ իրարու խառնած:

141-2001



— Իրա՛ն չես ուզեր, հայրիկ, — հարցուց Մարի ու չսպասելով պատասխանին, վերցուց բաժակը, քննեց շուրջը ու սպասեց: Քոյրը երբեք այդքան գրառիչ չէր տեսեր, վտանգի հետ գիտակցաբար խաղցողի մը պայմարն ու վայելիքը սպրելով ամբողջ էութեամբ: Այտերը կարմրած, խոշոր, սեւ աչքերէն չարութեան փայլ մը շողալով, երկայն մազերը հիմա ետ նետելով՝ բանալու իր դէմքին ամբողջ պայծառութիւնը, դերասանական ու մաշե խորերէն ապրուած՝ վերցուց բաժակը ու ըսաւ, հատիկ-հատիկ, ներգոր ձայնով.

— Խմենք բոլոր անոնց կենացը, որոնք մոր ծնող, անկախ Հայաստանին մէջ իրական հայր մը գտած են, որուն պատրաստ են զոհելու իրենց կեանքը:

Գուարը ձեռքը՝ եղբոր բով գնաց գրեթէ վագելով, դպցուց ամոր գաւաթին, թելը անցուց ուսին շուրջ, մօտեցաւ անոր գլուխին, զոցեց աչքերը ու համբուրեց անոր այտը: Յետոյ անցաւ անխօս, ինքնամփոփ նստած մօրը բով, ծոցեցաւ ու գայն ալ համբուրեց: Յետոյ մնաց եղած տեղը, շարժումի գսպանակը սպառած:

Միհրան զգաց, որ ոտքի ելեր էր: Մայրն ու բոյրը արեւածաղիկի պէս իրեն դարձեր էին: Անծանօթ պատճառով մը միտքը մէկէն փակուեցաւ:

— Ես ամբողջութեամբ Մարիին հետ եմ: Հայրենիքը հայր է մեր բոլորին ու մենք Սփիւռքի մէջ անառակ որդիներու պէս զացեր-հեռացեր ենք դուրսերը, բայց կը սիրենք մեր հօրենական տունը, Հայաստանը: Բայց մենք Հայաստանէն հեռու եւ անկախ կը մնանք, որպէսզի մենք մեր ուժերով հասունանանք, առանց հայրական հովանիին ու խրատներուն: Մենք Սփիւռքի մէջ պիտի ապրինք իբր հայ, որովհետեւ որոշեր ենք այդպէս, պարզապէս մեր խօսքը ունինք եւ սիրոյ մեծ ուժ մը կայ կեանքի մէջ ու մենք եւ հայ ըլլալը ատոր կապուած է: Ես կը խմեմ սիրոյ այդ ուժին, մաքրութեան ու գեղեցկութեան կենացը: Սէրը, սէրը ամէն բան է: Մարդ եթէ չսիրէ, չսիրէ իր ընտանիքը՝ չի կրնար իր հայրենիքը սիրել, անկարելի բան է: Ես կ'ուզեմ, որ կեանքի դրական, ապրող բաներու սէրը լեցնէ մեր բոլորին սրտերը եւ կեանքերը, մաքուր, անսահման, տխուր եւ ուրախ սէրը...

Լոնց, շուարած: Ի՞նչ պիտի ըսէր հիմա, խօսքը ո՛ր կը տանէր կոր զինքը, ինչ պարապ բաներ էր ըսածը... կրնա՞ր անելի առաջ երթալ, չէր գիտեր: Մարիին աչքը բռնեց, գարմանքով ու հիացումով լեցուն նայուածքը: Աստղիկ իր բովն էր, լոկ-մնչիկ նստած: Մեղմօրէն ձեռքը անոր ուսին դրաւ ու շարունակեց.

— Պապա, մամա, Մարի եւ Աստղիկ, լաւ մտիկ ըրէ՛ք ինչ պիտի ըսեմ: Ես այսօր հասկցայ, որ մեր ընտանիքը, Յակոբեան

ընտանիքը, կը ԲայՖայուի կոր, ներսէն-դուրսէն կը պայթի կոր եւ ամէն մէկս գլուխը առած տեղ մը պիտի երթայ: Եւ հաւանաբար ասիկա մեր ընտանիքին վերջին ընթրիքը ըլլայ, բոլորս մէկ, մէկ սեղանի շուրջ:

Լոնց, զգալիօրէն յուզուած: Յետոյ վերցուց բաժակը, ումայ մը առաւ:

— Ես կ'ուզեմ, որ մաքրուած, ամբողջացած, սրբուած բաժնուիմք իրարմէ, հոգիները առողջ ու ընտանիքին յիշատակը ողջ ու գեղեցիկ: Ես...

Նորէն փրթաւ խօսքին թելը: Լոնց, փորձելով կարգ ու կամոն դնել մտածումներուն մէջ:

— Աս ի՞նչ խօսքեր են, Միհրան, ուրկէ՞ հանեցիր ԲայՖայուելու, բաժնուելու սա պատմութիւնը: Ատանկ բան չկայ:

Իր ամբողջ հեղինակութեամբ խօսեր էր Թագուոր: Վար դրած էր դանակն ու պատառաբաղը. եթէ անձկութիւն մը կար սրտին մէջ՝ բնաւ յայտնի չըրաւ:

— Դունմ էիջ մը կը մեծցնես, կը խոշորցնես խնդիրները, պզտիկուց ալ անանկ էիր, մամայիդ Բաշեր ես: Հանդարտ մը-տածէ ըսածիդ մասին: Ի՞նչ է ըսել ուզածդ, ան չէ ամա:

Սակայն Միհրանի համար, այդ վայրկեան հայրը չէր կարելուրը: Ան կորսուած էր արդէն իրեն համար: Կարելուրը սա խումբն է, ընտանիքը ու անոր ապրումը, իր ու բոյրերուն արմատը, հաւաքական անձը, որ իրենմ հինգը մէկ կազմեր էին այդքան տարի երկրէ երկիր, փոթորիկէ փոթորիկ, կազմեր էին հօր ու մօր շուրջը, այդ իւրայատուկ մտերմութիւնը, սիրոյ ու կոյր վստահութեան շուրջ իրարու փաթթուած իրենց մարմինները, զգացումներու բարդ, բայց վնիտ ցանցը, անթիւ յիշատակները, յոյսերը, երջանիկ պահերը, յաջողութիւնները, բոլոր մեծ ու պզտիկ գաղտնիքները, երազները, կոհիւները, վէճերը...

Մայրը առջեւը հակեր՝ անշարժացեր էր, աչքերը պաղած, բերանը կուղպ: Ինչքա՞ն էիջ բան գիտէր իր մօր մասին, հակառակ որ ան եղած էր կեդրոնը իրենց մանկական աշխարհին, մինչեւ պատանութեան մէջ ալ, երբ ակումբի կեանքը սկսեր էր Բաշել գիրենմ ու տունը վերածուեր էր պահեստի աշխարհի մը, տեսակ մը գաղտնի անկիւն, ուր բոլոր մեղքերը, յանցանքները կարելի էր պահել: Մօրմէն ստրված էին գիշերուան եօթը աղօթքները, սեռային կեանքի արգիլուած, խորհրդատր ու Բողարկուած կտորուանքները, ան էր, որ ողողած էր իրենց գոյութիւնը սիրելու եւ սիրուելու անյազ ախորժակով. «Մարդիկ բարի են, տղաս, միայն սիրուիլ կ'ուզեն, սիրտդ միշտ լայն պիտի բանես», ըսեր էր իրեն:

Երկվայրկեան մը միայն տներ էր այս պտոյտը իր անցեալին մէջ: Հիմա խօսեցաւ բոլորին, անելի ինքնավստահ.

— Ես կ'երթամ կոր, չեմ գիտեր երբ եւ ուր, Պոսթըն, Իտալիա, Մոնթէալ, Փարիզ, Պէյրուս, Սիտնի... որեւէ տեղ Սփիտֆի մէջ նոյնն է, որքան ատեն որ մարդիկ իրարու հետ կապը կը պահեն...: Սփիտֆի մէջ ամէն տեղ օտարն են, ուրիշն են, տարբերն են, հոյակապ ինքնութիւն մը՝ որ բնաւ չի կորսուիր ու կը պահէ իր միութիւնը, տեսակ մը ապագայ մարդկութեան ըլլալի՜ք հիմակուրնէ ե՞նք մենք արդէն, միշտ տէրն ես բու անձիդ, միւսներէն անելի արթուն ես, անելի ուժով ես, անելի ազատ...:

Երեց կարն պահ մը: Արագ խօսած էր, չկորսնցնելու համար մտածումին թելը: Դժգոհ էր սակայն. «Դասախօսութեան պէս դուրս եկաւ, կարծես գոց սորված քարոզ ըլլայի», խորհեցաւ: Ուզեց հիմա գաղափարները համադրել, բնականացնել, բայց չըկրցաւ: Դարձաւ բռնջը կողմը.

— Մարին ալ կը մեկնի կոր, անիկա ալ Հայաստան պիտի երթայ հոն մնալու համար, վերջնականապէս:

— Ի՞նչ:

Անզգալարար փախչեր էր բերնէն, հակառակ որ կը զգար, թէ ատանկ բան մը ըլլալի՜ք էր: Անակնկալի եկած իր ձայնէն, Թագուոր Մարինն թելը բռնեց.

— Ժի՛շդ է, Մարի, աղբօրդ ըսածը:

— Այո, հարկաւ, — ըսաւ աղջիկը, եղբօրմէն ուժ անելով, — դիմած ենք, գալ ամիս Երեւանի համալսարանը կ'արձանագրուիմ, ուրիշ ընկերներ ալ կան հետս, խումբով պիտի երթանք, անոնք ալ կուսակցականներ են, ա՛յ չենք կրնար ակումբի մէջ յեղափոխութիւն ու հայրենասիրութիւն պոռալ, կը բաւէ... հոն նոր կեանք մը կը սկսիմք, ուժ կու տանք մեր հայրենիքին... աս զնչուի կեանք է հոս:

— Ինչո՞ւ, ի՞նչ ունի որ կեանքդ հոս, ամէն ինչ կայ հոս ձեռքիդ տակ — դիրք, պատիւ, անուն, դրամ, տուն, ընտանիք, բարեկամներ, ամէն մարդ կը յարգէ ընտանիքդ, ամէն ինչ ունիս հոս, ապագադ ալ հոսկէ պիտի շինես, մարդ կ'ըլլաս... դեռ ի՞նչ կ'ուզես, աղջիկս, չեմ հասկնար քեզ:

Անկեղծ էր Թագուորին շուարանքը, անձկութիւնն իսկ, ինչ որ անելի հեռացուց հայր ու աղջիկ: Մարի վայրկեան մը լուռ սպասեց, բոլորին ուշադրութիւնը ետ իր բերնին բերելու համար.

— Ամէն ինչ ունիմ, այո, բացի մէկ բանէ, հայր չունիմ, տոկուն, ուժեղ, վստահելի հայր մը: Մէկը՝ որ յարգէի ու սիրէի նոյն ատեն: Հայութեան խորհրդանշանը...

Աշխէնի դիմագիծերը պրկուեր էին, պիտի միջամտէր՝ երբ ամուսինը խօսեցաւ, խիստ ու չոր.

— Ի՞նչ ըսել է հայր չունիս: Ձեմ արտօներ, որ ատանկ ապուշ խօսքեր ըսես առ տան մէջ: Հայր չունի՞մը որն է: Ես մեռա՞յ, գացի՞, ո՞րք ես, փողոցներէ՞ն քեզ հաւաքած ենք, ո՞վ կը հոգայ քու ծախսերդ, օթող ո՞վ առա քեզ, ո՞վ քեզի դպրոց կը դրկէ... Ասոնք երկինքէ՞ն ինկան, եէ՞, ապերախտ աղջիկ: Լո՛ւ, տեղդ նստէ, ճաշդ կեր:

Մարի անմիջապէս չհասկցաւ եղածին ահաւորութիւնը: Դեփ-դեղին կտրած, շուրջը նայեցաւ, իմաստ մը փնտռեցին աչքերը, բայց ոչինչ գտան. յետոյ՝ ետ իր հօրը վրայ գացին: Գուխը ծոած կ'ուտէր:

— Ձեմ հաւատար, — շշուշոց: Կը դողային շրթունքները, ձախ ձեռքը մագերուն գնաց, յետոյ վար դրաւ բաժակը, զգուշութեամբ: Սիրտը ուժգին կը զարնէր: Կրցածին չափ զուսպ ձայնով հարցուց.

— Իսկ եթէ չնստի՞մ...

— Էրկան ըրիր ա՛յ, Մարի, ինչ կ'ըսեմ նէ՛ ա՛ն ըրէ: Սատկէ տեղդ նստէ:

Բարձրացեր էր Թագուորին ձայնը, բայց կրցաւ զսպել ինզիմք:

— Պատճառ չկայ, որ նստիմ: Ոտքի պիտի մնամ, խօսքս դեռ չվերջացուցի: Ես...

— Լո՛ւ, նստէ՛ տեղդ կ'ըսեմ կոր:

Սեղանին եզերքը ուժեղ սեղմած երկու ձեռքերով, կէս մը ոտքի ելեր էր Թագուոր ու ձայնը լեցուց հիմա մարդկային ու ֆիզիքական ամբողջ անջրպետը: Բարկութենէն մոռոթկուած դէմքը անճանաչելի դարձած էր, բայց շուրջինները գիտէին անմիջապէս՝ որ անոր կատաղութիւնը ձայնին մէջն էր միայն ու բառերէն անդին չէր անցներ: Մարի տեղէն չէր շարժած: Հինգ հոգի ու տիեզերքն ամբողջ շունչը բռնած, մարդկային պայթումի մը եզերքին՝ սպասեց: Պահը չէր անցներ...

— Նստէ, աղջիկս:

Թեթեւ, քաղցր, անսահման: Փրփաւ լռութիւնը: Մայրն էր.

— Նստէ ու պապայէդ ներողութիւն խնդրէ:

Ու յանկարծ նոր պրկում մը, անհաստապի, բայց անխուսափելի: Մարի շփոթահար ժօրը դարձաւ.

— Ի՞նչ, ես անկէ ներողութի՞ւն խնդրեմ իր բոլոր ըսածներէն ետք... մամա, դուն զիտե՛ս ինչ կ'ըսես կոր... ինչո՞ւ, ի՞նչ ըսի որ... չլսեցի՞ր ինչեր ըսաւ ինձի... ինչո՞ւ, ինչո՞ւ... անկարելի է, չեմ ըսեր:

— Նստէ որ ըսեմ ինչու:

Աշիւն, առաջ ծոած, անշարժ, կեղրոնացած՝ սպասեց, մինչեւ որ Մարին նստաւ: Մեղմ շունչ մը քաշեց ու հանդարտ ձայնով ըսաւ.

—Որովհետեւ հայրդ մեղացիք մտածումով, խօսում եւ գլուխ բռնելով:

—Բայց իրաւունք չունի ինձի անանկ խօսելու նոյնիսկ եթէ հայրս է, ես գիւղացի կամ փողոցի աղջիկ չեմ... ո՞ր դարուն մէջ կ'ապրինք կոր, հէ՛... հապա ի՞նքը, իրե՛ն ինչ պատիժ կայ:

—Ան արդէն կը պատժուի կոր, քեզմէ շատ-շատ աւելի: Բայց...

Աշխէն լռեց յանկարծ, կախեց գլուխը: Բոլորը սպասեցին, քարացած: Երբ վերցուց գլուխը՝ լեցուեր էին աչքերը:

—Նայէ, աղջիկս, հայրդ քեզի աշխարհին է՛ն յարգի, է՛ն սուրբ բանը տուած է — կեանքը: Անոր համար պիտի յարգես հայրդ, իր բոլոր յանցանքները պիտի ներես:

Յետոյ շուրջը նայեցաւ: Թագուոր գոց էր, պատի պէս: Մի-բան ամբողջութեամբ տարուած էր պահէն: Աստղիկ կորսուած էր մանրամասնութիւններու մէջ: Դարձաւ Մարիին.

—Ընտանիքը, աղջիկս, ա՛ն է կարեւորը, ա՛ն է կեանքին ամանը, անկէ մի բաժնուիր, նոյնիսկ եթէ հեռանաս: Հիմա ներողութիւն ըսէ հորդ:

Միերան ջլսեց Մարիին ձայնն ու բռտերը, սակայն գիտէր, թէ ի՞նչը հասկցած էր մօր ըսածին խորունկ իմաստը. «Եթէ անկեղծ չըլլար՝ Մարին արդէն տեղը չէր նստեր... ուժով է, մօրը պէս», եզրակացուց: Պատահաբար վար դրաւ, նայեցաւ մօր նուրբ վիզին ու մատներուն եւ հանդարտ ձայնով ըսաւ.

—Ես ըսելիք մը ունիմ:

—Ո՛չ, ո՛չ:

Թագուորն էր պայթեցաւ, վնասկան, վերջնական շեշտ մը ձայնին մէջ: Աչքերը լայն-լայն բացած, դանակը ձեռքը:

—Ա՛յ բան չեմ ուզեր լսել աս մասին: Կը բաւէ: Հերիք է, հոգիս բերանս բերիք... աս ինչ սերունդ է, Աստուա՞ծ իմ... ոչ մէկ յարգանք, ո՛չ ծնողի, ո՛չ տարիքի, Հայաստան մը բռներ կ'երթան... **ՏԵԽԵՆՈՒՄ**՝ այդ Հայաստանը:

—Թագուոր:

Ոտի ցատկեց Աշխէն, ինզիմէն ելած, պզտիկ բռունցքները ճօճելով, ամուսինին դարձած.

—Մի՛ խօսիր ատանկ, մա՛րդ, կը կատղեցնես տղաքը, գլուխնիմ կ'առնեն-կ'երթան, անգամ մըն ալ երեսնին չես տեսներ, գիտցած եղիր... ա՛տ կ'ուզես:

Լռեց Աշխէն, պոռթկումը սպառած: Կամաց մը նստաւ: Բայց անմիջապէս մտածումի նոր գիծ մը գտաւ ու շարունակեց.

—Իրաւունք ունին տղաքը, հայրենիքի սէրը մե՛նք դրինք իրենց մէջ, Պասպն, Ազնիւր, հօբարը, ի՛նչ գիտնամ... աս տղաքը



ուրիշ են, թէ՛ մեզի պէս են եւ թէ ալ ուրիշ են, ուրիշ տեսակ հայեր են գրեթէ: Իրենք...

Թագուոր գոցեց աչքերը, փախչելու համար շուրջի փոքորիկէն: Երկիւղը բռներ էր սիրտը: Կակուղ, բարեխառն բնատուր-թեան մարդ՝ ամբողջ կեանքը մեծ հօր յիշատակը ընկերացեր էր իրեն ու հալածեր երեսակայութիւնը: Պատում... կէս մը կուրցած ծերունին, որ աչքերուն լոյսը գրեթէ վրայ տուեր էր Ուրֆայի հերոսամարտին, երբ Եօթնեղբերեանի գինարանին մէջ հրացանները վառօդով լեցուցած ատեն հատ մը պայթեր էր երեսին. «Պատօ, աչքի բժիշկ պիտի ըլլամ, որ աչքերդ աղկցընեն», անոր ծունկէն վար ցատկելով-վագելով իր հօր բով, որ Պապոյին պզտիկ տղան էր դեռ շուրջը կը դառնար. «Հա, տըղաս, Պատում ինչ որ ուզէ...»: Ժամերէ ի վեր Տանիլին դէմքը կը փախչէր առջեւէն ու կը տանջէր զինքը...: Ի՞նչ գիտէին Աշխէնն ու Մարին, ինչպէ՞ս հասկցնել հիմա անոնց, թէ այլեւս կապերը կտրած է, մէկ անգամէն, ամէն բան լմնցած է իրենց միջեւ...: Ինչպէ՞ս ըսել՝ առանց անոր միտքը բանալու, խօսելու այդ մասին, անունը տալու...: Գլուխը ձեռքերուն մէջ առաւ:

— Ի՞նչ պիտի ըսէիր, Միհրան:

— Ձեմ ուզեր լսել ըսինք՝ ձեզի, չեմ ուզեր լսել, պապամ, չե՛մ ուզեր, լմնցա՛ւ:

— Մի պոռար... ո՛չ, չլմնցա... խօսէ, տղաս, ի՞նչ էր ըսելիքդ:

— Լաւ:

Նորէն տակնուվրայ էր միտքը, ուրկէ՞ սկսիլ, ինչպէ՞ս մտնել նիւթին մէջ: Փորձեց բնական ըլլալ, բայց պիտի էին մարմինն ու ջիղերը: Մարին գինիին շիշը երկարեց ու սկսաւ լեցնել գաւաթը, դէմքին վրայ գաղտնի հրճուանքի մը ցոլքը. «Հոգիդ սիրեմ, բոյրիկ, միշտ ասանկ մնացիր, չըլլայ որ փոխուիս»: Քիչ մը հանդարտեր էր:

— Ես գացի:

Մեքենական շարժումով մը ոտի ելեր էր Թագուոր: Վար դրաւ անձեռոցը:

— Ո՛ր կ'երթաս կոր:

— Վեր:

— Նստէ որ տղան խօսի, բեզի բան մը պիտի ըսէ, վեց ամիս է չես տեսած... մտիկ ըրէ իրեն... հայրն ես, բեզի պէտք ունի կարելի է:

— Ո՛չ, ո՛չ, իմ մասիս չէ, — անապարեց Միհրան ու այդ բանի մը բառերը խօսիին ճամբան բացին, — ըսելիքս շատ կարն բան մըն է:

Լուսին տիրեց: Թագուոր անորոշ՝ կայնած մնաց իր տեղը: Աշխէն նորէն կախեց գլուխը:

—Հայրիկ, մայրիկ, դուք երկուքդ շատ կարեւոր միտքի մը մասին պէտք է խօսիք եւ այս ընտանիքին կեանքը եւ մահը ատկէ կայտուած է: Ես հոս գալէս ետքը իմացայ ատիկա:

Միհրան զարմացաւ ինչքան զուսպ խօսեր էր: Վերցուց գինին, ումպ մը առաւ, բայց վար չդրաւ գաւաթը:

—Սա ալ ըսեմ, հակառակ որ ամբողջ ընտանիքին հարցն է, սակայն մենք երեքս դուրս պիտի ելլենք հիմա: Առանց մեզի աւելի ազատ կը զգաք, գիտեմ:

Լուսինը ետ եկաւ, լեցուց սենեակը:

—Եսլլա, տղաք, մենք դուրս ելլենք:

Նախ՝ Մարին, յետոյ՝ պատիկ Բոյրիկը եւ էն վերջ ինքը դուրս ելան սենեակէն: Գոցեց դուռը ետեւէն, կամաց մը:



Լուս ևստան իրարու դիմաց, նայուածքները դպան, սակայն ոչինչ անցաւ մէկէն միւսը, տառապագին, անձկալի ոչինչ լեցուց սենեակին անջրպետը ու պարսպ մնաց միջոցը իրենց միջեւ: Միայն խոյ երկիւղ մը, որ կը սողոսկէր Թագուորին գիտակցութեան հեռումներէն...

—Ես քեզի ըսելիք չունիմ, Թագուոր, տարիներէ ի վեր, սենեակները բաժնուելէն ի վեր: Աս տունին սիրտը մեռած է, պարսպ է ու պաղ, բոլորովին՝ եթէ տղաքը չըլլային: Հին ծանօթներու պէս, միայն իրարու անուն կը յիշենք մենք: Դուն ինձի ըսելիք մը ունի՞ս:

—Ձեմ գիտեր ինչ կայ ըսելիք: Միհրանին գաղափարն էր ատիկա:

—Դուն ինձի համար ալ մեռած ես, ինչպէս Մարին կ'ըսէր կոր:

Թագուոր շարժեցաւ աթոռին մէջ, բայց չպատասխանեց:

—Անկողինին մասին չեմ խօսիր կոր, սխալ չհասկնաս: Ատիկա գիտես, որ տարիներէ ի վեր դագաղի պէս բան մըն է:

—Ես ալ շատ ըսելիք ունիմ ատ մասին... բայց ինչո՞ւ հին բաներու վրայէն կ'անցնիս կոր նորէն:

—Ձէ, չէ՛, ատ չէ միտքս: Ատ տէ՛ֆտերը շատոնց գոցուած է:

—Ես չեմ գոցողը, ամէն. պարագայի:

Լոեց Աշխէն: Հին ու բութ ցաւ մը կը շարժէր անզգալիօրէն սրտէն դէպի կոկորդը եւ աչքերը: Ծանր շունչ մը առտաւ ու ցած ձայնով խօսեցաւ նորէն.

—Քանի Միհրանը բացաւ միսը, ես ալ կ'ըսեմ ըսելիքս: Ինծի շատ ցաւոցած ես, շա՛տ... գրեթէ մեռցուցած ես, այո, բայց... դիմացայ: Եթէ չըլլային տղաքը, տակը գացեր էի...

Խորունկ շունչ մը բաշեց Թագուոր: Ամէն ինչ անկողինէն կը սկսէր, բայց երբ կին մը համ չ'առնէր սիրաբանութենէն՝ ի՞նչ կրնայ ընել մարդ մը: Հիմա վայրկեանները կը հատնէին սակայն, կեանքը կը կարճնար ու բան մը կը գոցուէր շուրջը: Ու բառերը չէին գար:

—Ձե՛ս ուզեր գիտնալ գոնէ, թէ ինչու զիս այդքան ցաւոցած ես:

—Գիտեմ:

Աշխէն վեր նայեցաւ զարմացած: Ձեր սպասեր այդ պատասխանին:

—Ի՞նչ գիտես, ի՞նչ գիտէիր:

Թագուոր պատրաստ չէր պատասխանելու: Փախուստի մը, տարտամ վախի մը անապարանքը մտեր էր մէջը, կ'ուզէր շուտ մը լմնցնել վայրկեանները ու դուրս ելլել այս սենեակէն, այս կնոջմէն, այս տունէն: Այսքան առանձին չէր զգացած ինքզինք, լիճում իր ուժերէն, ձգուած միս-միտակ վտանգի մը առջեւ, որ կը սպառնար իրեն տարիներէ ի վեր — ինչպէ՛ս պիտի արդարացնէր ինքզինքը իր կեանքին համար: Ո՛ր կրնար պահուելով ճշմարտութենէն:

—Բան մը պիտի ըսե՛ս:

—Ի՞նչ ըսեմ:

—Ես ինչ գիտնամ:

Թագուորին աչքը զնաց պատէն կախուած յախճապակի պընակին, ուր երկու եղմիկ ծաղիկներու մէջ կ'արածէին: Երուսաղէմէն բերեր էին: Ի՞նչ աղուոր օրեր էին, Քանի՛ տարի առաջ էր, եի՞նզ, վե՛ց, տա՛ւր... ամառ էր ու պատրիարքին ճաշի հիւրն էին, յետոյ՝ Պոսթըն տեսած էին զայն, պատուոյ սեղան, հաստ սիկար ծխող, ծանր կոպերով հարուստները, անոնց կիներուն հետը, մերկ թեւերուն միանքը, ռսկիին ձայնը... Երջանիկ եղած էին ատենօք: Այդ բոլորէն շատ անլի ուշ էր, որ Տանիէլը կեանքին մէջ մտեր էր բոլորովին առանց իր ուզելուն, տկար մէկ վայրկեանին...

—Նայէ Աշխէն, շատոնց է որոշեր եմ աս բանին մասին քեզի խօսիլ, Աստուած վկայ, պիտի ըսէի քեզի ամէն ինչ՝ չեղաւ...

Հաւատա՛ր, թէ չհաւատար այս տկար մարդուն երդումին, սա մարդը, որ հիմա փախուստի ճամբայ կը փնտռէր նոր սուտեր

խօսելով, թէ այս է ողորմելի նշմարտութիւնը. «Այլեւս չես կըրնար ցայցնել զիս», խորհեցաւ մութ տրտմութեամ մը մէջէն, նայելով անոր ալիք-ալիք յիմար ներմակ մագերուն, տկար կզակին:

— Ինչի՞ մասին կը խօսի կոր:

— Ձգձգեցի, երես չունէի, յարմար առիթը չեկաւ, ինչ գիտնամ, հազար ու մէկ պատճառներ... ու վերջն ալ շատ ուշ էր այլեւս:

Փափուկ մատներուն յուսահատ շարժումը, ձայնը, որ կը սողար բերնին մէջէն... Աշխէն զլուխը անդին դարձուց. «Պէտք է պատճեմ աս թոյլ մարդը... ինչպէ՞ս սիրեցի ժամանակին, անփորձ իտէլիսա ուսանող, հարուստի աղջիկ... ձեռք ձեռքի համալսարանի ցոյցերուն... Անքի՛ր Սէմզ պիտի հանդիպիմք, խումբով պիտի բախնմք, հա... Թէոտիսթները մութին մէջ կը ծնին, ֆետայիներուն պէս... արես չծագած կը մեռնին... բժիշկ պիտի ըլլաք... Ես ալ դեղագործ, հոյակապ է... ժամը Բանիին է ցոյցը... Արաֆաթը պիտի խօսի, տղաք...»:

Որքան ատենէ ի վեր կը խօսէր Թագուոր: Հիմա ականջը լարեց:

— ...Արդէն լմնցած էր, հաշիւը գոցուած էր, ա՛լ պէտք ալ չըկար, ես ալ...

— Ինչի՞ մասին կը խօսիս կոր:

— Այդ հաշիւը, անլի ուշ պէտք ալ չկար բանալու նորէն... Խնդիրը մեռած էր...

— Ի՞նչ հաշիւ է ասիկա:

— Օգոստոսին Սան Տիէկօ ակնաբոյժերու համագումար կայ, պատրաստուէ, Տանիէլ, երեք օր պիտի տես:

— Ես չեմ կրնար գալ, տոբոթ:

— Ձեռք կրնար գալ, ինչո՞ւ, ի՞նչ կայ:

— Ձեմ ուզեմ գալ: Քանի մը օրէ ի վեր մեր... գաղտնի կեանքին մասին կը խորհիմք, իրապէս, ես որոշեցի վերջ տալ ասոր... տեղ մը չի տանիր կեանքս:

— Նստէ, Տանիէլ, նստէ, որ խօսիմք, բաց պատուհանը, շատ տաք է:

— Խօսելիք բան չկայ, տոբոթ, լմնցած հարց է ինձի համար:

— Բայց ինչո՞ւ, ինչպէ՞ս, ի՞նչ եղաւ մէկէն:

— Եթէ կ'ուզէք հրաժարիմ պաշտօնէս, ուրիշ տեղ մը գործ կը գտնեմ ես:

— Ի՞նչ եղաւ, Տանիէլ, ասանկ յանկարծ... ինչո՞ւ չես նըստիր:

Ձորեմբաբթի կէսօրէ ետք, Բիմիքը շատ յանախորդ չ'ըլլար: Կայնած՝ իրարու նայեցան, անբարբառ: Յանկարծ հեռաձայնը գարկաւ: Տանիէլ դուրս վագեց:

Մինակը մնացած, Թագուոր շշմած փլաւ արողին մէջ: Տանիէլի հետ կապը կեանքին միակ հետաքրքրական, կենդանի եղելութիւնն էր:

—Պահուշտուրը, յանցամբի ու վտանգի խառնուրդ պահերը ամիսը Բանի մը անգամ, գաղտնի կեանքին անբացատրելի համը, արկածախնդրութեան հրապոյրը...

Վերցուց հեռաձայնին խօսափողը:

—Տանիէլ, ներս եկուր, խնդրեմ:

Ետ եկաւ աղջիկը, կայնեցաւ սենեակին մէջտեղը, սպասեց:

—Այո՞:

—Ձեմ հասկնար, Տանիէլ, կը հանի՞ս ինձի...

—Շատ պարզ է, տոբօր: Մէր չկայ մեր միջեւ, չէ եղած, երբեք: Միայն սեռ է, ան ալ տակալին...: Դուք կ'ուզէք ձեր առնականութիւնը փաստել ձեզի եւ հաւանաբար ալ ինձի, չեմ գիտեր, բայց ատիկա չի բաւեր: Երեսունի կը մօտենամ, ամուսնանալ կ'ուզեմ, ամուսին, գաւակներ, ընտանիք կազմել, մայր կ'ուզեմ ըլլալ, կին ըլլալ:

—Սակայն ես պատրաստ եմ քեզի հետ ամուսնանալու...

Աղջիկը գուլթը շարժեց:

—Ո՛չ, ո՛չ, չեմ հաւատար... ընտանիք ունի՞ք դուք, կին, գաւակներ:

—Կը բաժնուիմ անոնցմէ, հաւատա՛ խօսքիս, Տանիէլ... Կեանքիս երջանիկ միակ պահերը քեզի հետ է, որ կ'անցընեմ, քեզմէ գատ՝ պարապ է... Տանիէլ, կը սիրեմ քեզ:

—Տղայական խօսքեր են ատոմք, տոբօր, դուք հասուն մարդ էք, ձեզի չի վայելու...

—Մտիկ ըրէ ինձի, Տանիէլ... լուրջ եմ... կը սիրեմ...

Թեւերը բաց՝ առաջ գնաց, բայց աղջիկը արդէն մեկնած էր Բիմիքէն:

—Գիտես, որ ստիկա տարիներ կրնայ աննել, միջեւ որ թոյնը մաքրուի: Կտարած սիրտը փշրուած գաւաթի մը պէս է, կտորները քո՛ւ քո՛ւ քո՛ւ չեն գար անգամ մըն ալ:

Հառաչ մը փրբաւ կուրծքէն, յուսահատութեան ու համակերպումի:

—Նայէ, Թագուոր:

Նորէն դադար մը:

—Ինչ որ ես նէ՛ ես, ես չեմ կրնար քեզ փոխել աս տարիքէդ ետք: Տկար մէկն ես, բայց չար չես, եւ չես ուզեր ընտանիքիդ վնաս բերել, մա՛նաւանդ քո գաւակներուդ: Քիչ առաջ Մարիին վրայ պոռացիր, խէրսդ աղջիկէդ առիր, ձայն չհանցի, հիմա

ինծի մտիկ պիտի ընես, վերջին անգամ քեզի կ'ըսես, աս տան մէջ այլես ոչ մէկ կեղծիք, սուտ կամ ծուռ բան պիտի մտնէ, ո՛չ մէկ, հասկցա՛ր:

Բառերը հատիկ-հատիկ ու անվերադարձ լեցուցին սենեակը: Թագուոր աչքով պատասխանեց:

— Եթէ ուզես կնիկի մը ետեւէն երթալ՝ գնա՛, առ գնա՛ ու ա՛լ ետ մի գար: Սիրեր ես եւ հետը պիտի ըլլաս — սիրելը յանցանք չէ, առ այդ կնիկը հետը ապրէ, պարկեշտ գործ է ձեռով մը, բան մը չեմ ըսեր. առ ուրիշ, որ հոգիդ կու տաս՝ բու մասիդ մարդոց կարծիքին դէմ չես երթար... ուզածդ ըրէ՛՝ բայց չըլլայ, որ ստես ինծի ու աղջկանս, փորձես մեզ խաբել: Գիտցած եղիր՝ հոգիդ կը հանեմ, կը սպաննեմ քեզ, Թագուոր, կեանքդ դժոխքի կը վերածես, գիտցած եղիր, աղջիկս պաշտպանելու համար... արդէն հագիւ կը տանիմ բու սուտ ներկայութիւնդ տան մէջ...

Ռուսները գոցուեր էին ու բարկութիւնը պրկեր էր դէմքին գիծերը:

— Ես միտք չունիմ ըսի ուրիշ կնիկի ետեւէն երթալու, սխալ մըն է ըրիմք, ինչո՛ւ այսօր աններող ես... կեանք է, կը պատահի: Բարկանալ է նէ՛՝ ես ալ կրնամ բարկանալ, վրադ պոռալ, սպառնալ...

Աշխէն մտիկ չէր ըներ ըսածները:

— Աստղիկս բան մը պիտի չգիտնայ աս եղածէն, ոչինչ, կը հասկնա՛ս, ոչի՛նչ:

Լուսինն: Մէկը խորունկ շունչ մը քաշեց:

— Դուն այս տան մէջ օտար ես այլես, Թագուոր, պանդոկի պէս պիտի գաս, ուտես, խօսիս, պառկիս ու գործի երթաս... եւ չկարծես, որ սպիկա դիւրութեամբ կ'ըսես: Ի վերջոյ, կեանք մը ապրած ենք միասին...

Յնդում կար ձայնին մէջ, կոկորդը կը սեղմուէր: Խորունկ տխրութեան մը մէջէն շարունակեց.

— Տխրութի պէս բան մըն է... մահ մըն է սպիկա, ինչ ալ ըլլայ նէ պատճառը, ով որ ըլլայ նէ յանցաւորը...

Լեցուած էին աչքերը: Լռեց, ինզիմքը հաւաքելու համար: Թագուոր անդին կը նայէր... Թուքը կլլեց. «Աս մարդը գաակնեբոս հայրն է, ամուսինս է, ինչո՛ւ ասանկ պիտի ըլլար, Աստուած իմ, խնայէիր ինծի աս ցաւը... ամբողջ կեանք մը մոռնալ, ձեռքովդ ողջ-ողջ թաղել, ի՛նչ յոյսերով, իտէլներով քամբայ ելայ... ո՛ր պիտի դնեմ ատունց դիակները...», խորհրդածեց: Վերցուց գլուխը:

— Ասկէ մօտ վեց ամիս առաջ էր, պատիկ... ինչպէս ըսեմ, կարն աֆէր մը, բոլորովին աննշան... խենթութիւն մը, չեմ գիտեր ինչպէս վրաս եկա...

Քրտինքը կը պաղէր կոնակին ու ճակտին: Ձոր էր բերանը: Բայց սիրտը դեռ կը հարուածէր ուժգին: Ընկճուած, պարտուած, պարսպուած...

— Եւ հիմա՞:

— Օ՛ր, հիմա վերջացած է, շատոնց լմցած է, մոռցրուած:

Թագուորին ձայնը արդէն կը մտնէր իր բնական թոնին մէջ ու շարժումը թելերում՝ լայն ու ինքնավստահ երետոյթ մը ունէր: Կը գտնէ՞ր ինզին՞ — Աշխէնին նայուածքը պաղ, անզգացում՝ ինկալ վրան: Ո՛չ սէր, ոչ ալ գութի տրոփ մը շարժեցաւ Աշխէնին սրտին մէջ սա ֆանհինզ տարուան ամուսնին հանդէպ, որուն ողորկ, սահուն անձնատրոփինը յաջողեր էր իր առանձին աշխարհէն հեռու պահել, ֆան տարիէ ի վեր: «Մարդիկ ինչպէ՞ս կ'օտարանան, ամբողջ ճշմարտութիւնը մէջտեղ կ'ելլէ, առտու մըն ալ կ'արթննաս, որ մեռած է ամուսնիդ, բայց ինքը չի գիտեր ատիկա, ասա՞նկ է կեանքը, չեմ գիտեր», անցաւ միտքէն: Հետուներէն նայեցաւ անոր հիմա:

— Մեռելներու մասին գէշ չեմ խօսիր, մահը ինքը արդէն բնական ծանր պատիժ է:

Թագուոր շտկուեցաւ արտին մէջ, ձեռքով մագին դպաւ. «Ամէն ինչ կորսուած չէ տակաւին», խորհեցաւ, չափելով անոր պզտիկ մարմինը, գոց դէմքը, որուն ետին ան կը բնակէր, իրմէ գաղտնի:

— Հասպա ե՛ս ինչ ըսեմ քու թերութիւններուդ մասին:

— Ինչ ուզես ըսէ, Թագուոր, այլեւ տարբերութիւն չ'ընեն: Դերասանութեան պէս պիտի ըլլայ, մանաւանդ երբ դուն գիտէիր, թէ ես հասկցած էի քու ողորմելի աւանթիւրդ: Մարին անզամ հոտը առած էր: Ա՛յ ինչո՞ւ ձեռացնել: Բայց...

Կեցաւ: Թագուոր ալ անշարժացաւ, անկանկալի մը սպասումով:

— Քեզի հիմա ըսեմ ինչու ցաւուցիր, պիտի ըսեմ ըստիպուած՝ որովհետեւ կը տեսնեմ, որ քեզի համար եղածը գոեհիկ արկածախնդրութեան մը ինծի տուած ցափն, վիրաւորուած հպարտութեան մը, նախանձի մը աժան տառապանքի կը վերածուի կոր: Այդ չէ ճշմարտութիւնը:

Առաջ ծոցեալ ու շիտակ անոր աչքերուն նայելով՝ ըսաւ.

— Ինչ որ սպաննեց զիս սուտն էր, կեղծիքը, խաբէութիւնն էր, որ մտաւ մեր տունէն ներս: Ես առաջին վայրկեանէն գիտէի ինչ կ'անցնէր-կը դառնար, չկարծես որ զիս խաբեցիր — կիները կը հասկնան ատանկ բաները: Անշուշտ տառապեցայ, միայն քու հաշուոյդ: Բայց լոնցի, ընտանիքին համար չգիտնալ ձեռացուցի: Միտքէս ըսի չի տեսեր, շուտ մը մէկէն մէկը կը ձանձրանայ, կը կռուին, ինչ գիտնամ, յանցաւոր կը զգաս եւ... շատ մեղքի մէջ

չմտած՝ ետ տուն կը փախչիս, տղա՛մ ալ չեմ գիտնար, կը գոցեմ խնդիրը, կը լմննայ:

Լոեց պահ մը, ինզիմէր գտնելու համար: Անցեալի տիղմը, քրքրուած՝ գիտակցութեան երեսը ելեր էր: Բայց շարունակեց, ձայնին մէջ նողկանք:

—Ամբողջ աղտոտ սուտերը, մեղքին նեխած շունչը, անբարոյականութեան տգեղ երեսը — ասոնք բունստոր օձերու պէս մտան մեր յարկէն ներս: Այդ էր, որ ցաւցոց զիս, ոչ թէ անհաւատարմութիւնդ: Գիտէի, որ արդէն մեծ բան մը չես անկողնին մէջ: Ի՞նչ կրնար ուրիշ կիւն մը գողնալ ինձմէ: Սի՛րտդ — աստիկա բնաւ տունդ չեկաւ քիմիքիդ մեծ ու պզտիկ հայելիներէն: Դրա՛նդ — Բանի՛ դրուշ դրամ ունիմ որ արդէն, հազիւ տունիդ կը բաւէր: Ժամանա՛կդ, երիտասարդի կեղծ հովե՛րդ — արդէն շատ ալ բան մը ըրած չունէ՛իմ ժամանակովդ: Ձէ, ատ կնիկին նախանձելու ոչինչ ունիմ ես:

Լոեց վայրկեան մը: Տունը խոր անդորրութեան մէջ էր:

—Մարին էր արեց, երբ հասկցաւ, չեմ գիտեր ինչպէս, հաւանաբար կնոջական բնագոյով: Հիմա քեզ փրկել պէտք էր: Զաւակներուս մէջ հօր գաղափարն ու յարգանքը պէտք էր ապրէր, որ փոխանցէին իրենց զաւակներուն: Բարեբախտաբար անկախ Հայաստանը եկաւ ու Մարիս փրկեց, հոն գտաւ իր նոր հայրը, բո՛ւն հայրը, հոն ալ պիտի երթայ, իր հօր բով, խէրով-բարով: Ա՛լ ինձի պէտք չունի:

Երջանկութեան մեղմ ցոյ՛ մը ծաթեր էր Աշխէնի երեսին: Գրեթէ մոռցած էր ամուսինը ու ինզիմէին կը խօսէր, մտերիմ թոնով մը:

—Աստուած տայ, որ այդ նոր հայրը յուսախաբ չընէ իմ անուշիկ աղջիկս, անոր հոգին սիրեմ ես: Ամէն օր Բանի մը անգամ կ'աղօթեմ...: Միհրանս հասուն, տոկուն տղայ է, անկէ վախ չունիմ:

Կը յոգնէին ջիղերը: Պրկուիլ ուզեց, բայց զսպեց ինզիմէն: Ինչպէ՛ս պիտի ապրէր դիմացը նստած սա անբաւկոյտին հետ գալիք տարիները, ամիսները, գիշերները, ամայի հսկայ տան մէջ, միս-միսակ: Քանի՛ տարի մնացած էր կեանքէն:

—Աստղիկս մնացած է,— շշուշաց գաղտնի հրճուամբով:

Թագուոր տեղէն չէր շարժած:

—Մարդ չի կրնար գողնալ կամ արել անիկա, ան մեր բոլորին ասպագան է: Սփանջելի մէկը պիտի ըլլայ անիկա:

Մոռցեր էր ամուսինը: Ինզիմէն շարունակեց, կէս լսելի ձայնով:

—Աղջիկները, կիները, մայրերը, մենք ենք կարետորը, մենք, եւ ոչ թէ հայրերը, մանաւանդ մեր ազգին համար,— եզրակացուց:



Լոնց յանկարծ, առանց պատճառի: Յետոյ նորէն սկսաւ.

— Բայց պէտք է մաքուր տունի մէջ մեծնայ, մաքուր:

Նայուածքները հանդիպեցան, գիրար նոր տեսնողներու նըման:

— Բայց Աշխէն, քեզի բսի, որ լմնցած է այդ խնդիրը, Աստուած վկայ, այդ հաշիւը գոցուած է, ամբողջովին... մոռցուած է... կեանքէս հանած եմ ամէն ինչ, որ կար այդ բանին շուրջ, հաստա՛ խօսքիս:

Պատաստագին, հաւանաբար անկեղծ էին խօսքերը: Առաջ հակած ամբողջ մարմնով, ձեռքերը երկարած, տարածած սեղանին վրայ, փորձելով մօտենալ կնկան, տալ անոր իր անձը...

— Հէջ կարեւոր չէ իմ հաւատալս կամ ոչ... կարեւորը ասկէ ետքն է... բսէ հիմա, բովէդ ելա՞ծ է ան...

— Այո, այո, շատոնց. չեմ գիտեր ուր գացած է:

— Աս ասանկ է, Թագուոր, ձեռքս չէ, ըլլալի՞մը պիտի ըլլայ... արդէն շատ ալ տարբեր չէ հիմա, ի՞նչ սէր, ի՞նչ երջանկութիւն, ի՞նչ բան: Օր մըն ալ իրապէս պիտի մեռնիս ու ազատիս-երթաս...

Աշխէն ոտքի ելաւ, դժուարութեամբ:

— Դուն բու աղա բարեկամներուդ, յանախորդներուդ, ազգայիններուն, եպիսկոպոսներուն բով երջանիկ ամուսինն ես Յակոբեան ընտանիքին: Բայց ասկէ անդին՝ ոչինչ:

Քայլ մը առաւ դէպի դուր:

— Կեցիր:

Թագուոր ոտքի ելաւ, դանդաղօրէն մօտեցաւ, կայնեցաւ դէմը, գունաթափ ու դժբախտ:

— Ըսէ ինծի, Աշխէն, մէջդ բնա՛ւ սէր չէ մնացած ինծի համար, ո՞չ իսկ պուտ մը սէր... Բամանիկ տարի միասին ապրած եմք, հէ՛ջ արժէք չունի հիմա, հէ՛...

Աշխէն սիկարէք մը վառեց ու երկար նայեցաւ Թագուորի յոգնած աչքերուն, տարիներու մտերմութենէն արդէն պարպուող, պաղող դէմքին: Յետոյ շատ մեղմօրէն խօսեցաւ.

— Այո, կայ, շատ չնչին սէր մը... բու այդ չհամած Հայաստանիդ անկախութիւնը սիրտս առատ ու ձրի սէրով լեցուցած է ամէն հայու հանդէպ, դուն ալ մէջը ըլլալով... երբեմն կ'ուզեմ ամէն հայ գրկել ու համբուրել, այնքան ուրախ ու թեթեւ է սիրտս...

— Ձէ՛, չէ՛, այդ չեմ բսեր կոր:

— Գիտեմ:

Լոնց: Անդին, տան դուրը բացուեցաւ, մէկը դուրս ելաւ. «Միհրանին Բալելն է ասիկա», խորհեցաս Հիմա նորէն լուրսին տիրեց: Դարձաւ բովի մարդուն.

—Ձեմ գիտեր... կսխում ունի ինչպէս կ'ապրինք ասկէ ետք:

Աշխէնը դուրս ելլելէն ետք, Թագուոր մնաց սենեակին մէջ առանձին, դուր գոց, աթոռին փլած, զլուխը ձեռքերուն մէջ: Ու փորձեց հասկնալ, բացատրել, ծրագրել իր կացութիւնը, սակայն մտածումները կլոր-կլոր կը դառնային զլխուն մէջ ու չէին յառաջանար: Տխրութեամբ լեցուն անսահման պարապութիւն մը կար հոն, իր ներսի մեղութեան մէջ: «Ի՞նչ պիտի ընեմ», ըսաւ ինքնիքեմ. «Աշխէնը միտքը դրածը իլլէ կ'ընէ, ես գիտեմ նէ... ձեւ մը գտնելու է, կեանք չէ ասիկա, ես եմ ամբողջ դրամը շահողը, տունը իմս է, հարուստը ես եմ, ես բոլորէն է՛ն ուժովն եմ, հարկա... ինչո՞ւ իրար անցնիմ...»:

Ոտքի ելաւ, դուր բացաւ ու նոր լսեց դաշնակի մեղմ ձայնը, որ կը ծփար, կը հոսէր սենեակներուն մէջ: «Աշխէնն է», անցաւ միտքէն ու այն ատեն, թումբի մը նման, որ տեղի կու տար իր ներքին աշխարհին մէջ՝ խղճահարութեան ու մտերմութեան զգացում մը իր կնոջ հանդէպ, այդ զգայուն, փխրուն էակը ցացուցած ըլլալու, անոր կոպտօրէն դաւաճանած ըլլալու յանցանքին գիտակցութիւնը մտեց սիրտը նորէն: «Դեռ կարելի է սէրը ապրեցնել», խորհեցաւ ու մտածումը քիչ մը թեթեւաց ծանր տրամադրութիւնը: Անշարժ՝ ականջ տուաւ սրտառուջ մեղեդիին, որ կիսամութի անդորրութեան հետ թափանցեց իրմէ ներս: Ու այդ պահուն, երիտասարդ Աշխէնը եկաւ միտքին, ամբողջ սէր ու գորով, ուշիմ, խանդավառ ու ամէկտ, այն նուրբ, բացառիկ աղջիկը, գոր խենթի պէս սիրած էր ծամանակին, երբ ինքը օդային, խարխուլ, երագային ուսանող մըն էր...: Իրեն այնպէս թուեցաւ, այդ վայրկեանին, որ իրենց միջեւ ամէն զգացում մեռած չէր. «Ես գիտեմ, որ կը ներէ ինձի, այո», շարունակեց, փախելով երաժշտութեան մէջ...



—Ո՞ր գնաց Միհրանը:

—Ձեմ գիտեր, բայց հիմա կու գայ:

—Որքա՞ն պիտի մնայ Սամ Ֆրանսիսո:

—Ատ ալ չեմ գիտեր: Նայէ, Աստղիկ, տղոց մասին ատանկ հարցումներ չեն հարցեր: Անոնք ուրիշ են, ազատ են, հովին պէս, մարդու հաշիւ չեն տար: Մենք ուրիշ ենք:

—Հապա դուն կ'ըսես, որ մոտենոմ աղջիկ ես, ա՛ս է մոտենոմ ըլլալդ:

—Մոտենոմ ըլլալը ասոր հետ կապ չունի որ: Մենք հայ ենք ու մեր կեանքի օրէնքները տարբեր են: Հայկական մոտենոմ մը կայ, որ ուրիշ է:

Լուռ խմեցին սուրճը:

—Ճաշի ատեն ինչի՞ մասին կը խօսեիք, ինչո՞ւ աղբարս «կարօտը մահ է», ըսաւ:

—Իրեն հարցուր:

—Ձիս լուրջի չ'առնէր:

—Կ'առնէ, կ'առնէ հիմա: Հիմա ամէն ինչ փոխուած է:

Դուրս նայեցաւ Աստղիկ: Հակառակ ընտանիքի գուրգուրանքին՝ տան մէջ միակ մտերիմ տեղը իր սենեակն էր: Պատուհանէն՝ ովկիանոսին վրայ մայրամուտին շառայլը փոտեր էր, անհրական ու խռովիչ գեղեցկութամբ մը: Աջին, շքեղ կամուրջին առաջին լոյսերը արդէն կը կայծկլտային: Օրուան ամէնէն սիրած պահն էր: Ներսէն հրճուանքը կը փրփրէր՝ ինչպէս երկինքին գոյնները, գորս լուռ ու երկար դիտեց, յետոյ դարձաւ քոչքը:

—Քեզի բան մը պիտի ըսեմ, բայց վրաս պիտի չխնդաս:

—Ես ե՛րբ խնդացեր եմ վրադ, աղջիկ, ա՛տ ուրկէ հանեցիր: Քակեց թեւերը, բռնեց աթոռը, սպասեց:

—Այո՞:

—Ահագին սէր կայ մէջս, չեմ գիտեր ինչ ընեմ:

—Կամուխ է, Աստղիկ, դեռ նոր 15 մտար:

—Ատանկ սէր չեմ ըսեր կոր:

—Հապա՞:

—Ձեմ գիտեր, բայց ամէն ինչ, աշխարհը, կեանքը, մարդիկ, բոլորները... ծովուն չափ սէր մը, որ, որ... կարծես թէ ամէն ինչ հոն է, որպէսզի սիրեմ անիկա ու եթէ չսիրեմ՝ պիտի երթայ կորսուի...

—Ճիշդ է ասիկա, ատ այդպէս է... չսիրես նէ՝ աշխարհը պարապ է:

Լոեցին, գաղտնի սպասում մը իրենց սրտերուն — հաւանաբար փողոցի դրան բացուելուն ձայնին ու յետոյ Միհրանին աղմուկին, ով գիտէ: Սակայն ուրիշ ձայն մը եկաւ անոնց ականջին — Աշխէնին դաշնակին երաժշտութիւնն էր, անհրական ու յուզիչ՝ որուն մտիկ ըրին կեդրոնացումով:

—Շատ էիչ անգամ մաման կը նուագէ իրիկունները:

—Այո, այսօր բացատիկ է:

—Ինչո՞ւ, ի՞նչ եղաւ որ:

—Նայէ Աստղիկ, պապան ու մաման շատ կարեւոր խնդիր մը ունին լուծելիք՝ իրարու հետ ու երկուքն ալ շատ ազդուած են:

Մեծերը ատանկ կ'ըլլան: Մենք պէտք չունինք ու պէտք ալ չէ, որ գիտնանք այդ գաղտնիքները: Մեծերու աշխարհ է ասիկա, անոնք կը դնեն օրէնքները: Մտիկ ըրէ հիմա:

Կրկին ականջ տուիմ Աշխէնի նուագին, որ քաղցր յուզականութիւն մը տարածեց անոնց մէջ:

— Երբ մաման ասանկ տարօրինակ ատեն կը նուագէ, կը նըշանակէ, թէ տրտում է, սակայն տրտմութիւն մըն է, որ իր լուսատր կողմն ալ ունի, լուսնին պէս:

— Է, ինչո՞ւ մաման կ'ըսէր, որ պապան պատժուած է արդէն, ի՞նչ ըրած է որ:

— Ատիկա չեմ գիտեր, Աստուած վկայ:

Լուսնին տիրեց նորէն: Դաշնակն ալ կարն պահ մը լուռ էր, յետոյ նորէն սկսաւ:

— Մարի՛:

— Ի՞նչ է:

— Ինչո՞ւ կ'ըսես, թէ ամէն ինչ փոխուած է:

— Հարկաւ: Օրինակ՝ ես, Հայաստան կ'երթամ գալ ամիս, Աստուած գիտէ երբ զիս նորէն կը տեսնէք: Ինչո՞ւ կ'երթամ — որովհետեւ հայրսեան արմատը հոն է, քեզի բացատրեցի արդէն, անկախ հանրապետութիւն է, հոն պիտի ապրիմ ու աշխատիմ, որ գաւակներս հոն մեծնան:

Մարիին խանդավառութիւնը արդէն սկսեր էր բռնկիլ:

— Անկախ Հայաստան կայ աշխարհի երեսին, Աստուծոյ կրնա՞ս երեսակայել ինչ անկարելի, հեփիաթայիմ, գերբնական դէպք է ասիկա, աստուածային ինչ նուէր է: Կը յիշե՞ս Մուշեղ հօրաբը, կոյր Պապոն, կը յիշե՞ս:

— Հա, կը յիշեմ:

— Կը յիշե՞ս ինչ քաջ, ուժով, խելացի մարդիկ էին, ինչքան շատ բան գիտէին հայ ժողովուրդի մասին, ինչքան հայ էին... Ես անոնց գործը պիտի լրացնեմ, անոնց կեանքը պիտի շարունակեմ, որովհետեւ գեղեցիկ, մաքուր եւ ազնիւ կեանքներ էին, որովհետեւ հոս, Հայաստանէն դուրս, մենք՝ հայերս կորսուած ենք, հարիւրին հազար:

— Բայց քոյրիկ, դուն ուրիշ տեսակ մէկն ես, գիրքի, դպրոցի, ասանկ քաղաքներու, Ամերիկայի աղջիկ ես, ոչ թէ...

— Չէ, Աստուծոյ չէ, որոշ բաներ կան կեանքին մէջ, որոնք դպրոցի եւ քաղաքի հետ կապ չունին, հէջ... ներսի ձայնն է, քոյրիկ, ատ ձայնը երբ լսես՝ ալ ուրիշ բանի ակնք չես տար... Եւ հիմա է վայրկեանը, անկախ հայրենիք կայ հոն, մեր խելին ու սիրտին պէտք ունի... ալ ո՞ր օրուան պիտի սպասեմ, որ հայրենիքս մէջ ապրիմ, հէ՛... Ես հոս չեմ կրնար ասանկ նստիլ, երբ Հայաստան մը ծներ է ու ինծի պէտք ունի, ես ալ իրեն...

- Կը փայլէին Մարիին աչքերը:
- Վաղը չէ միւս օր դուն ալ հոն պիտի գաս, տես:
  - Ձէ, ես հոս կը մնամ: Կը սիրեմ տունը:
  - Բայց Միհրանն ալ հոս պիտի չմնայ, չլսեցի՞ր սեղանին զուտը ինչեր կ'ըսէր. «Վերջին ընթրիքն է», «Ընտանիքը կը պայթի կոր», ա'լ ի՞նչ գիտնամ:
  - Փողոցի դրան բացուիլն ու գոցուիլը լսուեցաւ:
  - Միհրանն է:
  - Անխօս՝ սպասեցին, ջիղերը պիրկ: Բայց կ'ուշամար գալու: Յանկարծ դաշնակին ձայնը վերստին լսուեցաւ:
  - Հիմա կը ծոխի ու կը համբուրէ անոր տոգոյն այտը, կը բռնէ անոր ոսկրոտ ձեռքը:
  - Պաղ եմ մատնեցոյ, մամա:
  - Տարիքս կ'առնեմ կոր, տղաս:
  - Մի ըսեր անանկ, դեռ կէ՞նք ես:
  - Երկու-երեք բառ կը խօսին տակաւին ցած ձայնով, կը լսեն, նորէն կը խօսին, յետոյ կը հարցնէ Պոսթընի իր կեանքին մասին:
  - Կը կարօտնամ կոր քեզի, տղաս:
  - Դուրին չէ իմ կեանքս ալ:
  - Պէտք ունիմ քեզի, Միհրան, հիմա՝ որ Մարին ալ կ'երթայ:
- Աս տունը բանտի պէս պիտի գայ այլեւս:
- Կը վարժուիս, մամա: Դաշնակդ կայ, մի մոռնար, Աստղիկը կայ, գիրքերդ կան, միութենական գործը, ինչ գիտնամ:
  - Դուն ո՞ր պիտի ըլլաս, ի՞նչ պիտի ընես:
  - Ձեմ գիտեր տակաւին, ուր որ գործ գտնեմ... ես ամէն տեղ եմ:
  - Հոս կու գաս անշուշտ:
  - Հարկաւ:
  - Հիմա լռութիւն պիտի տիրէ, պիտի բռնէ իր տղուն խոշոր ձեռքը, շոյէ հաւանաբար, տխրի քիչ մը, նայի անոր մարմինին:
  - Աս ի՞նչ հզօր մարդ եղար, տղաս, ապրիս:
  - Ան պիտի խնդայ:
  - Ուժը սիրտին մէջ է, խելին մէջ... մարմինը միայն վայելի՛ք է, ուժ չէ:
  - Ամէն գեղեցիկ բան ուժ է, ճշմարտութիւն է, կ'ըսեն բանաստեղծները:
  - Պիտի լսեն:
  - Աղջիկները շատ կը չարչարե՛ս:
  - Երբեմն...
  - Լաւ կ'ընես... քոյրիկներուդ քով գնա՛, քեզի կը սպասեն:

—Հիմա կ'երթամ... եկուր նուազէ նորէն... շատ կը սիրեմ...

Դաշնակիին ձայնը նորէն լեցուց Աստղիկին պզտիկ սենեակը:

—Ստեփանին ըսի՞ր երթալո՞ւ:

—Ձէ տակաւին, վաղը պիտի տեսնեմ, կ'ըսեմ: Շատ զբաղած է այս օրերուս, ցուցահանդէսի կը պատրաստուի կոր:

—Ես կը հաւնիմ անոր նկարները: Միայն շատ մութ են, տը-  
խուր են գոյները:

—Էսպէս յոռետես տղայ է Ստեփանը, իմ հակապատկերս...  
յետոյ ի՞նչ կ'ուզես, տեսական կոուի մէջ է ընտանիքին հետ,  
շուրջիցներուն հետ, ռամկավար գուլիով մարդիկ են ամէնքն ալ:  
Տղան մութ բանտի մէջ կ'ապրի կոր գրեթէ... հայրը շատ դէմ է  
ինծի հետ ըլլալուն, անցեալ օր հանդիպեցայ, ինծի բարեւ  
չտուա, թիփի՞՞՞ ռամկավար, իր դրամով ու կարեւորութեամբ  
նուած-նուած, կա Ֆոնթէնին գորտին նման:

—Ինչո՞ւ հետո՞ չայաստան չի գար կոր, հոն ալ կ'ամուսնա-  
նախ:

—Ես դէմ եմ:

—Ինչո՞ւ:

—Չայաստանը Սփիւտէն փախչողներուն տեղը չէ: Տկարնե-  
րը, վրիպածները, ձախողածները պէտք է հոս մնան, միայն ու-  
ծովները, ասողջները պէտք է հոն երթան: Յետոյ... չեմ ուզեր,  
որ ինծի համար գայ, ինքը Սփիւտի կը պատկանի, կարեւոր է  
Սփիւտի համար, հոս պէտք է մնայ, Միհրանին պէս:

Դուրը զարնուեցաւ, բացուեցաւ ու Միհրան ներս մտաւ:

—Շունը յիշէ, փայտը բաշէ:

—Ի՞նչ է, իմ մասի՞ս կը խօսէիք կոր:

—Այո, — ըսին երկու բոյրերը միասին:

—Ի՞նչ կ'ըսէիք, լա՛ւ, թէ գէշ:

—Լաւ, անշուշտ:

Մարի քովը գնաց, թեք առաւ:

—Եկուր բիշ մը բոյրիկներուդ հետ մնացիր, ծօ: Վեց ամիս է  
չենք տեսեր բեգ... եկար-չեկար դուրսերն ես, ով գիտէ որուն  
թելէֆոն կ'ընէիր նորէն:

Խնդաց Միհրան:

—Տեսէք, միայն երկու օր տուէք ինծի, իմ գործերս կարգադ-  
րեմ, վերջը ամբողջ ուիթէնտը միասին կ'ըլլանք... Մարի, ար-  
դէն բեգի հետ...

...Երեկոն իջած-հանգչած էր Սան Ֆրանսիսկոյի վրայ:  
Մեղմ, գաղտնի հով մը կը հասներ ովկիանուէն, կը փսփսար ու  
կ'երթար: Լոյսերու հագար աչքեր կը թարթէին ամէն կողմէն:  
Հեմ մը կը ճնշէր աշնանամուտի գաղջ օդին մէջ: Միհրան ու  
Աստղիկ առանձին էին պատշգամբ:

—Նայէ Աստղիկ,— ըսաւ Միհրան թեւերը բանալով դէպի գիշերային տեսարանին գեղեցկութիւնը,— Բանի մը տարիէն համալսարան պիտի երթաս, վերջը գործ պիտի գտնես, աշխատիս, անկաս պիտի ըլլաս: Կարելի է հոս ալ չմնաս, ուրիշ Բաղաբ մը հաստատուիս, ով գիտէ:

—Զէ, ես հոս կ'ուզեմ մնալ: Կը սիրեմ աւ Բաղաբը:

—Ինչ որ ալ ըլլայ, մեծ որոշում մը պիտի ըլլայ աստիկա, հոս մնալ, թէ ոչ:

—Ինչո՞ւ համար:

—Այսինքն՝ Սփիւտք պիտի մնաս, թէ Հայաստան: Մէկէն մէկը պիտի ընտրես: Անանկ երթալ Հայաստան ու ետ գալ Սփիւտք, ետ Հայաստան ու ետ հոս բուրիսքի պէս՝ սխալ է, նըկարագրի խեղճութիւն է: Ես ո՞ր մէկը որ ըլլայ՝ ամոր տէրը պիտի կազմիս, առաջին հերթին ես միմչեւ վերջը, միմչեւ ծայրը:

—Ի՞նչ ըսել կ'ուզես:

—Հոս ըլլայ, թէ հոն՝ շատ լուրջ պատճառ մը պիտի ունենաս: Սփիւտք ապրիլ, վայել աշխարհի Բէֆը եւ նոյն ատեն Հայաստանի ֆոլքլորով կամ կարօտով հայ մնալ՝ բոլորովին անմաստ է, անարժէք:

—Ի՞նչ կ'ուզես որ ընեմ:

—Ատիկա դուն պիտի որոշես: Նայէ, դժուար չէ հասկնալ: Շուրջը հայութիւն մը կայ, մեծ մասը ոչխարի հօտ է, ինչպէս ամէն տեղ, չէրչի-մէրչի, տեղ մը հասնելու հիւանդութենէն բռնուած, ինչ գիտնամ: Հոս հայկական կեանք մը կայ, մեծ բան մը չէ Ամերիկայի լաւագոյնին բաղդատմամբ, բայց տանելի է, մերն է, հիմէն կու գայ յիշատակներով լեցուն, իր Բաղդութիւնը ունի, մեզի համար:

—Այո:

—Մեր գաղութը ու միւս գաղութները Հայաստանի պատիկ հողերն ենք Հայաստանէն դուրս: Անգլիացիք «աութօս» կ'ըսեն, բերդաճաղաքներ ենք, կայսրութիւնը կը պաշտպանենք, ինչպէս հռովմէացիք ունէին: Անոնց պատմութիւնը ըրի՞՞ր դպրոցը:

—Զէ:

—Ինչ է Գէ, մենք Սփիւտքի հայերս այդ բերդերուն պահակներն ենք:

Միհրան դադրեցաւ խօսել: Ինչպէ՞ս հասնիլ Բոնոյ թէ՛ մտքին, թէ՛ ալ զգացումներուն: Քոյրը միշտ զինք երկիւղով մը, անբանական անձկութեամբ մը լեցուցեր էր: Զսպուած, պոռթկալու պատրաստ, անմախտտեսելի ու պատրաստ ուժ մը կար մէջը, որ կրնար միմչեւ ռդբերգութիւն տանիլ զինք, մէկ ոստումով: «Արդեօք կ'երեւակայե՞մ կոր այս բոլորը», խորհեցաւ հիմա, նա-

յելով անոր անմեղ, խոցելի կիսադէմին, մթութեամ ղէմ ուրուագծուած: «Ինչպէս հասնիլ այս սրտին ու մտքին մոյն ատեն...», մտածեց:

Աստղիկ հագիւ շնչել կը համարձակէր: Ասանկ պահ մը սպասեր էր, երեւակայեր էր ամիսներով, մոյնիսկ տարիներով, բայց լուսքեան մէջ, եղբօրը թէ՛ մօտ, թէ՛ ալ հեռուն ու, մա՛նաւանդ՝ առանձին, ասանկ... այն օրուրնէ ետք, երբ, 12 տարեկան երագային աղջնակ, կիրակի առտու մը եղբօրը մերկ մարմինը տեսեր էր բաղնիքը ու խունապահար փախչեր էր, բացարձակապէս անկարող հասկնալու, թէ ինչ տեղի կ'ունենար...: Սակայն գիտէր, թէ այդ եղբայրն ու այդ մարմինը իրն էին, ո՛չ ծնողֆիւնը, ոչ ալ օտար աղջիկներունը, մաս կը կազմէին խորհրդաւոր աշխարհի մը, որուն միակ բնակիչը ինքն էր...

—...Ես չեմ ուզեք, որ Սփիւտը ընտրես, որովհետեւ ես հոն եմ, ոչ, ասանկ բաներու մէջ եղբայր-բոյր սէր չկայ... ատ սէրը միշտ կայ, ուր ալ ըլլանք մէ:

Սակայն ա՛յ մտիկ չըրաւ Աստղիկ... Ինչքա՛ն քիչ կը հասկընար զինքը, ինք՝ որ կ'ուզէր պաշտպանել անոր մարմինը, այդ գեղեցիկ, անմեքձեմալի, գրեթէ անիրական էութիւնը, որ եղբայրն էր. «Երանի թէ մեռնէի, որ հասկնար զինք որքան կը սիրեմ», խորհեցաւ Աստղիկ ու հարցուց՝

—Ինչո՞ւ ըսիր, թէ մեր ընտանիքը կը բայթայուի... հոս մնացիր, եղբայր, մի՛ ձգեր, որ բայթայուի... Ե՛ս ալ քեզի պէտք ունիմ, մամա՛ն ալ:

—Պապադ կայ:

—Զինքը շատ քիչ կը տեսնեմք, գործի է միշտ:

—Դժուար օրեր են իրեն համար: Առանձին ձգէ զինք, մամադ ալ ասանկ պիտի ընէ, գոնէ քանի մը տարի...

Աստղիկ գգուշութեամբ ետ կոթնեցաւ ու ծոծրակը հանգչեցաւ եղբօր թեւին վրայ: Մեղմ սարսուտ մը խլրտեցաւ ծունկերէն ու թեւերէն, աչքերը դարձուց հեռուն, քաղաքի ուրուագծին: «Ինչքա՛ն կը սիրեմ եղբայրս», անցաւ մտածումը:

—Ես շատ դժբախտ եմ, եղբայր, հոս մէկ հաստ մտերիմ ընկերուհի չունիմ... դուն ու Մարին, երկուքդ ալ ահագին բարեկամներ ունիք, թելէֆօն կ'ընեն, դուրս կ'ելլէք... դուն ահագին ընկերուհիներ ունիս...

—Կ'ըլլայ, կ'ըլլայ, ատ ալ կ'ըլլայ, մի՛ անապարեր:

Աստղիկ գոցեց աչքերը, շունչը բռնեց, ինչպէ՞ս ընէր, որ եղբայրը զինքը լուրջի առնէր, հարցում հարցնէր իր մասին ու ինք բանար սիրտը ու պատմէր անոր հետ գաղտնի կեանքի մասին, գիշերները, անոր թեւերուն մէջ հանգչած, քնացած, լուսքեան մէջ միայն շնչատութիւնը կը լսուի, մթութիւնը զիրենք զրկած,



գիրենք համբուրելով, ճեղք մը մագերը շոյէր, մէկը բաներ մը փսփսար ականջին ու ինք բանար թետրը, գրկէր կեանքը, սեղմէր ուժով, ուժով...

— Ի՞նչ կը խորհիս Մարիին Հայաստան երթալուն մասին, Աստղիկ:

Լսեց իր անունը, յանկարծ ուշքի եկաւ, շտկուեցաւ նստած տեղը:

— Ի՞նչ:

— Ի՞նչ է կարծիքդ Մարիին Հայաստան երթալուն մասին:

«Օհ, լաւ կ'ըլլայ», անցաւ միտքէն ու երկվայրկեան մը տեսաւ ինքն ու եղբայրը ստանձին, ինչպէս հիմա, օրերով, ամիսներով...: Ծածուկ հանոյ՞ք արդէն սկսեր էր ու չէր կրնար մարդու ըսել ատիկա, իր է՞ն մտերիմ գաղտնիքը...

— Կարծեմ սխալ է:

— Ինչո՞ւ:

— Հոս ասելի երջանիկ կ'ըլլայ անիկա: Ես գիտեմ Բոյրիկս — անամկ մեծ-մեծ կը խօսի, բայց կը սիրէ հանգիստը, տունը, բարեկամները, օթոն, Սան Ֆրանսիսկոն...: Հայերուն վերէն կը նայի, գիտեմ, Բիթին չի դներ, բայց կապուած է Բաղաֆին: Եթէ հոն երթայ... չեմ գիտեր:

— Զէ, չէ, թող երթայ, լաւ կ'ընէ: Մարդ իր սրտին ուզածին ետեւէն պէտք է երթայ, սրտին Բաշածը ընէ՝ եթէ խելքը արտօնէ: Դուն ալ, Աստղիկ: Ատ «հայերուն վերէն կը նային»ը ատիկա առաջ էր, հիմա Բոյրդ հասունցած է, գոհուիլ գիտէ, եւ սիրելը գոհուիլ է... սիրել գիտէ:

— Ես ալ գիտեմ:

Լսեց Միհրան: Քրոջ հոգեկան մէն մի վիճակը կը հասկնար եւ զգաց, որ ան ուրիշ իմաստ կու տար իր խօսքերուն, այսպէս իր Բովը կ'ծկուած, ողորուած իր խելքէն ու շիդերէն ուժով զգացումներով. «Օր մը կը հասուննայ, աս ամբողջը կը մոռնայ», խորհեցաւ:

— Հարկաւ, — ըսաւ Միհրան, — հայրենիքի սէրը ամէնէն ազնուական սէրն է:

— Դուն չե՞ս սիրեր հայրենիքդ, ինչո՞ւ չես երթար:

Միհրան բացաւ թետրը դէպի Կոլտըն Կէյթի լոյսերը ու ատկէ անդին Բաղաֆին գունագեղ, կայծկլտուն հմայիչ հրաւէրը...

— Հարկաւ կը սիրեմ, կը պաշտեմ իսկ... սակայն այս է իմ աշխարհս, Աստղիկ, հոս ծնած եմ, հոս մեծցած եմ, աս հայր-թիւնը ճանչցած, սիրած եմ, ասոր կը պատկանիմ:

Յանկարծ վախցաւ ճայնին հոետորական շեշտէն, թետրուն աղեղէն, բարերուն թակարդէն: Լսեց, վար առաւ թետրը: Աստղիկ, պիրկ՝ կը սպասէր իր խօսքին:

—Հիմա՝ որ անկախ Հայաստան մը կայ, ամէն մարդ անով խանդավառ է, ամէնն ալ մոռցած են Սփիւռքը, հազար տարուան կռիւր, տառապամբը, գեղեցկութիւնները, յաղթանակները, անկարելի յոյսերու կառչող խենթերը...: Ահագիմ մեծ ժառանգութիւն է ասիկա, Աստղիկ, դուն դեռ չես կրնար գնահատել մեր գեղեցիկ լեզուն, մեր պատմութիւնը, փորձառութիւնը Հնդկաստանէն Պէլքոսք եւ Ամերիկա... սփանչելի հայութիւնը, ի՞նչ գիտնամ... հիմա շատ ատելի կը սիրեմ այդ կորսուած, օտար կմիկ առած, արմատներէն կտրուած հայերը, քան առաջ, կը հաւատա՛ս:

—Քայց դուն չէի՛ր, որ կ'ըսէիր, թէ աստեղերը կը կորսուինք կոր:

—Ես՝ չէ: Մարդիկ այդպէս կը խորհին՝ այո: Հազար տարի է կ'ըսեն հա կ'ըսեն նոյն բանը...

—Սխալ են:

—Հարկաւ: Հոս ենք, չէ՞, սրտով, խելով, մարմնով... քայց մա՛նուանդ սրտով... Եթէ ես Սփիւռքը չսիրեմ՝ Հայաստանն ալ չեմ կրնար սիրել, եւ այն ատենն է, որ կը կորսուիմ:

—Սփիւռք, այսինքն հայութիւնը:

—Այո, նայէ շուրջդ, աւ քաղաքը քանի՞ հայ կայ, տա՛սը հազար, այո՞, լա... Եթէ տասէն երեքը շարունակէ հայու կեանքը՝ յաջողած ենք, կը փրկուինք...: Միւսները պիտի գոհ երթան մարդորսներուն, գիտեմ, սակայն ի՞նչ կրնամ ընել, թող երթան, Աստուած հետերնին...: Առաջ կորսուածին ետեւէն ես ալ կից մը կու տայի, հիմա փոխուած է:

Ալ գրեթէ մոռցած էր քոջը ներկայութիւնը:

—Հայաստանի անկախ հանրապետութեան ծնունդը հոս մեր կեանքին մէջ ալ ուսմբի մը պէս պայթեցաւ, կռնակնիս շտկըւեցաւ, կարծես մէկէն մէկ իմաստ մտաւ հայ ըլլալուն մէջ, նոր իմաստ մը...: Սկիզբը առանձին էինք Սփիւռքի տարածքին, ըՍփիւռք ըսէիր՝ որբերու, թափառականներու, տեղէ մը արտաբուսուածներու սերունդներ կը հասկնայիր, պապային պէս հազարներով...: Յետոյ՝ մենք եկանք, ես, ընկերներս, հայ ենք ըսինք՝ քաղաքներու բնակիչ էինք...: Հայաստանէն մարդիկ կու գային. «Դուք հոգ չունիք ձեր ոտքին տակը կ'ըսէին, չէ՞ դիմանար», կ'ըսէին...: Հիմա յանկարծ հողը այնքան ալ կարեւոր չէ, պետութիւն կայ, Հայաստանը այլեւ քաղաքական իմաստ ունի, առասպել կամ միթ չէ կամ երազ չէ...: Հայութիւնը հասարակ, սովորական իրականութիւն մըն է եւ ոչ թէ միսքիք, կրօնական կամ հոգեկան կամ, ինչ գիտնամ, բարոյական, երեսակայական բան մը...: Կարծես թէ շատ յարգի արժանիք մը պակսելու վրայ է մեր կեանքէն, ամէն ազգի պէս ազգ մը կը դառնանք կոր...:

Արդէն երբ սկսան Սփիւոբէն Հայաստան երթալ, Բարին ու ծառին դպնալ, ջուրը խմել, լուսանակար Բաշուիլ՝ Թովմաս առաքեալի պէս չէր շիներու, կասկածամիտ սաքրաֆներու, հասարակ, գոեհիկ իրապաշտներու վերածուեցան ու մեռաւ երեսակայութեան շինած խտէալը...: Ամէն վերադարձող աւելի խեղճ, կակուղ, մեղկ սփիւոբցի մը եղած էր, որ Բաշուիլը չունէր իր սիրած Հայաստանին մէջ բնակելու: Եւ տկարացաւ Սփիւոբի դիմադրական ուժը...

Միտրան դադրեցաւ խօսելէ, անդրադարձած, որ Աստղիկը չէր կրցած հետեւիլ իրեն. «Աս ամբողջը սեղանին գլուխը կ'ուզէի ըսել, բոլորին», խորհեցաւ. «Նորէ՛ն սկսայ նա խօսիլ»: Դարձաւ Բրոջը, որ ուշադրութեամբ հետեւեր էր իր ըսածին:

— Կը ներես, Բոլորիկ, — ըսաւ խնդալով, — մորէն տարուեցայ... գիտես, կուսակցական սովորութիւն է ասանկ երկար ու ծանր խօսիլը... նառախօս դարձեր եմ:

— Ձէ, չէ, բնաւ նա չէր, հետեւեցայ ըսածիդ, շատ բաներ փախցուցի անշուշտ, միայն մէկ հարցում մը ունիմ, կամ աւելի ճիշդը՝ մտածում մը:

— Ո՞րն է:

— Մարին Հայաստան, դուն՝ Սփիւոբ...: Ինձի միայն մէկ նամբայ կը մնայ՝ Ամերիկա:

Միտրան յանկարծակիի եկաւ Բրոջը միտմին արթնութենէն: Պատասխան չունէր:

— Ի՞նչ ըսել կ'ուզես:

— Ձեմ գիտեր, սակայն կարելի չէ՞ այս երեքը միացնել, Բանի որ ուրիշ ձեւ չկայ ընտանիքը միացած պահելու: Քիչ առաջ կ'ըսէիր, որ Հայաստանը պետութիւն դառնալով հողը կորսնցուց իր... իր... ի՞նչը կ'ըսէիր:

— Իր միսքիքը:

— Ի՞նչ ըսել է միսքիք:

— Օ՞, դժուար է բացատրել, գիտես... տեսակ մը Բաշուութիւն է... զգացական, բնագրական, գրեթէ գերբնական Բաշուութիւն, ներշնչում, ինչ գիտնամ... հասկցա՛ր:

— Կարծեմ թէ... բայց պիտի ըսեմ, որ Մարինն համար այդ միսքիքը չէ կորսուած, ճիշդ է:

— Իրաւունք ունիս... ընդհակառակն, աւելի ուժովցած է:

— Լա... Բեգի համար ալ...

Աստղիկ բառերը կը փնտռէր, գլուխը կլակ կտրած, բերանը չոր. այդքան մտերմութիւն եղօր հետ երբեք չէր սպրած: Նորէն գոցեց աչքերը:

— Այո, ինձի համար ալ... բայց ոչ հողին միսքիքը, եւ ատանկ բաներու գլուխ չունիմ, իմ միտքս շատ Բառակուսի է:

—Հապա՛:

Կուտփին տիրեց:

—Դժուար է բացատրել, Աստղիկ:

Նորէն լուտփին:

—Ամէն պարագայի, մէկ բանէ գոհ եմ՝ այսօրուրնէ սկսեալ ամէնքս նորոգուած, մաքրուած կեանք մը կ'ապրինք, մեր ընտանիքը պիտի չջայքայուի, ոչ ալ Հայաստանը կամ ալ Սփիւտքը:

—Ե՛ս:

—Ոչ ալ դուն, դուն ալ նոր կը սկսիս:

Աստղիկ յանկարծ գտաւ բառերը, բացաւ աչքերը: Ուրախութիւն մը կը թրթուր իր մէջը, ռիզեց բռնել ու սեղմել Եղօր թեւը, խօսիլ, խնդալ ու պատմել ժամերով: Իր մասին այնքան ըսելիք կար ներսը:

—...Ես թեզի պէս ուժով կ'ուզեմ ըլլալ, եղբայր, բայց գիտեմ, որ տարբեր եմ, իմ աշխարհս ուրիշ է... լոյսին, ջուրին, ամպերուն, ծաղիկներուն, թռչուններուն աշխարհին է...: Ես մէկ հաստ ընկերուի չունիմ, բայց հազարներ կան ինծի պէս, գիտեմ միմակ չեմ... մենք որքո՞մ մը ունինք, մենք իրար կը հասկնանք առանց խօսելու, կարծես թէ պէտք ալ չունինք խօսելու... հայ ըլլալ թէ օտար՝ նոյնն է:

Միեւնոյն համար ալ անսովոր էր քոջը լեզուին քակուիլը: Ուզեց քաջալերել զայն՝ բացուելու, լուսաւորուելու ներսէն, ինքնիքն համար: Ինչքա՞ն քիչ ու գէշ կը ճանչնար իր ընտանիքը...: Ձայնին տալով շատ բնական, անշեշտ թոն մը՝ խօսեցաւ անոր.

—Քիչ մը կորսուած չե՛ս զգար դուն քեզ...: Ամէն մարդ նըպատակ մը կը փնտռէ կեանքին մէջ, կամ աւելի ճիշդը՝ փրկուողի մը կը փնտռէ... դո՛ւն ինչ կը փնտռես, Աստղիկ:

Լռեց Աստղիկ: Կտրուեր էր բառերու հոսանքը: Ու հիմա, որքա՞ն դիրքին էր երեսակայելը, լռելը, մտիկ ընելը ձայներու եւ խօսքերու պատմութիւնը, ու ինչքա՞ն դժուար՝ խօսիլը, բառերը եւ ըսելիքները իրարու մօտեցնելը, միացնելը, յարմար ձայնը գտնելը, մտածումը իր անձէն անկախ օրէնքի մը ենթարկելը...: Ո՛ր էին հիմա իր հարիւրատըր անձանօք ընկերները:

—Ճիշդ է, որ մենք խումբով ենք, միասին ենք, սակայն... մէջըս բան մը չկայ... ես ասանկ եմ... իրականութեան մէջ առանձին եմ, ներսս լեցուն է ինձմով, սակայն պարսպ է, ամալի է եւ տեղ չկայ ուրիշին համար... անտէր սէր մը կայ մէջս, չեմ գիտեր ինչ է...

—Ա՛տ է կ'ըսես «գոթախտ եմ»:

—Այո:

Քրոջ ճայնին յուզիչ որակը ու ընտանեկան սիրոյ, մտերմութեան շօշափելի պահանջը մղեցին զինքը իր թեւերում մէջ առնել անոր խակ, անպաշտպան մարմինը, սեղմել կուրծքին, ուր Աստղիկ կծկուեցաւ, ամձնատուր ուրախութեան, խռովքի ու շրարումի գգացումի մը...: Ոչ ոք խօսեցաւ քանի մը վայրկեան:

— Գիտես Աստղիկ, մենք՝ հայերս շատ մարմնային, ֆիզիքական ազգ ենք, պէտք է տեսնենք զիրար, դպնանք, շօշափենք, գրկենք, ջլափ-ջլափ համբուրենք, որ ճանչնանք, հայ զգանք, սիրենք, սէրը կեանքի մէջ դնենք ու ապրինք... Առյուծակ հայ բլալը ֆիզիքապէս փոխանցուող վիճակ մըն է: Անանկ որ՝ մի քաշուիր, եթէ կը սիրես մէկը կամ բան մը, մի ծածկեր մինչեւ վերջը, միշտ բան մը յայտնէ ստկէ, կը հասկնա՛ս ինչ կ'ըսես:

— Այո, այո:

Միտքով կը զգար, անոր մարմնի պրկուածքէն՝ ինչպէս խռով ու ցրուած էր անոր ուշադրութիւնը: «Հոգ չէ», խորհեցաւ հիմա: «Եթէ քանի մը գաղափար մնայ միտքին մէջ՝ այդ ալ շահ է»: Ու շարունակեց.

— Գիտես՞ս ինչ է, այս ազգը դեռ կը ջարդուի կոր, մեր կեանքին մէջ ահագին սուգ կայ, մութ տեղեր մեր հոգիին մէջ, մահը մեր ներսերը կը թափառի, չի կրնար դուրս գալ, ամէն վայրկեան հայերս սպաննուած, մեռած ժամանակ մը կը ծամենք, յիշատակներով, բացակայութիւններով, կարօտներով կը սնանկինք, աշխարհին ԳէկաթիՖը կը տեսնենք միայն, կը հասկնա՛ս:

Սպասեց: Զկար պատասխան: Շարունակեց:

— Կեանքի ուրախութեան, քաղցր համին, լուսատու աչքերուն կը նայինք, բայց միայն սեւը, ժխտականը, բացական, ապագայէն պարպուածը կը տեսնենք:

— Ես անանկ չեմ:

— Գիտեմ, գիտեմ... Ես ատոր համար է, որ դուն մեր երեքին մէջէն մինակն ես, որ առողջ մնացած ես, ապագայով լեցուն ես... Այլէ քոյրիկիդ, ո՛չ միայն Հայաստան պիտի երթայ, այլև Արցախ ալ պիտի անցնի ձգես նէ, կուտի ֆետայիներուն հետ, որովհետեւ բռնկած է ժամանակով, անցեալով եւ ապագայով, որ իր իտէալն իսկ է... իտէալ հայրը կը փնտռէ, որ պաշտպանէ զինքը... Ես ալ անոր պէս եմ, սակայն Սփիտքի խանդավառութեամբ տարուած եմ... Հայաստանի անկախութիւնը մեզի ալ անկախութիւն պիտի տայ:

Լուրջիւն տիրեց:

— Բայց դուն ալ, Մարին ալ տարբեր էք միւսներէն:

— Այո, տարբեր ենք, սակայն մենք ալ դեռ հին սերունդի միսքիքին մէջն ենք, մենք ալ եղեռնի արիւնին մէջէն կը նայինք աշխարհին, անելի մը ծայրը կայնած ենք...

Միհրան հեռացած էր պատիկ բրոջ աշխարհէն ու կը հետեւէր իր անձնական տագնապին:

—Նայէ Աստղիկ,— ըսաւ անոր ձեռքը անզգալաբար բռնելով,— այս քաղաքին ամէն մէկ լոյսին, երգին, խնդրոսին, հրապոյրին տակը ահաւոր ցաւեր ու տառապանքներ կը պահուորտին...: Կարծես մարդիկ միայն կեղծիքը ապրելու կարողութիւնը կամ արտօնութիւնը ունին... այսօր գեղեցկութիւն կայ շուրջերնիս՝ որ սակայն մարդոց միայն անզուր ջիղն է, որ կը թրթրուցնէ, քանզի, սպաննիչ ջիղը...:

—Այո,— ըսաւ Աստղիկ, շատ մեղմ:

—Սուտ է աս քաղաքը, սուտ են մարդիկ, սուտ է երկինքը: Մէկ արժանիք, մէկ հսկայական առաւելութիւն ունի Սան Ֆրանսիսկոն — երկրաշարժը, երկրաշարժի սպառնալիքը: Այդ է միակ իրական, նշմարիտ իրողութիւնը: Արցախի դէպքերուն կը հետեւի՞ս:

—Այո, հարկաւ:

—Ի՞նչ պայքար է, հէ՛... մենք՝ հայերս ի՞նչ հեշտանքով դէպի մահ վազած ենք ժամանակին ու տակաւին ալ կը վազենք... կայ՛ աւելի ազնիւ մահ, քան հերոսի մահը, նահատակի մահը... միակ վաւերական քրիստոնէականքը մենք ենք... հողին պաշտպանութիւնը պատրուակ է կարծես... արիւն, արիւն, թուրքին յանձնարանքն է, մեր առելութիւնը թուրքին արդեօք շրջուած սէ՛ր մըն է... մենք թուրքին սիրահարուած ենք... եւ ի՞նչ ահաւոր գաղափար է սա...:

Կուրսիւն...: Միհրան անդրադարձաւ բրոջ ներկայութեան ու խօսքը ուղղեց անոր.

—Աստղիկ, զիտե՛ս որ դուն առաջին, իրական սփիւռքին ես մեր ընտանիքին մէջ...: Դուն կրնաս իրապէս ազատ, բնական, արդիական, շիրդ դարու հայու նոր տիպարը ըլլալ, դուն ու քեզի պէս երիտասարդներ:

Խնդաց Աստղիկ:

—Ե՛ս ան ալ:

—Հա, դուն...: Ես բու վրադ ահագին յոյս դրած եմ:

Շտկուեցաւ Միհրան: Գիշեր էր շուրջը: Ներսէն Մարիին ձայնը կտոր-կտոր կու գար իրեն: Գրգուտած էր երեւակայութիւնը. «Ի՞նչ օգուտ մարդոց վրայ յոյս դնելը», խորհեցաւ, ժամացոյցին նայեցաւ, բայց մութ էր, ոչինչ տեսաւ:

—Տե՛ղ պիտի երթաս:

—Այո:

—Եղբայր:

—Հա:

—Ինչո՞ւ այսֆան իրար անցած է՞ք, դուք ու մաման... Հայաստանի անկախութիւնը այդֆան մե՞ծ դէպք է որ:

—Այո, Աստղիկ, շատ-շատ մեծ... Պատմութենէն վնասուած էինք բոլորս մէկ, հիմա ետ մտանք, ետ ժամանակին մէջ մըտանք եւ կեանքներնիս խմաստ առաւ... հայոց պատմութեան անխնայը նորէն սկսան դառնալ, բոյրիկ, չե՞ս լսեր կոր...

Խնդացին: Կատակը քիչ մը թուցուց ջիղերուն հանգոյցը: Ոտքի ելաւ, պրկուեցաւ:

—Նստէ քիչ մըն ալ, ինչ կ'ըլլաս:

—Ձէ, պէտք է երթամ, կարծեմ ուշացայ արդէն:

—Ես չեմ լսեր կոր աստիկա:

—Ի՞նչը:

—Անխնայութեան ճայը:

—Գիտեմ, հոս շատ դժուար է աստիկա զգալը...: Սփիտքի մէջ ամէն ինչ գլուխէն ներս է, այսինքն՝ ամէն մարդ միայն իր խելֆին հետ, իր երեւակայութեան հետ է, առանց մեծ հայրիկի, առանց ժառանգութեան կամ արանդութեան: Ատոր համար է, որ մամադ միշտ ընտանիքին մէկ մնալուն ետեւէն է: Մակայն այդ միւս օրէնքը անլի սարսափելի է, ամէն մարդ ինքն իր գլխուն, հէ՛չ, ընտանիքն ալ օգուտ չունի աս հարցին մէջ:

Լոնց Միհրան: Կ'ուզէր վերջ տալ խօսակցութեան: Բայց չէր կրնար ձգել-երթալ՝ առանց վերջին մտածումի մը:

—Նայէ Աստղիկ, բնա չմոռնաս, որ դուն տարբեր ես հայաստանցի աղջիկէն, թէ՛ նոյնն է՞ք, թէ՛ ալ տարբեր: Մեր պատմութիւնը երկու թելով կը զարգանայ: Մէջ մը Հայաստանի զըլխաւոր թելը կայ, կ'ուզես բռնել՝ գնա՛ Հայաստան, հոն հաստատուէ՛ ու կը բռնես: Բայց հոս, Սփիտքի մէջ ալ թել մը կայ: Դուն աստիկա պիտի գտնես:

—Ես գացողը չեմ, կարծեմ թէ:

—Գիտեմ, ու կը յարգեմ աստիկա:

—Ես ալ քեզի պէս եմ, աս է իմ աշխարհս:

Ոտքի ելաւ ու զգայարանքները գրկեցին տա՛մ սիրով մը մըտերիմ ու սիրելի տեսարանը — կամուրջը, խորհրդատր, անհանդարտ ովկիանոսը, քաղաքին հագարատր աչքերը: Խուլ, թանձր աղմուկ մը կը թրթռար մթութեան սրտին...: Դարձաւ եղբօրը:

—Պիտի կարօտնա՞ն ինձի, եղբայր, երբ երթաս:

Խնդաց Միհրան: Ձեռքը տարաւ անոր մագերուն ու Աստղիկ անլի մօտեցաւ եղբօր:

—Հարկա... բայց կարօտէն անլի է մեր կապը, չէ՞...

Լուռ էր Աստղիկ: Սիրտը ուժգին ու արագ կը զարնէր, բայց չէր գիտեր ինչու:

—Սէրէն ալ աւելի է, քոյրիկ, շատ աւելի...: Օր մը կը հասկընաս ստիկա, քանի մը տարիէն, երբ աւելի հասունցած ես:

—Բայց ե՞րբ, ե՞րբ:

—Միայն թէ բռնես թելը... սա ալիքին վրայ մնացիր, չհեռանաս:

Կամուրջին վրայ երթեւեկին լոյսերը կը փայլփայլեն, սակայն միւս ափը մթութեան մէջ կորսուեր էր:

28 Ապրիլ 1992,  
Աստրալիա

Վահէ Օշական



Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

---



---



---

**ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒ**

**ԾԻԱԾԱՆԸ**

---



---



---

**ԿԸ ԲՈՒՐԵՄ ԱՄՊ ՈՒ ԾՈՎԱՆՈՅՇ**

Լայն կը բանամ եօթներորդ արուեստին վարագոյրը եւ խորանին վրայ գարուններ մաղող անձրեւը կը բռնեմ իր օձի՛հէն: Իբրեւ նախապատրաստութիւն Ոսնկուայի՝ առաջին կաթիլով ոտներս կը լուամ, երկրորդով՝ ձեռներս, երրորդով՝ բիթս, իսկ չորրորդով՝ մեղաւոր մտածումներու բոյն ականջս: Կը բնանամ մաքուր ու թեթեւցած եւ կը բուրեմ ամպ ու թռչուն, խխունջ ու խոտ եւ Մովանոյշը երաշխներու երազահանին:

Պէյրուս, 17 Ապրիլ 1987

**ՍՊԱՍՄԱՆ ՊՍԱԿ**

Դիմագիծերս ու հայեացքներս  
 յուսախաբութեան հսկայ ոտին տակ տրորուած  
 երանութեան ոսկեհատիկներուն պէս թթմորունցան

որոշեցի հրաժարիլ շարժում եւ անշարժ բոլոր գանձերէս  
 անգամուան մը համար տեղի տալ բախտի աժդահայիմ  
 կարմիր մոմով կնքել երազներու գրախանութը  
 փակել հրաշքներու եօթներանգ հատորը  
 եւ տառի մը մէջ ամփոփել պարտէզը  
 որովհետեւ կենաց ծառը մերկացաւ  
 սիրոյ եւ լոյսի վերջին բարունակէն  
 թիթեռն ու ծիծեռնակը չունեցին գժուած  
 պարտէզը որբացաւ սկիտին չարութենէն  
 միրգերուն բազմերանգ հրաւրէն  
 եւ դեղձամիկին սիրերգէն

Հիմա

Բացխած հայեացքներու դիմաց  
 ցեխի նման ծանր աշնան այս օրով  
 կան միայն փուշեր եւ թունաւոր բոյսեր  
 որոնք կը սպասեն բանաստեղծներուն՝  
 տառապանքի պակներով թագադրելու  
 անոնց ջորի գլուխները

Պէտրոս, 29 Հոկտեմբեր 1981

## ԶԵՄ ՀԱՍԿԵԱՐ, ԱՍՏՈՒԱՎԾ...

Ո՛վ ըսաւ, Բաղափի մէկ մութ թաղին անկիւնը պայտ ու գութան  
 խմոր ընող դարբին, որ փողկապաւոր նախարարներն ու ընդհա-  
 նուր տնօրէնները չեն յոգնիր կաշիէ բազկաթոռներու մէջ, երբ  
 անշարժ կը գաղթեն թիւերու եւ տոկոսներու աշխարհէն՝ հեռու  
 Բարտուղարուտիին պաշտօնական ժամանակացոյցէն եւ դիւանա-  
 կալական կոտորակներէ, որոնք զիրենք մանուկներէն կը զատո-  
 րոշեն:

Դո՛ւմ՝ որ երկաթին կարմրածայն սոխակն ես ու հայրը  
 պողպատին, օրինակ, ի՞նչ համարձակ տրամաբանութեամբ կ'ըսես  
 Բուրայի կրակին, որ դատախազները յոգնեցան իրենց ակամջնե-  
 րուն մեմատիրութենէն եւ վերածուեցան ծառերու կամ գիտուննե-  
 րու:

Այլակերպումը մարդուն իրաւունքն է: Անշո՛ւշտ:

digitised by A.R.A.R.@

Բայց ես չեմ հասկնար, Աստուած, որ դատախազները ինչպէ՛ս իրենք զիրենք կը հանդուրժեն: Իբրաւոնք չկայ իրենց համար, որովհետեւ իրաւ ու արդար ոչինչ կայ իրենց աշխարհին մէջ:

Ոչ ալ՝ անիրաւութիւն, որովհետեւ այդ աշխարհին լոյսը դուռն էս, ո՛վ իմ բարդ ու բարի Աստուած:

Պէյրուք, 28 Փետրուար 1882

**Թ Ա Գ Ա Ի Ո Ր Ո Ի Թ Ե Ա Ն Ա Ռ Ա Ն Զ Ն Ա Շ Ն Ո Ր Հ Ե Ա Լ Ն Ե Ր Ը**

Եթէ ես երազի թագաւորութեան գահակալը ըլլայի, վեհանձնն նժոյգները կը պարգեւատրէի մետաքսեայ մարգագետիններով, իրենց կը նուիրէի արծաթագօծ դգալ-պատառաւաղներ, ասեղնագործ անգտանելի թաշկինակներ եւ կը թոյլատրէի, որ իրենց բաշերը երկարեն մինչեւ արեւներ:

Ապա կը բռնէի աղուէները, մուշտակէն թամբեր կը պատրաստէի, կը զետեղէի նժոյգներու բամակին եւ անոնց վրայ կը բազմեցնէի աբաղաղ-ասպետներ, որպէսզի երբ սուլեմ՝ նժոյգներս խոյանան ստառնաթեւ, ամբոխը հրճուի, նորահարսերը գրաւի դնեն իրենց զնգզնգուն ոսկեղէնները, ծափահարեն ու ծափահարեն, իսկ ես շարունակեմ մնալ կայսրութեանս գահակալը... յաւիտեանս յաւիտեանից, ամէն:

Պէյրուք, 11 Փետրուար 1879

**Ո Ր Պ Է Ս Զ Ի Մ Ե Ռ Ն Ի Ն Խ Ն Դ Ա Լ Ե Ն**

Զկնավաճառներու շուկայէն Բաղուած հեքիաթի ձկնիկներն ու զուարթունները դուրս ցատկեցին պարզամիտ գիւղացիին թուղթ տուպրակէն՝ դպրոցէն փախուստ տուող չար աշակերտներու պէս եւ թրջուած տուպրակէն բարձրացաւ խոնար հոտը ծովուն: Փախըստականներն ու մեղուները համաձայնեցան խայթել գիւղին գունդ ու կտոր տասնապետը եւ լուրիկի դէմքով օդի հոտող ոստիկանները,

Բարբարոս մամբան ցանել պանանի կեղեկներով եւ օճառի պղպը-  
շակներով, որպէսզի ոստիկաններուն ու մայրապետներուն հեծա-  
նիւները սահին, իսկ հովիւներն ու մանուկներն ալ մեռնին  
խնդալէն:

Պէյրուք, 14 Մարտ 1878

### ՕՐԻՈՐԴ ԽԵՈՒՆՋԻՆ ԵՐԱՋԸ

Համեստափայլ խխունջը աղուէսին նուէր դրկեց ծիածանին  
եօթը ժպիտներով ասեղնագործուած մետաքսեայ թաշկինակ մը,  
խնդրելով ամենակարող աղուէսէն, որ իրեն համար յարգելի  
պաշտօն մը ապահովէ վարչապետարանին, Կեդրոնական Դրա-  
մատան կամ գէթ մասահանգիստի շունշանորդի միջնորդներէն  
մէկուն գրասենեակին մէջ, յայտնելով թախանձագին, թէ այլեւս  
ձանձրացած է անտառէն ու դաշտէն, անձրեւէն ու ցեխէն, բայց  
մա՛նաւանդ՝ սոսկալի յօդացաւէն:

Պաշտօն մը, որ իրեն արտօնէ մինի-ժիւփի հագուիլ, ոտք ոտքի  
վրայ նետել, առաօտեան սուրբին հետ «Մարլպորո» ծխել, պաշ-  
տօնական մամակներուն տակ իր անունն ալ մե՛քենագրել լատի-  
ներէն տառերով եւ ամէն առաօտուն ընդհանուր տնօրէնը ողջունել  
ցանկալարոյց ժպիտով:

Պէյրուք, 8 Մարտ 1885

### ԱՐԵՒԵԼՔԻ ԴԵՍՊԱՆՆԵՐԸ

Յասմիկի թերթիկներուն հետ սիրաբանող թիթեռնիկին տուտիկ-  
ները ճառագայթեցին ոսկի ապարանջաններու պէս եւ մանուկները  
դաշտ վագեցին: Սարեակները դայլայլեցին աղբիւր-աղբիւր եւ  
արեւածաղիկը լայն բացաւ աշխարհներ կու տուող իր ապշահար  
աչքը:

Հնդոստ՝ հովիւր մէկդի շարտեց սրիմզը եւ ժպտեցաւ զարմանք կտրած մեղուին: Մեղուին նիհար իրանը ծածկուած էր Հնդկաստանէն նուէր դրկուած մետաքսեայ թափանցիկ փէշով, որուն վրայ կը շաչէին Արեւելի եօթը ծովերն ու եօթանասունեօթը գլխանի քամիները, որպէսզի անկիրք մտեղներն ու նպուտները միանգամընդմիշտ դուրս սահին այս աշխարհէն:

Պէյրուք, 14 Օգոստոս 1887

#### ՎԱԽԿՈՏ ԹՇՐԹՇԸԸ

Բաց արիւնած թաթիկդ  
ծովեզերքի հայարտ արեւանոցներուն պէս  
եւ ակործակով թող միասին լափենք  
նակատագիր կոչուած փիցծան

Բոլորը կը վկայեն  
որ դուն իսկապէս զինով ես  
որ դուն իսկապէս Թըրքըլմ ես  
արբեցար արկածախնդրութեան ազնուական զինիէն  
կը վախճաս եօթգլխանի վիշապէն ու կոկորդիլոսէն  
ուտրերդ թոյլ են՝ այծի բարակ մաճունի չափ  
եւ շարունակ ցանցաւ հետրեր կը թողուս  
կեանքի անծանօթ կանաչին վրայ

Պէյրուք, 23 Փետրուար 1892

#### ՏՈՐՔ ԱՆԳԵՂԻՆ ՔՈՅՐԸ

Տորք Անգեղին բոյրը մեր աղախինն է: Կը բռնէ կէսօրին պոչէն եւ ընթրիքի մեր հիւրերուն համար կը մորթէ աբլուրի մը պէս: Ապա կ'իջնէ մրցադաշտ եւ կը յաղթէ Բանկուրուին, Եղնիկին, «Մերսետես 500»ներուն եւ իր ստուերին: Պէյրութէն կը խոնարհի Պեքաս-

Այննայր եւ, տուն դարձի նամբում վրայ, աղբատներում համար կը գնէ անուշ սոխ, գետնախնձոր ու ծաւար:

Պէլրուք, 18 Մարտ 1887

### ՄՈՒՐԱՑԿԱՆՆԸ

Մուրացկանը երկինքը կ'ուտէ պարտէզէն նոր բաղուած վարունգի պէս, յետոյ բանկոնը կը թօթուէ եւ գրպանէն ծիծեռնակներ կը բռնէ: Օդը կը լեցուի թիթեռնիկներէն անլի գոյնզգոյն մեղեդիներով եւ կակուզ տոտիկ նորածինները օրօրոցներէն ոտքի կ'ելեն:

Մուրացիկը ունի արծաթէ ափսէ մը, որպէսզի հաւաքէ մետաղադրամներն ու լուտամբները անցորդներուն: Բայց այս անգամ ալ փոթորիկը յայտնուեցաւ չինական եօթգլխանի վիշապի կերպարանով, տակնուվրայ ըրաւ իր յոյսերու ափսէն եւ երկինքէն ծանր աստղ մը ինկաւ գլխուն՝ հեփիաթներու ոսկի խնձորին փոխարէն:

Ուսուցիչին պայտասակէն գրաւորի հարցարանը թեթեւ ըրած չար աշակերտներ եկան, մտտեցան մուրացիկին մէջքին, կանաչ մարգագետինները ծայրէ ծայր կտրեցին, յետոյ մուրացիկին քիթին մէջ Դամասկոսի բթախոտ եւ միջատասպան դեղեր փչեցին:

Պէլրուք, 14 Մարտ 1887

### ԽԵՆԹՆԸ

Օղապարիկը փոխ առաւ մեծ հօրմէն ժառանգ մնացած բառարանէն, անոր մէջ լեցուց օդը իր տկար թռերուն, կապոյտ-կապոյտ երազները մանուկներուն, Ս. Սարգիսին ծամ բռնող միհար աղջիկներուն միահասցէ պաղատանքները, կտրծքը համայնավար մարիշայներու պէս գարդարած ամբարտաւան աբլորին կանչերը

Եւ ուրախ-գուարթ բարձրացաւ օղերեւութաբանութենէ ճառող ամ-  
պերն ի վեր:

Մնաս բարի, ա՛վ իմ խենթ:

Պէյրուք, 18 Ապրիլ 1887

**ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆ**

Աշակերտուիին  
որ իշխանուի է թզուկներու պալատին մէջ  
Եւ անգիր գիտէ կողմնացոյցին աշխարհագրութիւնը  
դուրս թռաւ իր գոգնոցէն  
սոսա կապիճը  
սոսա սրբիչը  
սոսա փետուրը աճաղաղին  
որպէսզի արեւուն լուսամելանով  
իւր կեանքի բարետախտակին վրայ  
սատանայ բառը գրէ  
սատանայ բառը ջնջէ  
Եւ սատանան դուրս փտարէ  
արքայութենէն...  
իւր ծիծերուն

Պէյրուք, 28 Դեկտեմբեր 1889

**ԵՐԲ ՍԻՐՈՒՀԻՍ ԺԱՄԱՆԵՑ**

Կիրակին բարոզիչ քահանային գումէն փախուստ տուաւ այծի  
պէս: Քահանան փորձեց այծը կապել ճիւղը գսպող բառ-պոյճներու  
հորիզոնական ցիցին, բայց բռնութեամբ զնգզնգացին, մանուկները  
արթնցան ընդստ, սիրուիս ծամ ծամանեց Եւ իր գեղեցկութենէն  
պատարազը բռնկեցաւ: Մկրտութեան աւագանէն սաղմոս առ

սաղմոս գանգրահեր երեխաներ բարձրացում եւ եկեղեցին  
յորդեցաւ սոխակներուն գեղգեղամբով:

Պէյրուք, 17 Սեպտեմբեր 1980

### Ո Ր Ք Ա Ն

Ապարանջանների գնզգնզացին  
պարանոցդ գրկած գնչուներու մանեակին  
կապոյտ հլունները երկինքներ գնզգնզացին  
եւ ծիծերդ հեշտամբի ամառներ վառեցին

Որքան գրաւիչ է երաժշտութիւնը ամբամ  
որքան գրաւիչ է երաժշտութիւնը  
որքան գրաւիչ է  
որքանա՞ն

Երբ բոցալեզուակները հեշտամբի  
միսերուդ մէջ կը խայտան  
ամառներն արեան

Պէյրուք, 19 Օգոստոս 1987

### Հ Ե Ք Ի Ա Մ Մ Ա Մ Ի Կ Հ

Արեւը փակեց իր խանութը եւ դար-դար յօրանջեցին ճառագայթներու միանուագ շաղակրատութենէն ձանձրոյթ կտրած անանուխը, գառնուկը, աղբիւրը եւ լուսինը: Մամիկը, որ կրակարանին համար դաշտերէն քաղուած ցախ ըլլար կարծես, ծալապատիկ նստեցաւ կարպետին վրայ, չիպուխը երկարեց աստղերուն եւ ծխեց իր անցեալի հեքիաթները:

Պէյրուք, 18 Մարտ 1985



**ՅԱՆԿՈՒԹՒՆՆԵՐՈՒ ԿՂՄԻՆՏՐԸ**

Յանկութեան համբերատար կղմինտրն եմ: Ձեմ գիտեր՝ քանի՞ դարէ ի վեր կ'աղաչեմ արեւուն ու ձիւնին, փոքորիկին ու կայծակին, սակայն ո՛չ ոք ականջ կը կախէ իրենց միմուճար սիրահարին:

Երկաթին ափաղաղն եմ եւ ժանգը իմ ստրուկս է:

Աշխարհագրութեան չորս ծագերէն միշտ հովեր կը վչեն եւ կը խողտամ վախէս ու ցաւէս: Վերջապէս, թէն գունաթափ ու ճաթուած, ես ալ մարդ եմ:

Լսեցի՞՞ր կանչս, ձիւնածածկ երգիւններու տակ կարմիր գիշերներ մանող գեղջուկներ: Աստիճան մը երկարեցէ՛ք, որ վար իջնեմ, թօթուեմ ձեր ցորենագոյն ձեռները եւ մատներս տա՛ցնեմ ձեր կրակարաններու մոխիրներուն մէջ՝ ձմրան կրիայ գիշերներուն պէս:

Չոգ չէ, հաւատա՛ չեմ նեղուիր, եթէ ինծի կասիայ ու մեխակ բուրոզ տոփամբներու թէյը չհրամցնես: Վնաս չունի, կը վերցնեմ մեծ հօրս թանգարան դրուելի՛ք որսորդական հրացանը եւ քամիներուն ճահուկները դարձեալ կը հալածեմ:

Աչերո՛ւդ սիրոյն: Դուն դարձեալ իմ շատախօս պատաս ես, որքան ալ թոյն ու անէծք ցանես... հրամցուցած թէյիդ եւ Ձատիկի կարկանդակին մէջ:

Հալէպ, 9 Մայիս 1980

**ԿԵԱՆՔԻ ԿՈՒԺԸ**

- Լինելութեան աներեւոյթ գագաթէն
- Սիգիֆին ժայռը գլտոր-գլտոր գլտորեցաւ
- ո՛չ — լոյսը գլտորեցաւ
- ո՛չ — վարդը գլտորեցաւ
- ո՛չ — թիթեռը գլտորեցաւ
- ո՛չ — շնագայլը գլտորեցաւ
- ո՛չ — տղամարդը գլտորեցաւ

ո՛չ — Յիսուսին գառը գլտորեցաւ  
 ո՛չ — Աստուածորդին գլտորեցաւ  
 ինչե՛ր կ'ըսէ՛ք բարեկամներ  
 գլտորեցաւ կի՛նը որ «Ո՛չ» կը կոչուէր  
 եւ կեանքի կուժը փշրուեցաւ

Երջանկութեան աղբիւրի  
 նամբուն վրայ

Պէլրուք, 19 Օգոստոս 1989

#### ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ՈՍՊՆԵԱԿ

♦ Ձմեռը իջաւ դանդաղ՝ իր ննջարանէն յօրանջելով վար իջնող սրբայագունի պէս եւ աջ ու ձախ վազվզեց ֆութպոլիստի նման։ Ապիտակ հրամանատարին գայրոյթը իսկապէս կարմիր է եւ ամալ՝ ամէնէն ողբերգական տեսակէն։ Աստուած թող հետու պահէ ձեզ այս գեղեցիկ, բայց մահաշունչ փոթորիկէն, որ անգուսպ արջի մը պէս կ'արշաւէ տիւ ու գիշեր՝ սարսափահար Երոսպային ննջարանէն դէպի ծոցը Մեծն Աղեֆամդրի եւ Ռասպութիմի։

♦ Աչքերս ծովահէլմներուն հեռադիտակն են։ Կը հասնին մինչեւ Ուրարտու եւ Քարէ Դար, եւս ու Մախամարդ, որուն ձեռքերը Կայէնին ճաթտած մահակն են, իսկ եղունգներն ալ՝ սաստանի քարէ սրտած կոպիտ դամակներ։ Ամագոն մօրուֆին վրայ թառած է անկիրք մոծակը, որ նախամարդուն փիղի մորթէ աւելի հաստ դէմքը կը խայթէ, ամէն անգամ որ կը փորձէ յօշոտել թշնամի ցեղախումբէն աւար վերցուցած մելամաղձոտ իշխանոսին։

♦ Բազմանկիւն աստղերը բախտագուշակին կեղծ ոսկեդրամներն են։ Ոսկերիչներու նժարով երագիս աստղափոշիները կը կշռեմ եւ մանուկի միամտութեամբ ինֆզիմֆս կը յայտարարեմ ամենայն նզովեալներու բանաստեղծ։ Հոգ չէ թէ Ողիմպոսի ճամբուն վրայ խարխափող նաւս պատած են մոռացութեան մամուռներն ու անշարժութեան ջրիմուռները, իսկ փտած տախտակամածին վրայ շարունակ ետրիւշտայ կը պարեմ պարոյկը, ափսոսանքի բացագանչութիւնները եւ վրէժխնդիր ծովաշունները։

digitised by A.R.A.R.@

Բախտագուշակին գգուշացումը լուրջի շարի եւ չամիչով ոլոր-  
ւած նաւաստիի պէխս թել առ թել կորսնցուցի հրաշքներու կղզիին  
վրայ: Սիրուհիս մոռցաւ Բերթուածը դիմագիծերուս եւ անծանօթ  
նաւագ մը իբրեւ նաւահանգիստ ընտրեց: Ի՞նչ ընեմ, բարեկամ-  
ներ, երբ լուսիմէն իսկ տկար բանաստեղծ մըն եմ:

◆ Սեւանայ լիճը պիտի հերկեմ ցնորքներու սրածայր գութա-  
նով եւ ներմակ-ներմակ հաւկիթներ պիտի ցանեմ Զատիկէն առաջ,  
որպէսզի դուրս գամ փրփրաթեւ ճուտիկներ, ետտիմ աւաղաղը  
աւետիս կանչէ, սիրուհիս զղջալով զղջայ, իսկ Բաղբենի իշխանա-  
ձուկն ալ զլուխը ափէ ափ գարնէ՝ Երեսանէն մինչեւ Հալէպ ու  
Պէլլորոս եւ Լոս Աննելլըսէն մինչեւ Փարիզ ու Հրատ:

Հալէպ, 17 Մարտ 1990

## ՈՐՈՇՈՒՄ

Եղբորս՝ Արմէնին

Մեծ հօրս կաշիէ լայն գօտիին վրայ իր համերկրացիները կը  
սրեն իրենց ածելիներն ու դաշոյնները: Մեծ հօրս պարսկական  
Բաշմիր մէջքակապով մայրս կը փայլեցնէ նոր կլայտած հերի-  
սայի կաթսան ու խմորի տաշտը, լուսինին ժպտացող տապակն ու  
ողունը, կը սրբէ մատներէս կաթկթող չարութեան մեղրն ու  
աստղերում լոյսը եւ զիս մեր այգին կը դրկէ:

Նոր լուացուած երկինքի պէս մաքուր ձեռներով, սիրելի մեղու-  
ններ, պիտի տնկեմ կաֆաւին փետուրն ու հրամայական բայերը,  
վարագը պիտի պատուաստեմ սոխակին, բորենին՝ յասմիկի  
թուփին, վագրը՝ զեփիտին, կայծակը՝ եղմիկին ու կրակը՝ սրին-  
գին, որպէսզի զիշատիչ բառերը «Հայկազեան բառգիրք»ին կրկջան  
եղբօրս աստղահար կաֆաւին պէս:

Հալէպ, 18 Մայիս 1990

### ԱՆԳԻՐ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

◆ Մեր տան դուռը ողջունող յամիկը շփացած սիրուհիս է: Զիմբ կոչեցի յամիկ, կաթնասպիտակ լիալուսինէն վրէժս առնելու եւ իր նախանձը հրդեհելու համար: Բայց ան իր մօրը արգանդէն կաթեց՝ ինչպէս կաթիլ մը ներմակ մելամ եւ անհունը լեցուեցաւ անգիր բանաստեղծութեամբ:

◆ Կառչեցայ պատաղիհին կրունկէն եւ գաղտագողի մագլցեցայ աստղերն ի վեր: Ներս սպրդեցայ գոռոգ սիրուհիս լուսամուտէն եւ քնացայ իր բամպակ անկողինին գիրկը: Երագիս մէջ խածի իր դազըլ պանաթ դաստակը եւ փոսիկ մը յիշատակ ձգեցի՝ իբրեւ հրաշքներու թանաքաման:

◆ Տկար եմ: Կը սրսփամ թոքախտ լուսինին պէս եւ հագիւ հագ կը շնչեմ արեւածաղիկին հեքիաթները: Հանիք օգնեցէ՛ք ձեր հիւանդկախ աշուղին, որ ակամջս քերեմ սիրուհիս նուիրած սիրամարգի փետուրով եւ սիրոյ զեփիւնները ողջունեմ՝ իբրեւ արքայից արքան բոլո՛ր սիրահարներուն:

◆ Պարամայրը նակտիս ակօսներուն մէջ ցանեց ամպ ու ծաղիկ, երագ ու զուարթուն, բանաստեղծութիւն ու հարսանեկան երգ, ապա գոցցաւ իմաստութեան ատամս, որուն մթաստուեր կամարներուն մէջ պահած էի առասպելներու իմ թեւտուր սպիտակ մծռոյգս, քանի մը պարկ ցորեմ եւ չար վիռուկին համար պատրաստած թունաւոր նետերս:

◆ Ահաւասիկ ովկիանոսներու չափ անծայրածիր նակատս՝ բամպակի լիաբաց կոկոններուն չափ փափուկ ու ձայնաւոր, յօններս՝ սիրահարներու դղեակին գիշերները ամփոփող իբրեւ զոյգ կամարներ, թարթիչներս՝ թափանցիկ վարագոյր յամիկներու ննջարանին եւ կեռասի պէս մերկ ու տափ շրթներս՝ իբրեւ երգ-երգոցը բոլո՛ր Սողոմոն իմաստուններուն:

◆ Սիրոյ բառարանին բառերը երանելի բանաստեղծներուն անլուր աստղերն են, որոնց լուսատառերը, դարերէ ի վեր, անհունին մէջ կ'օրօրեն մետաքսաթեւ հրեշտակներ, ապա կը կաթկթին աստղաթերթ առ աստղաթերթ եւ մասի չափ ներմակ ձեռնդ կը խնդրեն:

◆ Խնդրեմ, Աստուածամօր սրբանկարին առջեւ եօթը մեղրամոմ վառեցէ՛ք, ապա՝ ծաղիկներուն ու միրգերուն, Արեւելի

հագարան բլրով Բերթողներուն ու բարի մեղուններուն, շարական աստղերուն ու սպիտակ մաղթանքներ քրջացող աղբիւրներուն, երկինքի դեսպան դայիրներուն ու ձեր անունով աղաչեցէ՛ք Աստ-ւածամօր, որ հաւատի եւ երանութեան օրհնաբեր անձրեւներ տեղայ սիրոյ արքայութեան երաշտ դաշտերն ի վար:

Գուցէ սիրուիիս բար սիրտը փափկանայ եւ մահն ու տառա-պամբը փայտուտ տան մեր անիծեալ աշխարհէն:

Հակոբ, 22 Մայիս 1890

### ՀԵՔԻԱԹ՝ԱՍԱՆԸ ԵՍ ԶԵՄ

#### Անշուշտ

ձեր կարծած հեփիաթասացը չեմ  
ոչ ալ Շահրազատը կամ դժբախտ մամիկը  
կամ կիսաբաց հին դուռը տան ցանկապատին  
որպէսզի գիտնամ առանց դռնի ճիգի  
հեփիաթին աւարտէն շա՛տ առաջ  
թէ ինչպէ՛ս կը մեռնին յուսահատ  
անոնք՝ որոնք շարունակ կը փայցնեն  
կէս գիշերուան վերջին շոգեկառքը  
կեանքի խնդրուած կայարանին  
եւ կը սպասեն յաջորդը  
որ միշտ կը մնայ յաջորդ՝  
սատիք Կոտոյին պէս

#### Անշուշտ

ես չէ որ կը սպասեմ  
երկինքէն իբր թէ վար սահող  
հեփիաթներու երեք ոսկի խնձորին  
որովհետեւ նոյնիսկ թուրք մը չգրեցի  
որ դար մը ետք առնուազն ինձի հասնի՝  
յուսահատ մաւաստիին յոգնած շիշին մէջ  
կամ ծիածանին եօթնաժպիտ ալիքներով՝  
իբրեւ անգիր կտակը վերջնական  
կախարհն ու շուշանին



## Անշուշտ

Ես երբե՛ք ձեր կարծած հեֆիաթասացը չեմ  
 և որովհետև Ձոր Երանելիին չափ յուսահատ չեմ  
 և որովհետև այս անգամ ալ դար-դար դարեր սպասեցի՝  
 Սֆինքսի մաշած ֆիթին նստած պատուհասներու փոշիին պէս  
 և որովհետև ժամանակը կ'անցնի նեմզ ճահուկներում և ետ  
 իսկ սլաքները ճշող և զսպանակը լարող սատանան էս չեմ  
 անկեղծօրէն ըսած՝ չեմ գիտեր որքա՛ն ժամանակ անցաւ  
 Կարմիր Գլխարկիկին անտառ մեկնած օրէն ի վեր  
 և Բանի՛ կրամ ժանգոտած ժամանակ մնաց մեզի  
 որ մնացորդացը շարտեմ յաւերժութիւն կոչուող աղբամանին մէջ  
 կեանքի ճեպընթաց շոգեկառֆին անգութ անիւներում տակ  
 մամիկին տան դրան հաշող շան երախն ի վար  
 որ մամիկը ցամառն հրաբուխներ պոռթկայ  
 և բզկտէ մարմինը բոլոր  
 բալո՛ր գայլերուն

## Անշուշտ

ձեր կարծած հեֆիաթասացը երբե՛ք չեմ  
 ոչ ալ հովիւին աղջիկը կամ դժբախտ իշխանագունը  
 որ յոյսի ոսկեթելերով կը հիսէ լինելութեան երաշք գորգը՝  
 իր և ձեր հոգիներու զիշեր ոստայններում փրկութեան համար  
 որ պատմեմ  
     ճիշդ անոր պէս  
     որ կը վախճայ տեսնելէ  
 որ տեսնեմ  
     ճիշդ անոր պէս  
     որ կը վախճայ պատմելէ  
 որ իմանամ վերջապէս  
 թէ ինչպէ՛ս կարելի է արթնցնել ձեր հոգիները՝  
 ծայրերու պէս լուսն և Բանիներու չափ անտարբեր  
 բարբառիմ մտածումներ  
 որ ձեր երազներում մէջ լսած խօսքերում երկուորեակն են  
 երփնագրեմ պատկերներ  
 որ ձեր տեսիլներում յստակ ու հարազատ կրկնօրինակն են  
 որ իմանամ վերջապէս  
 ով իմ անհաշտ բարեկամներ  
 թէ որքա՛ն կը մմանիմ ձեզի՝  
 Ե՛ւ արթնութեան Ե՛ւ երազի պահում  
 որպէսզի երբ արթննամ Մարայ Մելիֆի ձեր Բունէն  
 և Կիրակի պագար գլուխս խառնշտկելէ ետք՝ ըսէ՛ք  
 — որքա՛ն տգեղ է այս ծաղկամանը

ապա՝ սուրբի մը չափ մաշած մատներս խառնշուկելէ ետք՝ ըսէ՛ք  
— որքա՛ն գեղեցիկ է այս մոմակալը  
իսկ երբ աշխարհներու քարտէս դիակս խառնշուկելով՝ գոռաք  
— միշդ ա՛յս է մեր ճանչցած հեփիաթասացը՝  
զիս անգօրութեամ եւ անելի շմատնէ՛ք  
որովհետեւ  
իմ մերձաւորներ եւ հեռաւորներ  
ես երբե՛ք-երբե՛ք հեփիաթասացը չեմ  
ո՛չ Ռոպին Հուտը եւ ո՛չ Հարուն Ռաշիտը  
ոչ ալ մամիկը կամ Կարմիր Գլխարկիկը  
այլ բախտի թիրախներուն գոց աչքերով  
աջ-ձախ կրակող կեանքի գինով որսորդը  
որ մոյնիսկ տակաւին չի գիտեր  
թէ ի՛նչ բարիք կամ օգուտ պէտք է սպասել  
այս անիմաստ հեփիաթէն

Բառասուն եւ երկու մեքը  
ողբերգութեան կախաղանէն  
տխո՛ւր-տխո՛ւր օրօրուող

Պէյրուք, 11 Փետրուար 1992

(Համանուն անտիպ հատորէն)

ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

## Գ Ա Ք Ե Լ Ե Ա Ն

## Ա Ն Ն Ա    Հ Ա Ր Ս Ը

## ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐՈՒԱՄ

Գարնան՝ տիրակալանալին սկսաւ զառնայ իրականութիւն: Օսմանեան բանակի միւսերները այս անգամ միայն դէպի Հիւսիս կը փութային: Խուճապ, սարսափ եւ յուսալքութիւն կը կարգացուէր ասոնց ղեմերուն:

Օսմանեան հզօր բանակը պարտութենէ պարտութիւն կը դիմէր: Հաննոն, եւ Հաննոյի պէս բոլոր անոնք, որոնք կը հաւատային օսմանցիին անպարտելիութեան, չէին հաւատար եղածին: Օրէ օր երանօր կարաւաններ, միբարս գինուորներով բեռնաւոր՝ կը դիմէին դէպի Հիւսիս: Առողջներուն կարաւանները եւս կը տեքային պարտութեան ծանրութեանը տակ: Սպաները այնքան խոժոռ էին, որ ասոնց նրահներէն ինկող ճանները քառատուն կտոր կ'ըլլային: Ածօթայի պարտութիւն էր:

Ինչ որ կրկնակի ցաւ էր օսմանցիներուն համար այն էր, որ իրենց պարտութեան մէջ բաժին ունէին ռուսաց հայեր: Հայկական լեզուներ, Արարայի մէջ, բերնի չափը տուած էր զոռոզ օսմանցիին: Միւս կողմէ՝ Եմէնի մէջ արաբական ըմբոստութիւնը աւաղաբարած էր օսմանցիին: Տակաւին, Ենթիֆ Հիւսէյնի շոկատները արժանի զսօք կու տային անուղղայ թուրքին: Այս բոլորին միացած՝ զաշնակիցներու վճարկամութիւնը ընկճած էր օսմանցիները: Օսմանեան բանակի սպաները նոյնիսկ իրենց ուսուցիչները վար կ'առնէին, ինքնապաշտպանութեան բնազդէն ծղուտած: Յաղթանակի օրերուն, եւ կամ անզէն ժողովուրդին ներկայութեան, այդ ուսուցիչներով սիրամարդի պէս կը վերուէին ու սարսափ կը աւարածէին: Հիմա փոխուած էր ամէն բան...

—Աստուած իմ, թուրքի՞ն ալ «զլըճը» կը կտորի եղեր,— կ'ըսէր ու կը կրկնէր Հաննոն: Հաննոյի պէս նոյնը կը կրկնէին բոլորը: Բայց այդ էր մերկ իրականութիւնը:

Օսմանեան նահանջին հետեւեցաւ յաղթական բանակներուն երեւումը: Եւ ո՛վ հրաշք, այդ յաղթականներուն յառաջապահներն էին հայ գինուորները: Հայկական լեզուի մարտիկները կրկնակիօր կը հետեւէին օսմանեան ջարջախուած բանակներուն:

Տէր Աթիէ լուրը հասած էր, որ «մեր տղաքը» շուտով պիտի անցնէին նահաւայ տեղէն: Այս լուրը բերողն էր Միսաք աղան: Այս անգամ ասոնց մուրացիկի տուրակի էր: Երկու այլ ընկերակիցներու հետ, լուր կը հասցնէր բոլոր զաղթեա-



վայրերուն: Ոճանք արդէն իսկ սկսած էին իր դերին մասին մեկնարանութիւններ ընել: Ոճանք կը պնդէին, որ Միտաք խորքին մէջ հետազոտողի գերով կկած էր այդ կողմերը՝ իբրև մուրացկան ծպտուած: Ուրիշներ քնաւ չէին հաւատար, պնդելով, որ ըրածը, ներկայիս, պարզապէս պատահապաշտութիւն էր...

— «Մեր տղաքն» են, շուտով կու գան, պատրաստուեցէք:

Մեր տղաքը ըսելը բաւ էր արդէն. պէտք չկար պտտառատութեան կուշիրու: Ա՜մէն անգամ, որ զիւզէ ծը անցնելին Հայկական լեզուներն վարտերը, հոն ապաստանած գաղթականները կը փութային ճամբայ, առաւօտ կանուխ, կարենայ տեսնելու համար «մեր տղաքը»: Ոճանք քիչոքիքներով ճամբայ կը կտրէին՝ Դամասկոսի մայրուղին հասնելու համար: Առաջին անգամ ըլլալով հայ զինուոր պիտի տեսնէին. զինուոր, որ օսմանեան բանակի կիսաստրակ գիտարներէն չէ, այլ՝ Կրիկիոյ մէջ հայկական պետութիւն կիրառելու կուշուած, օսմանցիին զլիտուն եւ վիզին կոխած հայ զինուոր:

Քուրք ոստիկանները իրենց տուններէն զուրս գալ իսկ չէին համարձակիր: Թրքական զօրանոցներէն խոյս կու տային ու թուրք տարրերը: Գաղթականները ազատ էին շրջելու, իրենց ուզածին պէս:

Մայիսեան առաւօտ ծը, վերջապէս կարգը եկաւ Տէյր Աթիէի: Այդ որ պիտի անցնէր Հայկական լեզուներ: Առտու կանուխ, արեւածագէն իսկ առաջ, հայ թէ առաք, Տէյր Աթիէի ողջ բնակչութիւնը եզերած էր Դամասկոսի մայրուղին: Հայկական լեզուներ էր, որ պիտի անցնէր այդ տեղէն: Արդէն իսկ քիսապցի զինուորներու անունները հասած էին գաղթավայրերը:

«Մեր Մեծոնը, Կարմիր Մերոնն այ, Լէնկէրն (պնակ) այ մէջերինն է: Առաջին շարքի վրայ են Գարա Տայի Ուփեան եւ Միտաքեուր» (այնքան վտիւ ըլլաւն համար, Միտաք չէին կուշիր գայն, այլ Միտաքեուր): Սա հակառակ փնտորի շափ կշռելուն, արտու մարդ էր: Տակաւին Չիւրքենց Արամին, Փոյտանից տղոց տեսնելից կու տային: Ոճանք իսկապէս մաս կը կազմէին լեզուներն, իսկ կարգ ծը անուններ կը տրուէին պարզապէս ենթադրութեանց վրայ հիմնուելով: Բայրն այ տեսնարին էին: Հաննոն թերեւս բոլորէն աւելի: Մարդ իր տղոց անունը չէր տար: Ամերիկայէն շատ եկողներու անունները կը տրուէին, բայց Քերտրին ու Մերտրին մասին խոսք չկար:

— Ա՛խ, թող գային առունք այ, տեսնէի ասոնց ուսերուն վրայ հայու գէնք: Տիրան օսմանեան բանակին մէջն է. զոնէ ասոնք զէնք շաղկէին մեր կողմէ:

Թէև Միտաք ըսած էր, որ Տիրան իր ընկերը կ'ընէ, բայց շատ կ'ուզէր իր տղաքը տեսնել յաղթական բանակին մէջ:

Աննան եւս կը ապաւանջէր: Ինք շատ յոյս չուներ, որ Մերտր կամ Քերտր ձգէին հեռուար մանրիկաները եւ գային հոս կուտելու: Ընտք լիրցաւ բոնելոյ, կը կրկնէր ինքնիրեն Աննան: Բայց հակառակ այդ բոլորին, հետուոր, շատ հեռուար յոյս մը ուներ: Ո՞վ գիտէ...

Կէտորին գիտ եկող-գացող չկար: Պիտի գայի՞ն. ճի՛շտ էին զրուցիները, թէ պարզ տարանայնութիւններ, ըզձաձուած փափաքներ:

Կէտորէ հաք, երբ գաղթական հանդիսականները կը սկսէին ցրուիլ, հետուէն ծրեցաւ զինուորական շնկատ մը: Ասոնց առջեւն կը քայլէին խոշոր նուագարաններ լուսնի շաղկաւ մարդիկ: Հազիւ Տէյր Աթիէի մուտքին հասած, նուագարաններէն հնչեց շաղկաւ մարդիկ: Հազիւ Տէյր Աթիէի մուտքին հասած, նուագարաններէն հնչեց շաղկաւ մարդիկ... Ոճանք ծանօթ էին այդ եղանակին: Ասոր յաջորդեց «Դարձ-Մեր հայրենիք»... Ոճանք ծանօթ էին այդ եղանակին: Ասոր յաջորդեց «Դարձ-Մեր հայրենիք»... Կասկած չկար. մերիկներն էին... Հուսուան երկիւր բարձրացաւ... եւ փայլեց... Կասկած չկար. մերիկներն էին... Հուսուան երկիւր բարձրացաւ... Չինուորներ եւ գաղթականներ իրարու կը փաթթուէին: Կին թէ աղջիկ, բոլորը: Այդ զինուորներուն մէջ ոչ մէկ քիսապցի: Խանդավառութիւնը բարձր էր, հակառակ յուսախարստութեան:

Վերջապէս մէկը ձայնը բարձրացուց:

—Հէ՛, Բարունակն է, Մրհիւնց Բարունակը...

—Տեսէք, տեսէք Կարմիր Մերուրը...

—Լէնկէրը, Լէնկէրը...

—Տալին, Գարա Տալին...

—Մխաբէուրը...

Եւ անունները իրարու կը յաղորդէին: Տասնակներով ազաք, թնտայցի ազաք, ճուստապղծներու եւ այլոց հետ, յաղթական, ճակատները բարձր, կը քալէին: Միակ գծուարութիւնը բազուկներէն ազատուին էր: Կարծէք թուրքին յաղթած զինուորները, «Մեր ազաքը», շնչահեղձ պիտի ըլլալին իրենց հարազատներուն գրկներուն մէջ:

Պահ մը կանգ առաւ զինուորներուն կարուանը: Քարի մը վրայ բարձրացաւ Բարունակը: Ձեռքի լայնածիր շարժումով մը լուսթիւն թելագրեց: Գաղթականները լսեցին.

—Հարազատներ, կըրայրներ, քոյրեր եւ մայրեր: Օսմանցին իյնալու վրայ է: Շուտով պիտի գտնուաք ձեր տունները: Քիչ մը եւս համբերութիւն: Մենք շուտով կու գանք եւ կ'առաջնորդենք ձեզ: Հիմա մարդ տեղէն թող չշարժի: Մենք պիտի հասնինք մինչեւ Կիլիկիա. հոն հայկական պետութիւն պիտի կերտենք. այդպէս խոստացած են մեզի: Կը կրկնեմ. մարդ տեղէն չշարժի:

Նուազախումքը հեծցուց «Կիլիկիա»... Եւ զինուորները քալեցին: Ջոկատ առ շոկատ, վաշտ առ վաշտ, տողանցեց Հայկական լեզէտը, գաղթականներու հեացիկ ակնարկներուն տակ:

Անցան ու գացին: Երազ մըն էր այդ կարծէք: Երանի թէ օրերով քալէին «Մեր ազաքը»: Քալէին ու հոյականկէն գաղթականներուն այրած սրտները:

Հաննոն թէ՛ կըշտնիկ էր եւ թէ տխուր: Ի՞նչ կ'ըլլար, Ամերիկա ապրող իր տղոցմէ զոնէ մէկը զէնք շալկած ըլլար միւսներուն պէս: Իրենց ի՞նչն էր պակաս: Թող այդ մարդ ըլլալին եւ զէնք շալկէին: Թաղթանակը քաղցր բան էր, բայց ինք կը ճատանջուէր, որ իր ազաքը բաժին չունէին անոր մէջ:

—Ա՛խ, կրանի թէ Օսմաննա ալ ողջ ըլլար, Բերքոս եւ Սերքոս ալ զէնք շալկած անցնէին այս սողէն: Օսմաննա զրկէր եւ համբուրէր իր ազաքը եւ միւս ազաքն ալ...: Եարապ, ինչո՞ւ յաղթութեան ուրախութիւնը պակասատր կ'ընէիր:

Անկան ալ պակասատր կըշտնիկութիւն մը կ'ապրէր: Ինք Հաննոյին շափ չէր ստուսպիր, անոր համար, որ շատ մեծ յոյս չունէր իր ամուսինը կամ Սերքոյը տեսնելու: Հայկական լեզէտին մէջ: Բայց որքան ալ թերահաւատ, զեռ յոյսի կաթիլ մը ունէր...: Թորմ'ա...: Բայց այդ կաթիլն ալ չորցաւ, ցնդեցաւ...

Ժողովուրդին զինուորները տակաւ առ տակաւ սկսաւ նուազիլ: Կհանքը իր պահանջները ունէր: Պէտք էր աշխատիլ, այսինքն՝ ճուրայ: Խաչոն, ալը ուսին, մուրները գօտիին մէջ խրած՝ ամէն օր կ'իջնէր Տէլը Աթիէի նեղիկ փողոցները: Երբեմն հնակարհատութիւնը քանի մը պարզուտ կ'ապահովէր իրեն, բայց ընդհանրապէս զործը գէջ էր: Ձեր կրնար իր մուրնով ու սալով հացը ճարել: Ատոր համար ալ Ճորճիկն ու Յիմին, հիմա այլեւս պատանիներ, կը շարունակէին ճուրայ: Պէտք էր սողալ քիչ մը եւս, մինչեւ որ ետ գային «Մեր ազաքը» եւ քոյրերին հետ, զիրենք եւս տանէին Քեսապ:

Սպասելուն շափ գծուար բան չկար: Եւ «Մեր ազաք»ն ալ չէին երեւնար: Բարունակ խոստացած էր շուտով վերադառնալ: Ո՞ր էին, ինչո՞ւ չէին գար:

—Ա՛խ, մեր առաջ կեցողները,— ժողովուրդն էր, յուսեալ զժողո՞ւ եւ հասկածոտ: Ծորճիկ յաճախ հարց կու տար, թէ իրենք Քեսապ պիտի կրթայի՞ն արդեօք, ի՞նչ պիտի ըլլար Օսման մեծ մամը: Հո՞ն պիտի լզէին զիւք, օտարութեան մէջ:

Ամառը եկաւ ու անցաւ: Աշնանային հովը սկսաւ խածնել գաղթականներուն բաց կուրծքերն ու կողերը: Ո՞ր էին Կիլիկիոյ մէջ հայկական պետութիւն կազմողները:

Առաջին ձեռքը ծածկած էր գիտիկները: Կ'ըսուէր, որ պատերազմը վերջացած էր: Օսմանցիին, Գերմանիոյ Տեա, պարտուած էր: Փայթականները նաեւ լսած էին, որ Հայաստան ճր կայ Տիմա, Հայ թագաւորով: Ինչ որ կը լսուէր՝ տարտած բաներ էին: Եթէ Հայ թագաւոր կար, ինչո՞ւ իրենք զեռ գաղթական կը մնային: Որո՞ւն հաւատայ, Կիլիկիո՞ւ, թէ Հայաստանի թագաւորին:

Յմոն ալ եկաւ: Մարդիկ սկսան լուսաւրուի: Ի՞նչ Կիլիկիա, ի՞նչ Հայաստանի թագաւոր...: Քեանպն ալ հոն էր, հետեւ երայ ճը, իսկ իրենք հոս, բութ ու բորանին՝ կը շարունակէին կրել գաղթի ու սովի ծանրութիւնները:

Փարսեան ալ եկաւ: Յմրան՝ ի՞նչ կրնար ընել Հայ թագաւորը: Փարսան՝ ուր որ էին Քարունակը, Քարա Տային եւ ուրիշներ կու գային ու կը սանէին գրեթէ Քե-սապ:

Փարսան շատ ծիծեռնակներ անցան. շատ արագիւններ անցան, բայց ո՛չ Բա-րունակը եկաւ, ոչ ալ այլ պատգամաւորներ երեւցան:

Հրեանքն ալ վրայ հասաւ: Աննան եւ Փարսոնք զացին հունձքի, հասկաքաղի: Եթէ սպասէին Քարունակներուն, անոթի կրնային մնալ: Խալոյնի սալն ու մարճը որո՞ւն Հացին կրնային հասնիլ: Տեղացին առանց կօշիկի ալ կ'ապրէր: Ո՞վ ինչ ը-նէր եւ՛հ, Օին...

Տան մէջ վէճ եղաւ: Եթէ կիները պիտի երթային, ի՞նչ պիտի ըլլային տեղիք. հիմա չկար Օսանը: Ո՞վ հոյ պիտի տանէր ստունին-տեղին: Իեռ ալ հարց մըն ալ կար. եթէ իրենց բացակայութեան գային Վեր աղաքը, գաշտիքը զացող կի-ները ի՞նչ պիտի ըլլային: Բայց սպասելն ալ անօրուտ էր. ամբան պիտի յաջորդէր ձմեռը, եւ ցորեն պէտք էր: Ուրիշ կիներու հետ՝ Փարսանն ու Աննան եւս զացին հեռաւոր գաշտերը:



Այդ ամբան ճանճերը մեղուներու պարսերու պէս կ'անցնէին թաղէ թաղ: Վա՛յ անոր, որ Քաղցր բան մը գրած ըլլար արեւուն տակ: Մէկ-երկու նպարակաճառնե-րու խանութներուն առջեւ գրուած պտուղի սնտուկներուն վրայ մեղուի փեթակի խտութեամբ ճանճ կը հաւաքուէր: Իսկ մարդիկ կը կտուէին ստոնց դէմ եւ կը խը-լէին իրենց սնունդը:

Աննիկին տղան, անոր երէցը, Յորճիկը, Վերոյ պապուկին անունը ըսկողը որ մը պտուղ, սաւոր թոցուցած էր նպարակաճառ Աղաւթին մէկ սնտուկէն: Ձեր կրցած տուն հասցնել զանոնք, Կոտած էր ճանճերուն դէմ եւ բանի խլած քանի մը սալոր: Երկու օրէ ի վեր բան կերած չունէր: Առանձինն կերած էր այդ սալորները: Յա-շորդ օրն իսկ տեղիք բռնուած էր:

Ի՞նչ կրնար ընել Հաննոն. ի՞նչ կրնար ընել Խալոն: Երկուքն ալ մարդիկ, եր-կուքն ալ սպէշերէկսիք, աներկած մնացիւր էին: Գիշերով տեղը անոնի էր: Պա-տանին կը զատանցէր. Օսան մեծ թօրը կը կանչէր. Աննա թօրը կը կանչէր: Ուզող-կի կ'նսկէր իր շերմին մէջ...: Ծանճերը առատ-առատ մանրէ կը սփռէին ամէն դի-ւէմա կարգը կ'կած էր Յորճիկին:

Յաշորդ առատ կանուխ, Ճիմին գնաց կանչիլու Վտեակ պառաւին: Մա վառ-հակի շափ փոքր պատու մըն էր: Ինք տունը կը մնար, մինչ իր հարցը եւ աղջիկը ալ կրնէրու հետ հասկաքաղի կ'երթային: Եկաւ Վտեակ պառաւը: Պատանին ուղ-ղակի կը խանձէր իր շերմին մէջ:

—Քացախ, քացախ, պահանջեց պատաւը:  
Եթէ Քեանպ ըլլար, շիշերով, տիկերով քացախ կարելի էր զանել: Ուրի՛կ՝ քա-ցախ զանել: Ճիմին եւ Խալո փեսան մէջտեղ ինկան: Խալոն իր մէկ մարճը գրաւի

զրուեալ եւ կրցաւ կէս շիշ քացախ գտնել տեղէ մը: Մուրճը իր ապրուստի դուռն էր, բայց հիմա ալ կերպ կարելի չէր շարժի:

Վառեակ պատաւը պատանիին եակտին, ձեռքերուն քացախ քոնց: Քացախին ազդեցութեան տակ, շերտութիւնը կ'իջնէր քիչ մը, բայց անօգնւած. տաք երկաթի վրայ կաթնցուած շուրի կաթիլի պէս կը ցնդէր քացախը: Վառեակ պատանին բուրբ հնարքները ապարդիւն անցան: Յաջորդ տառաւ, ճորճիկ պատանին աւանդեց հոգին:

Հաննոն ի՞նչ պիտի ըսէր իր Աննա հարսին: Համազիւզացիներ կարգադրեցին եւ պատանին թաղեցին Օսան պատանին քով:



Հաննոն պէտք չունէր Աննա հարսին քացասրութիւն տալու:

Աննա հարսը, տակաւին դաշտերը շնկնած, նոյնիսկ գարնան, արդէն չոր-չոր կը հազար: Գէմքը յաճախ կը շտապունէր. այնքան կը զեղծեցկանար արդէն իսկ չքնաղ Աննան: Կասկածը ստղոսկած էր իր կուրծքին տակ, սրտին մէջ: Ինքզինք կը շանոր գոպել: Կը շանար հազը խեղդել, բայց ինք՝ հազն ալ կը շանար շնչահեղ ընել զինք:

Հակառակ տալոյ՞ն պնդումներուն, ինք եւս մեկնած էր հասկաքաղի: Ի՞նչ էր որ. մէկ, շատ-շատ մէկ ու կէս ամիսէն ետ կը դառնային: Յետոյ՝ մաքուր օդը լաւ էր թոքախտին համար:

Հազի դաշտերը հասած, ինկած էր անկողին: Միայն երկու օր կրցած էր հասկաքաղ ընել: Կրցած էր քիչիկ մը ցորեն մէկդի զնել: Այլեւս շարժիլը անկարելի էր:

Տալը, ծայր աստիճան մտահոգ, անկողին մը դասաւորած էր Աննա հարսին: Ձոր խոտերով շուրի պէս բան մը յարմարացուցած էր: Օրըստօրէ, սակայն, թոքախտը կը քայքայէր Աննային մարմինը: Տարիներու անտաղութիւնը բջիջ առ բջիջ արդէն իսկ տկարացուցած էր զինք: Հիմա, այլեւս անկարող էր տեղէն իսկ շարժելու: Ետ տուն դառնալու կարելիութիւն չկար. չէր կրնար քալել հիւանդը: Իսկ ո՞ւր էր փոխադրամիջոց:

Ամէն անգամ, որ հազի նոպան գար, ժամերով կը հազար եւ արին կը թքէր: Դէմքը կը շտապունէր եւ կրակներու մէջ կ'այրէր: Եթէ քիչ մը հանգչէր եւ հազը թեթեւանար, կ'անցնէր զտանցանքի: Տեղէ տեղ կը փոխադրուէր, այնտեղէ աշխարհ... Իր երեւակայութեան մէջ մերթ կ'երթար նափուի, մերթ շոգնանաւուն վրայ կը գտնէր ինքզինք. անխուսափելի զինով նաւաստին կ'իլլէր զիմացը. ամբողջ մարմնովը կը ստկար ու դողը, երկար ատեն, չէր ձգնէր զինք: Այդ զինով հրէշին ալքոյին հոտը կը ծակէր թոքերը: Եւ անոր պարբ... Ա՛հ, ի՞նչ սոսկալի բան էր այդ... Ապա կը իջէր Գարունին հարսանիքը. ինք, շուրջպարին ընթացքին մեծապարած էր, միջամտութիւնները օգուտ չէին ըրած, պարած էր միևնուէր քրտինքնեղուն մէջ թաղուիլը. ըսած էր, որ այդ իր վերջին խնդումը պիտի ըլլար. պարած ու պարած էր. շուրջպարը դադրած էր, բայց ինք շարունակած էր պարել...

Հիմա կը տեսնէր Քերթը. ա՛խ, այդ անճարակը. չէր կրցած երեք նուռերը, իր՝ մէկ հատիկ Աննիկին նուռերը բռնել... Հիմա, ահաւասիկ, առանց այլապէս հոգանի, հետո անապատի մը ծայրը կը հայեր, մինչ իր ամուսինը մղոններով հեռու օրելի մը մէջ կը մտար. հո՛ն կ'աշխատէր...

Կը իջէր գէպի Բակնատրուն երթն ու դարձը: Աքանջիկ քաղաք էր Բակնատրունը: Անոր քով որքա՞ն համեստ բան էր Անտիոքը: Ձեր մոռնար Օպէտին ճաշարանին մէջ ճաշկան համոզ-համոզ Բէպապը. մեղք չեղուն կը խաղցնէր բերնին

ձէջ, շրթուքները կը լիզէր, կարծէք իւղոս եւ համեմոս քէլասպին պատտար բեր-  
նին ձէջը ըլլար:

— Գարուն, կո՛ղմ, կո՛ղմ թող չփախչի Ալանի կո՛ղմ կը փախչի... հաւ՛րք. ցան-  
կապատ մը շինելու է սա ազարակին շուրջը, աշպէս չըլլար...

Խնդճ կինը գարձեալ իր ազարակին երազովն էր...

— Օտան մայրիկը կը կանչէ, ինչո՞ւ պատասխան չես տար, Գարուն, Ճորճիկս,  
եւայէ մեծ մօրը զիրկն է. մեծցած տղայ է, սակաւին մայրիկին զիրկը նստած է...  
Եկուր, տղաս, Ճորճիկ, զրկե՛մ քեզ...

Գարուն կը սարսափէր, երբ հորսը զոտանցելու սկսէր: Այդ անպատասխան  
ընդարձակ շրջանին ձէջ հազիւ թէ պուտ մը խմելու շուր գտնուէր. ա՛խ, եթէ դի-  
ղը ըլլային, օրը քսան անգամ աղբիւր պիտի վազէր, պաղ շուր բերելու՝ իրենց  
մինտեմար հարսին ճակատը զո՞վացնելու եւ աննոր ճարելու համար: Ի՞նչ ընէր խնդճ  
կինը, ինքն ալ դեռատի հարս մըն էր: Յետոյ՝ ի՞նչ պատասխան պիտի տար իր  
հօր՝ Հաննային: Որքա՞ն կը տանջուէր Գարուն: Որքա՞ն կ'ուզէր ինք եւս մեռնիլ:  
Ճիշդ էր, որ ինք եւս պատասխանատուութիւն ունէր հիմա, ուրիշին կինն էր, բայց  
չէր կրնար երեւակայիլ այդ կեանքը առանց Աննա հարսին: Թող ի՛նքն ալ մեռնէր:

Անէն անգամ, որ Աննային բերնին ծայրէն արիւնը սկսէր ծորիլ, Գարուն կը  
սրբէր այդ արիւնը: Աննային քով կը քնանար. անոր զգայովը ճաշ կ'ուտէր. անոր  
խմած թխաէն շուր կը խմէր: Մէկ իրձ ունէր հիմա՝ Աննային պէս հիանդանալ.  
անոր հետ միասին մեռնիլ եւ միասեղ թաղուիլ...: Սա անբացատրելի փոփոխը ու-  
ժով կը լնցնէր զինք կարծէք: Կը շանար ամէն վայրկեան արթուն հսկել իրենց  
հարսին գրայ. քնաւ չհեռանալ անկէ, անոր հետ կարենալ մեռնելու համար:

Բայց աշպէս ալ չեղաւ: Աննան, չքնա՛ղ Աննան, մեռաւ: Տէր Աթիլէն հետս,  
անպատասխան դաշտի մը ձէջ, չոր խոտերով շինուած խշտակին վրայ: Հոն ալ  
թաղուցեալ: Կարելի չէր «տուն» տանիլ զինք: Յետոյ՝ ա՛յլ քսաւ, որ այդ իրենց  
տունն էր: Իրենց տունը հեռո՞ւ, շա՞տ հեռու Քեսապի ձէջ էր: Հոն ա՛յլ կ'ապրէր  
հիմա. աներա՞յ էր. ի՞նչ էր...: Որքա՞ն պիտի մխիթարուէր, եթէ երբէք զիսանար,  
որ ինք եւս պիտի արժանանար հսկայ, զարատք փշակաղնիին սակ թաղուելու եւ  
անոր աւիշ գառնալու: Թող իր սիրուն մարմինն ու սիրուն դէմքը ձուլին այդ  
փշակաղնիին արժանանիլէն, ու բարեբանային վե՛ր, վե՛ր...: Մեռաւ զալատութեան  
չքնաղ Աննիկը հեռուոր անպատասխան ձէջ: Եւ իր գերեզմանը պիտի կորսուէր: Թե-  
քեւ ալ քանի մը տարիէն հերկուէր ու ի սպառ սրբուէր: Թերեւս բորենիներ փո-  
րէին անոր գերեզմանը եւ յօշոտէին սիրուն մարմինը...

Գարունը, սակայն, չմեռաւ: Ան՞տ էր գիտութիւնը: Չէ՞ որ թղթախաղ սոսկա-  
լիօրէն փոխանցիկ հիւանդութիւն մըն էր: Թոքախտաւորը անբաղձալի տարր կը  
համարուէր: Մերթ հարազատներուն կողմէ իսկ տունն զուրս կը դրուէր, մայրի  
ծառի մը սակ, որպէսզի միւսները չվարակուէին իրմէ: Ո՛ր էր հիմա այդ վտանգը:  
Գարուն բոլոր սրտովը ազգած էր վարակուիլ այդ հիւանդութենէն, որպէսզի չտիպ-  
ուէր զուժեղանի գեր վերցնել: Ի՞նչ պիտի ըսէր իր հայրը, Հաննան, որ այնքա՞ն խեղ-  
ճացած էր իր կնոջ՝ Օտանին մահէն սազին: Չէ՛, ինք եւս պէտք էր մեռնէր, բայց  
ա՛յլ էր սա անպիտան մահը...

Համազրիզացի այր մը, որ Գարունին օգնութեամբ փոս փորած եւ թաղած էր  
Աննիկը, յանձն տուաւ զոյժը տանիլ Հաննային: Ենթական, Աբթնից Կերպոն, տա-  
կաւիկ նոր կը բացուէր երիտասարդութեան: Հիմա գինտորագրազ չկար. ասոր հա-  
կար ալ ազատ էր: Ինք յանձն տուաւ զոյժը տանիլ: Երկու օրուան ճամբան կտրեց:  
ճամբու տեւողութեան իր մտքին ձէջ կը բանաձեւէր ըսելիքը: Անէն անգամ նոր  
բանաձեւ մը կը գտնէր, բայց քիչ նոք կը փոխէր գաշն, անտեղի կամ ծանր գտնե-  
րանաձեւ մը կը գտնէր, բայց քիչ նոք կը փոխէր փոխանցել, ի՛ր ալ հոգին պիտի  
լով: Տակաւին թո՛ւմով ալ էր, մինչեւ որ զոյժը փոխանցէր, ի՛ր ալ հոգին պիտի  
կլլէր, Աննիկին պարագաներո՛ւն ալ: Ի՞նչ պիտի ընէին Աննիկին աղօղիկները, որոնք

իրմէ թիչ մը փոքր էին: Քանի՛-քանի՛ անգամ զնշաց իր ստանձնած պարտականութեանը համար: Քանի՛-քանի՛ անգամ մտածեց եւ գտնուեց, Քարունը աննկ եւ միտանի տանիլ զոյժը...: Եւ որքա՛ն կ'ուզէր, որ ճամբան երկարեր եւ բնաւ չհասնէր...

Երբորոք օրուան երեկոյնան հասաւ Հաննոյի տուն-քարայրը: Լուսթիւն էր: Վախով ներս մտաւ: Հաննոն փլած էր արգէն: Խաշոն իր ընկիւթը չէր զիտեր: Եիմին, եզբօք զոյլիկը գրկած՝ նստած էր: Սա Խակէնաւերուի պղծագործներու շուկայէն գնուած զոյլիկն էր: Աննոն կտթ պիտի լեցներ ասոր մէջ, իրենց կառուցելիք ապարանին կոփերուն կաթէն: Սակայն ճակատագիրը այլ բան տնօրինած էր: Այդ սիրուն զոյլիկը կը լեցուէր մուրացկանութեամբ: Ողորմութիւն տուողները սիրով չէր, որ կը լեցնէին զայն, բայց ստամբօր լեցնելու համար պէտք էր նուստանալ նաեւ...: Օսմանցիին անէձքն էր այդ:

Նստաւ Սըթինց Կերպոն: Քանի՛-քանի՛ անգամ ջանաց փոխանցել զոյժը. չէր յաջողեր: Բռտերը մինչեւ լեզուին ծայրը կը հասնէին, բայց եւս կը թաշուէին: Մէջ մը կարծէք, թէ կրցաւ ըսել, որ Աննա հարսը մեռած էր: Հաննոն չլսեց. իր վիշտին մէջ թաղուած էր, թանկիկն կորուստին սուգը ոչնչացուցած էր զինք: Խաշօ փնտան ալ չլսեց՝ արգէն իսկ շատ չէր լսեր: Եիմին ալ թմբած էր կարծէք: Օ՛խ, ինչ լաւ կ'ըլլար, եթէ լսած ըլլային զինք, ծանր բեռն մը կ'ազատուէր Կերպոն...: Ի՛նչ լիճար էր, որ այդքան ծանր բեռ մը փրցուցած էր օսմանուն...

Քիչ ետք Հաննոն էր, որ իր մտքերը բարձր կ'արտասանէր.  
 —Մեռաւ, մեռա՛ւ...: Աստուած, ի՛նչ տնօրնո՞ւմ բան է սա մեր կեանքը:  
 Կերպոն սիրաւ ստաւ, կարծելով, որ Հաննոն լսած էր զինք:  
 —Այո, մեծնկատա՛ւ, եհնս թթմազեցցի զինք, Քարուն թթմալիտին հետ...  
 Հաննոն ընդոտ տեղէն ցտակեց.

—Տ՛ղ մեռաւ, Կերպօ, սաստանի՛ լազ:  
 Կերպոն անակնկալի մատնուեցաւ. չէ՛ր լսած զինք Հաննոն. հապա սրօ՛ւ մահւան մասին իտսած էր...

—Աննանա հատարը,- կրցաւ զուրս տալ խեղճ աղան...  
 —Աննա՛ն, Աննիկս, Աննա՛ս,- տեղէն ցտակելով զուրս խուճեց ձերունին: Եիմին եւս զուրս վազեց. շփոթ էր: Խաշօ փնտան բան չէր հասկնար. չէր լսեր, որ բան հասկնար: Եփոթած ներս-զուրս կ'ընէր: Կերպոյին կը նայէր:  
 —Ի՛նչ կայ,- կրցաւ հարցնել վերջապէս:  
 —Աննա հատարը...  
 —Քարունը...

Խաշոն նոր փնտայ էր տակաւին: Կեո՞ջ մասին կը հարցնէր:  
 Ինք եւս, Քարունը, մեռնիլ փորձած էր, ցանկացած էր, ի զուր սակայն:  
 Բարտաւար էր Խաշոն. Քարունը ողջ էր:  
 Վաշնասուն մըն էր, որ կը բարձրանար հիմա Հաննոյի տուն-քարայրէն: Սա երբորոք սուգն էր իր ասան՝ մէջ:

Ծծրունին, բռնած խեղճ Կերպոյին օճիւղն՝ կը տարտրերէր զայն ու կ'ալպանէր.

—Ինչո՛ւ մեռաւ, ոչ սաստանի լազ, ինչո՛ւ մեռաւ Աննա հարսու Շորճիկն ալ մեռաւ, Շորճիկս...: Օսմանը, Շորճիկը, Աննան...: Աստուա՛մ:  
 Կերպոն երկիւթէն ինկած էր: Վաշիկեան առաջ կ'ուզէր զուրս վազել: Ոտքերը զնտելին գոմուած էին սակայն: Սա էր ուրեմն դոխբը: Խաշոն ալ իրար անցած էր: Եթէ Աննան մեռած էր, ի՛նչ եղած էր իր հարսը, Քարունը:

Վաշնասունը ճոտակայ անձաւներուն հասաւ: Դրացիները հաւաքուեցան: Ով ի՛նչ կրնար ըսել հէք Հաննոյին: Կերպոյին յայտնութիւնէն յստակացաւ, որ մայր ու ազգայ նոյն օրը մահացած էին, իրարմէ այնքան հեռաւ: Նոյն օրն ալ թաղուած էին: Երկուքն ալ օտար հողի տակ...

—Ո՛րն է մեզքս, Աստուած...  
 Հանձնե՛ս այլ բան չէր կրնար խօսիլ...  
 —Գարունս, Գարունս,— կ'ողբար Խաչոն:  
 Այս երկուքին միջև կորսուած էր միմին:  
 —Մէկը թող երթայ Գարունը բերէ. Աննան հաս բերէ,— պահանջեց շորեպան  
 Հանձնե՛ս,— ա՛խ, հին օրեր, ո՛ւր էր...  
 Մինչ այդ անճրկած գրացիները սիրտ առին քիչ ճը: Կարգադրուեցաւ, որ եր-  
 կու այդ մարդիկ երթալին գաշա, Գարունը բերելու: Աննիկը թաղուած էր երկու  
 օրէ ի վեր:  
 Այդ կացութիւնէն ապաստուելու համար, երկու աղամարդ, Կերպոն միասին ա-  
 ուած, պիշրոճ իսկ ցացին Գարունը բերելու:  
 Չորս օր ետք Գարունը բերին: Ինք իր վրայ կրած էր մանկամարդ հարսը: Հե-  
 տը բերած էր Աննային հագուստներէն մէկը. նաեւ նկար ճը: Սա Իսկէնաւերուի  
 մէջ նկարուած նկարն էր: Աննիկ, ձեռքին մէջ բռնած էր իր նկարը: Չես պիտանք,  
 թէ ի՞նչ բանի՛ն մզուած, ինք իր նկարը բռնած, մահացած էր:

ՎԵՐԱԴԱՐՁ

—Ո՛ւր են մեր առաջ կեցողները,— կը կրկնէր ժողովուրդը,— եկան ինի ջրին  
 ու ցացին: Ո՛ւր են Բարունակները, Գարա Տաշիները, խոտուցան շուտով ցալ եւ  
 Քնուալ տանիլ մեզ...: Գտտարազմը վերջացած է, ինչո՞ւ չեն գար:  
 —Հայաստանի թագաւորը ինչո՞ւ չի գար. թող իր բանակը գրկէ եւ ազատէ  
 մեզ: Ի՞նչ թագաւոր է՝ եթէ բանակ չունի...: Կիլիկիոյ մեր թագաւորը ո՛ւր է...:  
 Բարունակը ո՛ւր է...  
 Մարդիկ չէին հասկնար, թէ ինչի՞ր կ'անցնէին-կը դառնային Ոմանք կը կար-  
 ծէին, թէ առաջ կեցողները հիմա իրենց տուներուն մէջ հանգիստ-հանգիստ  
 նստած՝ մտայն էին ցաղթական ժողովուրդը:  
 —Թերեւս մեր հողերն ու տուներն այ իրենք առած-նստած են:  
 Բարձրասանքները ո՛րքան շատ, ա՛յնքան այ օճաղիւնտ էին. մարդիկ գանազան  
 ենթադրութիւններ կ'ընէին եւ իրրեւ եզած բան կը ծախէին աջ ու ձախ:  
 Մին պատերազմի աւարտին վրայէն տարի մը անցած էր գրեթէ: Ժողովուրդը,  
 կտրուած աշխարհէն, բան չէր հասկնար:  
 Սեպտեմբերին օր մը, կտրուան մը կ'ուզուէր զէպի հիւսիս: Մարդիկ արագ-  
 արագ կը քալէին: Կու քալին հարուէն, Գամանկոսի կազմերէն, Հարանէն, Խոյնիակ  
 հետաւոր Մայթ քաղաքէն...: Աստիք օրհասպիներ էին. մա՛նուակ գալուստը անցի-  
 ներ: Տուն կը դառնային...  
 Կարաւանին առջեւէն՝ մէկը մեծ գրօշակ մը կը տանէր: Տարօրինակ գրօշակ  
 մըն էր սա: Իրենք միևնու զոս օսմանսան մահիկով գրօշակ տեսած էին, ի՞նչ գրօ-  
 շակ էր սա: Երեք գոյներով գրօշակ մը:  
 Մա Հայաստանի գրօշակն էր: Հանրապետութեան գրօշակը: Գարա Տաշի  
 Ովսեան եւ Միտաբէտը կ'առաջնորդէին ցաղթականներուն կտրուանը: Հոն էր նաեւ  
 Բարունակը: Վերադարձողները արագ-արագ կը քալէին: Օրերէ ի վեր ցալած էին,  
 բայց յոգնածութեան եշաններ չէին ցուցաբերեր: Հիմա տուն կ'երթային անոնք:

Կարաւանը կը գանդաղէր հոն՝ ուր որ գաղթականներ հաստատուած էին: Աւետար շուտով կը տարածուէր թաղէ թաղ, խրճիթէ խրճիթ, քարայրէ քարայր:

Տէյր Աթիէն ստգի հլաւ շուտով: Ուրիմն շառաջ կեցողները վերջապէս կկած էին: Տո՛ւն պիտի երթային:

Մինչ հարուէն կկողները իրենց նամբան շարունակեցին, Բարունակն ու քանի մը օգնականներ հոն, Տէյր Աթիէ մնացին՝ մէկ օրուան մէջ ժողովուրդը պատրաստելու եւ Քեսապ ասնկու համար: Մարդիկ արգէն իսկ պատրաստ էին: Ի՞նչ ունէին տանկիք հետերին: Մակայն Բարունակ իր տնօրինուծը չփոխեց. երկու օրուան պատրաստութիւն սահմանած էր. մէկ օրէն պիտի քալէին: Ժողովուրդին զօգուհութիւնները չէին ազգի վրան:

Հաննոն, սակայն, հակառակ ընդհանուր խանդավառութեան, չէր ուզեր երթալ: Ո՛ր երթար: Ո՛ր ձգէր կինը, թոռնիկը, եւ, մա՛նուանգ՝ Աննա հարսը: Ո՛չ, ինք ապրելիք քանի՛ օր ունէր որ. լաւ էր որ հօգ մնար, կնաջ գերեզմանին կից թաղուէր: Միայն Բարունակին կորովի միջամտութիւնը պիտի շարժէր զինք տեղէն: Այլապէս, Քեսապ գացողը չէր:

Պաշտն պատրաստած էր սալը, մուրճերը, գանակները եւ փաթէթ մըն ալ կաշի ունէր տանկիք: Գարուն հարսը ինչ որ կրնար տանիլ, — մէկ քանի բարձ եւ բազմոց մը շալկած էր, իսկ ժիմին միմիայն իր եւ հանգուցեալ եղբոր գոյլիկները վերցուցած էր: Ուրիշ բան մերժած էր վերցնել: Հաննոյին իշուկ մը կարգադրած էր Բարունակի: Այլեւս այնհեր մարդը քայելու ուժ բնաւ չուներ:

Յաջորդ տառու, Եպրուսէն եւ ծօտիկ այլ զիւրեր կաղթականներու կարաւանը հասաւ Տէյր Աթիէ: Տեղայն ժողովուրդն ալ միացաւ ասոնց: Մէկ օր տառուան տեսարանը կրկնուեցաւ: Ազգաբարձուներ, հարցումներ եւ հարցումներ եւ աստտարցուներ: Հին կարօտն էր, որ կ'այլեր բոլորը: Եստ ծանօթներու եւ հարապատաներու կորուստը կ'այլէր: Բայց այնքա՛ն շատ էին կորուստները: Կարաւաններուն մէջ քիչ էր թիւը մանկամարդ աղջիկներու: Աստուծոյ շատեր, զիս պարմանուհի, առեւանդուած, բռնի խուլած ու ծախուած կամ կնութեան տրուած էին պետեւեւներու, ալլազգներու...: Երեսասարգներն ալ քիչ էին: Աստուք կա՛մ փախստական գարձած էին, կա՛մ զինուորագրուած օսմանցիներուն կողմէ եւ կամ միացած Հայկական լիզնոնին: Բայց քարոզները, բոլորն ալ տարեց, կը քալէին խանդով, աշխոյժով...: Տուն կ'երթային, ՏՈ՛ՒՆ...

—Հաղի նամբայ հլած՝ արգէն Հոմս հասած էին: Որքա՛ն արտազ կը քալէին, Աստուա՛ծ: Երթալով կարաւանը կը մեծնար: Առջեւէն կը քալէր Բարունակ. քովին կը քալէր Եւազոյն զրօշակիբը: Երգիւով, բարձրաձայն խօսակցելով, մերթ կանչուրտաքներով կը քալէր կարաւանը: Եստ սմանք կու լային: Ամէն նոր գոյժ լացի այլք մը կը տարածէր: Յատկապէս կիններն ու ծերունիները շատ կու լային: Բայց շուտով կը հաշտուէին կացութեան հետ: Կորուստները հանապազօրեալ երեւոյթ էին. շատեր վարժուած էին այլեւս այդ կացութեան հետ:

Հոմսի եւ Համայի միջեւ, կարաւանը երեսը դարձուց զէպի արեւմուտք: Երկու շարաթուան երթի նամբան երեք օրէն կտրած էին:

—Ա՛ր, վայրկեան առաջ տուն հասնիմ, կու՛ծ պիտի տանիմ եւ աղբիւր վազիմ:

—Ես ալ հասնելու պէս ֆիւսկէլի պարտեղը պիտի իջնեմ:

Սա Հաննոն էր:

Հոն՝ շաղաքի ձորին երջո պտուկին վրայ ունէր փօքր պարտեղ մը, զոր բոլոր պարտեղներէն աւելի կը սիրէր: Երբ չէր նամբորդի իր շորիներով, ժամանակին մեծ մասը հոն կ'անցընէր: Կը փորէր, կը շրէր, կը ցանէր: Իր երկրորդ տունն էր Փիւսկէլը: Եւ հիմա կ'ուզէր տունէն առաջ հոն իջնել:

Հաննոյին այս իղիւր խանդավառեց չորս կողմ պտուտողները. չէ, ծերունին պիտի կարենար շրջանցել վիշտը: Պիտի տակար:

—Բարունակ, դուն կը գրտնաս, Տիրանս ո՛րք է. ի՞նչ եղաւ:



—Տիրանը փաշա տղա է, Հաննո, փաշա տղա: Երանի՛ Տիրանին հայրն էմ ըսողին:

—Ան օսմանեան բանակի զավիթ էր, Բարունակ:

—Այդպէս է, Հաննո, բայց ան իր ընկիթը աւելիով բրած է: Եստ օսմանցիներու մայրիկը լացուցած է: Մտնաւանչ մանր տեսակի շարդարարներու, զինուորական շարդարար սպաներու մայրիկը լացուցած է Ատանայի կողմերը: Ես քիչ ըսեմ, դուն շատը հասկցիր, Հաննո:

—Օ՛րի,— արտաբերեց Հաննոն,— այնքան ինքնաբերութի օխ մըն էր այդ: Կորսընցուցած էր կին, հարս և թու: Բոլոր ընտանիքներն ալ մեծամեծ կորուսանք ունեցած էին: Բայց իր վիշտը, Ի՛՛ն՛ն համար անգարմանիկ էր: Տղուն Տիրանին սիրապարծութիւնները որոշ լափով կը մեղմէին իր վիշտը: Գոնէ Հեռաւոր Ամերիկաները ծուարած երկու տղոց մեղքը քաւած կ'ըլլար նաև:

—Բարունակ, մեր Սերորը և Քերորը ինչ՞ու՞ չէին կկան:

—Ձեմ գիտեր, Հաննո էմմի. բոլորը չէին կրնար գալ: Նոյնիսկ կի՛ն զալին, բոլորին տեղ չկար լիզէտնին մէջ, զէնք չկար:

Սա կը մեղմացնէր Հաննայի բարկութիւնը երկու տղոց հանդէպ, բայց դեռ չէր ներքի անոնց: Թող անոնք ալ զէնք չալկէին, տղամարդութիւն ընէին: Թերեւս իր Աննիկն ալ կը փրկուէր. թողն ալ:

—Բարունակ, սա մեր նոր թագաւորը ինչպէ՛ս է Ո՛՛վ է:

—Ո՛՛ր թագաւորը, Հաննո էմմի:

—Ան, որ կ'ըսեն Հայաստանը զստ տէօվլար կղած է:

—Անիկա թագաւոր չունի:

—Ես՛, առանց թագաւորի տէօվլար կ'ըլլա՞մ:

—Հիմա նոր ժամանակներ են, առանց թագաւորի են նոր տէօվլարները, էմմի...

—Ա՛յի, Բարունակ, ա՛յի...

—Ինչպէ՛ս ախ կը քաշես, Հաննո էմմի, ահաւանիկ տուն կ'երթանք:

—Եթէ երկու ամիս առաջ կկած ըլլայիք, թէ՛ հարստ, թէ՛ ալ թողնիկ չէին մեռնէր: Եթէ միայն երկու ամիս առաջ կկած ըլլայիք: Ա՛յի, Օսաննա...

Ի՛նչ ըսէր Բարունակ: Ի՛նչ բացատրութիւն տար Հաննային: Որքա՞ն յուսախարութիւններ կրած էին իրենք, լիզէտնականները: Հեռաւոր Ամերիկաներէն կկած տղաք, Կիլիկիոյ երազով վառուած, կկած էին, քաշարար կուսած Դաշակիցիներուն կողքին և հիմա յուսարկ էին: Իր կողքին Եահպաղը, իր մետաքսի գործարանը ձգած հեռաւոր Գոսթընի մէջ, կկած-միացած էր Հաջկական լիզէտնին, անկախ Կիլիկիոյ երազին ի խնդիր. և հիմա ի՛նչ ձգած էին երկկի մեծ Դաշակիցիները իրենց: Անկախ Կիլիկիան փերածուած էր ինքնազարութեան, ապա տարտամ խոստումներու...

—Հաննո էմմի, թող Աստուած յուսաւորէ սիրելիներուդ հոգին: Եստ են մեր կորուսանքը, շա՛տ. մէկ երբորդը միայն ողջ մնացած է: Այնքա՛ն անտէր մարդիկ կան: Ովսան, Գարա Տային որբանոց մը շինած է, մէջը ահազին որբեր հուսաբաժ: Այնթապէն, Քիլիսէն, Մարաշէն որբեր կան հոն...

Բան չէր հասկնար Հաննոն: Ինք իր վիշտին հետն էր:

Փիչերեցին Ղապի մուտքին վրայ գտնուող քերդին հովանիին տակ: Երթի ճամբուն վրայ ալ զիջեցած էին հոն: Որքա՞ն պաղած էին: Հիմա ալ աշխատանքում էր, բայց մարդիկ, իրենց խանդին մէջ, չէին իսկ զգար հիւսիսէն փչող հովը: Ղապիկան առաջ կ'ուզէին ոտքի կլնի և քալի:

—Ես պիտի երթամ ձիթապատուղ և զափնիկ պտուղ հաւաքեմ,— կ'ըսէր մէկը:

—Դեռ թուզ, խազող շատ կ'ըլլա՞մ:

—Անօթի ընկը մտար, անօթի չկնք մնար:

—Եղբայր, կի՛ն պէտք ըլլայ անօթի ալ կը մտանք, միայն թէ մեր տուններուն մեր հոգին հասնիք:

Այդ օր, վաղ առաւօտուն, բոլորն ալ սոգի էլան, բացի Հաննոյէն: Փայտացած էր մարմինը: Որոշ շափով մխիթարուած լսածներէն՝ Գարուն կը կարծէր, որ հայրը պիտի կարենար շրջանցել վիշտը եւ սոկալ: Այդպէս չէր հզամ: Մնում էր Հաննոն: Հնն ալ թագեցին զինք: Հինաւորց Աֆամեա քաղաքին աներակներուն մօտակայքը: Եւ կարուանը քաղց: Գորուստներուն վարժ էին այլեւս: Լողին կարօտը կը թեթեւցնէր վիշտերը. կը զօրացնէր մկաններն ու կամբերը:

Գարուանը շուտով հասաւ Եբրը էլ Շուգուր: Այնտեղէն ալ խուճերի միացան ստոնց: Մտուար կարուանը կը քալէր:

— Երկու օր, եթէ երկու օր ալ սոկար խնդ հայրս, գոնէ կը թաղէիք զիւր մեծ փշակազնիին տակ, — մերթ քարերաձայն կը մտածէր Գարուն հարսը:

Եւ կարուանը կը քալէր:

Տէյր Աթիէն ճամբայ ելլելէն մէկ շաբաթ ետք, արդէն իսկ մարդիկ հասած էին իրենց գիւղերը:

Գիւղերը կիսուներ էին: Ոմանք լման քանդուած: Գարուէզները անխնամ, անմշակ ձգուած էին թէն, քայց պտուղները, հասուն խաղողներ, թուզեր, տանձեր, խնձորներ, սերկիւիներ եւ աշնանային սալորներ կը թափէին ծառերէն: Բերքը տառտ էր, առա՛տ...

Մարդիկ, որոնք տարիներով կարօտը քաշած էին իրենց ծառերուն, պտուղներուն, հիմա կը գծուարանային ուսուց իրենց պարտէզներուն պտուղները: Մտամոքսները կծկուած էին կարծէր: Մեծ կորուստը ակործակները դոցած էր:

Գիւղեր առաջին օրն իսկ արդիւր իջած էին: Լացած ու խնդացած: Ետանք առանց կուճի իջած էին. ո՛ր էր կուճ: Ոմանք խնդը ըրած էին եւ Եբրը էլ Շուգուրէն կուճ ընդած էին: Ուրիշներ ալ խնդը ըրած էին, քայց վճարելիք ստակ չուներին:

Գարուն կարօտով կուցած էր ազրիւրին շրթունին վրայ: Լացած էր ու խմած սառնորակ շուրէն: Հին հարապատ մըն էր, որ գտած էր: Հարապատին կարօտէն կուլար: Ետն հոն եկած էին յաճախ, Աննա հարսին հետ: Ազրիւրի ճամբուն վրայ խօսած էին, խնդացած. իրարու գաղանիքներ տուած: Այդ ազրիւրին մէջ լուացած էին Աննայի հարսանկան հերիսային ցորենը: Ջուրին հայելիին մէջ իր գիմանկարը կը տեսնէր: Կը խաղաքին ուրիակները եւ Գարուն չէր կրնար գանձանել, թէ ի՞նչ դիմանկարն էր այդ, թէ Աննա հարսինը:

Եւ ո՛ր էր Աննա հարսը: Անպատասխան հեռուոր գալտի մը մէջ, օտար ու այլող հողի տակ: Տէյր Աթիէի մէջ ձգած էր մայր ու եղբորորդի: Իսկ Աֆամեայի սահմանին վրայ, հին հասմէական պարիսպի մը կից, թաղուած էր հայրը, գեռ երկու օր առաջ:

Վերը, գիւղին մէջ, Խաչոն կանգնած էր իրենց տան աներակին վրայ: Ճիշդ է, որ կին կորսնցուցած էր գաղթի ընթացքին, առաջին մէկ օրէն իսկ գրեթէ, քայց նոր կին ունէր հիմա: Սակայն ո՛ր պիտի ապրեցնէր իր կինը, Գարունը: Ո՛ր պիտի մնար ճիմին:

Եփոթած էր Խաչոն: Ո՛ր պիտի գնէր կօշկակարի սալը. ո՛ր պիտի անցընէր շուանը, զայն մոռնիլու համար: Իր տունը գիւղին հաւասարած էր:

Գարուն ըսնեց ամուսնոյն ձեռքէն եւ սարսու զայն իր հօրենական տունը: Խաչոն հոս ալ տան փետայ պիտի ըլլար, թէկուզ եւ առանց տնեցիի: Ընդարձակ տան սարիտակամածին կէտը քակած եւ այրած էին հոն քնակութիւն հաստատած թիւրքմէնները: Տան կէտը բուսարար էր իրենց համար: Գրակէն սեւցած էր տունը: Ի՛նչ փոթ: Օճախին կից պահարանն ալ չկար: Թիւրիս ան ալ այրած էին:

Այդ պահարանին մէջ Աննան եւ Գարունը կը պահէին իրենց անձնական պիտուքները, հազուադէպ, զարդեղէն, նամակներ, եւայլն: Գահարանին կորուստը ծանր ճշնց Գարունին վրայ: Որքա՛ն յիշատակներ կային անոր մէջ,

— Գարո՛ւն, Գարո՛ւն, գուրս ել, աղջի՛կս:

Վառեակ պառուս էր:

—Աղջիկս, մեր տունը պահարան մը կայ, թիրեւս ձերն է, եկէք առէք:  
 Ճիճին Գարունէն ալ առաջ հասաւ Վանեակ պառաւին տունը: Այո, իր մօր եւ  
 հօրաքրոջ պահարանն էր: Տահաւին հոն էր նաեւ մօրը հարսանեկան սնունդը: Որ-  
 քա՞ն հոգի թափած էր ատաղձագործը այդ սնունդին վրայ: Առանց սպասելու, ու-  
 սկց սնունդը եւ առն փութաց: Ծաշոն ալ սուսած էր պահարանը:

Ի՞նչ փոյթ, որ տունը պարպուած էր: Կամայ-կամայ պիտի լիցուէր: Գարուն  
 եւ Ճիճին պարտեղ կ'իջնէին, թուփերուն մէջէն կը գտնէին զանազան ամանեղն-  
 ներ, յատկապէս ուսպի մեծ լազն ու կաթնան եւ այլ իրեղէններ: Օսան եւ Աննա  
 ասոնք պահած էին իրենց մօտալուտ վերադարձին տկնկալութեամբ: Հիմա անոնք  
 չէին վերադարձած. մէկը՝ իր թոռնիկին հետ, Տէլլը Աթիկի մէջ կը ննջէր, միւրը՝  
 անապատային դաշտին մէջ: Իսկ կաթնաներն ու տաշտերը բան չէին կորսնցուցած  
 իրենց զրնգոցէն: Կշայիկ Յովսէփին ձեռքէն պէտք էր որ անցնէին: Այդքան: Անոնք  
 պարսպ տունը կը լիցնէին. հոգ չէ թէ հին լիշատակներով...

Քաղհանի գանակներն իսկ տարբեր շերտութիւն մը ունէին: Անոնք ալ լիշա-  
 տակներ կը կրէին:

Թոնիրը կիսափուլ էր: Այդ ալ կը նորոգուէր. մինչ այդ կիթ աշխարհ գտնուէր,  
 սսանքի հաց կը թխէին: Իսկ ալի՛ւրը...

Ձորի շրազացն ալ կիսափուլ էր. ստիպն շազազան Մէնէճըրը հասած օրն  
 իսկ հոն փութացած էր: Այնքան տակն, որ քորերն ու ջրանիւր հոն էին, փոյթ  
 չէր. շազազքն ալ կը նորոգուէր, իսկ ցորենը, Աստուած մեծ էր: «Առաջ կեցողնե-  
 րը» թող մտածէին այդ մասին:

Առաջին գիշերը գծուար եղաւ: Ամբողջ գիշեր արթուն մնաց: Դժուար էր քնա-  
 նալը. որքա՞ն սրբելիներու լիշատակներ կային գիշին մէջ: Ինչպէ՞ս քնանալ...

Առաւօտը եկաւ: Աշնանային անուշտ մըն էր թէն, քայց արեւը կը ժպտէր:  
 Տոնները որոշ շափով կարգի գնելէ ասք, հիմա մարդիկ իջած էին պարտէզները:  
 Բերքը առատ էր եղած: Այդ ամառ ոչ մէկ ձեռք երկարած էր ծառերուն: Ի՞նչ լաւ  
 էր: Գիւղացիք իրենք զիրենք երազի մէջ կը կարծէին: Ձորս երկար տարիներ հետո  
 մնացած էին իրենց հարազատ հողերէն, ծառերէն...: Հիմա, սակայն, պէտք էր զոր-  
 ծի անցնիլ: Տօնիկ պատուիչ ձեռնարկած էր իր չիթհանին նորոգութեան: Բերքը  
 առատ էր: Վանեակ պառաւին փեսան, Ստեփանը, ձեռնարկած էր հնձանի նորոգու-  
 թեանը: Ետտ ժամանակ չկար. խաղողները արդէն իսկ հասունցած էին. պէտք էր  
 ոռոպ եփել, քացախ դնել:

Երկրորդ գիշերն իսկ Ստեփանենց հնձանէն բարձրացաւ եփող ոռոպին բոլորը:  
 Օ՛ր, որքա՞ն անուշ էր այդ. որքա՞ն կարօտցած էին այդ բոլորին: Բոլոր գիւղը հոն  
 էր: Ե՛րբ պիտի շնչէր լաղը...: Սրնկահար Սողոմոն, սրինգը դրած շրթներուն, կու  
 լա՛ր, թէ կը ժպտէր, յայտնի չէր: Գիշերային ստուններնուն մէջ, կարծէք լաւէտ  
 բաժնուած համազգիւցիչներն էին...: Սողոմոնին սրինգը կու լար ու մերթ կը  
 խնդար: Որքա՞ն ամօթխած էր ստոր խնդուքը:

Ճիճին որքա՞ն կ'ուզէր որ ինք ըլլար հնձանին մէջ խաղող կտիկրտողը: Բայց  
 ամէն մարդ կարօտցած էր այդ պահուն. մարդիկ կարգ կը խլէին իրարմէ...

—Փրփո՛ւր, փրփո՛ւր, հասէ՛ք...  
 Անըշտապէս, հասունցած էր լաղին մէջ եռացող խաղողահիթը: Ան մեղրահամ  
 ոռոպի էր վերածուած: Կը մնար քաղի վրայի փրփուրը: Մարդիկ չէին հաւատար...:  
 Իրենց քիմքերը անապատային աւազէն համեմատելու կարողութիւնն ալ մոռցած էին:  
 Բայց սա փրփուր էր, խիստան փրփուր...: Ձրազորմը կը բարձրանար, կը բարձ-  
 րանար բարձրահասակ Կերպոյին զլխէն ալ վեր, մէջէն կը ձորէր տաք ոռոպը, եւ  
 տաշտին մէջ փրփուրը, պղպշակ առ պղպշակ, կը կազմէր զէզ մը...: Մեծ թէ փոքր,  
 գիւղացիք, դափնիի տերևով, կը քաղէին փրփուրը եւ կը ճաշակէին...

Փառքը շատ, Տէ՛ր Աստուած, Փառքը լա՛ւ:

Յաջորդ առաւօտ, Ծալուն իր սալը ուսած, դանակներն ու մուրճերը գտնին մէջ խրած, կռնակին ալ փաթէթ մը կաշի, շուկայ ելաւ: Պէտք էր աշխատիլ: Այլ կերպ չկար: Շատ չանցած՝ պիտի ծնէր առաջին զաւակը...

Ճիմին, իր և եղբոր գոլիկները առած՝ ազրիւր իջաւ: Այդ գոլիկները ամբողջ շրջ տարի ապրուստի միջոց եղած էին իրենց սան համար: Որքա՞ն կ'ատէին զանոնք: Մուրացկանութեան խորհրդանիշ էին անոնք: Սակայն հիմա եղբոր վշտասկի հոն էր, անոնց մէջ: Դեռ ծանուկ հասակին, մայրը պատրաստած էր զինք ազարակի երազին: Դոլիկներով Թանթանկեց արտին մէջ կառուցուելիք ազարակէն կաթ պիտի կրէին ծանկիկները: Գաղթի ժամանակ Աննան բնաւ մտահոն չէր ըրած այդ ազարակը...: Նաչխուն կովերով, քանի մի այծերով, սշխարներով և հաւերով ազարակին երազը մինչև ծաւ հայտնած էր զինք:

Վերազարակին յաջորդ օրն իսկ Ճիմին այցելած էր մօրը երազ-ազարակասեղը: Քանի՞-քանի՞ անգամ Աննան հոն գացած էր, ամուսնոյն վերազարակին սպասուածով և ազարակին կառուցման երազով զինովցած: Հիմա ան անհարազատ հողին մէջ կը ննջէր, իսկ ազարակին երազը հետը թաղուած էր: Սա Աննային երազն էր: Ճիմին կը դիտէր պարապ արտը: Մէջտեղը կար միայն թթնիկ մը, որուն փաթթուած էր որթատունկ մը:

Գացած-նստած էր ծառին տակ: Ժամանակին քանի՞-քանի՞ անգամ մօրը հետ նստած էր հոգ: Մայրը որթատունկին առկաթ մէկ ճիւղին վրայ որքա՞ն օրօրած էր զինք, եղբոր՝ Եօրճիկին հետ:

Մառը տեղն էր: Արաբ տեղն էր: Որթատունկը կքած էր կարմիր ու խոշոր, կոճու խոշոր ստիւքներու պէս լեցուն սղիւզիկներուն ծանրութեանը տակ: Ճիմին չէր կրցած ձեռքը երկարելով ողկույզ մը քաշիլ: Օրօրած էր որթատունկին պարապ կախօրրանը...: Առաջին անգամ ըլլալով լացած էր, գառնօրէն...: Լացած էր եղբոր, մօր և ասոր երազին համար...

Ազրիւր իջնելով ազուր մը լուացած էր գոլիկները: Իր գոլիկը սառնորակ շուրով լեցուցած էր: Եղբոր գոլիկը պարապ բերած էր: Մօր հարսանեկան թափուր անտուկին մէջ պահ դրած էր տեսպատի և մուրացիկի ամօթէն հայրենի ջուրով լուացուած գոլիկը...: Այդ մնացած էր եղբորմէն. այդ մնացած էր մօր երազէն...

(Շար. 12 և վերջ)

ԳԼՈՐԳ ԱՐԷԼԵԱՆ



# ԻՎԱԿԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

## ՅԱՄԵՆԱՅՆԻ ՅԱՆԿՈՒՑԻԶ...

100ամեակի մեր բացառիկ համարին մէջ երեւնալու սահմանուած գրութիւն էր Սարգսրապատի յուշարձանախումբը իր բոլոր անկիւններէն դիտուած Հրաչեայ Մաթետսեանի այս ակնարկը, բայց Թեհրանէն բերուած յուսապատենէնին թերի նկարագիրը պատճառ դարձաւ, որ յետաճգոյի անիկա: Այս յետաճգումը «Բազին»-ի յաջորդ թիւերուն առիթով եւս կրկնուեցաւ եւ իր կարգին դարձաւ պատմութիւն մը, որ ձեռով մը կը պարզէ վերջին տարիներուն Հայրենիքի եւ Սփիտքի մամակատնային կապերուն ոչ-բարեկապատ նկարագիրը: Հիմնական այդ պատճառին հետեւանալով անշուշտ, ո՛չ անհատ մտաւորականներուն մօտ կարելի եղաւ գտնել Հրաչեայ Մաթետսեանի տոյն գրութիւնը առաջին անգամ հիւրընկալած «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթին տուեալ թիւերը ու դարձանել յուսապատենէնին թերութիւնները, ոչ ալ մեր մեծ հաստատութեանց մատենադարաններուն մէջ: Վերջերս միայն ու հեղինակին ուղղակի մեզի տրամադրած աղբիւրին վրայ կատարուեցաւ բաց մնացած մասերուն լրացումը:

Ընթերցողը շուտով պիտի կուտէ, թէ ինչ շարժադիւրեցող տեղի ունեցան այս յաջորդական յետաճգումները եւ թէ ինչու Բանի մը տողերու ու բառերու համար խմբագրութիւնս զինեց այս ծայրագոյն բժախնդրութեան, երբ կարելի էր պզտիկ նոթով մը օր առաջ գալն յանձնել ուշադրութեան: Պարզ է պատճառը: Պարզապէս խղճախայթէ գերծ մնալու համար: Այնքան ամբողջական է անոր կառուցը, որ ո՛չ միայն տողեր ու պարբերութիւններ, այլև նոյնիսկ բառեր պիտի չուզէինք դուրս ձգել անկէ:

Սարգսրապատի յուշարձանախումբի ծննդոցին, խտացուցած խորհուրդին ու խորհրդանշանային անոր իմաստները կարելի դարձուցած գործօններուն մասին շատ գրութիւններ կարդաց ընթերցողը անցնող Բանամեակին, յուշեր, վերլուծումներ, մեկնաբանութիւններ, չափածոյ թէ արձակ գեղումներ, շա՛տ, որոնց մէջ անպայման բացառիկ տեղ մը կը գրաւէ արձակագիր ու հրապարակագիր Հրաչեայ Մաթետսեանի այս ծաւալուն ու յամենայնի յանկուցիչ գրութիւնը...

ՀՐ. ՄԱԹԵՒՈՍԵԱՆ

# Ս Ա Ր Դ Ա Ր Ա Պ Ա Տ

ՄԵՐ ԳՈՅՈՒԹԵԱՆ ԶՕՐԵՂ ՏՈՒՆՆ ԱՅՍ ՍՐԲԱԶԱՆ...

Ամէն պատերազմ-ճակատամարտ չէ, որ կարելի է, ի վերջոյ, կոչել զոյամարտ: Մեր մղած-չմղած բոլոր ճակատամարտերը ունեն հայ տակուն ոգուն այնքա՛ն բնորոշ մի անուն՝ փորձութիւն-զոյամարտ: Ըսկատազիրը դաժանորէն մեզ հա՛ պիտի դեռ էն զլխից փորձի, փորձարկի, քայց եւ պիտի համոզուի՝ կա՛նք արմատով: Գոյամարտ-կենսապայքար: Գոյամարտ՝ ասել է՝ մեր հողը, տունը խուժած թշնամու ոտը կարելի մեր սուրբ եղբրքից, կեանքի դնով պահել այն հողը, որի վրայ թողլ մանուկները պիտի թոթովեն մերոպահունչ ոսկեղենիկ մայրենին, սաւառնն Ազատն ի վեր, Մասիսն ի վեր: Մեր հին ու ազնիւ հողը, մեր ապուպայերի արիւնով թանձրացած ու թանկ հողը, միշտ երկնածարարած հողը թէկուզ վերջին գեղջուկի կեանքի դնով պահել, որ մնայ մեզ՝ վաղն եկող պատանեակին: Նահանջելով նուազել ենք, ու մեր յուշ ու պատմութիւն հողերի վրայ հիմա յառնել է մեր զոյու-թեան թանկ կղզին: Այդ կղզուց նայում ենք մեր պատմութեան հազարամեակների խորքերը եւ... Արարումին յաջորդել են աւերումները, Աւերումներից էլի ենք յառնել: Գոյամարտ, զոյապայքար, Լինե՛լ, Զլինե՛լ, Բայց ինչո՞ւ չի ենք քո հացով, քո լեզուով, քո աղօթքով, քո ձայնով, Նոր աշխարհին հին աշխարհի ազնիւ դասեր են պէտք: Լինե՛լ: Մեր զոյութեան ազնիւ գետը սկիզբ է առնում հենց մեր Զայնից: Զայնը սփռում էր մեր կանաչ արտի վրայ, մեր կապոյտ երկնքում մեր ձայնը թռչուն էր նկարում, մեր ձորերը լիքն էին սերերով, լեռնագագերին օբորոցները հայրեններով էին զօրացնում մանուկներին: Մենք... Գոյամարտ, ի՛նչ իմանայինք, որ մեր զոյամարտի՝ Աւարայրի Մայիս ամիսը իր կարմիր ծաղիկների մէջ դեռ երկար դարեր պիտի պահի Վարդանանց շունչը եւ աւելի զօրեղ, ընդոտ Մայիս է արթնանալու Մասիսի հայեացքի ներքոյ, Մայր դաշտի Սարգարապատում: Հենց մեր շե-տունը, պատիւը, հաւատը, մեր Լեզուն պաշտպանելու համար ուժ ենք դարձել, բռունցքուել մեր վերջին հողակտորի վրայ՝ Բաշ-Ապարանում, Մեծ Ղարաքիլիսայում, այստեղ — Սարգարապատում:

Սեւ ՆՃ Թուականից ընդամէնը երեք տարի յետոյ, այս ուրբի, ողբի երկրորում ինչպէ՛ս կարողացանք միախմբուել, պողպատուել, կայծակել, դէն նետել մեր երկրի քառակի որբուժիւնն ու... ճանաչել ինքներս մեզ, մեր ուժը, թէ միախմբուենք, մեր ուժի դէմ ծնկի կը դան բոլոր արնախումները: Այստեղ՝ Սարգարապատում, յառնեց Նայիրեան ոգին: Միացո՛ւմ: Միացում Պատմութեանն ու Ապագային: Յառնեց մեր նոր պետականութիւնը: Մեր Եռագոյնը փողփողաց: Կործանման եզրին կանգնած երկիրը յաղթեց ու ճանաչեց: Միխոնաւոր զոհեր տալուց յետոյ Հայ մարդու հոգու, սրտի Սարգարապատ եղաւ:

Յետո՞յ... Սարգարապատի ճակատադրական ճակատամարտի մասին չա՛տ երկար լուել էին: Դատաստան տեսան Հայրենեաց հողի զինուորների հետ: Կարմիր Վարդանների հետ: Դաժան ժամանակներ: Ինչո՞ւ էք կուռել, ըմբոստացել ձեր հողը, տունը մտած բարբարոսների դէմ: Նրանք Հայաստանը նուաճեա՞մ էին... բարբի նպատակներով:

Այս Մայիսը եկաւ եւ տասնամեակների մեր եռփեղկուածութիւնը բացեց: Դեմոկրատիա, հրապարակայնութիւն, բացախօսութիւն բառերը, դուրս գալով բառարաններից՝ կեանքում նոր աղօսներ են բացում:

Թէկու՞ղ լճացման տարիներ, բայց ունեցանք ազնիւ մարտիկներ, որոնք փորձեցին յիշել, թղթին յանձնել Սարգարապատի վե՛հ տարեգրութեան ճը՝ մարտացի պատմութիւնը:

Մեր բոլոր ինքնապաշտպանական զոյամարտերի փառք ու պսակը հանդիսացող Սարգարապատի ճակատամարտում տարած փառապանք յաղթանակի յիսնամեակի առթիւ մի ճակատամարտ եւս պիտի սկսուէր: Արժանի յուշահամալիր կառուցուեց: Հայրենեաց զինուորներին վայել:

Մասնով լինելով Սարգարապատի՝ մեր ինքնութիւնը հաստատող հերոսական պատմութեանը եւ հետագայ տասնամեակների քաղաքական շանգ՝ մատակարարող, գերմանացի զիտնականներն իրաւացիօրէն գրում են. «Հասարակ եարց չէ, թէ ո՞ւմ գործն է աւելի դժուար եղել. 1918 թուականի Յակատամարտի մասնակիցներին», թէ այս եռյակապ յուշանամալիրը կառուցողները»: Սարգարապատ. ասել է՝ Հայերս կուռել զիտենք: Գիտենք միաբանել, մարտնչել ու յաղթել: Միայն նենգ ու ստոր պայմանագրերը փոքրացրին առանց այն էլ ծուէնուած մեր երկիրը: Մենք խոշորացոյցով մեր պատմութեանը նայելու բնաւ հարկը չունենք: Պատմութիւն՝ ազգի դարիւ-դարիւ յիշողութիւն: Ինքնապաշտպանական կռիւների արանքներում ստեղծած մարգարտաշար մշակոյթի ի՛նչ կշռոյթ. հարուստ ու գրաւիչ: Որին էլ նայես՝ երկաթագիր զորք, խաչքար, գորգ, երգ, զարդարութեամբ, երաժշտութիւն, Հայ մարդու ոգու կորով, մտքի թոփշ, խոյանք: Թոփշի պահին յաճախ թեւատուել է մեր ոգու արծիւը, բայց մեր թոփշը էլի հայերէն է մնացել...

Նորից գլուխ խոնարհելով զհենքի, մտքի, զոչի զինուորների առջեւ, ուղղում ես հաւատալ, որ Հայոց ամէն գար Հարուստ է մնում իր նուիրեալներով, նրանց ստեղծածով:

Իմ տեսած նուիրեալներից է մնում Ռաֆայէլ Իսրայէլեանը: Եւ արդարութեան Համար մարտի նետուած մի խումբ ազնուական, վե՛հ հողի տղաներ ու ամբողջ մի ժողովուրդ. ուղղում ենք պահել մեր դարերը եւ մեր Հայ անունը Հայոց հողի վրայ, մեր տանը:

Երիցս շնորհակալ լինելով Սարգարապատի հերոսամարտը գեղարուեստօրէն մարմնաւորողներին, յիշեմ նաեւ վաղամեծիկ արձակագիր Միքայէլ Ամիրբեկեանին, որն իր ծննդավայր Ղարաթիլիսայի ճակատամարտին նուիրեց «Վերջին հողակտորի վրայ» վաւերապատումի երկու գրքերը: Նա մա-

սունք-մասունք հասարակ-ժողովուրդ էր այն ամէնը, ինչ պահել էին հողը, մարդկային յիշողութիւնը: Հաւատանք, որ Ապարանի, Զանգեզուրի ճակատամարտերը այսպէս երկար քարացած չեն մնայ. դրչի, վրձնի վարպետները մարելու պարտքեր ունեն իրենց ժողովրդին: Մարգարապատ. «Ճակատամարտի դաշտը երէկ», «Ճակատամարտի դաշտը այսօր», երկու տասնամեակ առաջ «Գարուն» ամսագրում այսպէս էինք վերնագրել մեր փաստագրական-գեղարուեստական ակնարկները Յովհաննէս Մելիքեանը եւ ես: Ու Հիմա մտածում եմ. Մարգարապատի ճակատամարտը չահած Հայրդիների զաւակների մասին ինչու չգրել վաւերապատում գիրք: Նրանց մասին, ովքեր կառուցեցին յուշահամալիրը: Ճակատամարտի մասնակիցներից մի երկու հոգի են մնացել ու մի յաղթած ժողովուրդ: Յուշահամալիրը կառուցողներից մի երկու հոգի են մահացել ու մնացել է այսօր զնգող մի ամբողջ պատմութիւն: Մահ էր, օրհաս էր, էջմիածնի մայր տաճարի, բոլոր եկեղեցիների ու մեր բոլոր դարերում լուծ գանգերն էին զնգում ու ոգեկոչում ժողովրդին: Հիմա Զանգակատան գանգերն են զնգում: Զանգերի խորհուրդը մեծ է, գանգերի զնգուն խորհուրդը: Յաղթանակած զինուոր-արծիւները: Զանգերը... Վեհափառի խորհրդով գանգերը ձուլել են Մարտէյում: Զգիտեմ, թէ ձուլող վարպետները Հայեր են, բայց երաժշտութիւնը Հայկական է, յիշում էք՝ ապրիլ, ապտ Հայրենիք... Զընգ, զընգ... Արեւային եննդայ ու շեփոր...

Այս գինեւէտ մայր գաշտը նրանց յիշատակն է: Փա՛ռք բոլորին: Մեր սաք ու վիպերդից առած առօք-փառքը բոլորին՝ մեծից փոքր: Բոլորը մի անուն ունէին՝ փրկութեան զինուորներ Հայկազունք: Ազգի գոյատեւման, փրկութեան, յարատեւման մի նոր մատենն է փողփողում: Եւ սաքից առած արժանի փառք՝ յուշահամալիրը կառուցողներին՝ մեծից փոքր: Գիրեթ-ցերեկ ճակատամարտի դաշտում էր Վլադիմիր Դարբինեանը՝ Հոկտեմբերեանի կուսընդհանրի այդ տարիների առաջին քարտուղարը: Ազատամիտ, պարզ մարդ, որը համոզուած էր նուիրական իր գործի արդարութեանը: Այսօր էլ շրջանում սիրով են յիշում ճակատամարտի շինարարութեան ընդհանուր հրամանատարին, բոլոր ուժերը համախմբողին ու ոգեւորողին, կազմակերպչին:

...Մեր պետականութիւնը նորից հաստատուեց: Ժողովրդի ձեռքին, սրտում արթնացաւ ու փողփողաց Եռագոյնը: Մենք երկիր ենք, ժողովուրդ ենք: Մենք մեզ ենք ճանաչում ու մեզ են ճանաչում անգամ երէկ մեր հողը խուժածները: Բայց բախտի շար կամքով քիչ համարուեց վեց դար լուծ մեր պետականութիւնը, մի վեց տասնամեակ ու մի քանի տարի էլ հետը էլի պիտի այնպէս խոր լռէինք, որ եկող սերունդը չէր էլ զգալու, որ իր հողում, սրտում Եռագոյն դրոշ կայ պահուած: Ծանապարհ անցած ու մարդկանց հոգիներում թաքնուած մեր Եռագոյնն այս Մայիսին փողփողաց: Գետականութեան օր ունեցանք: Մարգարապատի յուշահամալիրը կառուցողներն այն դեռ քառորդ դար առաջ էին պարզել, ապա հրամանագրել քարերին:

Ոգին կար: Նախնեաց ու հենց իրենց հայրերի ոգին չէր մեռել, կար: Հիմա նիւթեր եմ հաւաքում: Ես ուզում եմ գրել նրանց մասին: Իսկ այս ակնարկը թող համարուի հետագայ այդ գործի մէջ մտնելիք հում նիւթ, որը, պարզ է, պիտի դեռ երկա՛ր շաղախուի:

Գեղեցիկ մի ուժ պահում է թեզ. ծննդավայր ունես ու այնտեղ՝ Հայրենի տուն ու տան յիշատակ: Տանն ապրում են Հին ու նոր ձայներ: Աշխարհը, սիրտը, լցուած են Հին ու նոր ձայներով: Այնտեղ ապրում են Հին ու նոր ձայներ: Հարազատ եզերք է Աշխուրը: Մակարավանք կայ, հնամենի այս աշխարհը լցուած է մեր նախնիների ազնիւ կանչերով, մեր պապերի հը-



պարտութեամբ: Տո՛ճմականչ, ազգականչ: Այս գիւղում մի մեծ աշխարհ կայ՝  
Հողին կպած մարդկանցով, լեղուին պինդ կպած բարբառի թափանցիկ գոյնե-  
րով: Մի խաղաղ անկիւն էինք որոնում Երեւանում, որ զրուցենք: Ո՞ւր դը-  
նանք: Դարբինեանի հայեացքն արժուենի դարձաւ, ուսերը վարուվերեց.  
— Գնանք տուն:

Տուն ասելով ես Իջեան հասկացայ, Աչաջուր, նախնիների կանչը հաս-  
կացայ ու խաչքարերես նախնիների մրմունջ: Ես քաղաքի տուն չէի ուզում:  
Մի խաղաղ, գրնդուն եզերք էի այդ պահին խնդրում Աստուծոյ:

— Գնանք տուն, — ասացի նաեւ ես, ու այդ պահին իմ Լոռին յիշեցի:  
Սարուճոր ընկնող մերոնց ձայները լսեցի: Տուն... Աւագ բարեկամս տիրու-  
թեան միջից յանկարծ ժպտաց.

— Գնալու տներ շատ կան: Հիմա դնանք Սարդարապատ: Մեր կառու-  
ցած ու չկառուցած բոլոր տները փրկուել են Սարդարապատով: Մեր պատմու-  
թիւնն է փրկուել Սարդարապատով:

Դարբինեանը պատմարան է՝ լեռնցու բնատուր քննախոյզ առողջ մըտ-  
քով, յորդուն դատողութիւններով:

Ամէն ինչ դժուար է ստեղծուած այս Հողի վրայ: Կուռելը դժուար է,  
յաղթելը դժուար է, ապրելը դժուար է: Գիտենք, դժուար է: Հեշտ ոչինչ չի  
տրուում մեզ: Հեշտ յաղթանակներ չունենք:

Մենք զնում ենք Տուն՝ Սարդարապատ: Ճանապարհին հազար բան եմ  
մտածում: Այս Հողի վրայ ամէն ինչ դժուար է. նորից եմ կրկնում մտքումս:  
Արարատների, Արապածի ժայթքումների նման ամէն ինչ դժուար է: Գուցէ  
հե՛շտ է: Ժայթքումը նոյն երկնելն է: Իսկ երկնելը դժուար է: Ես նայում  
եմ Դարբինեանին: Արդարակորով մարդ է: Մէկ ժամում հասնում ենք Տուն,  
այնտեղ, ուր մայր Արաքան է որպէս... սահման: Մտքով ճամբորդէր: Նոյ-  
եան տապանից սկսիր ու... Պատեպատ խփուելու նման երկիրը շատ է նեղա-  
ցել: Իմ Հողին իմ զե՞տը սահման:

Ապուպապի տուն լինէր, պապի զրոյց ու հեքիաթ: Բայց սա է քո տունը:  
Այս տունը կառուցել է հայ ժողովուրդը: Այս տան պատերի քարերը յղկուել  
են մեր բոլո՛ր Աւարայրների ժամանակ, մեր տան սիւները յղկուել են մեր  
այբուբենի երդիկներից թափուող լոյսով:

Այստեղ մարդը չի կարող լինել մէկ տարեկան կամ հարիւր: Ժողովրդիդ  
տարիքը պիտի ուղեկցի: Ամէն պահ: Բեղ տրուած Աստուծոյ այս պահը փրկե-  
լով, տէր ու ծառայ զգալով, դու փրկում ու տէր ես կանգնում քո ժողովրդի  
ապրած բոլոր ժամանակներին: Ապուպապերի հեքիաթներով լի խրճիթներն  
ու ասպետական զղեակները լենք թողնում ծուարեն ու հանգչեն զրոյցներում:  
Սարդարապատի զանգերի զրնգոցը դարեր է արթնացնում: Այստեղ կանգնած,  
թւում է, թէ Արարատից Արազած ծփում է բնիկ մի վեհութիւն:

Դարբինեանը ճանապարհին արդէն մասունքուած անուններ էր յիշում՝  
Բաղդամեան, Բարաջանեան, Իսրայելեան, Քոչար: Համազասպ Բարաջանե-  
անը լաւ չգիտէր Հայաստանը: Այս երկիրը նրա համար այնքան փոքր էր,  
որ թւում էր, թէ ձեռքը շարժելու տեղ չկայ: Փոքր է, փոքր է. տխուր կրկնում  
էր նա: Ուղեկիցներն ասում էին, որ փոքր չէ, մեծ երկիր է, դա ասում ես չի-  
մանալուց, մարշալը նեղում էր: Բայց երբ միասին շրջազայեցին սար ու ձո-  
րեղով Հարուստ լեռնաշխարհում, երբ լսեց, թէ ձայներն ինչպէ՛ս են արձա-  
րեղում եւ ո՞ւր է հասնում գեղջուկ մարդու զրոյցի տուտը, Բարաջանեանը  
զանգում եւ ո՞ւր է հասնում գեղջուկ մարդու զրոյցի տուտը, փոքր ասե-  
ռւշ երեկոյեան ներողութիւն խնդրեց իր երկրից ու ժողովրդից, փոքր ասե-  
ռւշ համար: Ծունկ տուած ամէն լեռ ու երկինքներում միրմուռած ամէն մի  
սար, ձորերն ընկած ամէն սար ու սարերը՝ զլուխ ելած ամէն ձոր իրենց մէջ

կ'անեն անծայրածիր տափաստաններ: Մենք մեր սար ու ձորերով ենք յաղթել: Սար ու ձորերը մեզ թիկունք ու ապաւէն են եղել:

Դարբինեանը ճանապարհին ինձ ցոյց էր տալիս լուսանկարներ: Ետտեքը խորհուրդ էին տալիս շրջակայքը թողնել այնպէս՝ ինչպէս եղել է: Անապատ: Այլուքիւն: Խեղդող արեւ: Պարզապէս մոխրացած հող: Լուսանկարներից խեղճութիւն է կաթում: Ինչպէ՞ս են կոտել: Յաղթել: Բանաստեղծի ասած՝ դաժան դրախտովայր: Այստեղ է կոփուել ապագայ մարշալը՝ Յովհաննէս Բաղրամեանը: Եւ նա պաշտպանել-փրկել է իր հողը: Եւ տասնամեակներ յետոյ Սարդարապատի յուշահամալիրը կառուցելու գաղափարը պիտի պատկերի ճակատամարտի մայրն ու բնթացքը: Ու յաճախ պիտի դիմեն մարշալի օգնութեանը, որովհետեւ «միշտ եռանդուն», «ամենազէտ», «սկզբունքային» «մի խումբ ընկերներ», նաեւ անուններով իրենց զբաւոր բողոքները, հեռագրերը պիտի հասցնեն Երեւան ու Մոսկուա, յիշեցնելով, որ պէտք է կառուցել Սարդարապատի յուշահամալիրը, որովհետեւ ճակատամարտին մասնակցել են... դաշնակցականներ: Եւ պիտի մեղադրեն նաեւ Դարբինեանին, որովհետեւ լինելով պատմաբան, նա պարտաւոր է սքափ լինել: Բողոքողների թոռների դասագրքերում ինչ տեսակ ճակատամարտեր ասես, որ չկան՝ գրած, նկարած, բայց ցոյց տուէք մի դասագիրք, որտեղ երկու բառ լինի Սարդարապատի ճակատամարտի մասին: Ս', ժամանակներ, օ', բարբեր...

Լինեմ անկեղծ. այս մի-երկու ամիսն է, որ մենք կարողանում ենք խօսել, գրել կ'է մեր Եռագոյն դրօշի, կ'է Ֆիդայիների, կ'է այն ամէնի մասին, որը զուտ ճշմարտութիւն է: Բայց քսանմէկ տարի առաջ, հենց Մայիսին, ինչպէ՞ս աւարտուեց Սարդարապատի յուշահամալիրի կառուցումը, ովքե՞ր էին այն քաջ ֆիդայորդիները, որ կարողացան քարի Եռագոյնը ցրացնել այստեղ: Եւ կառուցելու գաղափարը որտեղի՞ց էր գալիս: Այս ապրումները հարց են դառնում, որով եւ դիմում եմ զրուցակցին: Ժպտում է յաղթած զինուորի լայն մպիտով:

— Զահել էի, Հայաստանի կոմերիտմիութեան կենտրոնի առաջին քարտուղարը: Ինձ բուրբ ճանաչում էին որպէս քիչ թէ շատ պատմութիւն իմացող: Մեղքս ի՞նչ թաքցնեմ. Սարդարապատի ճակատամարտի մասին մեր իմացածը չիմացածից շատ չէր, — հանդարտ տոնով սկսեց Դարբինեանը: — Մի օր իմ բարեկամ, պրոֆեսոր Հրանտ Թամրազեանի տանը զրուցում էինք: Այնտեղ էր նաեւ Հրաչեայ Քոչարը: Պէ՛ծ ու կրակ որ ասում են, ինձ թւում է՝ նրա մասին են ասում: Թափառող միտք ունէր: Մենք ինչի՞ց էինք խօսում, յանկարծ Քոչարը իր երգով լուցրեց մեզ: Սուրմալուին նուիրուած երգը երգեց: Յիշո՞ւմ էք.

Օձ է նստել քախտիդ վրայ, Սուրմալու...

Երգից յետոյ բացիսից աչքերը, տրորեց, ապա սկսեց խօսել Սարդարապատի, թուրքերի դէմ մղած հայոց ճակատամարտի, յաղթանակի, մեր վերականգնուած պետականութեան, Եռագոյնի մասին: Ասաց՝ Սարդարապատը սպասում է իր Եղիշէին: Մինչեւ հիմա ամաչում եմ, որ ոչինչ չգիտէի Սարդարապատի, եռակի թանկ մեր Աւարայրի մասին: Ժամանակները սիրում են երբեմն դառնորէն քարոցել ճշմարտութիւնները: Սարդարապատը հենց մեր ճշմարտութիւնն է, ոգին: Քոչարեան ինքնաբուխ, հայկաշունչ դասից յետոյ եւ երկար ժամանակ մտածում էի Սարդարապատի ճակատամարտի մասին: Հրանտ Թամրազեանի համար Սարդարապատը նոյնպէս փակ դօտի էր: Ի՞նչ անենք: Ուրիշներն իրենց չեղածին են տէր կանգնում, մենք մեր եղածը չենք



Սարգսրապատի յուշահամալիրը, այնուամենայնիս, նակատագրի բերումով պիտի կառուցուէր: Աստուծոյ կամօժ այն պիտի նախագրէր Ռաֆայէլ Ռսկեճեռիկը: Այս պահին յիշեմ նուիրեալ նարտարայեւտ, մեր գիղերին այնքան մշակոյթի տրեմերի նախագծեր նուիրած (միայն ճրի, վարձը՝ մածուն ու լաւաշ) վաղամեռիկ Ռազմիկ Ալավերդեանին: Նա ինձ խորհուրդ տուեց, որ միայն Ռաֆայէլ Իսրայէլեանին դիմեմ, շեշտելով որ նրա նշանն ոչ ոք մեր ազգային ոգին չի հասկանում: Ասաց նաեւ, որ նարտարայեւտը լաւ գիտէ, թէ ի՞նչ է կատարուել Սարգսրապատում եւ Սարգսրապատը հայ ժողովրդի կեանքում ինչ լիցքեր ունի:

Հ.Մ.



Գիշեր-ցերեկ նակատամարտի դաշտում էր վաղիկիսր Դարբինեանը՝ Հոկտեմբերեանի կուշրբկումի այդ տարիների առաջին Բարտուղարը: Ազատամիտ, պարզ մարդ, որը համոզուած էր նուիրական իր գործին արդարութեամբ: Այսօր էլ շՐՐ-բանում սիրով են յիշում նակատամարտի շինարարութեան ընդհանուր հրամանատարին, բոլոր ուժերը համախմբողին ու ոգեւորողին, կազմակերպիչին:

Հրաչեայ Մարեոսեան

*Բարձր եմ գնահատում վաղիկից Դարբինեանի հայրենասիրութիւնը, որն այնքան ջանք է թափել, որպէսզի Հայաստան աշխարհի վրայ նորից զոգանջեն Սարգսրապատի յուսի ու լոյսի կանչող զանգերը:*  
Սիլվա Կապուտիկեան



տալիս հենց մեզ, մեր զաւակներին: Քոչարեան զասից յետոյ սկսեցի պարզապէս սարել Սարգարապատով: Նշանակուեցի (էն ժամանակ նշանակում էին, չէին ընտրում) Հոկտեմբերեանի կուսըղկովի առաջին քարտուղար: Ամիսներ անց Քոչարը տեսաւ, շնորհաւորեց, յետոյ ասաց՝ լաւ մտեցել ես Սարգարապատի ճակատամարտին, բայց տեսնենք մտեցե՞լ ես, թէ մտենալով՝ հեռանալու ես: Հասկացայ բառախաղը: Մտենում էր ճակատամարտի 50ամեակը: Ճակատամարտի մասնակից պայի պատմութիւնը թողը չէր լսել, որովհետեւ քաղաքացիական պատերազմի թիմաներով անվերջ ֆիլմեր էին ցոյց տալիս, միշտ «մերոնք յաղթում էին», կամ շա՛տ հետաքրքիր բաներ: Այն էլ անպայման հեռուներում եղած, մեր աչքի առջեւ կատարուածը մեզ չէր հասնում:

Սարգարապատի յուշահամալիրը, այնուամենայնիւ, ճակատագրի բերումով, պիտի կատարուէր: Աստուծոյ կամօք այն պիտի նախագծէր Ռաֆայէլ Ոսկեճոճիկը: Այս պահին յիշեմ նուիրեալ ճարտարապետ, մեր գիւղերին այնքա՛ն մշակոյթի տների նախագծեր նուիրած (միայն ձրի, վարձը՝ մածուն ու լաւաշ) վաղամեովի Ռազմիկ Ալազիբեղեանին: Նա ինձ խորհուրդ տուեց, որ միայն Ռաֆայէլ Թարայէլեանին դիմեմ, շեշտելով, որ նրա նման ոչ ոք մեր ազգային ոգին չի հասկանում: Ասաց նաեւ, որ ճարտարապետը լաւ գիտէ, թէ ի՞նչ է կատարուել Սարգարապատում եւ Սարգարապատը հայ ժողովրդի կեանքում ինչ լիցքեր ունի: Ենորհակալ եմ Ռազմիկից: Թարայէլեանը հենց առաջին սիրտ ու բերան, ոգի ու կանչ ճարտարապետ էր, նկարիչ էր, գրող էր, մեծ հայ էր: Հազար ափսոս ու ողորմի ասենք: Անմոռաց էր նրա խօսքի, բառի մաքրութիւնը: Բառը, խօսքը՝ զտարիւն, հալած ոսկի: Ամէն ինչ հայեցի: Զարմանալի մաքուր, բարձր զգացումների տէր արուեստագէտ էր: Նաեւ վիճել ենք: Քառասուն մետրանոց սո՛ւր մեկնել, թէ՞ զանգակատուն կանգնեցնել քառասուն մետրանոց: Եռստ մտերմացանք: Ասեմ, որ սկզբում հրատարակում էր, ծանօթ էր շրջումների չոր ոճին:

Վախենում էր, որ յանդուգն այս երիտասարդը՝ շրջովի քարտուղարը, ոգևորութեան պահին փորձի սանձել երեւակայութեան իր ձին: «Ձեզ ստեղծագործական ազատութիւն, Վարպետ, բաց թողէք մեր ձիերի սանձերը, ես էլ պակաս հեծուոր չեմ, գիտեմ ներշնչանքի վեհութիւնը ու գիտեմ նաեւ ձիուս արժէքը»: Այս խօսքերը քարտուղարն ասաց ոչ ժպիտով, բայց դիմացինին դիւթելով՝ մտիթ թուրջաղաշտ, տեսնենք խօսքի տէ՛րը կը լինի: Առաջին իսկ կարճ զրոյցները ճարտարապետին համոզեցին, որ ինքը գործ ունի լրջմիտ, հայրենասէր մարդու հետ եւ դեռ չգիտէր, թէ ինչքա՛ն է սիրելու, յարգելու նրան, որ նախագծման-կատուցման ժամանակ, որպէս իր տղայից, արդար դինի է խնդրելու, հաց ու պանիր: Աշխարհիկ Վարպետի պարզ վարքագիծ: Նա ամէն մարդուց գինի չէր խնդրի: Ու պիտի նաեւ սրտնեղի, ափերից դուրս դայ, ձայնը բարձրացնի, երբ մի հայեացքով նկատի, որ Զանգակատան վերջին քարաշարերը չեն դրուել: Նախագծային մի շնչին շեղում եւ...

Սարգարապատի յուշահամալիր, հրաշք մուտքը ցուլերով: Զանգակատունը, մեր զոյուրեան անլուելի այս զանգակատունը, «վարդապառ» սեղանատունը: Յաղթանակի պատը: Թանգարանը...: Զարտարապետ Ռաֆայէլ Թարայէլեան, քանդակագործներ Արա Յարութիւնեան, Սամուէլ Մանասեան, Արշամ Շահինեան: Քարտաշ վարպետներ: Ամէն մէկի մասին ընտիր բառերով սրտի պատմութիւններ է անում Դարբինեանը: Ժողովուրդը դիւեր-ցերեկ աշխատում էր: Այնպիսի մանրամասներ էր յիշում, ոնց որ մեր օրերի մատենագիրը լինի: Պատմաբանը, գիտութիւնների թեկնածուն ունի նաեւ իրաւաբանական կրթութիւն: Դարձեալ գերազանցութեամբ է աւարտել, Դիսերտացիան պատ-



միութենական ընթերցողին: Մեր ողբերգութիւնը գալիս է նաեւ չիմանալուց, սխալ, կեղծ լրատուութիւնէր: Ահաւոր ուշացումով այս երկիրը փորձում է զառնայ իրաւական եւ հենց առաջին անիրաւութիւնը կատարուեց խորհրդային իրաւաբանների միութեան հիմնադիր Համագումարում: Մենք իբր մտածում ենք անհատի մասին, բայց պարզում է, որ ազգի մասին էլ չենք մտածում: Ոճրագործութիւն, ցեղասպանութիւն այս արեւի տակ: Յանցանքից շանցած մի քանի ամիս՝ միութենական պարզեւներ են ստանում այն քաղաքները, որտեղ կատարուել են ոճրագործութիւնները: Եւ տառերով բառեր են կազմում, բառերով՝ նախադասութիւններ՝ սովորողների ինտերնացիոնալ դաստիարակութեան գործում ցուցաբերած... Սոււմգայիթում, Աղդամում, Կիրովպարում... Հիմա էլ Սումգայիթի քաղաքային դատախազի ընտրութիւնը... Յիշենք Քումանեանի խօսքը՝ ժողովուրդ ունենք՝ չենք ճանաչում, պատմութիւն ունենք՝ չենք ճանաչում, շեղու ունենք՝ չենք ճանաչում: Եթէ մեզ չչճանաչելով շարունակենք ապրել, ապա, պարզ է, որ ապրելու նման չէինք էլ զգայ, թէ ինչպէս ենք հեռանում ազգային աւանդներից, ակունքներից: Ազգային գարթօնքի երանելի այս ժամանակներում պիտի ոչ միայն մեզ ինքներս աւելի լաւ ճանաչենք, այլ նաեւ ճանաչեցնել տանք: Մեր ազնիւ ու սուրբ գործի, արցախեան-ազգային շարժման Համար պիտի մեր առողջ բանականութեան եւ Հազարամեակների խորքից եկող ազգային իմաստութեան լոյսով շարունակենք մեր ճանապարհը, որն անցնում է Աւարայրով, Սարգարապատով: Մեր ազգային ողբերգութեան չըմբռնումը, այն էլ իրաւաբանների կողմից, պէտք է անհանգստացնի բոլորին:

Մենք երկար լուռ մնացինք արծիւների պէս, Զանգերի նման: Որտեղ ջուր՝ այնտեղ կենաք խօսքը մեր նախնիներից է գալիս: Այստեղ ջուր չի եղել, անապատ է եղել: Արիւն են տուել մեր հայրերն այստեղ ու յաղթել: Հայրոց մեծ յաղթանակը: Ժողովրդի ուժի եւ ցասման, միասնականութեան յաղթանակը: Փառք Հայրոց հողին, արեւին, Քարը դարձաւ յուշարձան: Փառք Հայրոց բարին, բարի վարպետին: Սուրբ սեղանատուն: Եւ որմին գրեք՝ «Խոնարհուելով մեր մեծ Ասիսիների տնունների առաջ եւ ներշնչուած նրանց նարտար գործերով՝ երախտագարտ յետնորդներս կառուցեցինք այս սեղանատունը»: Հայաստան այցելող մեր հիւրերին մենք տանում ենք Փառնի, Գեղարդ, Զըւարթնոց, էջմիածին, Տաթև, Սանահին, Հաղպատ, Նորավանք... եւ անպայման Միծեռնակաբերդ ու Սարգարապատ...:

Սարգարապատը մեր ժողովրդին ներկայացնող մեծիմաստ կառույց է: Այստեղ են գալիս աշխարհի բոլոր ծագերից. Մատենադարանն ու Սարգարապատը մեր կենսածառն են:

Ողբերգութեան պէս ու սուրբ հաւատի  
 Զանգերն են հնչում Սարգարապատի,  
 Ասես մարդկային արցունքները շինք  
 Խտացել այստեղ, դարձել են պղինձ:  
 Խտացել այստեղ, փոխուել են երգի,  
 Ժամանակի մէջ ու տիեզերքի...:

Լիովաջի Մեծելայտիսի խօսքերն են սրանք: Կառուցման ժամանակ Հարիրաւոր մարդիկ էին գալիս: Թանկագին յուշեր ունի 'Դարբինեանը' կապուած նրանց հետ:

Արծիւների պէս, գանգերի նման մենք լուռ մնացինք: Յետոյ ինչդրեցի Դարբինեանին, որ շնորհ անի եւ իր կառուցած Տան պատմութիւնը Հակիրճ նուիրի մեզ: Ժպտաց: Արծիւները չեն սիրում երկար թեւածալ մնալ, գանգերը կը խնեթանան, եթէ չդողանջեն:

— Ուրիշ ակունք ունի ժողովրդական խանդավառութիւնը, — ասաց Դարբինեանը: — Կառուցման ժամանակ ես պարզապէս վկայ եղայ ժողովրդական Հօգը, միասնական ոգու զրոհւորմանը: Ամէն մէկի մէջ մի իսկական ճակատամարտ էր գնում: Նրջանի պիտիներ-դպրոցականներից մինչեւ թոշակաւորները մասնակցել են այս սուրբ զործին: Ես չեմ մոռանայ բոլոր նրանց, որոնք դեռ պատանի մասնակցել են այս ճակատամարտին... Ազգային ճարտարապետ Իսրայէլեանը բարեբուն Հենց ազգի ոգի էր դարձել ու կանչում էր բոլորին: Ասում էր՝ Հացն ու գինին, տէր կենդանին: Սուրբ Հաց ու գինի, նախնաց անկոտորում ոգի, եւ նա իր Հաւատն էր պարզում բոլորի դէմ. մենք կոտել ու յաղթել ենք այսպէս, մենք կառուցում ենք այսպէս: Սա ճարտարապետի ամենամեծ զործերից է: Սարգարապետի յուշահամալիրի ե՛ւ նախազօծելը, ե՛ւ կառուցելը պէտք է սիրանք Համարել: Գործի ծանրութիւնն ընկած էր Հնդկութեանն աշխատանքների վրայ: Ընդդէմ է, մեզ օգնում էր կառավարութիւնը: Անտոն Փոչինեանն ամէն ինչով աջակից էր լինում արագան այս զործին, ոգեւորում էր մեզ: Նուիրեալ մարդկանց ստուերում կային նաեւ այնպիսիները, որոնք բանասրկութիւններ էին ուղարկում վերեւները: Բողոքում էին իմ դէմ, ապա նաեւ՝ Փոչինեանի, որ ինձ չի պատժում: Այսօր-այս պէս յիշում եմ, մի թեթեւ վախ յայտնեցի, խօսքս կտրեց, ասաց. «Ի՞նչ կառուցիր, գրեւորն մի նայիր, մի էլ մեղադրիր գրողներին: Որ Հասկանան՝ չեն գրի: Ժողովրդի սիրանքին արժանի յուշարձան ենք կառուցում Հենց ժողովրդի Համար: Զհակացողն էլ, տայ Աստուած, որ Հասկանայ: Ոչինչ, չհասկացողի դասակը կը Հասկանայ...»: Ինձ յաճախ են Հարցնում, թէ նախաձեռնելով, կառուցելով, ճարտարապետ Իսրայէլեանի մտայնացումներն որակականացնելով՝ դուք տեսնո՞ւմ էիք, որ դա յետոյ այսպիսի մեծ ճանաչման է Հասնելու: Լինեմ անկեղծ: Ես Հասկանում էի, որ ե՛ւ ճակատամարտը, ե՛ւ այստեղ մեր ժողովրդի տարած յաղթանակին արժանի կառուցուող յուշարձանը մեծ նշանակութիւն ունեն: Բայց որ այսպէս պիտի խոր պիտի, մեր ժողովրդի կենսութեամբ այսպիսի մեծ Հետք պիտի թողնի, — ես չեմ ուզում ետին թուով մարգարէ երեւալ: Մարդու կենսութեամբ կան աստեղային ժամեր: Եթէ տրամադրուում ես մի գործ անել, ոչինչ այլեւս թեղ չի կարող նրանից վանել: Ակնթարթը դառնում է յաւերժութիւն: Ես սպրեւ եմ այդ ակնթարթը: Արագութեամբ, թափով առաջ էինք գնում: Յիշեմ Մարտիրոս Սարեանին: Ասաց՝ որոշ տեղեր, օրինակ, քանդակների Հարցում, շտապել էք, արծիւների պոփոնները փոքր են, բայց Հիացած էր եւ բացականչեց. «Ապրէք, երկար ապրէք, ես Իրաֆայէլ Իսրայէլեանի ճակատը պիտի Համբուրեմ, օրհնեմ, շատ մեծ գործ էք արել»: Ոգին սա է: Հայոց ոգին:

— Մեր ոգու մասին ի՞նչ կ'ասէք: Ծանապարհին մենք ասում էինք Անդրանիկ, Յովնան Խութեցի, Մերոք փաշա, Փիղայիներ...:


— Եղեռնի օրը, մեր ժողովրդի ապրած մեծ ողբերգութեան օրը միլիոնաւոր գոհորի յիշատակը յարգելու Համար մենք պիտի սգանք, յիշենք: Մեր ժողովրդին Միծեռնակաբերդ էր պէտք: Մեր ազգի ոգին, կենսունակութիւնը պահպանելու Համար, այսօրուայ, վաղուայ սերնդին, մեզ բոլորին Սարգարապետ էր պէտք: Այն վեհացնում է մեր ոգին, ազգային արժանապատուութիւն է ծնում, զարգացնում է այդ զգացմունքը, որ մենք Հպարտ ապրենք, գլուխներս բարձր ապրենք: Մենք պէտք է Հպարտանանք մեր Խութեցի Յովնանով, մեր Հերոսական էպոսով, Սասունցի Դաւթով, մեր Փիղայիներով, Գէորգ Զաւուչով, Անդրանիկով, Աղբիւր Աերոքով, Սեւբարեցի Սաքոյով... Ես ուզում եմ, որ Հերոսական այդ պատմութեան միջնորդութեամբ ծնունդ, մեծանան մեր ժառանգները: Հերոսական ոգին պիտի անբաժան լինի ամէն մի

ծնուողից, Հրաշայի կառոյց է, ոչ մի խօսք: Բայց ես գտնում եմ, որ այստեղ պէտք է բազմաթիւ միջոցառումներ անցկացուեն: Երբ սկսուեց յուշահամալիրի կառուցումը, շատերն այն կարծիքին էին, որ պէտք չէ այստեղ կանաչապատել, այգիներ հիմնել, որպէսզի ժամանակի դաժանութիւնն աւելի ընդգծուի, իմացուի, թէ ինչ վայրում է եղել ճակատամարտը: Ես այն կարծիքը յայտնեցի, որ այստեղ պիտի հանգստի լաւ զօտի ստեղծել: Թող երեւայ, որ մեր նախնիների թափած արիւնն արգասաբեր է եղել, պտուղ է տուել: Հիմա պատկերացրէք, որ չկան այս պողատու ծառերը, այս վարդաստանը, այս ծաղկանոցը: Յետո՞յ... Սրանք խորհրդանշում են հենց կեանքը: Այստեղ ե՛ւ պիտի ռեստորան լինէր, ե՛ւ հացատուն, հայոց օջախ, պիտի լինէր թանգարան, հենց սիրահարները, երիտասարդները պիտի այցելեն այստեղ, պիտի լուռ այստեղ երդում տան՝ հաւատարիմ մնալ իրար, մայր հողին, հայոց հին ու ազնիւ ազգին: Մինք ատում ենք՝ օգնել մարդուն: Սա մի այնպիսի տեղ է դարձել, այնպիսի վեհ խորհուրդ է կրում իր մէջ, որ օգնում է մեր ժողովրդին աւելի լիարժէք ապրելու: Մեր պետականութիւնը վերականգնուել է այստեղ. մեծ սրբատեղի, ուխտատեղի պիտի դարձնենք այս վայրը: Հրաշայ Գոշարն այսպէս էր ասում. «Աւարայրին նախորդող դէպքերն ըստ երեւոյթի չէին սպասուում մեր ազգի Փրփրկական գոյութեանը, իսկ Սարգարապատում մենք կարող էինք անհետանալ պատմութեան թատերաբեմից: Տեսնեա երբ է զայլու այն ժամանակը, երբ այս ճակատամարտն էլ իր Եղիշէն կ'ունենայ, քարէ մատնան կը նուիրի ապագայ սերունդներին»: Այս յուշարձանի կառուցման մտայղացման հեղինակը Հրաշայ Գոշարն է: Թող անհամեստ չթըլուայ, եթէ ասեմ՝ մեր արած գործը յանդգնութիւն էր: Միշտ պիտի հաշուի առնել ապրած ժամանակը, թէ ի՞նչ մտայնութիւն է իշխում:

Դարբինեանի Հետ մենք երկար զրուցեցինք: Տեսած, զգացած եւ ասելիքի խորութիւն ունեցող մարդ է: Ում յիշում է, խօսքի արանքում ուրախ-տխուր մի բան է պատմում: «Բարաջանեանը կանչեց դուռուկահարին, ասաց՝ լաւ ես նուազում, ապրես: Հիմա մի դարդիման բան ականջումս ածա...: Ասելու Հետ ականջը պահեց նուազի վրայ, քիչ յետոյ աչքերը խոնաւացան ու ինքն էլ չհասկացաւ, թէ ձեռքն ինչպէս տարաւ սրտին: Դուռուկի նուազը քո սրտի մէջ քո ժողովրդի սիրտն է տրոփել տալիս»: Կամ. «Մարտիրոս Սարեանին ասարանք Արաքսի ափ: Երկար ու լուռ նայեց մեր մայր գետի ջրերին, Իզդիրի կողմ նայեց, Հայոց Պարը դիտեց, Կողքայ ելան սեխ՝ բը... Ապա երեխայի նման խոսվեց, որ իրեն չենք տանում պակերի երկիր»: «Ռաֆայէլ Իսրայէլեանն ասում էր՝ Զուարթնոցից յետոյ սա երկրորդ դէպքն է, երբ վարպետներն այսքան նրբին գործ են անում: Քարը քարին որ դրւում է, մազը արանքով չպէտք է անցնի: Դա է իսկական հայկական վարպետութիւնը, ճարտարապետութիւնը»:

Ճախրում էին արդէն Սարգարապատի արծիւները, զնդում էին արդէն Սարգարապատի զանգերը դեռ կառոյցի սկզբում եւ... Հայոց շէնքում սկսեցին կառուցել յուշարձաններ՝ ի պատիւ գոհուածների: Ի՞նչ վարպետներ էին տքնում այստեղ: Իրենց հաց ու ջրով: Եփնականները մասնակցել են Սարգարապատի ճակատամարտին, շինականները մասնակցում էին յուշահամալիրի կառուցմանը: Ճարտարապետի նախագիծը, դեռ շուռնչ չառած, դառնում էր կեանք: Ոնց որ միասին աշխատէին, Զան-Փիղայից, Նոր Ամասիայից, բոլոր գիւղերից էլ զայլս էին: Ճարտարապետը նայում էր քար-գործ վարպետներին ու հրճուում էր: Մի քարգործ վարպետ կար՝ Գաւնիկ Ամիրջանեան: Բազմաթիւ մտայղացումների է նա շուռնչ տուել: Նրան կարելի





Լուսանկար՝ վարուժան Սէքեանի  
digitised by A.R.A.R.@

է կոչել նաեւ Սարգարապատի զաւակ: Նաեւ ինքնուրոյն գործերի հեղինակ: Ժարտարապետը շատ էր յարգում քարի հետ լուռ զրուցող այդ վարպետին: Նրա երաշխաւորութեամբ քարգործ վարպետն ընդունուեց ճարտարապետների միութեան շարքերը: «Ամենաուժեղ քարգործը մնում է Սամսոն Եշոյեանը: Նայէք արծուաքանդակները, — Դարբինեանը ձեռքը պարզում է: — Ուժեղ այր էր Սամսոնը: Մեր հինգ մատը նրա մի մատի հաստութիւնն էլ չունէր: Տորք Անգեղ էր: Սասունցի էր: Ապրում էր Նոր Արմաւիրում: Ութ զաւակ ունի: Ձորս տղայ, չորս աղջիկ: Իր արկաւոր-տղերքի հետ առաւօտից իրիկուն իր քարգործին էր, արծուաքանին: Մի օր եկայ տեսայ, որ արծուի դիւաքանդակը, ահաւելի ծանրութիւն, գրկած բարձրացնում է: Մօտեցայ, բարեւ տուի: Բարեւի ժպիտով պատասխանեց: Ասացի՝ վարպետ, ասել եմ արդէն, քեզ կրկնակի աշխատաժարձ կը տան: Նեղացաւ այնպէս, որ իր հետ ձեռքի արծուադուռն էլ մթնեց: Ոնց որ արծիւը թիւը փռեց ու ստուերեց նրա դէմքը: Նայեց լուռ ու՛ ընկեր Դարբինեան, էս ազնիւ գործի համար հիշէ ինձ փող պիտի տան, ապա հենց հիմա արծուադուռի հետ ես ներքեւ կը նետուեմ: Իսկ մենք սաւառնելու համար ենք ծնուել: Ազգիս համար եմ գործ անում, իմ պապերի եւ եկող սերունդների...: Ապա շարունակեց գործը: Ամէն անգամ, երբ դիտում եմ այս արծուաքանդակները, ինձ այնպէս է թւում, թէ վարպետ Սամսոնի հոգին եկել-ծուարել է այստեղ: Նորապատի վարպետներին չեմ մոռանում: Զեմ մոռանում եւ ոչ մէկին՝ նրան, որ մի բաժակ թանջուր է տուել քարգործ վարպետին, նրան, որի լեզուն բերանում չորացել, բայց ձայն չի հանել, իր գործն է շարունակել: Անշահախնդիր, դիչըր-ցերեկ աշխատում էին: Հիմա էլ մտքով նրանց հետ եմ: Մի բան էլ պատմեմ: Սարգարապատը կառուցելու ժամանակ ես վարպետներից, պարզ գեղջուկներից երգեր էի լսում, որ անծանօթ էին: Մեր ժողովրդին պահած երգեր էին, օրօրոցի մօտ, մարտադաշտում ծնուած երգեր: Այդ երգերը խրոխտ թնդացել են, մեզ հետ մարտնչել, նաեւ վիրաւորուել, մարդկանց նման մեղադրուել ու մոռացութեան մատնուել: Յուշահամալիրը կառուցելու ժամանակ կամաց-կամաց արթնանում էին այդ երգերը, որ հիմա ամէն տան ու ամէն սրտում էլ հնչում են: Ազգը միշտ պիտի իրար դիւի հաւաքուի, բայց ոչ միայն տեղը նեղ ժամանակ, այլ միշտ, որպէսզի... տեղը բոլորովին չնեղուի...: Երգը ազգ է պահում: Ազգը պիտի իր երգը պահէ»:

Այս կառույցը ո՛չ միայն խորհրդանշում է 1818 թուականին Սարգարապատի ճակատամարտում մեր ժողովրդի տարած յաղթանակը, այլեւ բարձրացնում է մեր ժողովրդի ոգին, մենք ազգային զարթոնք ապրեցինք: Հենց այս կառույցով հիմք դրուեց Արցախեան շարժմանը, ոգեւորեց մեր ժողովրդին:

Սարգարապատ: Յուշահամալիր: Միայն վաթսուն հեկտար պտղատու այգի: Եւ թուղունների դալալ, գեղգեղանք:

Գրիգոր Հասրաթեան (ճարտարապետ).— Մեր ազգային մշակոյթի արժէքներից՝ գանձերից մէկը Սարգարապատի յուշահամալիրն է, մեր ազգային ճարտարապետութեան դազաթններից: Այն նախագծուեց այնպիսի մի հազուադէպ ճարտարապետի կողմից, որի տաղանդը փայլատակեց հայրենասիրութեամբ, ժողովրդանուէր գործով: Այսօր, եթէ մենք իրաւացիօրէն հպարտանում ենք մեր Սարգարապատի յուշահամալիրով, մեծարում ենք նրա նախագծող-ստեղծող ճարտարապետին, ժողովրդին, մենք պէտք է ոչ պակաս բարձրացնենք նաեւ դադափարակիր մարդկանց, նրանց, ովքեր ինքնազոհողութեան էին պատրաստ: Դրանցից է Վլադիմիր Դարբինեանը: Այլ հարց է, որ

Թէկուզ դատան ժամանակներում գրողը կարողանում է գրել, ճարտարապետը՝ նախագծել, իսկ որքան կարեւոր է, որ նրանց մտայնացումը մարմնաւորուի, Եւ եթէ այսօր Մարդարապատի յուշահամալիրը դարձրել ենք սրբավայր, եթէ այսօր մեր պետականութեան վերականգնման օրը, Երազսը պաշտօնական հրամանագրի արժանացան, ուրեմն մտածենք, որ դա միանգամից չարուեց: Մարդարապատի յուշահամալիրի կառուցումն առաջին աստիճաններից մէկն է: Դարբինեանն ամէն ինչ արել է սիրով, նուիրումով: Ու ես ցաւով եմ ընդունում, որ երբ մի խումբ մարդկանց արժանիօրէն շնորհուեցին միութենական մրցանակներ, նրանց ցուցակից հեշտ ձեռքով հանուեց Դարբինեանի անունը: Նրա անուն, անձի շուրջ սաղրանքներ էին հիւսուում: Ինչի՞ համար: Որ համարձակ էր, անվա՞խ: Ունենալով Բաղրամեանի, Քոչինեանի հովանին՝ ճակատամարտ մղեց եւ յաղթեց: Եթէ երկնչէր, չկառուցէր, գուցէ եւ լուսթիւնն աւելի երկար տեւէր: Այս տարուայ Մայիսի 28ի լոյս 28ի գիշերը Քեւ նոյնպէս տեսայ, թէ ժողովուրդն ինչպէս էր դիմաւորում իր զաւակներին՝ Ղարաբաղ կոմիտէի անդամներին: Այդ պահին ես մտածում էի Մարդարապատի ճակատամարտի ու մեծ սխրանք գործած նրա մասնակիցների, ճակատամարտին նուիրուած յուշահամալիրի, նրա նախաձեռնողներին ու կառուցողներին մասին: Դա էլ ճակատամարտ էր:

Մենք ողորմի, հազար ողորմի ենք ասում բոլոր նրանց, ում թանկ արեան գնով փրկուեց մեր վերջին հողակտորը, վերականգնուեց մեր պետականութիւնը: Եթէ մեր սուրբ հողը փորձում են խլել մեր ձեռքից՝ մենք կուեւի գիտենք ու յաղթել: Ապրել գիտենք ու յիշել:

Հազար ողորմի բոլոր նրանց, ում արեան կաթիլներով սնուեց այս անապատը, ովքեր այդ պահին զգացին մեր ժողովուրդի զխիւն կախուած ահարկու վտանգը, համարձքուեցին, ուժ դարձան եւ փրկեցին մեր ժողովըրդին, նրա բիրտազարամեայ Յիշողութիւնը, որ նաեւ Յիշողութիւնն է այս փոքր ու մեծ մուրակի:

Հազար երանի նրանց, ում քրտինքով անապատը այգետան դարձաւ, ով անապատին մասկան ճիչ, ջուր ու պողպատե ծառ նուիրեց:

Հայոց Արեւին՝ փառք: Հայոց Արեւի տակ ծնուողներին՝ հազար ասրուայ կեանք ու արեւ:

Քարի վարպետներին ու հենց հայոց քարին՝ փառք, որ արժանի յիշատակ են դարձել:

Իրենց ջուրն առած, իրենց հացն առած, շատերն անհաց, անջուր մտել են մահուան բերանը: Իրենց կեանքը գոհելով՝ Հայոց մեծ կեանքն են փրկել:

Ճակատամարտից կէս դար շանցած՝ իրենց հացն առած, իրենց ջուրն առած այս դաշտն են մտել ճակատամարտիցիւնների յանտրղնիքը՝ կառուցելու այս յուշափունջը:

Բոլորին փառք:

Հողը՝ Ազգը:

Հողը՝ Լեզուն:

Հողը՝ մեր մեծ գերդաստանից փրկուած մեր խարախահեր պատանակը, որ դեռ գալու է:

Բոլորին՝ փառք: Եւ քո փառքը շատ, գեներալ Դարբինեան, որ քո խլեմ գինուորը մնացիր, մեր գոյութեան այս զօրեղ սրբատան կառուցմանը նուիրեցիր քո աւելնը, եռանդը, մեր հպոսից առած քո քաժին խենթութիւնը զուհեցիր:

Մարզն իր տունը, Հողը, պատիւը չի պաշտպանում... կոչումի, շքանշանի կամ մի արտանց զապրեանի արժանանալու համար: Կոչում ու շքանշան

կարելի է ստանալ անգամ օտար բանականներում կոուելով, օտարներին ծառայելով: Մարդարապատն եկաւ ասելու, որ վաղուց ժամանակն է ազգայնաբանութեան, նախ մենք մեզ ծառայենք, հենց առաջ մեր ծառքը ջրենք, նոր... Մարդարապատի յուշահամալիրը կառուցելու ժամանակ բոլորը հրաշալիի զինուոր էին: Մարդ ծնուած օրից է ստանում իր կոչումը՝ մարդ մնալու վե՛հ ու ազնիւ կոչումը: Այս մօտիկ, բայց հեռու թուացող տարիներին, երբ «չնորհ» արեցին ու շնորհազրկեցին քեզ, դու էլ շնորհ արեցիր՝ մէջը կրկին արթնացաւ արարողը: Գանկացար խօսել հողի հետ: Նախ հեռացար ճահճի մզլաւոտից: Պետական հիմնարկում մնալով որպէս հպարտ աշխատող, մտակալ դիւղի մի աւեր տեղ տուն սարքեցիր: Տուն սարքեցիր եւ ասացիր՝ տունը հայրենիք է, մենք ինչքան չսարքած տներ ունենք: Զուր տուեցիր հողին, ծառ ու ծաղկով դրսիս ու եղիմ դարձրիր ու հեռու՛ւ-հեռուից դուար կեանքից վաղուց հեռացած պապիկ հայեացքը եւ ասացիր՝ ես իմ այգեպան պապին եմ քաշել: Մեղուափնթակներ պահեցիր ու ասացիր՝ ես մեղուապահ պապս եմ: Քո մեղուաբանին մնացիր, քո ծառ ու հողի ազնիւ բանին: Ամէն քար շրջիլիս, ծառ ու ծաղկին ջուր տալիս Մարդարապատի ոգին էր արթնանում: Նայում էիր մեղուներին ու մտածում՝ մարդը մեղուի նման պէտք է լինի: Հենց մեղու: Վաթուակն շեմին գտնուող մարդը ինքնավայել ճանապարհ է անցել: Ներքին ծառայութեան զենքերալը ուրախ է, որ զինուորն է Մարդարապատի, մասնակիցը քո ժողովրդի մղած-լմղած բոլոր զոյամարտերի: Դժուար է նաեւ խաղաղ օրերի զինուորների բանը: Դրա համար Հոկտեմբերեանի շրջանում սիրով են տալիս անուշ, պապիկները պատմում են թոռներին, որ կար ու հիմա էլ կայ այսպիսի մի մարդ: Եւ կենաց բաժակներ են բարձրացնում: Կեանքը շարունակում է: Ոգին անմահ է: Հոկտեմբերեանի շրջանում հիմա շատերն են դարձել մերօրեայ պատմիչ, որոնք Յիշողութեան արժար դատին են յանձնում մեր տուայտանքները, իղձերը, մեր երազանքները: Մի ազնիւ պատմիչ՝ Մարգիս Պետրոսեան, ապուպապերի ծննդավայրը՝ Սասուն, Տէր-Քաջերի տնից, ինձ տարաւ նոր Արմաւիր, որ տեսնեմ Սամսոն Խոջեանի ձեռքով կառուցուած տունը: Տան քեւին՝ արծիւ: Այս բազալտը ինքն է իր ձեռքերով տան քար դարձրել, պատ դարձրել: Քարի մէջ վարպետի ուժն է պահուած: Տան հետ կը գնա՛յ... Նրա քանդակները: Ընկուզենու փայտին իրեն է քանդակել: Բայց քանդակները... ութ գաւակներն են, տասնեակ թուները, թոռների նման մեծացող այգին:



Ես գրելու եմ խաղաղ օրերի զինուորների մասին, որոնք 1968ին այստեղ՝ Մարդարապատում, պարզեցին մեր Նոստրոնը՝ կառուցելով այս յուշահամալիրը: Հուրհեր քարից կայծեր էին թռչում, գոյներ, երգեր: Դժուար ժամանակներ էին: Ամէն մէկը մի Դանիէլ Բեկ-Փիրումեան էր, մի Արամ Մանուկեան, մի Անանուհ, մի Հրաչեայ Քոչար, մի Ռաֆայէլ Իսրայէլեան, մի Վլադիմիր Դարբինեան: Թէկուզ խորքից չիմանան էլ, թէ ովքեր են նրանք: Ոգին արթնացել էր:

Ազգը պաշտում է իր ոգեկոչող գաւակներին:

Դարբինեանը մնաց որպէս իր գործին արժանի Ֆիդայի:

— Երբը յիշում էք. «Մեմէ Էաջ տոնի գաւակներ եմ, չեմէ վախում...», — ասաց Դարբինեանը, — կեանք է, կայ եւ գործում է նաեւ շարք: Ընկճուել պէտք է, այլ մնալ ազնիւ, տղամարդ, մնալ հօր տղայ, տան ու ծննդավայրի անունը բարձր պահող: Մենք բոլորս ազգովի Մարդարապատի ծնունդներ ենք... Միշտ լինել ժողովրդի հետ, լսել նրա ձայնը:

Ներողութիւն ինդրելով ընթերցողից, շտապեմ առել, որ այս ակնարկի առաջին մասը լոյս տեսնելուց յետոյ բազմաթիւ հեռախօսազանգեր հնչեցին, շատ մարդիկ եկան խմբագրութիւն: Նրանք շատ մանրամասներ են յիշում, անձամբ ճանաչել են տասնեակ կառուցողներ, իրենց մօտ ունեն թանկագին մասուէքներ, լուսանկարներ: Ճարտարապետ Վարազդատ Գարութիւնեանը ասում է, որ ինքը վկան ու ակնատեսն է այն սպրումների, որ ունէր Ռաֆայէ Իսրայէլեանը նախագծման-կառուցման ժամանակ: Ուսուցիչ, լրագրող Մարգարիտ Դարպասեանը հեռախօսահամարներ է տալիս եւ խնդրում, որ հանդիպեմ այն ակնու մարդկանց, որոնք կառուցման ժամանակ քուն ու դադար չունէին: Ինքը նրանց այնտեղ է հանդիպել ու չի կորցրել տարիների մտերմութիւնը: Բժիշկ Արամ Մկրտչեանն ասում է, որ ինքը շինարարութեան մասնակիցներին արգելել էր հիւանդանալ, որովհետեւ... Ժամանակ չկար: Այսպէս՝ շատերը: Իսկ ահա թէ ի՞նչ է ասում իմ ուսուցիչը՝ պատմական գիտութիւններ թեկնածու, գեղապետ Վլադիմիր Սեւեանը.

— Ծակատամարտի շատ մասնակիցներ չեմ, հենց յաղթողներ չեմ, էս հողը, մեր պետականութիւնը, մեր պատիւը փրկողներ չեմ դաժան չե՞նք վարուել: Դաժան չե՞նք վարուել զէնքի չեմ պսակուած ֆիդայիների չեմ: Խոստովանութիւնը նոյնպէս հրամայական պահանջ է: Յուշահամալիրի սքանչելի կառույցը նոյնպէս ճակատամարտ է: Թող դատեն... յաղթողներին: Հիմա մենք կարող ենք միայն զարմանալ, թէ լճացման տարիներին ինչպէս կառուցուեց այս յուշահամալիրը: Կարելի է ասել, որ Դարբինեանը դրեց Հայոց պատմութեան իր բաժին է՛լը: Գրեց, յաղթեց եւ ոչինչ, որ յետոյ... պատժուեց: Մեր ժողովուրդը երախտապարտ է այն մարդկանց, որոնք Դարբինեանի չեմ միասին, Իսրայէլեանի չեմ միասին, բրեժնեւեան փակ տարիներին կարողացան կերտել այս բաց կառույցը: Փառք նրանց: Մենք երախտապարտ ենք բոլոր ազնիւ մտածող, միշտ ինքնայրման պատրաստ մարտիկներին...

Մեզնից եւ ոչ մէկը վաղուց չի զարմանում, թէ դրօսաշրջիկներ ուղերթերում մեր պատմամշակութային հազարամեայ յուշարձանների չեմ ինչո՞ւ է տեղ գտնուում նաեւ Սարգարապատը: Այն գուցէ աւելի հին է...

Փառք այստեղ յաղթողներին, փառք կառուցողներին, փառք յիշողներին, եկող-տեսնողներին եւ մոլորակի տարբեր անկիւններում մեր մասին շիտակ-չիտակ խօսողներին:

Միքայէլ Վարդանեանը՝ կուսակցութեան Հոկտեմբերիակի շրջկոմի առաջին քարտուղարը, ասաց.

— Յաւերժ երախտապարտ մնանք բոլոր նրանց, ովքեր կռուցին ու յաղթեցին Սարգարապատում: Մեր ժողովրդի կամքը յաղթեց, յաղթեց համախառնութիւնը: Երախտապարտ ենք նրանց, որ կառուցեցին այս սքանչելի յուշահամալիրը: Ե՛ւ ճակատամարտում մարտնչողների, ե՛ւ յուշահամալիրը կերտողների շունչը, ոգին զգում ենք ամէն պահ: Սարգարապատը այսօր գարձել է հայրենասիրութեան, սուրբ գործերի, նուիրումի, ազգի ապագային վերաբերող մտորումների վայր: Ոգեշնչման անսպառ աղբիւր է, աղբիւր, որ բխում է ժողովրդի մտքից, սրտից, հոգուց: Մենք բազմաթիւ ծրագրեր ունենք. Սարգարապատեան յայտնի դասը պէտք է լաւ իւրացնի յրջանի զպրոցների ամէն մի յրջանաւարտ. պատանին կեանք կը մտնի Սարգարապատով: Այստեղ կ'անցկացնենք Հարսանիքներ, աշխատանքի, պատերազմի վեհաբաններին կը մեծարենք այստեղ: Ջինուորական ծառայութեան մեկնող պատանիները երգում կը տան զանգերի մօտ, արծիւների մօտ: Ամէն մէկն այստեղ իր արծիւն ու զանգը կ'ունենայ: կը շարունակենք անցկացնել բերքի տօ-

ներ: Անապատում կռուել են մեր հայրերը, յաղթել, մեր ընդհատուած պետականութիւնն է վերականգնուել, այստեղ մենք էլ պարտաւոր ենք հայրենասիրութեան ոգին միշտ արթուն պահել մատաղ սերնդի, երիտասարդութեան մէջ: Հենց լաւ աշխատանքով, ճշմարիտ խօսքով: Աշխարհի տարբեր վայրերից են գալիս Սարգարապատ, մեր շրջանի դուռը միշտ բաց է նրանց առջև: Սարգարապատը Հայոց մեծ տունն է, Հայոց հին ու նոր պատմութեան ու պետականութեան ոսկէ օղակը: Այն երեւում է ո՛չ միայն Հայոց աշխարհի բոլոր կողմերից, այլև՝ մոլորակի այն ծագերից, որտեղ հայ է սպրում: Փրկուած մեր հողը ողջնչման աղբիւր է, բայց մենք որոշել ենք համազգային շարժման մասնակիցներին առաջարկել մի օր այցելել մեր շրջանը: Աշխատեն դաշտերում, այգիներում, իսկ երեկոյան հենց Սարգարապատում միտինգ անցկացնեն: Մեր ազգային բոլոր հարցերը սկսւում են այստեղից: Հենց Սարգարապատից է սկսւում Արցախը: Մենք օրերս կը մեկնենք Արցախ: Առանձին շինարարական բրիգադ ենք ստեղծել, այստեղ 180 բնակարան պիտի կառուցենք, կահաւորենք, նորաբաց տանն Արարատեան դաշտի փրփրուն գինու բաժակները մենք պիտի բարձրացնենք եւ շնորհակարանք նրանց՝ բնակարանամուտի առթիւ, հայրենի հողի վրայ յաւերժ ապրելու մաղթանքով: Հոկտեմբերեանը պարտք է իր Արցախին, Արցախը Սարգարապատի բաց թեւն է, այն լպիտի ծաղուի. հպարտ պիտի ճախրի Հայոց բազին: Մեզ մօտ էլ ունենք երկրաշարժից տուժածներ, փախըստականներ: Տներ՝ բոլորի համար, Սարգարապատի ոգի՝ բոլորին:

\* \* \*

Իմ ներում արժիւններ են սաւառնում, զանգեր են զօղանջում:

Պոնարհւում եմ բոլոր նրանց անթառամ յիշատակի առջև, ովքեր գինուր եղան հայրենեաց սուրբ գործի համար, Մայիս ամսով, հազարերանգ ծաղիկներից հիւսեցին մեր Եռագոյնը: Փրկեցին մեր պատմութիւնն ու պետականութիւնը:

Խաղաղ ճակատամարտեր չեն լինում: Գլխաւորը ոգին է: Ժողովուրդը յաղթեց: Ժողովուրդը կառուցեց: Ժողովուրդն այսօր հպարտ է:

Մարդը, ժամանակը, ժողովուրդը եւ Հայոց Սարգարապատը, վերջին հողակտոր, որ չթողեց լռի մեր պատմութիւնը, աւարտուի մեր ակօսը: Մեր կաթնծիրը: Մեր մեծ սէրը:

Մեր Սարգարապատը՝ մեր գոյութեան զօրեղ տունն այս սրբազան («Հայրենիքի» անլմ», 1989, թիւ 27, 28):

ՀՐԱԶԵԱՅ ՄԱՔԵՒՈՍԵԱՆ

ՄԱՐՈՒՇ

# ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

1920ական թուականներու բանաստեղծական կարեւորագոյն հանդէսը՝ *New verse* (1933ին, *Կրիկտոնի խմբագրութեամբ*), ցոյց կու տայ ժամանակաշրջանին բանաստեղծական դիմագիծը: Քսանական թուականի «գծուար» բանաստեղծութենէն ետք, յաջորդ տասնամեակի բանաստեղծութիւնը կը փորձէր հասնիլ լայն խաւերուն, բացատրել կամ բան մը սորվեցնել անոնց: Օգտագործելով 20ական թուականներուն լքուած շարահիւսական աւանդական ձեւերն ու լանգէրը (*Տնչեակը*, *Տերտական զուգեակը*, *վեցեակը*, *էւպլն*), *անոնք*, *այսինքն*՝ երբորդ տասնամեակին հրապարակ իշած երիտասարդ բանաստեղծները կը յուսային, որ իրենց խօսքը անմիջականօրէն կը հասնի ամբողջին, որովհետեւ իրենց է՛ւ նիւթը, է՛ւ բանաստեղծութեան արտաքին ձեւը քաղուած են նոյն այդ ամբողջին: Այս առնչութեամբ *Լուիս Մէքնիս կ'ըսէ*.

«...այս նոր բանաստեղծներուն համար Թի. էս. Իյիլքի «տարբերակումներն ու բարդութիւնները» աւարտած են. իրենց կը մնան պարզութիւնն ու անմիջականութիւնը. ուրեմն՝ փոխանակ տպաւորապաշտ մօտեցումով Ուրկայացնելու արդի կեանքը, անոնք իրականութիւնը կը պարզացնէին, կը մասնատէին հարցերը եւ կը վերածէին այնպիսի՝ տեսութիւններու, որոնց առընչութեամբ մարդիկ դիւրութեամբ կրնան կողմնորոշուիլ. ասիկա բնաւ չի նշանակեր սակայն, որ անոնցը սեւ ու ճերմակի կամ գայլ եւ ոչխարի պատկերն է»:

Այդ շրջանի ընկերային բանաստեղծութեան մասին *Սթեֆըն Սփենտորը կ'ըսէ*.

«...անոնք թէն *դպրոց* մը ըլլալու տպաւորութիւն կը ձգեն, սակայն անոնցը գրական հասկացողութեամբ շարժում չէ. անոնք կը փորձեն արդիական ըլլալ, իրենց Ուիթերը կը ֆաղեն դարուն մեքենականութենէն եւ զիրենք շրջապատող ընկերային երեւոյթներէն: Անոնց մօտ զգալի է ընկերային ասիւտերէն ծնած տագնապը եւ այդ ասիւտերուն դարմանը ձախակողմեան ֆայաֆականութեան մէջ փնտոելու փորձութիւնը: Իրենց աւանդը, թէն մեծ համեմատութեամբ ձախակողմեան, կը ցոյցանէ ազատախոս մարդը, որ կիսուած է իր անձնական զարգացումին եւ ընկերային խզմտամբին միջեւ»:

**ՈՒՒՆԱԹԸՆ Վ. ՕՏԸՆ**  
(1907 - 1973)

Երեսնական թուականներու ամենէն ինքնուրոյն բանաստեղծական մտածողութիւնը եւ ստեղծագործութիւնը կը պատկանի Ուինսթըն Հիւկ Օտընի, որուն նուիրակ ամենէն անձնական քերթուածներուն մէջ կարելի է գտնել երեսնական թուականներու քաղաքական եւ ընկերային գրոշմը: Ըստ Օտընի, բանաստեղծ մը ձեւով մը պէտք է ըլլայ իր ժամանակաշրջանի թղթակից-լրագրողը:

Օտընի ամբողջ գործին մէջ կարելի է գտնել զանազան ազդեցութիւններ, ինչպէս օրինակ՝ արձագանգները Լուիս Մէքնիսի, Սթեֆըն Սփենտըրի, Սեսիլ Տէյ Լուիսի, որոնք համալսարանի օրերէն արդէն նշանաւոր խմբակ մըն էին եւ որոնց առանցքը Օտընը կը մնար. աւելի ուշ կը զգացի Յրէջտի եւ Թի. Էս. Իլլըթի ազդեցութիւնը: Հակառակ այս ազդեցութիւններուն, բանաստեղծը կրցած է իր անձնական գրոշմը գնել իր գործին վրայ: Այդ շրջանին կը տիրէր ա՛յն կարծիքը, որ Թի. Էս. Իլլըթէն ետք Օտըն կրնայ ըլլալ անգլիագիր մեծագոյն բանաստեղծը: Սակայն եկող տարիներն ու գործերը չարդարացուցին այս կարծիքը: Մինչեւ 1939, այսինքն՝ մինչեւ Օտընի Ամերիկա մեկնումը, իր գործերը կը ներկայացնեն շրջանին իրավիճակը, լայն տարածում գտած անգործութիւնը, Համաշխարհային Երկրորդ պատերազմը, Ուոլ Սթրիթի 1929ի անկումը, Հիթլեր-Մուսոլինի իրողութիւնը եւ Սպանիոյ քաղաքացիական պատերազմը: Այս շրջանի գործերը, սակայն, խոցելի են ժամանակաւոր ըլլալու իրողութեամբ, բան մը՝ որմէ զերծ է Իլլըթի բանաստեղծութիւնը: Իսկ երկրորդ շրջանի գործերը, երբ բանաստեղծը կայուն ընկերութեան մը մէջ կ'ապրէր, մակերեսայնութենէ կը տառապին: Գրուած շրջանին, գործերը հաղորդական եւ սրտամօտ էին. սակայն ժամանակի հեռաւորութենէն դատելով՝ խորքի ծանծաղութիւնը ակներեւ կը դառնայ:

Ա. Ալփարէզ ըսած է. «...Օտընի գործին կորիզը... ջղային պարապուրիսն մըն է միայն»:

Սակայն կարելի չէ չիօսիլ իր շատութիւններուն մասին, որոնք գինք կը զարձնեն եթէ ոչ մեծ բանաստեղծ մը, առնուազն մէկը, որ անպայմանօրէն կը չիշուի անգլիական բանաստեղծութեան ժամանակագրութեան մէջ՝ իբրեւ կարկառուն դէմք:

Օտըն մինչեւ վերջ ալ մնաց փորձարկումներու եւ նորութիւններու բանաստեղծը: Կիրարկեց հնչեակը, գեղօնը, սիրերգը, դիւցազներգութիւնը, եւայլն: Իր կարգ մը գործերը մինչեւ օրս նիւթ կը հալթալթեն զրական բանավէճերու, ինչպէս՝ «Օրիորդ Յի» բանաստեղծութիւնը, որ 25 համարներէ բաղկացած գեղօն մըն է, ուր կը պատմուի օրիորդ Յիի մասին, որ միւսակ ապրած է, օգտակար եղած է իր համայնքին եւ յետոյ մահացած է՝ քաղցկեղի հետեւանքով: Քննադատները մինչեւ այսօր չեն



կրցած վերջնականորեն եզրակացնել, թե կարելի՞ է այսքան ողբերգական նիւթ մը մշակել այսպիսի՝ թեթևութեամբ: Կամ՝ կարելի՞ է ընդունել ամերիկացի սեւամորթ տիպարը՝ Refuge Blues գործին մէջ, իբրեւ արտայայտիչ գերման հրեաներու հարցին:

1939ին, իր բանաստեղծ բարեկամին՝ Քրիստոֆըր Իշերուուտի հետ Օտրն կը մեկնի Միացեալ Նահանգներ եւ 1946ին ամերիկեան հպատակութիւն կը ստանայ:

Ամերիկայի մէջ, Օտրնի բանաստեղծութիւնը նուազ չափով կ'անդրազաննայ ընկերային հարցերու եւ իր նիւթերը կը հիստօին «ես»ին շուրջ, որ կրնայ ընդհանրապէս մարդ ըլլալ: Այս շրջանին կը փորձէ ամերիկեան քերթողութեան ոճը, սակայն Օտրն յտակօրէն կը մնայ անզլիացի բանաստեղծ:

1941ին կը հրատարակուի Օտրնի New Year Letter անուն հատորը, որ կը նշէ իր նոր շրջանին սկիզբը, ապա՝ The Shield of Achilles (1956), Homage to Clio (1960) եւ About the House (1967): Վերջին շրջանին իր ամենէն նշանաւոր գործը Prologue at Sixtyն է:

1971ին լոյս տեսած A Certain World գիրքը յաւազունս կը ներկայացնէ հասունութեան հասած Օտրնը, որ իր նախասիրած հատուածները խմբեր էր այս գիրքին մէջ, ուր զգայի է թափանցիկ, ակներեւ անհաւասարակը՝ առօրին մը. օրինակ՝ Hell («Դժոխք») խորագրին տակ ընթերցողին կը հրամայուին բազմաթիւ էջեր, մինչդեռ զրախտը կը ներկայանայ մէկ քերթուած՝ Earthly Paradise, ապա՝ քանի մը էջ կը յատկացնէ պատերազմին, իսկ խաղաղութեան՝ ոչ մէկ էջ: Նոյնն է պարագան մեղքին եւ առաքինութեան. յաւազուն մեղեդիները նուիրուած են սատանային, մինչ Աստուած հնարոյր է, կտակարանային:

Սկզբնական գործերուն մէջ յատակ է ձայնը, մինչ վերջին գործերուն մէջ անձը կը գտնենք առանց ձայնի:

Օտրնի գործերը առհասարակ կը լաջողին ա՛յն ատեն, երբ բանաստեղծը տիպարները կը ձգէ ուրուագծային վիճակի մէջ եւ ուշադրութիւնը կը կեդրոնացնէ յարաբերութիւններուն վրայ, ինչպէս է պարագան Եիթցի նուիրուած Elegy կամ Lullaby գործերուն:

1969ին լոյս կը տեսնէ բանաստեղծին City Without Walls հատորը, իսկ վերջին հաւաքածոն՝ Thank You, Fog, լոյս կը տեսնէ 1974ին, մահէն մէկ տարի ետք:

Անզլիացի արդի ո՛չ մէկ բանաստեղծ կրցած է ընել այն բոլորը, զորս Օտրն ըրած է. այս առումով՝ ան կը կանգնի Ալֆրետ Լորտ Թենիսորնի (1809-1892) կողքին, իր ձեւի եւ ոճի տարողութեամբ, չափածոյ թատերգութիւններով, օփերայի լիպրէթրոններով, հնչեակներով, գեղօններով, երգերով եւ արձակ բանաստեղծութիւններով:

Ան մինչեւ վերջ հաւատարիմ մնաց իր ա՛յն սկզբունքին, ըստ որուն՝ «բանաստեղծութիւնը հմտութեան խաղ մըն է, որ ունի իր օրէմքներն ու կառուցները»:

### ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆ

Տառապամբիմ աղընչութեամբ սխալած չէիմ բնաւ  
 Հիմ վարպետները եւ որ՞ամ խորունկ հասկցեր էիմ  
 Ամոր մարդկային տեղաորումը, թէ ան կ'ընթանայ,  
 Երբ ուրիշ մէկը պատուհան կը բանայ, ինչ-որ բան կ'ուտէ

digitised by A.R.A.R.®

Եւ կամ կը Քալէ բթամորէն:  
 Ինչպէս ծերերը կը սպասեն կիրիով եւ ակնածամբով  
 Հրաշք ծնունդին, միշտ ալ պիտի ըլլան  
 Մանուկներ, որոնք պատահարը այդ բնաւ չեն ուզեր  
 Ամտաւրի եզրին, սառուցեալ լինին վրայ սահելով,  
 Բնաւ չեն մոռցած,  
 Թէ մարտիրոսութիւնն ալ պիտի երթայ իր գծուած ճամբով,  
 Անկիւնի մը մէջ, թափափած տեղ մը,  
 Ուր շուներն իրենց շնակամ կեանքը կը շարունակեն,  
 ուր տանջողին ձիւն  
 Իր անմեղ յետոյքը ծառին կը քերէ:

Պրէկլի գծած Իզարոսն առնեմք իբրեւ օրինակ, ինչպէս ամէն բան  
 ամտարբերութեամբ անդին կը դառնայ,  
 Աղէտը ձգած՝ հերկող գիւղացին անշուշտ լսեր էր  
 Ջուրին Աողփիւմը եւ լրուած միչը,  
 Բայց իրեն համար ճախողութիւնն այդ շատ կարեւոր չէր. արեւը կը փայլէր՝  
 Ինչպէս որ պէտք էր, Յերմակ ոտքերուն, որ կ'անհետնէին կամաչ  
 Ջուրին մէջ. Աուրբ եւ սուղ թաւը, որ տեսեր էր այդ արտատոց դէպքը՝  
 Երկիմբէն իմկող մամշը տեսեր էր,  
 Տեղ պէտք է հասնէր. եւ համարտօրէն ձաւեր, ամցեր էր:

#### ՆՈՒԹԵՐ

*Պրէկլի թանգարանին մէջ գտնուող Պրէկլի պատարանին նման, այս քերթուածն ալ կը չեչտէ ա'ն իրողութիւնը, թէ կեանքը կը շարունակուի, հակառակ պատահող աղէտներու:*

*Մէկը Օտրնի լաւագոյն եւ ազատ լանզով գրուած ծանօթ քերթուած-նեքէն, ուր բանաստեղծին ձայնը յատկօրէն կը լսուի:*

#### ՎԻՊԱՍԱՆԸ

Համագգեստին մէջ տաղանդին պատեանուած,  
 Դասատրումն յստակ է իւրաբանչիւր Քերթողին,  
 Փոքորիկի պէս մեզ կը ձգեն գարմացած,  
 Կամ կը մեռնին պատամի, կամ մեկուսացած կ'ապրին:

Հիւսարի պէս կը խուժեն: Բայց վիպասանն  
 Իր շնորհէն պէտք է պայքարի դուրս գայ,  
 Առվի ըլլալ բթամիտ, սորվի ըլլալ պարզունակ,  
 Սորվի ըլլալ մէկն, որուն ոչ ոք չի խորհիր երթալ:

Իր ամէնէն լուսարո իղձը կատարելու համար՝  
 Ամբողջ ճամձրոյքը ըլլայ, ըլլայ թիրախը թաւի  
 Գանգատներու գոնիկ, սիրոյ մման, Արդարին

Չես իմքն ալ ըլլայ արդար եւ լկտիմ հետ՝ լկտի,  
 Եւ իր տկար ամսին մէջ եթէ իրապէս կրնայ՝  
 Համակերպիլ բթօրէն սխալներուն մարդկային:

**ՆՈՔԵՐ**

Հնչեակ մը, որ կը խտացնէ բանաստեղծին կարծիքները վիպասաններուն մասին, որոնց աշխատանքը շատ աւելի կարեւոր կը նկատէ, քան բանաստեղծութիւն գրելը: Սակայն իր իսկ քերթողութեան օրինակով կարելի է տեսնել, թէ բանաստեղծ մը ինչպէ՞ս կրնայ անցնիլ դասականութեան դէմ 19րդ դարուն ծառայած վիպասաչտ շարժումին (Romantic movement) գծած սահմանները:

**ՕՐԷՆՔ՝ ՍԻՐՈՑ ՆՄԱՆ**

Օրէմբը, ըսիմ պարտիզպանները, արեւմ է,  
Այ՛մ միակը,  
Որում առջեւ մեծք բոլորս կը խոմարիծք՝  
Երէկ, այսօր եւ վաղը:

Օրէմբո՛ւ իմաստութիւնն է մեծերում,  
Պարսաւեցիմ պապերն ամուկ, ճիշով,  
Թոռնիկները եռապատիկ ծամածոցիմ,  
Օրէմբը մեր դատողութիւնն է ըսիմ:

Օրէմբը, ըսաւ կղերը, կղերական Ուայումբով  
Խօսքն ուղղելով անվարդապետ ամրոխիմ,  
Օրէմբը յորդորներն եմ իմ գիրքիմ,  
Եւ ամպիւռը՝ զանգակատունս է իմ:

Օրէմբը, Բիթիմ տակէմ վար Ուայելով  
Դատաւորը խօսեցաւ՝  
Հատիկ-հատիկ, յտակօրէմ,  
Օրէմբը, Ուայապէս ըսի արդէմ,  
Օրէմբը, իմչպէս գիտէք՝ կ'եմթաղրեմ,  
Օրէմբը, թոյլ տուէք ամգամ մը եւս քացատրեմ,  
Օրէմբը, օրէմբն է պարզապէս:

Օրինապահ գրագէտները սակայն,  
Օրէմբը ո՛չ սխալ է եւ ոչ ալ ճիշդ, կը գրեմ,  
Օրէմբը ոմիրներն եմ պատժուած  
Տեղ-ատենիմ, արդարօրէմ,  
Մարդուն հագած զգեստներն եմ  
Ամէն ատեն, ամէն տեղ  
Բարի գիշերն ու քարի լոյսն է օրէմբը:

Շատեր կ'ըսեն՝ ճակատագիրն է օրէմբը,  
Շատեր կ'ըսեն՝ մեր Նահանգն է օրէմբը,  
Շատեր կ'ըսեն, շատեր կ'ըսեն  
Օրէմբ չկայ,  
Ա՛յ կորած է օրէմբը:

Իսկ ամբոյսները բարկացած, բարձրախօս,  
 ետևս բարկացած, խիստ բարձրախօս,  
 Մե՛նք օրէնքն ենք, միշտ կ'ըսեն,  
 Եւ յիմարը, մեղմ ու յիմար կ'ըսէ՝ ե՛ս եմ:

Մենք, սիրելիս, եթէ գիտնամք, թէ չենք գիտեր  
 Օրէնքն անելի ի՞նչ անոնք,  
 Ես թեզի չափ կամ անելի չեմ գիտեր,  
 Գիտնամք, թէ ի՞նչ պէտք է, պէտք չէ ըմել բացի  
 Այն բոլորէն, որում բոլորն համաձայնիմ  
 Ուրախութեամբ, դժբախտօրէն,  
 Որ օրէնքն է  
 Եւ բոլորը գիտնամ այս,  
 Թէ օրէնքը ուրիշ բառով սահմանելու  
 Մտածումն իսկ անհեթեթ է,  
 Շատ շատերու հակառակ  
 Ես չեմ կրնար կրկին օրէնքը ըսել,  
 Գուշակելու ցամկութիւնը մեր մարդկային սամծահարել  
 Մենք չենք կրնար, ինչպէս իրենք,  
 Եւ դուրս գալ մեր վիճակներէն,  
 Մտնել անհոգ դրութեամ մէջ:

Թէ՛ն կրնամ սահմանել իմ  
 Ունայնութիւնը՝ ինչպէս ինչ,  
 Խարխափումով հաստատելու  
 Նմանութիւնը անհաստատ,  
 Ցաւակներու եւ ըմելու՝  
 Օրէնքը սիրոյ մամն.

Սիրոյ մամն՝ որտե՛ղ, ինչո՞ւ, չենք գիտեր,  
 Սիրոյ մամն՝ որմէ փախչիլ չենք կրնար եւ որում չենք բռնամար,  
 Սիրոյ մամն՝ զոր միշտ կու լամք,  
 Սիրոյ մամն՝ զոր հագուողէպ կը պահենք:

#### ՆՈՒԹԵՐ

*Այս բանաստեղծութեան մէջ, Օտքն շատ զիպուկ կերպով եւ զանա-  
 գան գիտանկիւններէ կը ներկայացնէ Օրէնքը եւ նմանութիւն կը գտնէ Օ-  
 րէնքին եւ Սիրոյ միջեւ, բա՛ն մը, որ այնքան ալ սովորական չէ: Հոս դեր  
 ունի Օտքնի տաղանդն ու սրամտութիւնը, որ շատ իրապաշտ հարցի մը  
 կրնայ հազցնել բանաստեղծական եւ դիւրին ընկալելի շապիկ:*

**ԼՈՒԻՍ ՄԷՔՆԻՍ**  
(1907 - 1964)

Լուիս Մէքնիսի նպատակը բանաստեղծական նոր լեզուի մը կիրարկումը չէր, այլ խօսուած լեզուին կենդանացումն ու աշուժացումն էր: Եւ ան ճիշդ այդ կրցաւ բնել իր ե՛ւ բանաստեղծութիւններով, ե՛ւ չափածոյ թատերգութիւններով:

Եստերու համար Լուիս Մէքնիսի բանաստեղծութիւնը շատ կը նկարագրէ, բայց քիչ կը բացայայտէ: Սակայն երեսնական թուականները իրենց յաւաքոյն նկարագրութիւնը կը գտնեն իր գործին մէջ, թերեւս այն պարզ պատճառով, որ երեսնականներու խումբին (Օտրն, Տէյ Լուիս, Սփենտրը) միակ անդամն էր ինք, որ այդ չըջանի բարդ հարցերը շփորձեց լուծել ուրիշներու նման՝ որդեգրելով քաղաքական աջ կամ ձախ կեցածքներ:

Անգլիական արդի բանաստեղծութեան մէջ չէ պատահած, որ առօրեայ կեանքի նրիթերն ու մարդկային հարցերը (պաշտօնեայ ընկերոջ մը անձնասպանութենէն մինչեւ Լոնտոնի նշանաւոր հրդեհը կամ «գիշերափն տուններ»ու մէջ աշխատող կիները) ա՛յսքան տեղ գտնեն, որքան Մէքնիսի բանաստեղծութիւններուն մէջ:

Անշատու՛մի զգայնութիւն մը միշտ ներկայ է իր բանաստեղծութեան մէջ. անշատուած պատահաններով, հեռացող շոգեկառքերով եւ առանձնութեամբ շրջապատուած մարդիկ են իր կերպարները: Ճիշդ է, որ իր գործը ինքնակենսագրական բնույթ ունի, սակայն բանաստեղծը այդ միջոցին կը դիմէ ո՛չ թէ խոստովանելու, այլ՝ զինք շրջապատող հարցերը եւ շրջապատը լուզող դէպքերը ներկայացնելու համար:

Իրլանտայի գորչ եւ թախծոտ բնութիւնը իւրր ազդեցութիւն ձգած է Լուիս Մէքնիսի էութեան վրայ. իր ամենէն հեզեական տողերուն մէջ իսկ զգայի են թախիծն ու տրտմութիւնը:

Լուիս Մէքնիս ծնած է 1907ին, Պելֆասթ: Համալսարանական ուսումը կը ստանայ Օքսֆորտի մէջ եւ կ'արժանանայ դասական գրականութեան վկայականին: 1930ին, Պրըմիէնկէմի համալսարանին մէջ դասախօս կը կարգուի, իսկ 1936ին՝ Լոնտոնի Պէտֆորտ գոլէճի լուսարէնի դասախօս: Նոյն տարին, Օտրնի հետ կ'այցելէ Սպանիա եւ Իսլանտա: 1932ին կը մեկնի Մ. Նահանգներ՝ դասախօսական շրջապատումով եւ ելույթ կ'ունենայ զանազան համալսարաններու մէջ: Իր կեանքի վերջին քրտան տարիներուն կ'աշխատակցի B.B.C.ին՝ իբրեւ հեղինակ եւ բեմադրիչ չափածոյ թատերգութիւններու: 1957ին, Պելֆասթի համալսարանը զինք կը պատուէ գրականութեան պատուոյ տղթորալի կոչումով:

Լուիս Մէքնիս թերեւս անգլիագիր միակ բանաստեղծն է, որ, լրագրութեան հետ սերտօրէն աղընչուելով հանդերձ՝ կրցած է կիրարկել լրագրական բանաստեղծութիւնը եւ բանաստեղծութիւնը վեր բարձրացնել չափածոյ քրագրութենէն:

Իր առաջին գործը՝ Blind Firework, լույս կը տեսնէ 1927ին, երբ տակաւին Օքսֆորտի մէջ աշակերտ էր: 1935ին լույս կը տեսնէ Վեդինակին «Պոեմներ» հաւաքածոն, որմէ ետք կը հրատարակէ բանաստեղծական ութ հաւաքածոներ, ճամբորդական նոթեր, արդի բանաստեղծութեան նախրուած գիրք մը, Եիթցի նախրուած ուսումնասիրութիւն մը, Կէօթէի «Փառօք»ին թարգմանութիւնը, Աշիլուսի «Ակամեմնոն»ի թարգմանութիւնը եւ ձայնասփիւտի համար գրուած չափածոյ թատերգութիւններ, որոնցմէ ամէնէն նշանաւորը կը համարուի «Մութ աշտարակը» (1947) գործը:

Ժամանակագրական կարգով ընթերցում մը Լուիս Մէքնիսի բանաստեղծական հատորներուն, եւ արդէն բացալստ կը գառնայ, որ բանաստեղծը մեծ զարգացում կամ ցնցիչ փոփոխութիւններ չէ ապրած, այնպէս՝ ինչպէս իրեն ժամանակակից Օտրնը, սակայն չստակ է, որ յետ-պատերազմեան շրջանին ան կրցած է ինքզինք շատ աւելի ամրապնդել, քան Օտրնը: Մէքնիսի մօտ կարելի չէ նկատել նոյնիսկ թե՛Ռիթ զարգացում:

Ունի զոյնի նուրբ եւ թրթռուն զգայնութիւն, երգիծական սուր դիտողութիւն եւ աշխոյժ հետաքրքրութիւն բառի, չանգի եւ կշռոյթի հանդէպ: Իր բոլոր հաւաքածոներուն մէջ ալ կան յաջող բանաստեղծութիւններ, սակայն իրեն կը պակսի նիւթը ընկալելու եւ աշխատելու հանգարտութիւնը: Կարծէք նիւթը կ'աննէ, քանի մը հարուածով կը ձեւաւորէ եւ գոյացած ճեղքերը կը լեցնէ՝ օգտագործելով բառերու եւ պատկերներու իր տաղանդը:

Հակառակ իր գործերուն յաճախ վիճաւոր հանգամանքին, Օտրնէն ետք, ան կը նկատուի երեսնական թուականներու լաւագոյն բանաստեղծը, որովհետեւ իր լաւագոյն գործերը արգարօրէն կը համարուին ա՛յլ շրջանի լաւագոյն բանաստեղծութիւնները:

## ԱՂՕԹՔ

Ես դեռ չեմ ծնած: Օ՛, լսեցէ՛ք զիս  
Եւ թող մի տա՛ք, որ չզբիկմ ահարկու, Ոսեւ առնէտը,  
Եօքը գլխամի հրէշը Սաեւ իմծի մօտեմամ:

Ես դեռ չեմ ծնած: Միփթարեցէ՛ք,  
Քամգի կը վախճամ, որ մարդկութիւնը հսկայ պատերու ետիմ բամտէ զիս  
Կամ հմայէ իմաստուն սուտով ուժեղ դեղերով թմբուրեամ տամի,  
Գեղարաններու վրայ տանջէ զիս եւ բաղմիքներու մէջ արեամ շող տայ:

Ես դեռ չեմ ծնած: Հայթայթեցէ՛ք իմծի  
Ջուրեր՝ որ զիս զուարեացնեն, խոտեր՝ որ անիմ իմծի համար, ծառեր՝  
Որ խօսիմ իմծի, երկիմք մը՝ որ երգէ եւ թռչումներ ու մերմակ լոյս մը  
Մտփիս եմբախտրիմ՝ զիս առաջնորդելու համար:

Ես դեռ չեմ ծնած: Ներեցէ՛ք իմծի  
Մեղքերը բոլոր, որ աշխարհիմ ամբողջ իմծմով կը գործէ, խօսքերը բոլոր՝  
Որ կը բարբառիմ, մտքերը բոլոր՝ որ զիս կը խոկան,  
Դասերը բոլոր միթուած իմծմէ վեր դասեաններէ,  
Եւ իմ կեանքս, երբ իմ ձեռքերովս անոմք կը սպամնեն,  
Եւ իմ մահս, երբ անոմք զիս կ'ապրիմ:

Ես դեռ չեմ ծնած: Փորձարկեցէ՛ք զիս  
 Այն դերերում մէջ՝ զորս պէտք է խաղամ, թելադրամք՝ ձերս պէտք է բնեմ,  
 Երբ ծերունիներ զիս կը յորդորեն, դիւանակալներ՝ երբ սնափառիմ,  
 Լեռները բոլոր՝ երբ խոժոռ մայիմ, սիրահարները՝ երբ որ զիս հեզեմ,  
 Փրփրոտ ալիքներ՝ երբ զիս հմայեմ, ամապատները՝ երբ զիս կափարբեմ,  
 Մորացիկները՝ երբ որ զիս մերժեն  
 Եւ գաւակներս՝ երբ զիս ամիժեն:

Ես դեռ չեմ ծնած: Օ՛, լսեցէ՛ք զիս,  
 Թող մի՛ տա՛մ մարդը, որ ինձի մօտ գայ, ա՛մ՝ որ գազամ է կամ ա՛մ՝  
 Որ ինձ գիտէ՛ Աստուած կը կարծէ:

Ես դեռ չեմ ծնած: Օ՛, լսեցէ՛ք զիս  
 Զօրութեամբ հզօր բոլոր անոնց դէմ, որոնք կը ջանամ ստեղծել զիս  
 Կամ մարդկութիւնս ու կը ջանամ զիս վերածել անսիրտ մահուամ,  
 Տիկնիկի կամ պտուտակի եւ կամ բամբի մը  
 Անդէմ, մրադէմք. ուժով գիմեցէ՛ք  
 Բոլոր անոնց դէմ, որոնք կը փորձեն  
 Ամբողջութիւնս մաս առ մաս քակել,  
 Կատակի մնամ զիս հովերում տալ  
 Եւ կամ վատնել զիս՝  
 Ահերէն վազող մաքուր ջուրի պէս:

Թող մի՛ տա՛մ, որ զիս քարի վերածեն եւ կամ զիս վատնեն:  
 Ու թէ չէ՛ք կրնար՝ սպաննեցէ՛ք զիս:

**ՆՈՐԹԵՐ**

*Զծնած մանուկի մը շրթներուն զրուած ողբերգական մենախօսութիւն մը, ուր բանաստեղծը կը թուէ կենսքի վտանգները, որոնք կը սպառնան մանուկին ծնելէն ետք:  
 Բանաստեղծութեան արտաքին ձևը, որ աւետարանական սաղմոսի կը նմանի, միակն է իր ամբողջ զործին մէջ: Բառերու լաճախակի կրկնութիւնը քերթուածին կու տայ ցանցի երեսփոխ:*

**ԱՐԵՒԱՂՈՅՍԸ ՊԱՐՏԷՋԻՆ ՎՐԱՑ**

Արեւալոյսը պարտէզին վրայ  
 Կը կարծրանայ եւ կը պաղի,  
 Վայրկեամբ այդ մեծի վաճառակն չեմք կրնար  
 Իր շողերում մէջ ոսկի,  
 Երբ ամէն բան ըստած է ալ,  
 Ներդառնում հայցելու յոյս չի մնար:

Ազատութիւնը մեր՝ իբրեւ գրողի,  
 Կարծես ասարտիմ արդէն կը հասնի:  
 Հողն կը հարկադրէ եւ ամօր վրայ  
 Հնչեակները, թռչումները կը բառիմ



Եւ շատ շուտով, իմ բարեկամ,  
Այլ պարերու ատեն պիտի չմնայ:

Երկիմքը լաւ էր թռչելու համար,  
Խրոխտամալու կոշմակներում դէմ,  
Անագանգերում վատ եւ գիւակամ  
Եւ ամոնց բերած վատ խօսքներում դէմ.  
Հողը կը պարտադրէ,  
Մենք կը մահամանք, Եգիպտոս, կը մեռնիմք:

Եւ բմառ Ոերում չեմք ակնկալեր,  
Մեր սրտերում մէջ կրկին կարծրացած,  
Քեզ հետ երբանիկ Սատած ըլլալուս  
Որտոններում եւ ամճրեւներում տակ`  
Շնորհապարտ ալ  
Արեւալոյսիմ պարտէզիմ վրայ:

#### ՆՈՔԵՐ

Հուլիս Մէքնիսի գեղեցկագոյն եւ ամէնէն տխուր քերթուածներէն է այս մէկը, ուր բանաստեղծը կը խօսի կեանքի անցողիկ հաճոյքներուն մասին: Երկրորդ համարին վերջին տողը կ'ակնարկէ Անթոնիի վերջին խօսքերուն, Շէքսպիրի «Ամստոնիոս եւ Կղեպատրաս» գործին մէջ:



Երբ Համաշխարհային Երկրորդ պատերազմը վերջ գտաւ, երեսնական թուականներու բանաստեղծները իրենց տեղը զիջած էին արեւի երիտասարդ եւ նոր անուններու, որոնց համար, հակադրուելով նախկին տասնամեակի բանաստեղծներուն՝ քաղաքականութիւնը ոչ մէկ նշանակութիւն կը ներկայացնէր: Մործ Պարքըրի եւ Տիլըն Թոմասի զլխաւորութեամբ՝ այս երիտասարդ բանաստեղծները կը հաւատային, որ բանաստեղծութիւնը ըսելիք խօսք ունի ո՛չ թէ ընկերութեան, այլ՝ նոյնինքն մարդուն մասին:

1939ին հրապարակ իջած եւ իրենք զիրենք Նոր Յայտնութիւն (New Apocalypse) կոչած այս խմբակին անդամները կը մերժէին Օտընի եւ իր ժամանակակիցներուն զիտակցական եւ մշակութային մտածողութիւնը, նախընտրելով տարուի բառով եւ խորամուխ ըլլալ առասպելներու մէջ: Այս շարժումը նշանաւոր տաղանդներ չտուաւ:

Համաշխարհային Երկրորդ պատերազմը, Պորտրալի Միութեան արտաքին քաղաքականութիւնը եւ Հիրոշիմայի աղէտը լուստեսութեան եւ խտէրանքի տեղ չէին ձգած: Երջան մըն էր, երբ մարդիկ սկսան հասկընալ Իլիթը եւ միլիթարիստիկ փնտռել կրօնքին մէջ, լուսահատած իրենց ատրեակէն, ուր տեղ չունէին լաւ ու բարին եւ ուր չարը, մեղքը եւ ցաւը տիրապետող էին:



Գծքախտաբար, սակայն, քառասնական թուականներուն, այս բոլորը իրենց արտադրանքները չկրցան գտնել գրական բերքին մէջ, որ մնաց ախտաւոր ածան զգացականութեամբ եւ թոյլ կառուցով: Իսկ անոնք՝ որոնք փորձեցին հետեւիլ Տիլլին Թոմասի, շունէին անոր տաղանդը եւ իրենցան գրական ծանծաղուտներու մէջ:

**ՏԻԼԸՆ ԹՈՄԱՍ**  
(1914 - 1953)

Այս բանաստեղծին անունին շուրջ մեծ առասպել մը հիւսուած է, որ զինք կը տարուբերէ սուրբի եւ մեղաւորի, տաղանդաւորի եւ խենթի կամ գինովի եւ կաշուն մարդու րեւոններուն միջեւ: Ծնած է 1914ին, Swansea գիւղը (Wales) եւ մեռած Ամերիկա՝ գրական շրջապատուի մը ընթացքին: 1932-34 ժամանակաշրջանին կը գրէ իր բոլոր վաստակին գրեթէ կէսը: 1934ին լոյս կը տեսնէ իր առաջին քերթողագիրքը՝ «18 տաղեր», որուն 1936ին կը յաջորդէ «25 տաղեր» հաւաքածոն: 1939ին լոյս տեսած «Սիրոյ Բարոտ» (արձակ եւ բանաստեղծութիւն) հաւաքածոն կը փակէ իր գործերուն վաղ շրջանը: Եստերու կողմէ այս վաղ շրջանի գործերը աւելի բարձր կը գնահատուին, քան իր շատ նշանաւոր հաւաքածոն՝ «Մահեր եւ մուտքեր» (1946): Առաջիններուն մէջ գոյութիւն ունի զօրաւոր եւ յստակ ինքնուրոյնութիւն մը, թէեւ «Մահեր եւ մուտքեր» հաւաքածոյին քերթուածները աւելի մարգարէական են եւ նուազ տարտամ:

1940ին կը հրատարակէ ինքնակենսագրական մը՝ «Portrait of the Artist as a Young Dog», Ճէյմս Շոյսի նշանաւոր գործին՝ «Portrait of the Artist as a Young Man» անուն հատորին հետեւողութեամբ: Զետ-մահու կը հրատարակուի ձայնասփիւղի համար գրուած իր մէկ թատերախաղը՝ «Under Milk Woods» (1954) եւ «Adventures in the Skin Trade» խորագրեալ արձակ հատորը (1955):

Տիլլին Թոմասի հայրը իր ծննդավայրի գայրոցին գրականութեան ուսուցիչը եղած է: Տակաին տղան կարգալ չէր գիտեր, երբ հայրը Եւրոսփիլիէ եւ այլ բանաստեղծներէ բարձրաձայն ընթերցումներ կ'ընէր զաւկին: Հաւանաբար այս իսկ պատճառով բառի եւ լանդի զգայնութիւնը խորապէս արմատացած է Տիլլին Թոմասի մօտ: Ուշադիր ընթերցումը բացառապէս կը դարձնէ, թէ բանաստեղծին համար իր կեանքին ամէնէն կարեւոր շրջանը մանկութիւնը եղած է, մանկութեան յիշատակները, որոնցմէ կ'ընծիւղուի իր գործը՝ պատկերներու ալլազանութեամբ եւ շքեղ լեզուով:

Երթցէն ետք չէ եղած անցյիացի բանաստեղծ մը, որ ա'յնքան սերտօրէն յարաբերած ըլլայ կեանքին հետ, որքան Թոմաս: Թերեւս այս իրողութեան մէջ պէտք է փնտռել գաղտնիքը իր յաջողութեան, մա'նաւանդ

ժողովուրդի այն խափն մտա, որ ընդհանրապէս հետու կը նկատուի բանաստեղծութենէն:

Բառերուն հետ իր պայքարը հիմնական նշանակութիւն ունի իր ամբողջ գործին մէջ: Կ'ըսուի, թէ ան եղած է շատ զանդազ գրող մը, որ ցաւագին ու երկար աշխատանքէ ետք ընտրելով իր բառերը՝ յաճախ օրը մէկ տող արտադրած է:

«Բանտարկուած է ան,— կը գրէր Ռոպրթ Նայ,— իր դիտարկութեամ եւ խորհրդածութիւններու դարձդարձիկ աշտարակիմ մէջ, ուր միայն բառերը իրաւ եմ եւ կրժամ արիւմիս»:

Բանաստեղծը տեսարանները կը նկարագրէ հոտառութեան զգայականքով, ձայները՝ համի զգայականքով, խորհրդապաշտ ձգտումով մը: Տիլըն Թոմաս կիրարկած է գերհրապաշտութիւնը՝ բառերը արձակելով թիրախի մը, որ նկարագրութիւն կամ նշանակութիւն չէ, այլ՝ տարտամ թելադրութիւն եւ ակնարկութիւն:

Իր բեղուն շրջանին, Փամելա Հանսֆորտ Եոնսընի գրած նամակի մը մէջ, ի միջի այլոց կ'ըսէ.

«Ես բանաստեղծ չեմ, այլ՝ բառերու Բմայրոտ վարպետ մը»:

Այս խօսքը կարելի է իբրև բանալի օգտագործել, թափանցելու համար Տիլըն Թոմասի բանաստեղծութեան մէջ, ուր երբեմն թանձրութիւնը կը շփոթուի խորքին հետ:

Մահուան զաղափարը ներկայ է գրեթէ իր բոլոր գործերուն մէջ: «The force that through the green fuse drives the flower» քերթուածը կարելի է համարել իր ամբողջական գործերէն մէկը: Այստեղ բանաստեղծը զուգահեռ կը գծէ իր եւ ծաղիկին ու բնութեան միջեւ եւ անոնց կու տայ մահկանացու ըլլալու իրողութիւնը:

Թոմասի լաջող բանաստեղծութիւններուն ինքնուրոյն յատկանիշը լեզուին անմիջականութիւնն է. անմիջականութիւն մը՝ ուր կենսափորձի զգայնութիւնը բառերուն մասնաւոր իմաստէն աւելի առաջ է, ուր բանաստեղծութիւնը զարմանալի ընդելուզումն է յուսահատ բառերու, զգացումներու անեղծուածաժին խառնաշփոթութեան, մահուան զաղափարի ներկայութեան եւ սեռային զգայնութիւններու:

Այնպիսին է Թոմասի տաղանդը, որ իր գործերը խորապէս կը տպաւորեն առաջին ընթերցումով, իսկ այն գործերը, զորս կ'ուզենք կրկին կարգալ, կը տպաւորեն իրենց զրաւիչ ազօտութեամբ եւ տարտամութեամբ:

Իր շահած մեծ համբաւը կը վերագրուի իր գործերուն արտաքին գեղեցկութեան, ուր բառերը զիրար կը զրկեն եւ տողերը կ'ընթանան անկաշկանդ եւ հեզասահ:

Անոնք՝ որոնք բախտը ունեցած են լսելու զինք կամ ձայնագրութիւնը իր կատարումներուն, կ'ըսեն, թէ Տիլըն Թոմաս իր քերթուածները կատարեալ ձևով ասմունքող արուեստագէտ մըն էր եւ թէ՛ ոչ ոք պիտի կարենայ նոյն գեղեցկութեամբ մեկնաբանել զանոնք:

Տիլըն Թոմաս կը մահանայ մատուցումի շրջապտոյտի մը (Reading tour) ընթացքին, իր ետին ձգելով մեծ համբաւ մը եւ բաւական ասեկօսներ՝ իր կեանքին եւ մահուան շուրջ:

**ԱՅՆ ՀԶՕՐ ՈՒԺԸ, ՈՐ ԿԸ ՇԱՐԺԷ ԾԱՂԻԿԸ**

Այն հօգոյ ուժը, որ կը շարժէ ծաղիկը կամաչ ցօղուծիմ ընդմէջէն,  
 Կը շարժէ կամաչ կեանքս, խորշակներու կը մատնէ ծառերուն արմատները,  
 Կը Բանդէ գիւ.  
 Եւ ապիկար եմ այմբան, որ կ'ըսեմ վարդերուն,  
 Թէ մատղաշ կեանքս, Ոսեւ կոր է Ոսյն տեւնդով:

Այն հօգոյ ուժը, որ կը երէ բարերը Բար ու ժայռիմ ընդմէջէն,  
 Կը երէ արիւնս ալ, կը շորցնէ ակումբը  
 Եւ մոմի կը վերածէ իմ ակումբս.  
 Եւ ապիկար եմ այմբան, որ կ'ըսեմ երակներուս,  
 Թէ լեռներուն ակերը Ոսյն բերանը կը ծծէ:

Այն ճեռքը, որ կը գրդէ շուրթ առագանիմ մէջը,  
 Կը շարժէ առագուտը, կը կապէ փշոյ հովը,  
 Կը Բաշէ առագաստս.  
 Եւ ապիկար եմ այմբան՝ ըսելու կախուող մարդուն,  
 Թէ իմ կաւէս է քրծուեր դահիճիմ փոկը,  
 Ժամանակիմ շրթները տգունկի պէս փակեր եմ ցայտաղբիւրի ակումբիմ,  
 Սէրը յաճախ կը կաթի, կը հաւաքէ իմբգիմբ,  
 Թափուած արիւնը սակայն կը դարմանէ վերբերը.  
 Եւ ապիկար եմ այմբան՝ ըսելու հովիմ,  
 Թէ ժամանակը ինչպէս աստղերուն շուրջ թիժ-թափով հիւսեր է այն դրախտը.

Եւ ապիկար եմ այմբան՝ ըսելու սիրոյ շիրիմիմ,  
 Թէ իմ սաւաններուս մէջ ճիշդ Ոսյն կեր որդն է կրկիմ:

**ՆՈՒԾՆՐ**

*Տիլըն Թումասի պարզագոյն շերթուածներէն մէկը, որ հեղինակը ցոյց կու տայ կեանքի բոլոր երեւոյթներուն (մարդիկ, կենդանիներ, բնութիւն) մահկանացու ըլլալու հանգամանքը: Պարզ է, որ այս գաղափարը նորութիւն չէ: Գեղեցիկը բանաստեղծին ինքնավստահ, հանդիսաւոր եւ ծանրակշիռ ձայնն է:*

**ԱՅՍ ՀԱՅԸ, ԶՈՐ ԿԸ ԿՏՐԵՄ**

Այս հացը, զոր կը կտրեմ, ժամանակիմ վարսակ էր.  
 Եւ այս գիւնիմ կը խոկար իր պտուտիմ խորբերում՝  
 Օտար ծառի մը վրայ.  
 Մարդն օրուամ մէջ եւ կալ հովը գիշերուամ  
 Տրորեցիմ հասկերը, փշրեցիմ որթիմ խիմդը:

Ժամանակիմ, հովիմ մէջ, ամրան այ արիւնը  
 Հարուածեր էր մարմինը, որ խնամեր էր որբը.  
 Ատեմիմ այս հացիմ մէջ  
 Խնդրացեր էր վարսակը, զուարճացեր հովիմ հետ.  
 Մարդն արեւը կտրեր է եւ վար բերեր է հովը:

Այս միտք, գոր կը քանդես, արիւնը՝ որում թող կու տաս  
 Աներ սփռել երակիմ,  
 Վարսակ էր, հատ խաղողի՝  
 Զգայաւէր թումբերէմ եւ արմատներէմ ծնած.  
 Ի՛մ գիմիս, գոր կը խմես եւ հացս, գոր կը խլես:

#### ՆՈՐԵՐ

*Միակնան միջուրտն ու անորոշութիւնը այս քերթուածին յատկանիշ-  
 ներն են:*

*Գրուած է ա՛յն շրջանին, երբ քանաստեղծը յաւիտենութիւն կը տես-  
 նէր ամէն բանի մէջ եւ ամէն բան կը տեսնէր յաւիտենութեան մէջ: Թե-  
 թեւ այս գաղափարը բիւրեղանար իր մօտ, եթէ չփրթէր իր կեանքին թե-  
 ւը:*

*Բանաստեղծութեան վերջին տողը հաւանաբար ակնարկութիւն մըն է՝  
 ուղղուած Պատարագի հացին եւ գինիին:*

### ԱՐՀԵՍՏԻՍ ՄԷՋ ԵՒ ԿԱՄ ԴԱԺԱՆ ԱՐՈՒՆԵՍՏԻՍ

Արիեստիս մէջ եւ կամ դաժամ արուեստիս,  
 Ի գործ դրուած գիշերներու լուսեամ մէջ,  
 Երբ լուսիմն է միայն ցասկոտ  
 Եւ սիրողներն իրենց մանկիմ երկարած,  
 Ցաւերն իրենց թեւերում մէջը առած,  
 Ես կը տփմիմ երգելու, յոյսերում տակ,  
 Ոչ թէ հացի կամ յաւակնութեամ համար՝  
 Հրասպոյրի եւ սոմֆալու առեստորից  
 Փղակրեայ բեմիմ վրայ,  
 Այլ միայն պարզ, սովորական թռչակներում,  
 Իրենց խորումկ եւ թափնուած սրտերում:  
 Ոչ ալ ցասկոտ լուսնէն առջատ  
 Հպարտներում համար է որ կը գրեմ  
 Այս ծփացող պտուտֆոտղ էջերը,  
 Ոչ մաներում աշտարակոտղ  
 Սոխակներով, սաղմուներովը իրենց:  
 Սիրողներում կը գրեմ, որոնց թեւերն  
 Դարերու ցամ եմ գրկեր,  
 Որոնք գովեստ եւ կամ թռչակ չեն վճարեր  
 Եւ ոչ ալ իմ արիեստս կամ արուեստս Ոկատի կ'առնեն:

#### ՆՈՐԵՐ

*Եթիթցի կատարելագործած եւ իւրացուցած ոճով գրուած քերթուած  
 մըն է ասիկա: Տիլլըն Թոմաս եղաւ Եթիթցի հետեւորդներէն ամէնէն բախ-  
 տատորը, որովհետեւ այդ արտաքին ձեւին մէջ կրցաւ զետեղել իր ինքնու-  
 թոյնութիւնը:*

(Շար. 2 եւ մնացեալը յաջորդիւ)

ՄԱՐՈՒՇ

# Նվարներ

## ԲԱԶՍԱԼԵԶՈՒԵԱՆ ՍՒԱԼԵՐԷՆ

Սփիւթի գրականութեան բոլոր երեսները հասկնալու եւ ըստ այնմ դիւրորդուելու համար, կը թուի, թէ հայրենի մեր գրողներն ու խմբագիրները պէտք ունին որոշ ծածանակի մը եւս: Առանց պրպտումներու եւ ստուգումներու անհրաժեշտ այդ ծածանակին, անոնք անխուսափելիորէն պիտի իյնան հաշտարեղէր մտաբոց լարած թակարդներուն մէջ:

Վերջերս նման փորձութեան մը ակամայ զո՛հ դարձան միաժամանակ թէ՛ Հայաստանի գրողներուն տան դահլիճը եւ թէ՛ Երեսանի «Երկիր» օրաթերթին մէջ սրկնակը: Լուրը մեզի հասաւ վերջինին մէջ լոյս տեսած թղթակցութիւնէ մը, ուր Վահէ Օշականի «Արտարձաններ» հատորին քննարկման երկնայթիի, սփիւթահայ «Պօղոս Գուրեղեանը, Արկայացնելով Վահէ Օշականիմ ասաց. «Վահէ Օշական մսփիւթահայ գրողներու այժմ հոյլիմ կը պատկանի, որոնց իւրաքանչիւր մեր գործը պոլմնիքի ու բուն կրիներու առիթ կու տայ գրական տարբեր բնութեամբներու, դպրոցներու ու ճաշակներու տէր խմբակցութիւններու միջնու: Օշական, այսպիսի առիթներով, կը յաջողի իրեն դէմ հանել մոլեգնած ամբոյսը հայ գրականութեան կեդ՛ն բարձրերու եւ քարոյախօսաներու, հայերէն լեզուի ֆեթիշիստներու, իրենց տիրացուական մտայնութեամբ ծամօք պահպանողական գրողներու» («Երկիր», 28 Մարտ, 1992):

Թղթակցութիւնը Պօղոս Գուրեղեանի բռածէն միայն այսպէս բան հաղորդած է, առանց՝ ան ըրած է Վահէ Օշականը Հայաստան հրախրելու եւ անոր ստեղծագործութիւնները հոն հրատարակելու առաջարկ մը, ա՛յն Օշականի, որ «կը փորձ դուրս սողալ աւանդական Արքայազններէն»:

Վահէ Օշականը ասոյալու այս անհիշող ու անճշակ արարքով ներկայացնող պատկերին դիմաց առայժմ այն գոցենք եւ ընթերցողին ուշադրութիւնը հրախրենք վերի պարբերութեան երկրորդ բաժնին վրայ, ուր կ'ուրուագծուի «մոլեգնած ամբոյսը հայ գրականութեան կեդ՛ն քուրմներուն ու միւսներուն»:

Հարցնող մը ըլլաք, թէ ամբոյս մը կապմնու շարք մեր (թէկող կեդ՛ն) ունի՞ Սփիւթի գրականութիւնը, որ անոր դէմ կեդ՛ն ճօճելու նման տակադատութիւններ կը մարտնչի սաղքի մարտիկ: Վահէ Օշական փաստագրաբ պիտի ուրախանար, եթէ իրապէս ամբոյս մը առաջացնելու շարք մեր ունենար Սփիւթի գրականութիւնը եւ, մա՛նաւանդ՝ մոլեգնիլ գիտնար այդ ամբոյսը իրեն դիւր լեզու այս կամ այն դէպքին կամ անոնց արժարծած հարցնուն առնելութեամբ:

Չորս-հինգ հատորներ լոյս ընծայած է Պօղոս Գուրեղեան, բայց վերի «սոցալուսն եւ անկի վերիքը իմաստագրիկութեամբ ամբոյսին, «քուրմներուն եւ յաջորդներուն օրինակով երբեք չկրցաւ հասնիլ բառերը իրենց հարազատ կէտքով ու տեղին զործածելու մակարդակին, ա՛յն պատճառով հաւանարար, որ իրեն համար գրականութեան մայր գործիքին գիտութիւնը գործի է նշանակութիւնէ եւ անոր հանդէպ երկիւղած պաշտամունք տածող մարդերը ուրիշ բան չեն, եթէ ոչ «հայրեն լեզուի ֆեթիշիստներ»:

Մեզ անգամ մը գրադած ենք տասնց լեզուական սրբազին ապրումներու հրատարակած իր գիրքերէն մէկուն բարբարոսութեամբ եւ, «Երկրի» անուն յաջորդ գիրքին վրայ այն մը պատշենիլ կար, երբեք հարկ չհամարեցինք գրադիլ հոն թոյլ որրուած յուսահատական ազատագումներով, եւ երկրորդ անգամ մեր միտքը բնա՛ւ պիտի լզար անիկա, եթէ հեղինակը զործով շարդուփշուր ըրածը բանիւ արդարացնելու խորամանկութիւններ չարքէր պաշտօնական բնմերու վրայ եւ չփորձէր իր լեզուութեան տալ տեսական հիւր մը, թէ մէկը կրնայ գրականութիւն ընել, առանց սորված ըլլալու իր մայրենին:

Կրկենք անգամ մը եւս, որ կարելի չէ բնորոշիլ գրականութեան անունով հրատարակած իր գիրքերուն մէջ կիրարկուած լեզուն: Նոյնիսկ արեւմտահայերէնի եւ արեւելահայերէնի խառնուրդ երկուսու լեզուն չէ անիկա: Եռալիզու բան մըն է, ա՛յն անգամ չէ, թառայելու է, մինչեւ իսկ զայն կարելի է նկատել հնգարարաւ հսկիւրանք մը, միով բանի՛ւ՝ բազմալեզուան սխալներէն մը:

Եւ որպէսզի այս հաստատումները որեւէ կասկածի տեղի չտան, դիմենք փաստներուն, մատնանշելով իւրաքանչիւր շարքէն յաճախ հինգական ու քէջ անգամ անկի օրինակներ, պարագայական ենթախորագիրներու տակ:

---

**«ՍՏՈՐԱԿԱՅԱԿԱՆ» ՆՄՈՅՆԵՐ...**


---

- 1.-Դուրս չելած կոկայինի վերջին շեղքը ներշնչած էր (6):
- 2.-Ամերիկայի մէջ փախստականութիւնը մանկան խաղ էր (18):
- 3.-Եւ վերջ ամէն տեսակ մտային լիկումներուն, փողի չզոյւթեան պատճառած ստորակայական զգացումներուն (18):
- 4.-...ուրախ օր մը փաստարանի գրասենեակէն պիտի կանչէին Անդրէի, իտէրը չէր մը երկարելու համար իրեն, որպէս արկածահար ընտանիքի ցուերուն եւ հոգեկան անգոհանքին փոխմեջիւն (30):
- 5.-Ինչպէս մահուան դատապարտուած մը, ի վերջոյ կը հասնի կախաղանի շուքին տակ ապրելու, ամէն տրամարանութիւն ոտնահարող գոյակեցութեամ հոգեկեանի (85):

---

**«ՈՒՂՂԱՀԱՅԵԱՑ» ԵՐԱՋՆԵՐ...**


---

- 1.-Երբ արարչագործ փռչիին վերջին հեազը միրամի նման անհետանար... (8):
- 2.-Քանի մը իոգեպէս ճեմգատը մորոցներ Եփոն կը բաժնէին իր նպատակակէտէն (18):
- 3.-...խուճապի մատնուած կը հերձէ ջուրերը (71):
- 4.-Քիչ ետք, երեսնեան մակնիշով սեղանի ժամացույցը - որ գիշեր-ցերեկ զնգազիւրի պէս կը զարնէր - օգնութեան հասած էր իրեն աւետելու, թէ սովորական զարթնումի պահէն քանի մը ժամ կամխտանաս է (117):
- 5.-...տառչին օրէն, Քրիստոսը եւ իր կապոյտ երազները ուղղահայեաց չէին ընթացած (122):

---

**ԱՐԵՒԵԱՀԱՅԵՐԸՆ**


---

- 1.-Կամայ մը հուպ տուաւ (8):
- 2.-Դունչը տնկած, գծուածի նման շարակիցաւ օթոյնն ներս ու... (20):
- 3.-...խտառգէմ պաշտօնեային խփած կնիքը զիկը արթնացած էր թմբիւրէն (25):
- 4.-Երկար անխուս, եպլչող գուաղը զիտելու (127):
- 5.-Ձայնն ալ կուչ եկած էր, լուսն (130):

---

**ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ... «ՔԱՆԻՆԵՐՈՒՆ»...**


---

- 1.-...զիրկին մէջ սեղմած պիտի աննկատ անցընէր խոշոր թութակը, գորս հարիւր տոլարի փոխարժեքով գնած էր (18):
- 2.-Մկուչը քամիներուն տունի եւ պիսնէսի տեր դարձուցեր էր (28):
- 3.-Յարօ իմք իրեն կշտամբելով «Հայտէ ե՛լ նայի՛մ...» (43):
- 4.-...մասնիկու արանքէն սահելով, իրար հպող մետաղներու զրննոց մը առաջ բեռած էին (59):

5.-Իրենք Բեգի կը կարգադրեն, եւ երբ առիթը ձեռքդ անցնի, դուն այ՛ զիրենք (86):

ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ... «ԱՐՈՔ-ԲԱՐՈՔ» «ՅԱՌԱՋԵՑ»ՆԵՐ

- 1.-...Տրացան մը ուսին նետելով արօժ-քարօժ որսի մը երթալու (15):
- 2.-Անքո խոր յառաջեց (26):
- 3.-Հէրի՛ք չէ ինչքան տառապեցար (27):
- 4.-...իրարու աւքերուն երկար Բամուած պահեցին լոյսէն փաշիւղ իրենց նայուածքները (28):
- 5.-Արիկա Քիսիները, Միջին Արեւելքը խառնած-աւերած էր (82):

ԵՐԿԱԿԵՆՑԱՂ ԲԱՌԵՐՈՒ ԹՈՂՈՒԲՈՂ...

- 1.-...ու շնոր անոր ողնայարին կորուսեցին (8):
- Արեան ետք, ողնայարէն սահող սարսուռները... (83):
- 2.-Չէ, այլասեռածը ինքն էր, գնդակահարութեան արժանի (10):
- Մեզք որ մարգա աշպոխի այլասերածներու երկիրը պաշտպանելու համար երիտասարդութիւնը զոհած է (50):
- 3.-...ոչ այ՛ մասամբ մը ճաշկած անոր ամէնօրեայ դառնութիւնները (47):
- ...ամէնօրեայ զոհարեցութիւնը հայկականութեան... (110):
- 4.-...իր զոյութեան ցաւի ու տառապանքի ովկեանիմ վերեւ (89):
- ...Արշի՛կ սիրտը ռվկիւմ մըն էր անգնդախոր... (102):
- 5.-Թող որ վառօղի ու բզրտուած դիակներու հոտը վերանայ (86):
- ...երիտասարդութեանդ հանգրուան մը սպրեցար բզրտուած սերերուդ... (104):

Մեր լեզուին մէջ կան բառեր, որոնք հասած են վերջնական թիրեղացման եւ կան սորիչներ, որոնք կը շարունակեն վեճի տարակալ մնալ:

Խնդիրը, անշուշտ, թիրեղացածները իրենց անաղարտ վիճակին մէջ պահելու նախանձանդորութեան կը վերաբերի եւ ոչ թէ միւսներուն: Միւսներուն պարագային, «Ձերիվէյ»ի վերաբերումը տարբեր չէ կարգ մը թերթերու եւ թերան գրողներու մասնած վերաբերումներին:

Ուրիշներու պէս, խնդրոյ առարկայ զիրքին մէջ եւս անհայրենիք(9) գործածուած է հայրենագորկին տեղ, վերքը (26) ետէին փոխարէն, ծնկաշո՛ք՝ (43) ծնրադիրին, գուրկը՝ (47) գերծին, հողայիմը՝ (88) հողեղէձին, բուրբը՝ (130) ամբողջին: Նորէն՝ հալլեն, հալլին:

Մեր լեզուի ճշգրտութեան ու մաքրութեան հետամուտ մտաւորականները, մասնաւորաբար անոր ներբանգները ընդունելի դարձնելու ուխտ ըրած «Գեթիլիտանները» յոգնեցան իրենց գործադրած հետեւողական ճիշդէն, բայց երեւի այդ պայքարը դեռ երկար ատեն պիտի շարունակուի, որովհետեւ մինչեւ անգամ այսօր լոյս կը տեսնեն «արօժ-քարօժ» զիրքեր, ուր կը շօշափուին ստորակայական զգացումներ, ֆրիվէլը եւ կապուտ երազները ուղղահայեաց չին ընթանար եւ Անգոն ու Անգուլին հետ խեղճ ընթերցողները «խոր կը յառաջեն»...

ԿԱՐԱԽԱՆ ՕՏԱՐ ԲԱՆԵՐՈՒ

Օտար բառեր գործածելու մոլութիւնը նոր երեւոյթ չէ աշխարհաբար մեր լեզուի երկու ճիւղերուն մէջ ալ, բայց «մէկ լեզու, մէկ ժողովուրդ» ստեղծելու ցնորքով ասրուած համայնավար իշխանութեան տակ արեւելահայերէնի՝ եւ Սփիւքի պայմաններուն հետեւանքով արեւմտահայերէնի մէջ օտար բառերուն ներխուժումը ստացաւ աննախընթաց համեմատութիւն մը, որուն դէմ ծառայողները հոն կոչուեցան «լեզուական պուրիզմի կողմնակից ազգայնամոլներ, իսկ հոս երեւի նոյն ապերախտութեամբ պիտի կոչուին «հայերէն լեզուի ֆեթիշիստներ»:

«Ուր էր թէ մաքրամոլ լինէինք», պիտի ըսէր «Լալիբի Միրզոյան», «Հայք» թերթին (13 Փետրուար, 1991) մէջ ստորագրած իր յօդուածին սկիզբը:

Ըսելու նոյն ձեւը փոխ առնելով՝ պիտի գոչէինք. «Ուր էր թէ գոյութիւն ունենային եւ թիւով շատ ըլլային «հայերէն լեզուի ֆեթիշիստներ»ը: Այդ պարագային թերեւ մեր լեզուն չափով մը ազատած կ'ըլլար օտարամոլներու այս յայտուն ներխուժումէն եւ անոր սրբութեամբ ծօտնալուտ ապրում մը կը խմորուէր դոնէ զբաղանջութիւն ընել յաւակնող մարդոց սրտին:

Գոչու Գուրգիան հարիւր երեսուն էջերու սահմանին մէջ նոյնքան թիւով եւ քիչ մը աւելի օտար բառ գործածած է, սրունց իննսուն ինը առ հարիւրին բնա՛ւ պէտք չունի մեր լեզուն, արուած ըլլալով, որ ունի անոնց աւելի քանհունչ, աւելի զունահզօղ, աւելի արտայայտիչ ու երախտաշատ մեծապորժներուն կողմէ որդադրմուած համագործնէրը:

Հասկնալի է անշուշտ, որ կը խօսինք հեղինակի եւ ոչ թէ հերոսներու լեզուին մասին, որ հարազատութեան հաշուոյն ընդունուած ու ներքի զառածուծ է զբաղանջութեան մէջ: Այս պարագային ընդունուած միւս սովորութիւնն ալ չ'արգարացնիր թոյլ արուած առատութիւնը: «Ճրիվէյ»-ի հեղինակը հոս իսկ հետեւողական չէ եղած ինքն իրեն: Յայտնի չէ, թէ ինչո՞ւ տեղ մը ընդգծած է օտար բառը եւ ուրիշ տեղ մը ազատ ձգած է զայն, կամ ինչո՞ւ յորս անգամ գործածուած նոյն բառին հանդէպ ցոյց տուած է յորս վերաբերում, եւսլի, եւսլի:

Բայց ասոնք, ընդգծումներու ոչ-հետեւողական ընթացքը կամ տառադարձութիւններու անբծախնդիր կիրարկումը այնքան մտահոգիչ չեն, որքան օտար բառերուն դիմելու սակարութիւնը, որ կը թուի, թէ ցուցական մարմաշխ մը հետեւանք է եւ ոչ թէ զազափար մը պայծառացնելու կամ տիպարի մը մէկ կողմը ցցուն գարձընելու ստիպողական միջոց:

Ընդգծուած կամ ոչ, տառադարձուած կամ ոչ, ո՞վ պէտքը կը զգայ օտար բառերու սա կարուանին՝

Սա թուրքերէն ետլա երթալուն, ջահաճմամբին, սարսախին, զարմաղապին, փնթիին:

Կամ սա ֆրանսերէն ռաստիոն, ռիթմին, մոտոեռօն, տիսիպիլիօն, շարլաքամին:

Կամ սա անգլերէն բառերուն՝ գաշին, բայընսպին, պոսին, էմիկրէշըմին, ռիսկին:

Եւ կամ արեւելահայերէն տառադարձութեամբ տողերուն մէջ վիտացոյ սա տուրիստին, մասշտապին, տոմնային, ատուցին, շովիմիստին:

Նկատեցիք հարկաւ, որ իւրաքանչիւր շարքէն ուշադրութեան յանձնեցինք հինգական նմոյշ ա՛յն քանակէն, որուն հանդիպելու համար չէ, որ ընթերցողը կը բանայ հայերէն գիրք մը:

Աւելի լոյս նետելու համար օտարամոլութեան այս մութ հակումին վրայ, այս անգամ տանք քանի մը շօշափելի պատկերներ, որոնք ասանց ընդգծման չքմե-



դանքին կամ որեւէ այլ նշանի տուն-տեղ հղած են նախադատութեանց մէջ, թուրքերէնով խոցուած ու ֆրանսերէնով պճնագարդ:

**ԹՈՒՌԿԵՐԷՆ**

- 1.-Երևանի իրենց քարաչէն բնակարանք իր բաղով բաղայտով... (24):
- 2.-...աչ ու ձախ շշափելով, տոշակիմ տակէն խոշորիկ քարք ճը հանեց (53):
- 3.-Արդէն սա երկիրք օտք դնելուն հազար անգամ փոշմանած էր (68):
- 4.-...ինքն ալ իր ժամանակին պոյով կհատուած էր (80):
- 5.-Սարգիս Ամմոն, քարիզի օրճեփը, թուրումի տուփը, եւ մաշած կողքով աւետարանը առած... (119):

**ԵՒԱՅԼՆԵՐԷՆ**

- 1.-Իրը ըմբոստութիւն էր սխտեւրն գէմ (5):
- 2.-Յարոն զծուար կը գտնէր հաշտուիլէ զինք մտալկող Յիսիլիստական զազա-փարճերուն հետ (41):
- 3.-Իսկ հարուստները՝ ամբիժ օթոներու նման պիտի փայփայտէին (75):
- 4.-...սոցիալական անարգարութիւններու, տիրող շփոթի եւ... (87):
- 5.-Դիւրին էր Յայնին համար համամարդկային վիճ պաղափարներու հաշուոյն լոգումզներ, պոլ-պոլ, պոշ-պոշ խօսքեր արձակելը (105):

•  
•

Մենք լաւ կը ճանչնանք մեր պայմաններուն զածանութիւնը, անոնց զլացած հարազատ սնունդներն ու պարտադրած անհարազատ տարրերը սկսեակ գրողներուն կամ անձան հելովութիւն մէջ գտնուող միւսներուն: Ուրիշ խօսքով՝ լինել կրնար բոլորովին անտես աննկ պայմաններուն չքմեղանքը, բայց նաեւ լինել կրնար նուիրական ասպարէզները միարձակարանի վերածող մարդոց նկատմամբ բարեացակամութիւնը ծայրայեղ լափերու հասցնել, որովհետեւ կայ հակառակին ալ փաստը, կան նոյն պայմանները լաղթահարած «չաղթահասակ» օտոնաչներուն օրինակները:

Կեանքը իր քուէն կու տայ այս կարիճ խառնուածքներուն եւ շատ հաշուի չ'առնիր նոյն պայմաններուն տակ խարխափող վատուածները:

Անշուշտ:  
Ինչու անպայման օտար ազգեցութիւններու ենթակայ մէկու մը անկատարութիւնը բացատրելու համար պիտի փորձենք ժամանակ վատնել եւ մեզի տիպար պիտի չընտրենք նոյն եւ միևնույն անգամ աւելի զժողով պայմաններու մէջ իրենց հասակը կարկառած Եուշանեան մը, Պէշիկթաշիան մը, Նարգունի մը, Սարաֆեան մը, Յարութի Կոստանեան մը, ասոնց հասակակից միւսներէն մէկը, կամ արեւելեան կողմն աշխարհի փթթած յաջորդ սերունդներուն ներկայացուցիչները, որոնք ո՛չ թէ բան մը պակասցուցին իրենց ժառանգութենէն, այլ նոր որակներ գումարեցին անոր վրայ: «Մաղոմբներու մէջ, - պիտի ըսէր եղբարախա, այլ այս մարդին մէջ երախտաշատ Վազգէն Եուշանեան,- մեր կեանքի մտքիմ խորը, ասդիմ-ամդիմ մեր-հոմ անձեր կամ դեռ, որոնց անձերը եթէ ազատ արձակես՝ կրնամ օրն ի բուն արտապատար սիրով մը խօսիլ հայոց լեզուի բառերուն շուրջ, զմայլելով ու հրապարակելով Բեգ, ու ասոնք դեռ շղթայիմ վերջիմ օգակներն են, մախարդները ըլլալով լեզուի անուղղայ կապաշտներ»:

Աստեք, այո՛, եւ միա՛ջն աստեք...  
Լնդուական ասպարէզ մշակոյթի գուրի անկ մը կրնայ այսինչ կամ այնինչ կապերով իր գործին շուրջ հերթափոխի հիւսել տալ, բայց նման պատիւները ժամանակաւոր օրերներէն աւելի ուժ լին կրնար բովանդակել, լին կրնար...

ՏԱՌԱՐԱՐՁԱՅԻՆ ԵՐԿՈՒՈՒԹԻՒՆ

Իրենց անվիճելի միութիւնը զսած բառերն անգամ երբ անգիտութեամբ կամ անփութօրէն պատահաւորաւ են «Ճրիվէյ»ի մէջ, բնական է, որ տարբեր պիտի շխուսափէին անփառունակ նոյն ճակատագրէն, ու չեն խուսափած: Նոյնիակ հոն տեղ գտած են բառեր, որոնք տառադարձուած են երկք տարբեր ձևերով, ինչպէս է պարագան պիզովեսին:

- 1.-Մ եւ Է-ով՝ պիսնէս - (26):
- 2.-Ս եւ Ե-ով՝ պիսնէս - (53):
- 3.-Չ եւ Է-ով՝ պիզնէս - (59):

Առաջ մենք, եւ հաւանաբար մեզի հետ նաեւ ընթերցողները գոնէ այս պիզովեսին մասին ունէին որոշ գաղափար մը: «Ճրիվէյ»ը այդ մէկն ալ շատ տեսած է մեզի ու հոսիսաւ մշուշ մը նետած վրան: Արագ մը հեռանալք ուրեմն այդ ասպարէզէն ու քիչ մը կանդ առննկք միւս բարսութիւններում կամ դարսութիւններում առջեւ:

1.-Թարսութիւն - Թ.

...Կոչխոզ Նենէն տրամաթիկ էլոյթով մը իր գալբոյթը պիտի յայտնէր, բարսութիւն մը պիտի ընէր անպայման... (50):

Դարսութիւն - Դ.

Այ մարդ, դարսութիւնդ բռնելով մեզ խափ-խայտառակ լընես (112):

2.-Կեկայիւն - Կ.Կ.

Քսանեղիւս տարիքին տակաւին չէր համարեակեր հօրը դիմաց Ժրեյ, ինք՝ կոկայիւնի ամենօրեայ զործածութեան մօլին... (6):

Քոճայիւն - Ք.Ք.

...Բոճայիւնի զործածութեանէն բխացած ամերիկուհիէն (14):

3.-Եանցի - Գ.

...Իրենց մարտը դուրս գալը մանրագնումէն, պիտի բաւարարէր եանցի ստիկանը (20):

Եանքի - Ք.

...լաւագոյնս տպաւորելով հանրի ստիկանները (30):

4.-Որկամիզմ - Կ.

«Գող բազմիքէ հաք, արիւնջ ներքին օրկամիզմիդ կը խուժէ» (96):

Օրգանիզմ - Գ.

...չիկացած սա կրօնը քիչ մը զովացնելու, էրոզ սիրտն ու օրգանիզմը պաղպեղելու (111):

5.-Կրիւն գարբ - Գ.Թ.

Սահմանապահ ստիկանը շափազանց քաղաքավարութեամբ բարեկեց տղոց, միեւնոյն ատեն զննելով կրիւն գարբերը (18):

Կրիւն քարտ - Ք.Տ.

Այն օրէն երբ կրիւն քարտիդ դիմեցիր, որոշած էիր քու ալ, ընտանիքիդ ալ ճակատագիրը (104):

Վերի նախադասութեանց մէջ սխալ ուղղադրուած ամէնօրեայիւն ու մամրազնումներում մի նայիք, ոչ ալ ներգործական բայերուն հետ տրական խնդիրներ զործածելու խորթութիւններուն, ոչ ալ էրոզ անճաշակութեան. այս ենթարծածանութիւն տակ մտանանչուածը տառադարձութեան երկուութիւնն է, որ «Ճրիվէյ»ի էջերուն աղչեցուցիչ պատկեր մը կը պարզէ դարձեալ:

ԲԱՌԵՐԷՆ ԱՆԴԻՆ

Գրական յաւակնութեամբ հրապարակ հանուած գիրք մը, բառերը իրենց ճիշդ տեղը դնելու պարտքին հետ՝ անշուշտ հարկին տակն էլ գանոնք խնայողութեամբ գործածելու, մա՛նաւանդ չըսելու ընթերցողին բաներ, զորս նախակրթարաններու եւ յաճախ նախակրթարաններէն առաջ ինկած դասարաններու մէջ սորված կրեան ըլլայ անոնք: Հարցին այս երեսին մասին կատարեմք յտեղանշական լիշեցում մը.-

Բաւական յանգուզն սինակի մը տակ, Պոլսոյ «Մեհեմետ հանդէսին մեհնականները օրուան մամուլէն ու նոր հրապարակ եկող գիրքերէն կը կատարէին քաղուածքներ, որոնք իրենց ծիծաղելի բնութեով ահարկելի անդրազարծ մը կ'ունենային թէ՛ տարեց եւ թէ՛ նորահաս պոզներուն վրայ, յօգուտ բոլորին:

Այդ քաղուածքներէն մէկը հետեւեալն էր.  
«Եղզի մը կայ պատմական, չորս կողմը ջուր...»

(ԱՏՐՈՒՇԱՆ, «Հայ գրականութիւն», քիւ 4)

Դժբախտաբար, հետագայ տասնամեակներուն լոյս տեսած հանդէսները չունեցան նոյնանման սինակներ, այլապէս բաւական ժամանակ ու շիջ կը խնայուէին մեզի եւ «Յորիվէլ»ի պէս զիրքերը կը զգուշանային մեղքերու այս քանակով ընթերցողին ներկայանալու անպատեհութենէն:

Ահաւասիկ «Յորիվէլ»եան նմոյշ մը, որ կզգիին չորս կողմը ջուր ըլլալու արտուշանան յայտնութենէն տարբեր չէ.

«Վայրի գագառի պէս մոռչելով հեռացած էր» (ՅՅ):  
Բառային մարզերէն զուր գալով, տակը քանի մը նմոյշ գրական, արամարանական, զարձակ լիզուական ու նորէն քերականական այդ շարքին շարքային արատալտութիւններէն, ընկերացնելով անոնց այս անգամ թուցիկ մեկնարանութիւններ:

- 1.-Ի զուր իրեն կը ստիպէին օրական ածիութիւ... (24):  
-Հերոսը սօփորութիւն ունէր շաքարակա՛ն ածիութիւ արգեօք, կամ ամսակա՛ն, գուցէ եւ տարեկա՛ն:
- 2.-Յամիկին նուէրը, առուտեան ժամը չորսը կը ցուցնէր (35):  
-Եթէ ստորակէտով անտեղիօրէն չընդմիջուէր նախազատութիւնը, Յամիկին նուէրը հասնաբար շատ անելի արագ բան մը... ցոյց կու տար:
- 3.-Հացը, անոր երիտասարդ աղջկայ փարթեմ առինքներուն տակ, ելեւէջի պայթում ուրիշ մը կը ստեղծէր (36):  
-Հացին տեղ, եթէ հրճուանք մը ըլլար երիտասարդ աղջկան փարթեմ առինքներուն տակ, կասկած մի ունենաք, որ հիւանդագին այդ պայթումին փոխարէն պայթուցիկ առողջութիւն մը պետի ելեւէջէր:
- 4.-Յամիկ իր անկեղծութենէ ըխող միամտութեան վերադրեց առած խակ ու անհետեւ քայլը (38):  
-Մի հարցնէք, թէ ո՛վ կը ստիպէ հերոսուհիի մը կամ հեղինակի մը խակ քայլ առնել, երբ կայ պարզ ու պայծառ... սխալը:

5.-...Յասմիկ կը սպասէր, որ գոնէ անիկա թօթափած ըլլար հեացած եւ բոսոր կապած մտայնութիւնը... (38):

-Եթէ լեզուական չգիտութիւնը պարագայական հանգամանք մը ունեցած ըլլար «Յրիվէյ»ի մէջ, բորբոսին տեղ սպրդած բառ պիտի համարէինք բոսորը, բայց խնդրոյ առարկայ գիրքը նման գիշումներու չի տրամադրեր ընթերցողը:

6.-Աւելի պատուաւոր պիտի չըլլա՞ր Մավրեցիի նման խոզխոզէր, խեղդամահ ընէր իր Դէպէտմոնան, հենց առաջատար անկողնին մէջ... (42):

-Նախ՝ հայերէնի մէջ մավրեցի լինէր ըսեր: Կ'ըսենք մար: Երկրորդ՝ գլխապիտոյ լինէր գրեր ո՛ւ անգլիացիներ, ո՛ւ ֆրանսացիներ, ո՛ւ միւսները եւ ոչ ալ... մավրեցիներ:

Երրորդ՝ Ա. ձայնաւորէն ետք Վ. հնչիւնին փոխարէն Ի գիրը կը գործածենք:

Եսա չէ՞ արդեօք մէկ բառին մէջ երեք սխալ թոյլ տալու այս անբարեխղճութիւնը:

Դեռ լինէր խօսքի նախադասութեան մէջ այդ վիճակին մատնուած Տեղեմոնայի մասին, որ, ինչպէս կը տեսնէք, հոս անելի բարտաւոր չէ եղած, քան Մավրեցիին ճիւղաններուն մէջ:

7.-Եւ վերջապէս, ալ վե՛րջ՝ հինգ հոգեով մէկ սենեակի մէջ սեղմուելուն. ինք, որ Բառակերտ պալատ ունէր Երեւանի սարայաճիւղ (52):

-Երեւանի սարայանջիւղն: Արարատի սարայանջիւղն՝ կ'ըլլայ: Արագածի սարայանջիւղն ինչու չէ: Կարելի է նոյնիսկ Նորքի վրայ սարայանջի մը յայտնութիւնը ընել, բայց Երեւանի մէջ՝ չինք կարծեր, մինչեւ անգամ եթէ հոն կառուցուած պալատը Թ-ով կառուցուած Բառակերտ ըլլայ: Երեւանի սարայանջիւղն պէս լանջ մը ունի նաեւ «Յրիվէյ»ի ճամբան:

8.-Աւելի լաւ էր օթոնչէն իջնէր եւ ճամբու լանջին սպասէր (78):

-Ձեռք գիտեր, կարելի՞ է ներդաստութեամբ դիմաւորել ոտէ անէ, որ կը փորձէ գիրք գրել, երբ կը յամառի բառարաններուն մէջ մնալ եւ փոյթ անգամ չ'ընէր իրարմէ զանազանի եզրն ու լանջը կամ չի վախենար մէկը միւսին տեղ գործածելու մարտնչող թանաքաստութենէն:

9.-Ահն ալ, կը փիլիսոփայէր հազիւ ոտքը ֆրիվէյ նետած, մարդկային կործանարար զգացումներու նման, ինչպիսին են սուգն ու սիրային յուսախարութիւնը, մամանակին փտահեղուկ, կարելի է յաղթահարել զայն (85):

-Միջանկեալ «փիլիսոփայութիւնները» զուրո ձգելով նախադասութենէն, կ'ունենանք «Ահն ալ կարելի է յաղթահարել զայն»: Սակայն յաղթահարուող խնդիրը ա՛հն է հոս, թէ՛ երկիրքէն ինկած այս գայլը: «Յրիվէյ»ի մէջ երեւի ո՛չ ճշգրտութիւնը յարգ կը վայելէ եւ ոչ ալ գրական ճաշակի հրամայականը:

10.-Ազգային կեանքէն ներս մուտք գործելով, ամէն մարդ իր կեղծ, մաշած բարոյականը պարտազրած էր վրան (88):

-Գարտադրած էր իրե՛ն, թէ՛ վրան:

Ինչպէս ճիշդը սխալ գրողներ կան, այնպէս ալ ճիշդը սխալ ընկալողներ կան երևի: «Յրիվէյ»ի հերոսները նման «բարեմասնութիւններ»ով կը թոյնին մուտք գործած բոլոր ազգային կեանքէն ներս, այլապէս կրնային անելի բարտաւոր ըլլալ գիրքերու աշխարհին մէջ...

**ՇԱՏԱՌՈՍՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՄԱՍԱՄԲ ՆՈՐԻՆ...**

«Բառերէն անդին» սիւնակին տակ կատարուած մատնանշումները բնաւ չեն նմանիր կանխող էջերուն ուշադրութեան յանձնուած աղաւաղումներուն: «Բառերէն անդին» ինկրզները սեւիչ անտանելի են գրական փառասիրութեամբ հանդէս եկող գիրքերուն մէջ, որով ստիպողական կը դառնայ մատնանշումներուն ծիրը ընդարձակելու հրամայականը, քիչ մը նման տկարութիւններ թալլ տուող դպիրները աւելորդ բեռներէ զերծ Պօզոս Գուրեհեան պիտի ըսէր գուրկ տեսնելու բաղձանքով եւ քիչ մըն ալ բոլորովին սկսնակ գրողներուն վիշտնելու համար, որ գրականութիւնը լուրջ գործ է եւ սեւէ մէկուն արտօնուած չէ յումպէտս բառեր մտնել այդ սրբազան մարդին մէջ:

Այս դիտողութիւններուն ընթացքին, անշուշտ, բնաւ հաշուի չեն առնուած փաշայեղակեան կեցուածքները այն լոյժ յարգելի անձներուն, որոնք հայոց լիզուն նման անփառունակ վիճակներու մատնող երեսայթներուն զիմաց խոժոռելու փոխարէն, հովանաւորողի հովեր կ'առնեն եւ բաժակաճառային սիրայիրութիւններ «չալ կու տան» ենթականերուն մասին, ոչ ալ գոչն ինչ արժեք ունին կարծիքները հայրենի այն քննադատներուն, որոնք ինչ-ինչ կապերով ու անխոստովանելի հաշիւներով աժեժ-չաժեժին հանգիստութիւններ կը սալքեն եւ առատութեան եղջիւրէն յորդող շնորհներով կը նկրտին պճնապարզի գործերուն ա՛յս անկանգնելին եւ գրողներուն ա՛յն շնորհագործը...

Շարունակներ ուրեմն մատնանշումները, «Բառերէն անդին» սիւնակին օրինակով:

- 1.-Մայթէ արձակուած մայթերու պարմամ աղջիկներու Բիչ մը շատ ակնյայտ ու խօսում հրաւերը շնկատելու գարկաւ (8):  
Վարժ գրիչ մը նախադասութեան առաջին հինգ բառերը երկուքի վերածելով պիտի ըսէր:  
Մանկամարդ մայթաղիճներու Բիչ մը շատ ակնյայտ ու խօսում հրաւերը շնկատելու գարկաւ:
- 2.-Վարժ ձեռքով, նուազազոյց ճիգ մը գործի զննով, բացաւ իմբնաշարժին դուռը (9):  
«Վարժ ձեռքով»-էն ետք «գործի» գրուած չորս-հինգ բառերը պարզապէս անհրաժեշտ չեն տուեալ գործողութեան: Կը բաւէր ըսել:  
Վարժ ձեռքով բացաւ իմբնաշարժին դուռը:
- 3.-Օթոյիմ տերն ալ իրեմ պէս հայ եկեղեցոյ տապանիմ մէջ հայ միտոնով կնքուած էր (10):  
Նախադասութեան մէջ «տապան»-ը աւելորդ է «հայ»-ը՝ նոյնպէս, «միտոն»-ը՝ նմանապէս: Կրնար անկէս ստանալ սա ձեւը:  
Օթոյիմ աւերն ալ իրեմ պէս հայ եկեղեցոյ մէջ կը կնքուած էր:
- 4.-...Հայրը որսի շուրիմ կը հետեւեր, իմբն ալ՝ հօրը սոփի հետներուն (15):  
Ուրի՛: Գլխու հետքերուն չ'ըլլա՛ր:
- 5.-...Աստուծա՛ւ չվախմաս ու մարտոցա՛ւ չաւշմաս, ելես սրվոր մագերը բզկի-բզկի ընես (50):

Աստուծո՛վ վախնալը լաւ առաքինութիւն է, մարդոցմէ ամենալը՝ նոյնպէ՛ս, շնորհ մը կ'ենթադրէ, այդ արժանիքներուն շահ եւ թերեւ քիչ մըն ալ անլի մեր ուսին պարտք դրուած է վախնալ Սուրբ Մեղրոպէն ու ամենալ անոր աստուածային հրեօտակը ի դէպ եւ յանդէպ վերաւորելու անփութութենէն, ինչպէս է պարագան հոս, «սըվոր մազերը բզիկ-բզիկ ընկու» տրամադրութեան մէջ: Մազերը թնկ-թնկ կը փետտեն եւ ոչ թէ գանոնք բզիկ-բզիկ կ'ընեն: Մազերը բզիկ-բզիկ ընող ո՛չ հրոսակները լուրջի կ'առնեն մարդիկ եւ ոչ ալ հեղինակները...

6.-Շուրջը խօսելի՞ք մարդ փնտռեց (62):

Ջարմանային այն է, որ դեռ մեր օրերուն այս լեզուով դրականութիւն ընկու յանդիսութիւն ունեցող մարդեր կան ասպարէզին մէջ: Նախա-կըրթարանի կիսկատար ուսում ստացած անձն անգամ պիտի սարսա-փէր նման նախադասութենէ մը եւ անոր տեղ պիտի փոքէր բռնի ճիշդը, վայելուչը.

Շուրջը խօսակից փնտռեց:

7.-Փրիվէյի գիծերու գուգադրման մօտերը, ստիպուած առջելը կտրեցի...» (80):

Պարզ «միացման»ի փոխարէն, չի հասկցուիր, թէ ի՛նչ պիտրժակի արձագանգելով հեղինակ մը ֆրիվէյիան այս անճա՛հ պոզաւորումը» կը գնէ հերոսի մը շրթներուն:

8.-Աղբիկը, իր հոլամի, արեւախամ մերկ թելերը փաթած էր իր թխու-թեան... (95):

Աղջկան թուեցուն «արեւախան» պատկերը ուրուագրելէ ետք, ընթերցողը չէ՛ր կրնար արդեօք պատկերացնել հոլանին, հետն ալ՝ նոյնքան անխորշ մերկը:

9.-...Հորիզոնիմ վրայ ակնյայտ դարձած էր նորափթիթ փոքորիկի մը ուրուագծումը (108):

«Նորափթիթ»ը, որքան մենք գիտենք, փափուկ յայտնութիւններուն առիթով կը գործածուի ու քնքշօրէն տեղի կ'ուեննայ: Կ'ըսենք, օրինակ, նորափթիթ ծաղիկ, նորափթիթ ծաղիս, նորափթիթ ասպանդ: Մեղհութիւնները գրական յանգստութիւն համարող շտեմարան շարքին գոնէ՛ ակնթարթ մը անցնելու համար բռնեք, որ եղած են, կան ու պիտի ըլլան նաեւ նորափթիթ... ծիծեր: Բայց դժուար է «նորափթիթ» որակականը հաշտեցնել փոթորիկին հետ, ինչպէս նաեւ յանկարծօրէն պայթող սրեւէ՛ երեւոյթի հետ, եթէ, անշուշտ, անոր դիմողը «նորափթիթ» մէկը ըլլալ գրական ասպարէզին մէջ...

10.-Առաստաղը սաւառնող մտածումներ, թեւաւոր, գումագերծ, ալլակերայ, անլի գորշ՝ Բա՛ն լուսաւոր, տակաւ խնդած էիմ ԲՈՒտ ուղեղը (117):

Ճիշդ է, որ ուրը անականակիրտ մասնիկ է, բայց կրնա՞յ արդեօք անական կերտել սրեւէ գոյականի հետ: Ո՛չ, չի կրնար: Ալլակէտ անխորշ պիտի ըլլային ան, ապ, ատ եւ ալլ նախադաս եւ յետադաս մասնիկները: Կ'ըսենք, օրինակ, շուր-ջրոտ, փուշ-փշոտ, տասասկ-սաւառնակոտ, բայց քուն-ԲՈՒտ չենք ըսեր, կ'ըսենք ԲՈՒտ: Լեզուն ունի գեղազտական իր օրէնքները, զորս պէտք է ամենայն բժախընդ-բութեամբ ուսանիլ ու գործածել մեծ զգուշութեամբ, ալլակէս համ ու հոս չի ձգեր անոր մէջ... ԲՈՒտ ուղեղը:

# Վ Ե Ր Ջ Ա Ց Ն Ե ' Ն Ք

Ոչ մեկ արուեստագէտ կրճալ իսկապէս մեծ ըլլալ, առանց տիրելու իր գործիքին, որ հոս լեզուն է:

Վազգէն Շուշանեան

Ես հայ գրող եմ եւ իմ համար անլի կարեւոր բան, բան մեր մայրենին է՝ չկայ: Դա իմ գործիքն է, իմ ապրելու իմաստը: Ազգայն Պետրոսեան

*Վերի արտագրուած հաստատումներուն հեղինակներէն առաջինը նոր մեռած էր, երբ աշխարհ հկաւ երկրորդը եւ երկրորդին հասունութեան օրօք ծնած ժանուկը Մեծաքաննիկն առիթով հաւանաբար վաղը պիտի կրկնէ երկուքին ապրումները՝ նոյն Չերմեանդութեամբ ու երկիւղածութեամբ, ինչպէս իրենց ծնունդէն առաջ ու իրենց հայրերուն ծնունդէն առաջ ու զարեւու վրայ երկարած պաշտամունքը կըրկնած են իրենք, մեր լեզուին երկու ճիւղերուն ներկայացուցիչներէն արեւմտահայ Վազգէն Շուշանեան եւ արեւելահայ Ազգայն Պետրոսեան:*

Այս եղած է պարագան ու այս պիտի ըլլայ պարագան բոլոր ազնուարիւն ծրնունդներուն, վասնզի մեր լեզուին ծննդոցին, պատմութեան, գործած հրաշքներուն, յարուցիչ շունչին, թեւաւորած տաղանգներուն ու արարչագործ այլ յատկութիւններուն հանդէպ քիչ մը յարգանք ունեցող, երախտագիտական ճաշակ ունեցող բոլոր հիները նոյնպէս վարուած են եւ յեանորդները չեն կրնար դաւաճանել այդ գանձերու գանձին, եթէ նախանձախնդրութեան պատիկ չնորճ մը բերած են իրենց հետ:

Նհտեցէք հարեանցի ակնարկ մը մեր գրականութեան պատմութեան վրայ եւ աւելորդ անգամ մը եւս պիտի հաստատէք, որ երախտաշատ բոլոր մեծերը ո՛չ միայն առանկազոյն հոգածութեան առարկայ զարնուցած են մեզի կտակուած այդ անկողնարիներին, այլեւ իրենց յայտնագործած քանքարին հետ նոր որակ մը գումարած են անոր վրայ, ճշգրտութեան նոր շնչո մը, նոր փայլք մը, նոր թափ մը, հնչեղութիւն մը, կշտոյթ մը, գոյն մը, իսկ միւսները, Աստուած ազատէ զայն միւսներէն, որոնք գրականութեան անունով հրատարակած իրենց գիրքերուն մէջ կրնան հանգուրծել սա ձեւի պարբերութիւնները:

«Գոյութիւնը իսկ էր ֆրիվէլը:

«Տակափն ապրելու, ողջ-ողջ թաղուածի հոգեբանութենէն տարանջատուելու, յախտեմակամ լուրթեան գիրկէն, վեց ոտը խորութենէն աշխարհը չդիտելու, շնչելու մրիտմատր մեքենամեղրու ծխափողերէն Աստուած բժաժխայիմ կազը արտաշնչելու հոլովոյթը, ամերիկեան առօրեայ կեանքի ծխոցներուն դիթմէն սրտի գարկերը զանազանելու երաշխիքն էր ֆրիվէլը» (101):

Այս լեզուով գիրք գրող անձն է ահաւասիկ, որ կը ժպտի տեսութիւններ պարզի եւ կը ճգնի այն տպաւորութիւնը ձգել, որ գրականութիւնը լեզուէն շարժուած գոյութիւն մըն է եւ կան, կամ կրնան ըլլալ մեծ-մեծ գաղափարներով յաջնցած գործեր, առանց անդադառանալու, որ նման անքովանդակ գաղափարներով կը շարունակէ ինքզինք խաբել:

Վերջին խօսքը՝ հայրենի մեր մտաւորականներուն:

Համայնակար կուսակցութեան հաստատած նեղմտութեան օրօք շուրջօրէն մեծարուած ապաշխորներուն տեղ, չկախեալ քուրք տայ միւս ծայրայեղութեան, սխալ հասկացած լայնախոհութեան մը թեւադրանքով գրողներու միութեան դահլիճն ու բնմը կամ թիրթիրու սիւնակները արամադրելով այս անգամ նոյնիսկ իրենց լեզուն չտորված դպիրներուն:

**ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ**

**ԱՍՏԴԿ ԴՆՆԱՆՁԵԱՆԻ ՄԱՀ**

2 Մայիս 1882ին, Նիւ Եորքի մէջ, ծնւած է խոր ծերութեան գունկերը հասած 90ամեայ Աստղիկ Բարլանեան, որ հայ բանաստեղծութեան պատմութենէն ներս մուտք գործեց աւելի քան եօթանասուն տարի առաջ, Աստղիկ Դոնգալսեան հօրենական մականունով, երբ 16 - 17 տարեկան պարմանուհին, իր ջքեազ գեղեցկութեամբ՝ հմայեց երիտասարդ բանաստեղծ Եղիշէ Չարինցը, որ իր առաջին սէրը երգեց Աստղիկին նուիրուած քանի մը բանաստեղծութիւններով:

Աստղիկ Դոնգալսեան կը ծնի 22 Դեկտեմբեր 1902ին, Կարս, շրջանի անուանի եւ մեծահարուստ ընտանիքներէն մէկը նկատուող Դոնգալսեաններու յարկին մէջ: Երաժշտական բացառիկ շնորհքով եւ անհատականութեամբ օժտուած պարմանուհին կը զբաւէ երաժշտութիւնը շրջանակներու եւ ազնուական վերնախաւին ուշադրութիւնը, երբ Կարսի անկումէն ետք, ծնողքին հետ նախ կը փոխադրուի Թիֆլիս, ապա՝ Երեւան, ուր եւ կ'ամուսնանայ Հայաստանի Հանրապետութեան (1918-1920) Ղարաքիլիսէի նահանգապետ Ալեքսանդր Բարլանեանի հետ:

Հայաստանի Հանրապետութեան խորհրդայնացումէն ետք, Բարլանեան ընտանիքը պարտադրարար կը զաղթէ Գուլկարիա, ուրկէ աւելի ուշ կ'անցնի Եգիպտոս: Աւելի քան 30 տարի, Փահիրէի մէջ, Աստղիկ Բարլանեան կ'ունենայ երաժշտական-մշակութային թեզուն զործունէութիւն, արժանանալով հայ եւ տեղացի արուեստասէր շրջանակներուն ամբողջական յարգանքին: Մեծ-Սոփրանօ զուռագեղ ձայնով օժտուած Աստղիկ Բարլանեան, իբրեւ



երգչուհի եւ երաժշտութեան ուսուցչուհի՝ մեծապէս կը գնահատուի ո՛չ միայն եգիպտահայ զազութին եւ տեղական պատասխանատու շրջանակներուն կողմէ, այլեւ՝ Եւրոպայի եւ մասնաւորապէս Փերմանիոյ մամուլին ու երաժշտական մասնագէտներուն կողմէ, որոնք խանդավառ սողեր կը նուիրեն անոր արւեստին:

Աւելի քան 25 տարի Փահիրէի Հայկապոլիսի հայկական ժամը մեծ ձեռնհասութեամբ վարած եւ եգիպտահայ զազութի հանրային կենտրոնի ու մշակութային ձեռնարկներուն փնտրուած զարգերէն մէկը հանդիսացած Աստղիկ Բարլանեան իր գործօն մասնակցութիւնը կը բերէ նաեւ Փահիրէի Հայ Կարմիր Ոստիկանի եւ «Համազգային»ի մասնաճիւղերուն մէջ: Աւելի'ն, քաղաքի կեդրոնը գտնուող Բարլանեաններու բնակարանը կը դառնայ մնայուն ժա-



մազբավայրը եզրկտահայ մտաւարական ու մշակութային ծանօթ ու երկրասարգ զէմբերու, որոնք ամէն երկկոչ կ'այցնելէն «տիկէն Աստղիկի սալոնը»՝ արուեստի քաղցր ժամը անցընելու համար: Բազմաստանեակ այդ գրողներէն, զեզանկարիչներէն, զերասաններէն, խմբագիրներէն եւ հանրային-կուսակցական զործիչներէն նշինք մէկ քանին՝ Լիպարիտ Նազարեանց, Վահան Նասասրցան, Ռուբէն Տէր Մինասեան, Համօ Եւ Ռուբինա Օհանջանեան, Գուրգէն Մխիթարեան, Բենիամին Թաշեան, իսկ երկրասարգներէն՝ Բրուզանդ Կուսեան, Գոհար Խաչատուրեան (այժմ՝ Գասպարեան), Մանուէլ Մարութեան եւ ակե...

1964ին, համերգային զոշնակահարուհի իրենց զուտրին՝ Լուսիկի ընտանիքին միանալու նպատակով, Բարչանեան ամուր կը տեղափոխուի Միացեալ Նահանգներ՝ Նիւ Եորք: Աստղիկ Բարչանեանի մահով հայութիւնը կը կորստնցնէ միշտ ժպտազէմ արուեստազէտ անհատականութիւն մը:

**«ԱՐՑԱՆ ԱՏՈՒԻՒԱՆ  
ԿԵՆՏՐԱԿՈՒԻ  
«ՀԱՅ ԼՈՒՐ»Ի ԾԱԿԱՏԱԳՐԻՆ**

Մայիս 20ին, Երևանի կուսակցութիւններու շէնքին մէջ տեղի ունեցած է մամուլի ասուլիս մը. Հայաստանի պատկերասփիւռի «Հայ լուր» լայտագիրի լրագրողներուն եւ Արցախի պատկերասփիւռի կայանի նախագահի տեղակալին հետ:

Կամայական որոշումով մը նախապէս փակուած «Հայ լուր» լայտագիրին փոխարէն հազարգուտղ «Արցախի ստուգիտան» նաեւ, իր կարգին, 18 Մայիսէն ի վեր զրկուած է պատկերասփիւռու կարելիութենէն եւ պատկերասփիւռի նախագահին կողմէ ամրաստանուած՝ «պետական շահերուն հակասող քաղաքականութիւն վարելու եւ հանրապետութեան մէջ աւելորդ սոբու-

րութեան տեղիք տալու» մեղադրանքով: Պատասխանելով լրագրողներու հարցումներուն, «Հայ լուր»ի աշխատակիցները նշած են, թէ լրագրութեան մարզէն ներս, լրագրողներ ենթարկուած են կամայական որոշումներու եւ համարուած իրենց կուսակցական պատկանելիութեան համար: Ապա, անոնք արտայայտած են այն մտահոգութիւնը, թէ լրագրողները յաճախ աւելի արագ կը կողմնորոշուին, քան իշխանութիւնները, ինչպէս Թոշալուի եւ Եուզիի զէպքերուն, երբ արդիւած ու խանգարած են համապատասխան մեկնարանութիւններով ժայռակներ յանձնել պատկերասփիւռի կեդրոնական կայանին:

Յայտնեմք, որ Մայիս 28ին, Գերագոյն Խորհուրդի լրատուական հարցերու յանձնաժողովի նախագահ Մերուտան Տէր Գուլանեան այս հարցին զմով հանդիպում մը ունեցած է նորաստեղծ Հայ լրագրողներու համերաշխութեան վարչութեան հետ, քննարկելու համար «Հայ լուր» եւ «Արցախի ստուգիտ» լայտագիրներու փակման հարցը: Հայ լրագրողներու համերաշխութեան վարչութիւնը առաջարկած է, որ Գերագոյն Խորհուրդին մէջ քննութիւն քաջուի այս հարցերուն շուրջ եւ վարչութիւնը աշխոյժ մասնակցութիւն ունենայ լրատուական համակարգը զստուորող օրէնքներու մշակման եւ քննարկման աշխատանքներուն մէջ:

**«ԱՄՍԸԳԱՅԻՆ»Ի  
Մ. ԻՇԵԱՆ ՍԱՄՆԱՄԻՒՂԸ**

Խուճը մը մշակութասէր հայրգիներու նախածնունդներու եւ «Համագրգային»ի Լիբանանի Երջանային Վարչութեան հովանաւորութեամբ եւ օժանդակութեամբ՝ վերջնու, Թրիփոլիի մէջ հիմը դրուեցաւ «Համագրգային»ի Մուշեղ Իշխան մասնահիւղին: Բազմավաստակ քանաստեղծիւն, արեւակազիրին եւ կրթական ու հասարակական զործիչին յիշատակը յաւերժացնող այս մասնա-



Երևոյ, որ հայ եւ արաբ տեղացի հասարակութեան ներկայացաւ զեզարուեստական ձեռնարկներով, ներկայիս կը հաշուէ աւելի քան 50 անգամ:

**ՀԱՅՐԵՆԻ  
ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՆԵՐՈՒ  
ՍՒՋԱԶԳԱՅԻՆ  
ՅԱԿՓԱՆԱԿԸ**

Իտալիոյ հանրապետութեան նախագահին եւ Լոտի Պապին հովանաւորութեամբ, ընթացիկ տարուան Մալխամսուն, Ռաֆիննա քաղաքին մէջ տեղի ունեցած է Տանթէի «Աստուածային կատակերգութիւն» զուլա-գործոցին

նուիրուած 10րդ միջազգային ցուցահանդէս-մրցոյթը, որուն առաջին անգամ ըլլալով Հայաստանի Հանրապետութիւնը այս տարի մասնակցած է իբրեւ անկախ պետութիւն՝ հայրենի թքանդակագործներու քանդակներով:

Վերջին երեք հանդիպումներուն իրենց ուշադրաւ մասնակցութիւնը բերած հայրենի քանդակագործները այս անգամ ալ իրենց վրայ կեդրոնացուցած են զատակազմին ուշադրութիւնը, արժանանալով երկու մրցանակի: Երկանդամ պատուիրակութեան մաս կազմող Աշոտ Բաղդասարեանի «Սուրբ մայրութիւն» քանդակը տիրացած է մրցոյթի ոսկի մետալին, իսկ Սամուէլ Դազարեանի «Լոյս» ստեղծումը՝ մրցոյթի բաժակին: Նշենք, որ երկու տարի առաջ, քանդակագործ Գարեգին Դաթեանի շնորհքով էր Պապին յատուկ մրցանակը:

«Շրկիր»ի մէջ լոյս տեսած զրոյցէ մը կ'իմանանք, որ Հայաստանի Հանրապետութիւնը ներկայացնելու կոչուած այս պատուիրակութիւնն ալ բախած է պետական անտարբերութեան:

«Մի՞նչէ մեկնելը, — զիտե՛լ կուտան զրոյցին մասնակցած քանդակագործները, — դիմեցինք մշակոյթի նախարարութեանը, մշակոյթի ֆոնդին, սակայն երկու տեղում էլ հրաժարուեցին մեզ օգնել: Ստիպուած դիմեցինք Բարեգործական կազմակերպութեանը: Աշոտ Բաղդասարեանին ֆինանսաւորեց Հայաստանի Համազգային մշակութային կազմակերպութիւնը, իսկ Գարեգին Դաթեանին՝ «Հրաշքների աշխարհ»:

Տխուր է, քայք փաստ է, որ պետական օղակներում մատմերի արանքով են մայում արուեստի հարցերին»:



Առանձին ուրախութեամբ կը յայտնենք ընթերցողին, որ մեր յաջորդ թիով պիտի սկսինք հրատարակել բացառիկ պատեհութեամբ մը խմբագրութեան տրամագրութեան տակ գրուած Վազգէն Շուշանեանի անտիպ գործերէն մէկը՝ «Տենդեր»:

Օտար միջավայրի մը մէջ ինկած երիտասարդի մը ազգային, մարդկային, ընկերային ու սիրային առընչութիւններէն հիսուած գործ է ձեռագիր 290 էջերու վրայ տարածուած «Տենդեր»ը, որ կը կրէ լեզուական մաքրութեան ու օճական շնորհներու զուտ շուշանեանական կնիք մը՝ վարարուն ու թովիչ:

Շուշանեանի գրականութեան սիրահարները վստահաբար հեռի հեռի պիտի հետեւին կշռութեամբ արձակի վարպետներէն եղերաբախտ գրագէտին նաեւ այս գործին, այն հաստատ համոզումով, որ լրիւ պիտի վարձատրուի իրենց ժամանակը:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՊՕՂՈՍ ՄՆԱՊԵԱՆ

ՄԻՋՆԱՐԱՐ - 5

(արձակ)

ԼԻՔԱՆԱՆ

Հատվածառ (գոյգ թիւ)  
Տարեկան բաժնեգին

ՍՈՒՐԻԱ

Հատվածառ (գոյգ թիւ)

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան բաժնեգին

40 Ամերիկեան տոլար

باكين  
مجلة شهرية ، ادبية فنية وعلمية  
المدير المسؤول  
السيد ارتين كارنيك قرانجيان

•

PAKINE  
REVUE MENSUELLE  
LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire  
Dr. A. KAZAMBHIAN

•

Բ Ա Գ Ի Ն  
ԱՄՍԱԳԻՐ  
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ  
ԵՒ ԱՐՈՒԵԱՏԻ

Խմբագիր  
ՊՕՂՈՍ ՄՆԱԳԵԱՆ

Խմբագրութեան անդամ  
ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Հասցէ՝  
Centre Culturel SHAGHZOYAN  
Bourdj Hammoud — Liban